

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԵՂՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

(Երևան, 2017 թ., նոյեմբերի 30)

2

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2018**

ՀՏԴ 811.19:06

ԳՄԴ 81.2Հ

Ա 134

*Հրատարակվում է
ԵՊՀ հայ բանասիրության
ֆակուլտետի գիրքափոխանի որոշմամբ*

Խմբագրական խորհուրդ՝

Աբաջյան Ա. -բ.գ.դ., պրոֆ.

Ավագյան Ա. -բ.գ.դ., պրոֆ.

Ավետիսյան Յու. -բ.գ.դ., պրոֆ.

Խաչատրյան Լ. -բ.գ.դ., պրոֆ.

Հովհաննիսյան Լ. -բ.գ.դ., պրոֆ.

Հովսեփյան Լ. -բ.գ.դ., պրոֆ.

Ա 134 Արեղյանական ընթերցումներ: Հանրապետական գիտական
նստաշրջանի հոդվածների ժողովածու (Երևան, 2017 թ., նո-
յեմբերի 30).- Եր.: ԵՊՀ հրատ., 2018, 192 էջ:

Սույն ժողովածուի մեջ գետեղված են Մանուկ Արեղյանին նվիրված
հանրապետական գիտական երկրորդ նստաշրջանի զեկուցումների
հիման վրա գրված հոդվածները: Դրանք վերաբերում են ոչ միայն մեծ
հայագետի գիտական վաստակին ու ժառանգությանը, այլև հայերե-
նագիրության ամենատարբեր հարցերի:

Ժողովածուն կարող է օգտակար լինել ինչպես մասնագետների,
այնպես էլ բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են լեզվի հարցե-
րով:

ՀՏԴ 811.19:06

ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-5-8084-2294-0

© ԵՊՀ հրատ., 2018

© Հեղ. խումբ, 2018

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Այսօր այստեղ գտնվելն ինձ համար մեծագույն հաճույք է: Նախ ուզում եմ ձեզ փոխանցել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, մասնավորապես Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի հայրապետական օրհնությունը:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ունեցանք մտավորականներ, ովքեր անցան եկեղեցական կրթության միջով, և նրանց շնորհիվ ունեցանք մեծ ձեռքբերումներ գրականագիտության, գրականության, պատմության և այլ ասպարեզներում: Մեզ համար կան անուններ, որոնք անկարելի է երբևէ մոռանալ, և այդ անուններից մեկն էլ Մանուկ Աբեղյանինն է:

Մ. Աբեղյանի շնորհիվ հայագիտությունը մեծ առաջընթաց ունեցավ. նա հզոր էր թե՛ իբրև լեզվաբան, թե՛ իբրև գրականագետ: Եվ այս գիտաժողովը ևս մեկ անգամ յուրօրինակ խնկարկում, հարգանքի տուրք է հայ խոշորագույն գիտնականի հիշատակի առջև:

Ասածո օրհնությունը ուղեկից բոլորիդ...

Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյան

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Հարգելի՛ բարեկամներ:

Ողջունում եմ ակադեմիկոս Մանուկ Աբեղյանին նվիրված համապետական գիտական երկրորդ նստաշրջանի մասնակիցներին:

Անգնահատելի է Մ. Աբեղյանի գիտական բեղմնավոր վաստակը հայագիտության զարգացման մեջ: Ականավոր գիտնականը արգասաբեր գործունեություն է ծավալել հայագիտության գրեթե բոլոր բնագավառներում՝ միջնադարյան քնարերգություն, առասպելաբանություն, ժողովրդական վիպասանություն ու էպոս, ընդհանրապես հին ու նոր գրականություններ, տաղաչափություն և այլն:

Մ. Աբեղյանը իրավամբ հայ գիտական քերականության հիմնադիրն է: Նրա լեզվաբանական աշխատությունները մնայուն ու կոթողային գործեր են: Մեծատաղանդ հայագետը մասն հմուտ բառարանագիր է ու գրաբարագետ, արևելահայերենի արդի ուղղագրության հիմնադիր: Նույնքան արժեքավոր են նրա գրականագիտական հետազոտությունները:

Նա մեզ համար առանձնակի նշանակություն ունի մասն որպես համալսարանական. Մ. Աբեղյանը Երևանի պետական համալսարանի, ինչպես և Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադիր գիտնականներից մեկն է:

Երկար տարիներ զբաղվելով մանկավարժական բեղմնավոր գործունեությամբ՝ մա կրթել է բանասերների բազում սերունդներ: Մեծ հայագետի բրոնզաձույլ կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի մախասրահում խորհրդանշում է ականավոր գիտնական-մանկավարժի անուրանալի դերն ու վաստակը մասն համալսարանական գիտության զարգացման բնագավառում:

Դատելով գիտաժողովի ծրագրի հագեցվածությունից, արծարծվող խնդիրների կարևորությունից և արդիականությունից՝ համոզված եմ, որ քննարկումները կլինեն արդյունավետ ու շահեկան:

Բոլորիդ մաթքում եմ ստեղծագործական բեղմնավոր աշխատանք...

ԵՊՀ ռեկտոր՝
Ա. Հ. Սիմոնյան

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Աբեղյան տոհմի ժառանգի իրավունքով ողջունում եմ այսօրվա «Աբեղյանական ընթերցումներ»-ի մասնակիցներին, որոնց, համոզված եմ, այստեղ է բերել հարգալից վերաբերմունքը Մանուկ Աբեղյան գիտնականի նկատմամբ:

Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում ԵՊՀ տնօրենությանը, մասնավորապես հայոց լեզվի պատմության ամբիոնին և նրա վարիչին՝ հանձին տիկին Աննա Աբաջյանի, ում ջանքերով այսօր հավաքվել ենք այստեղ, և ով ամեն ներկայացած առիթի իր մեծաբանքն է արտահայտում Մանուկ Աբեղյան գիտնականին:

Շատ երջանիկ եմ, որ պապս իր գիտական վաստակի շնորհիվ մինչ օրս գնահատվում է ըստ արժանվույն, և համոզված եմ, որ գալիք սերունդները նույնպես կհիշեն, նաև շատ բան կսովորեն նրանից:

Դժբախտաբար, ես նրա կողքին եմ եղել միայն յոթ տարի և այն ժամանակ չէի կարող արժևորել նրան՝ որպես գիտնականի: Նա իմ լավ, բարի պապիկն էր, ով ինձ գրել-կարդալ, թվաբանություն էր սովորեցնում, նաև հեքիաթներ պատմում, գերմաներեն պարապում...

Նախորդ ընթերցումների ժամանակ ես ներկայացրի իմ հուշերը իր մասին, այսօր չեմ կրկնի, միայն կասեմ հետևյալը: Փոքր հասակից արտակարգ սեր և հետաքրքրություն էի տաժում Մասիս սարի նկատմամբ, որ շատ լավ երևում էր մեր պատշգամբից: Մտովի պապիս նմանեցնում էի Մասիսին, և այդպես էլ նա ինձ համար մնաց որպես մեր բիրիական լեռը:

Ուզում եմ այսօր մեկ անգամ ևս կրկնել Հովի. Թումանյանի այն բանաստեղծությունը, որ սովորեցրել էր ինձ պապիկս, և որը արտասանեցի իր մահվան նախընթաց օրը՝ այցելության եկած Ավետիք Իսահակյանի և Կարո Մելիք-Օհանջանյանի ներկայությամբ.

Ամպն ու սարը

Ամպը եկավ, նստավ սարին,

Նստավ սարի սուր կատարին.

-Լսի՛ր, պապի՛,- ասավ նրան,-

Լավ օրերդ անցան, կորան...

Խիստ սոսկալի ցուրտ է գալի:

Ասավ, գնաց: Սարը կամաց

Մտավ սպիտակ վերմակի տակ:

Պապիկիս մահից հետո ես՝ փոքրիկ աղջնակս, կարծում էի, թե
նա գնացել է Մասիսի մոտ և մնացել այնտեղ: Գուցե այդպես է, և
այժմ բիրիական լեռան բարձունքից ունկնդրում է մեզ և ուրախու-
թյուն ապրում այս մեծարանքի համար: Ուրեմն ես բոլորիդ ողջու-
նում եմ նաև իր կողմից:

Բարի՛ եկաք և բարի՛ մնաք...

Սիրով՝ *Հասմիկ Աբեղյան*

**ԱՐԵՂՅԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱՆՀԻՄՆ ՔՆՆԱԳԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հայտնի է, որ ՀՀ պետական լեզվի ուղղագրական բարեփոխումը կատարվել է 1922 թ. մարտի 4-ին ականավոր գիտնական Մ. Աբեղյանի կողմից (նշվում է լուսավորության այն ժամանակվա նախարար Պողոս Մակինցյանի անունը ևս) և 1940 թ. մասնակի փոփոխությունների ենթարկվել: Այդ ժամանակ արդեն արևելահայերենի և մաշտոցյան դասական ուղղագրությունների միջև տարբերությունները խիստ խորացել էին:

Դասական ուղղագրությունը անաղարտ գոյություն է ունեցել իր ծննդյան պահից մինչև մի քանի դար: 11-12-րդ դդ. ձեռագրերում արդեն ի հայտ են գալիս ուղղագրական և հնչյունական տարբերություններ¹: Հայերենի հնչյունական համակարգի և քերականական կառուցվածքի մեջ պատմականորեն առաջացած տեղաշարժերը, բնականաբար, դասական ուղղագրության մեջ բարեփոխումների տեղիք պիտի տալին: Այսինքն՝ մաշտոցյան ուղղագրության մեջ բարեփոխություններ սկսվել են կատարվել դեռևս վաղ միջնադարում: Գ. Ջահուկյանը գրում է. «Գրաբարի ուղղագրության նորմավորման պահանջ առաջացել է դեռ միջին դարերում, երբ արդեն նկատելի էին խոսակցական լեզվի՝ գրաբարից ունեցած տարբերությունները: 12-13-րդ դարերում Արիստակեսի, Գևորգ Սկևռացու և ուրիշների կողմից գրվել ու հիմնական գծերով լուծվել է գրաբարի ուղղագրության ու կետադրության նորմավորման հարցը»²: Այս մա-

¹ Տե՛ս **Տեր-Մկրտչյան Գ.**, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1979, էջ 312: **Շաքաբխանյան Պ.**, Հայերենի ուղղագրության հարցեր, «Պատմա-բանասիրական հանդես», 1990, հ. 2, էջ 98:

² **Ջահուկյան Գ.**, Հարկ կա՞ր արդյոք փոխել մեր ուղղագրությունը, «Խորհրդային Հայաստան» օրաթերթ, 20. 12. 1989:

սին գրում են մաս Ա. Մարգարյանը և Պ. Շարաբխանյանը: Այսպիսով, դեռ վաղ միջնադարում մաշտոցյան ուղղագրության մեջ կատարվել են բարեփոխումներ:

Նոր ուղղագրության հակառակորդ Ս. Մալխասյանցը, անդրադառնալով **ու, լ, վ** տառերին, որոնք **վ** հնչույթն են նշագրում, գրում է. «Դեռ 10-11-րդ դարերից սկսած՝ թե՛ արձանագրությունների և թե՛ գրքերի մեջ պատահում են **վ**-ով գրություններ անգրագետ գրիչներից: Մխիթարյանները դեռ 19-րդ դարի սկզբում՝ աշխարհաբար գրելու ժամանակ, հետևում էին այս գրության կերպին...: Սայաթ-Նովայի գիտական հրատարակիչը՝ բժիշկ Ախվերդյան, կրավորական բոլոր ձևերը գրում էր «վ»-ով...: Խաչ. Աբովյան «վ» է գործածել բոլոր տեղերում, ուր մենք ավանդական ուղղագրությամբ «ու» ենք գրում «վ» հնչելիս..., իսկ Խորեն Ստեփանեն իր «Հայկական աշխարհում» ավելի արմատական կերպով է վարվել և ամեն տեղ, ուր հնչվում է «վ», գրել է «վ»»³:

Նշենք, որ 20-րդ դարասկզբին՝ Աբեղյանի բարեփոխումից առաջ, Դ. Աղայանը **վ** հնչույթի երեք նշանագրերից **ու**-ն սեփական համոզմամբ հանել էր: Չարմանալի է, սակայն հաջորդ քայլը կատարում է ոչ այլ ոք, քան մույն ինքը՝ Ս. Մալխասյանցը՝ իր «Մի հնչյունին մի գիր» գրքույկում թողնելով **վ** հնչույթ արտահայտող միայն **վ** տառը⁴: 1922 թ. բարեփոխումից հետո մա գրում է, որ այդ ռեֆորմի երեք կետեր Ս. Աբեղյանին չեն պատկանում, այլ առաջարկվել ու գործադրվել են ուրիշների կողմից⁵: Երբ 19-րդ դարի կեսերին նոր գրական լեզուն վերջնականապես դուրս մղեց գրաբարը, ուղղագրության մեջ արդեն թափանցել էին բառերի արտասանության մեջ կատարված ինչ-ինչ փոփոխություններ (դուռն>դուռ, հուգումն>հուգում, անցանել>անցնել և այլն): Սակայն նոր գրական լեզվի ուղղագրությունը հիմնականում մնում էր հինը՝ խոր անջրպետ գոյացնելով կենդանի արտասանության և ավանդական գրության միջև: Ահա այս պատճառով էլ նոր լեզվի հրամայականն էր դարձել ուղ-

³ Տե՛ս Աբեղյան Մ., Ուղղագրական ռեֆորմը, Երկեր, հ. 8, Եր., 1985, էջ 386:

⁴ Մալխասյանց Ս., Մի հնչյունին մի գիր, Թիֆլիս, 1910, էջ 13:

⁵ Տե՛ս Մալխասյանց Ս., Մարտակոչ, Թիֆլիս, 1924, N 10-11:

դագրության մեջ ևս արտասանությանը համապատասխանող ամենաանհրաժեշտ ու կարևոր փոփոխությունների կատարումը:

1913թ. հոկտեմբերին Էջմիածնում հայ գրերի գյուտի 1500-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսության ժամանակ կարդացած «Մեր ուղղագրության մասին» գեկուցման մեջ Մ. Աբեղյանը նշում է. «Ես, ուրեմն, առաջարկում եմ հաշտվել կատարված իրողության հետ»⁶:

Այսպիսով, Մ. Աբեղյան ներհուն գիտնականը դասական ուղղագրության՝ դարերի հոլովությամբ տեղի ունեցած փոփոխությունները ի մի բերեց, համակարգեց բոլոր առաջարկներն ու կարծիքները, ըստ հարկի փոխեց դրանք՝ գիտականորեն հիմնավորելով ուղղագրության նոր սկզբունքները:

Հին ուղղագրությանը վերադառնալու պահանջով շարժմանը, որը ծավալվել է անցյալ դարի 80-ականների վերջերից, ակտիվորեն մասնակցել են բանաստեղծ Լևոն Միրիջանյանը, ազգային գրադարանի նախկին տնօրեն Գ. Տեր-Վարդանյանը, ֆրանսահայ Հակոբ-Գրիգորը (Ջրջրյան), Անդրանիկ Չելեպյանը, Սիմոն Հովիվյանը և այլք, իսկ առաջնորդն ու ոգեշնչողը Ռաֆայել Իշխանյանն էր: Ըստ նրա՝ բարեփոխման հեռահար նպատակն իբր լատինատառ հայերենին անցնելն է⁷: Հայաստանում գործող ուղղագրությունը անվանում է «խառնիճադանջ», «անհեթեթություն», «ծռագրություն», «անգրագիտություն»: Ռ. Իշխանյանն այն կարծիքին էր, որ 1922-40 թթ. հայերենի ուղղագրության մեջ ոչ թե ինչ-որ փոփոխություններ են կատարվել, ինչպես սխալմամբ կարծում են բոլոր լեզվաբանները, այլ ուղղակի «բռնաբար արգելվել է հայերենի դասական ուղղագրությունը»: Եվ դա նա անում է միայն այն նպատակով, որ գործին անտեղյակ մարդիկ զայրությամբ ու ատելությամբ լցվեն գործող ուղղագրության դեմ և պահանջեն անմիջապես անցնել հին ուղղագրությանը: Ինչպես իրավացիորեն նշում է Մ. Ասատրյանը, «եթե մեր լեզվի ուղղագրության վրա բռնություն է գործադրվել, ապա դրա

⁶ Տե՛ս **Աբեղյան Մ.**, նշվ. աշխ., էջ 363:

⁷ Տե՛ս **Իշխանյան Ռ.**, Վերացնել ուղղագրական բռնադատումը, «Ավանգարդ» օրաթերթ, հ. 84, 1989:

նգովից արմատը եղել է ոչ թե Հայաստանի բուշնիկյան կառավարությունը, այլ Նորին մեծություն կենդանի լեզուն, որի դեմ, ինչպես հին հռոմեացիներն էին ասում, անգոր է նույնիսկ կայսրը»⁸: Իսկ ուղղագրության հեշտության, պարզության ու մատչելիության մասին Ռ. Իշխանյանը, բոլոր սահմաններն անցնելով, գրում է. «18 թվի մայիսին Երևանը հակառակորդին հանձնելը հեշտ էր, չհանձնելը՝ դժվար (և այդ դժվարը հաղթահարեցինք), 21 թվին Կարսը և Ալեքսանդրապոլը հանձնելը հեշտ էր (ցավոք, այդպես էլ արեցինք), պահելը՝ դժվար: Եվ ասիա հիմա էլ թե՛ նոր ուղղագրությունը հեշտ է, դասականը՝ դժվար: Ուղղակի մարդ ապշում է մեր մաշտոցյան, դասական ուղղագրության հակառակորդների այս *հեշտասիրության* վրա»⁹: Խոսքերն ավելորդ են...

Հակոբ-Գրիգորը Փարիզում հրատարակած մի գրքույկում Պ. Սևակին հղած պատասխանում գրում է. «Ոչ ոք չի կարողար ձեր ուղղագրությամբ և ձեր լեզվով գրված թերթեր. սակավ կարդացողներն ալ հակակրությամբ կը լեցվին»¹⁰:

Ըստ Լ. Միրիջանյանի՝ «արդի ուղղագրության պատճառով մինչև այսօր Հայաստանի հայր և Սփյուռքի հայր դժվարանում են հասկանալ միմյանց գրավոր խոսքը՝ լինի նամակ, թերթ կամ գիրք»։ Հեղինակը երևի չի էլ պատկերացնում, որ գրական հայերենի երկու տարբերակների միջև եղած հիմնական տարբերությունները բառաքերականական են, հնչյունական-արտասանական և այլն, իսկ ուղղագրականը երկրորդական դեր ունի։ «Մեկ ազգ, մեկ լեզու, մեկ ուղղագրություն» կեղծ հայրենասիրական կարգախոսով հանդես եկողները նենգափոխում են փաստերը, փորձում վարկաբեկել նոր ուղղագրությունը, հայ ազգի մեծ երախտավոր Մ. Աբեղյանին, որը, իբրև «Միբիր քշվելու փտանգից վախեցած», «իր գլուխն ազատելու համար» կառավարության պարտադրանքով ոտքի վրա, գաղտնի կերպով, հակառակ ամբողջ հայ մտավորականության պահանջի,

⁸ Տե՛ս Ասատրյան Մ., Անհիմն առաջարկ, «Հայաստան» օրաթերթ, 16. 04. 1991:

⁹ Իշխանյան Ռ., «Ազգ՝ նշանակում է ավանդույթ», «ԳԹ», 1 սեպտ., 1989 թ.:

¹⁰ Համագգային ուղղագրության և հայերենի մաքրագործման հարցերը, 1977, էջ 40:

առանց քննարկման փոխել է ուղղագրությունը, և մեզ բաժին է հասել «բոլշևիկյան» ուղղագրությունը:

Հիշենք, որ 1922 թ. բարեփոխումից դեռ երեսուն տարի առաջ՝ 1892 թ., Մ. Աբեղյանը գիրք էր գրել՝ «Հայոց լեզվի ուղղագրությունը», դրանից ամիսներ անց՝ ուղղագրության ուսուցման օժանդակ ձեռնարկ՝ «Գայլ և գայլի պատահարներ», իսկ 1913 թ. հոկտեմբերին հայ գրերի գյուտի 1500-ամյակի հոբելյանական նիստին կարդացել ընդարձակ զեկուցում այդ մասին, որը փաստորեն նախագիծն էր հետագա բարեփոխումների: Անդրադառնալով այս զեկուցմանը՝ ակադ. Սարգիս Հարությունյանը նշում է. «Աբեղյանը ապացուցում է, որ այն (ուղղագրական բարեփոխումը- Ա.Ա.) մի անխուսափելի անհրաժեշտություն է, «իսկական շարունակությունն ու մնացորդը» «գրաբարի և աշխարհաբարի մեծ վեճի, որ դեռ վերջնական բավարար լուծում չի ստացել մտքերի ընդհանրապես»»¹¹:

Նոր ուղղագրությունը մերժողները, չունենալով հին ուղղագրությանը վերադառնալու իրենց պահանջները հիմնավորող գիտական փաստարկներ, շահարկում են այն հանգամանքը, որ հայ մշակույթի նշանավոր դեմքերից մի քանիսը անբարենպաստ են արտահայտվել 1922 թ. ուղղագրական բարեփոխության վերաբերյալ: Ավանդույթը խախտող ցանկացած նորություն, բնականաբար, հանդիպում է դիմադրության ու դժգոհության: Սույն բարեփոխման մասին հայ մտավորականների կարծիքները նույնպես տարբեր էին: Հակաաբեղյանական թևի հիմնական կռիվներից մեկը Հ. Թումանյանի և Ա. Իսահակյանի մամակներն են՝ առաջինը ուղղված Հայաստանի լուսժողկոմ Պ. Մակինցյանին, մյուսը՝ Մ. Սարյանին: Մեծ լռեցին, ճիշտ է, իր դժգոհությունն է հայտնում՝ լինելով մաս կատարվածի անմիջական տպավորության տակ: Իսկ ինչու՞ չի հիշատակվում նրա երկրորդ մամակը Պ. Մակինցյանին՝ գրված երկու ամիս անց. «Ուղղագրությանը գալով՝ ես հոտառությունով ասում եմ, որ դա չի անցնելու ամբողջովին. օրինակ՝ *ո-ի* և *յ-ի* պատմությունը: Ոչ թե պետք է հին հնչյունները վերականգնել, այլ մաշվածները դեն

¹¹ Հարությունյան Ս., Մ. Աբեղյան, Եր., 1970, էջ 109:

զցել, ինչպես ռուսներն արին: Ոչ թե պետք է դժարացնել, այլ պետք է հեշտացնել...¹²»: Ակադ. Է. Ջրբաշյանն այս նամակի մասին գրել է. «Ինչքան էլ զարմանալի թվա, 12 էջից բաղկացած և շատ հստակ ձեռագրով շարադրված այդ նամակը չի գրված ոչ Թումանյանի համար այնքան սովոր գրաբարյան ուղղագրությամբ /.../ և ոչ էլ 1922 թ. ռեֆորմի սկզբունքներով, որոնք արդեն սկսել էին գործադրվել մամուլում: Նամակը գրված է մի ուղղագրությամբ, որը բացարձակորեն համընկնում է 1940թ. սահմանված սկզբունքներին: /.../ Հ. Թումանյանը Պ. Մակինցյանի միջոցով կարծեք ցանկացել է հուշել, թե ինչպիսին պետք է լինի ժամանակակից հայերենի ուղղագրությունը: Դա, կարելի է ասել, *Թումանյանի ուղղագրական կրթակն էր*¹³» /ընդգծումը մերն է՝ Ա. Ա./: Հետընթաց ռեֆորմի առաջամարտիկ Ռ. Իշխանյանին ուղղված խոսքում մենք գրականագետը գրում է, որ Իշխանյանը թող մեկընդմիջտ հանգիստ թողնի Հ. Թումանյանին՝ չդարձնելով իր դաշնակիցը¹⁴:

Ինչ վերաբերում է Ա. Իսահակյանին, հայրենիքից հեռու ապրող վարպետը Մ. Սարյանին հասցեագրված նամակում գրել է. «Ամեն բան լավ է գմում Հայաստանում /Երևանից եկած թերթերը կարդում եմ/, միայն մի բան գեշ է – ուղղագրությունը. աշխատեցե՛ք փոխել»¹⁵: Թող չօգտագործեն այս անգամ էլ Իսահակյանի գրածը, իսկ թե ինչ մեծագույն գնահատանքի է արժանացրել նա Մ. Աբեղյանին, վկայում են այս խոսքերը. «Մանուկ Աբեղյան: Ի՞նչ էր նա մեզ համար – հայկական ավանդությունների մարմնացում, գիտնական բառիս ամենախորին իմաստով՝ անվախ, աննախապաշար, անկեղծ, վառ հայրենասեր՝ լի հավատով հայ ժողովրդի լավագույն ապագայի հանդեպ, սկզբունքի, աշխատանքի և գործի հսկա, պատկառելի ուսուցիչ, սերունդների անձնվեր դաստիարակիչ»¹⁶:

¹² Թումանյան Հ., Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1969, էջ 432:

¹³ Ջրբաշյան Է., Լուրջ հարցին լուրջ մոտեցում, «Ավանգարդ» օրաթերթ, 10.11.1989:

¹⁴ Ն. տ.:

¹⁵ Տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», 1962, հ. 4, էջ 174:

¹⁶ «Գրական թերթ», 1959, հ. 40:

Հավելենք՝ Ե. Չարենցն ու Ա. Բակունցը արեղյանական ուղղագրությունը համարել են մեր ազգային նվաճումներից մեկը:

Չունենալով գիտական որևէ լուրջ ու հիմնավոր կռիվ՝ հին ուղղագրությունը վերահաստատելու կողմնակիցների հիմնական փաստարկը այդ քայլով իբրև թե ազգային ակունքներին վերադառնալն է, և կարծես թե գրաբարով ավանդված հսկայական գրականությունը չենք հասկանում հին ուղղագրության փոխվելու պատճառով: Նորից հղում անենք Մ. Ասատրյանից. «Կարելի է բերել ամբողջական նախադասություններ, որոնք հին և նոր ուղղագրությամբ ճիշտ և ճիշտ նույնն են: Վերցնենք հետևյալ նախադասությունները: *Երկիր ի փոքրունց: Առն միոջ էին երկու որդիք: Կապարեցան գիրք առաջին ծննդաբանության Հայոց Մեծաց:* Ժամանակակից գրագետ հայը մի տառի տարբերությամբ ճշտորեն կկարդա դրանք, բայց դրանց բովանդակությունը չի հասկանա և որպեսզի հասկանա, նա, ոչ ավել, ոչ պակաս, պետք է ծանոթանա գրաբարին և այդ ժամանակ կիմանա, որ վերևի նախադասությունները նշանակում են՝ *Վախեցիր փոքրերից: Մի մարդ ուներ երկու որդի: Ավարտվեց Մեծ Հայքի ծննդաբանության առաջին գիրքը*¹⁷»: Այնպես որ ազգային ակունքներին վերադառնալը ընդամենը ամբոխավարական սին կոչ է:

Խնդրո առարկա հարցը քննել են ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը, նախագահությունը, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը, ԵՊՀ հայոց լեզվի, մյուս բուհերի հայագիտական ամբիոնները և կայացրել միանշանակ որոշում՝ մերժել արդի ուղղագրության դեմ ամեն մի ոտնձգություն: Նույն կարծիքին է Հայաստանի ուսուցչությունը: «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի հուլիսի 5-ի (1997 թ.) համարում տպագրվել է մի հայտարարություն՝ «Ի պաշտպանություն հայերենի արդի ուղղագրության» վերնագրով, որի տակ ստորագրել են ինը կարկառուն լեզվաբաններ՝ ակադ. Գ. Ջահուկյանը, ակադ. Ս. Աբրահամյանը, պրոֆ. պրոֆ. Հ. Բարսեղյանը, Վ. Առաքելյանը և այլք /սրան հաջորդել է Լ. Միրիջանյանի հողվածը՝ «Լեզուն լեզվաբանների մենաշնորհը չէ»՝ լեցուն լեզվական ամենատարբեր

¹⁷ Ասատրյան Մ., ն. տ.:

սխալներով/ 1998 թ. ապրիլի 22-ին ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի և ԳԱԱ լեզվի ինստիտուտի համատեղ գիտաժողովը կրկին հիմնավորեց գործող ուղղագրության լիակատար համապատասխանությունը ժամանակակից արևելահայերենի հնչյունական համակարգին և դատապարտեց այլ ուղղագրության դեմ ամեն կարգի ոտնձգությունները: Որոշման մեջ գրված է. «Նոր ուղղագրությունն ինչ-որ մեկ կամ երկու անհատի /Մ. Աբեղյանի կամ Մ. Աբեղյանի և Պ. Մակինցյանի / կամ թեկուզ այն ժամանակվա կառավարության «բոլշևիկյան» / նախաձեռնությունը չէր, որ կյանքի կոչվեց. այն պատմական անհրաժեշտություն էր՝ թելադրված մեր լեզվի զարգացման ներքին օրինաչափություններով»¹⁸:

Թվում է՝ հարցը պետք է փակված համարվեր, սակայն այն նորից բարձրացվեց ամիսներ առաջ այս անգամ... Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Առաջին կաթողիկոսի կողմից..., որի հետևանքով էլ առաջացավ խնդրին մեր կողմից վերստին անդրադարձը:

Միայն այն հանգամանքը, թե հայագիտության ինչպիսի կարկառուն դեմքեր են եղել դեմ աբեղյանական գործող ուղղագրությունը փոխելուն, պետք է զգաստացնեի (մաս զգաստացնի) ցանկացած ընդդիմախոսի՝ Գ. Ջահուկյան, Ս. Աբրահամյան, Հ. Բարսեղյան, Գ. Ջրբաշյան, Մ. Ասատրյան, Վ. Առաքելյան, Ա. Մարգարյան, Ա. Պապոյան, Պ. Շարաբխանյան և այլք:

Իսկ ի՞նչ կլինի, եթե հանկարծ կատարվի նրանց ցանկությունը. մենք ոչ թե չենք մոտենա մեր ազգային ակունքներին, այլ կկորցնենք հայ մշակույթն ու գիտությունը: Չմոռանանք՝ երբևէ հայ իրականության մեջ չի եղել այնքան տպագրված գրականություն, որքան կա վերջին հարյուրամյակում:

Հաշվի առնենք մի հանգամանք ևս. երբ փոխում էին ուղղագրությունը, ազգաբնակչության քանի՞ տոկոսն էր գրագետ (բնականաբար չնչին) և հիմա: Միանգամայն պարզ է, որ Հայաստանում բնակվող և նրանից վերջին տասնամյակներին արտագաղթած ողջ հայությունը կդառնա անգրագետ գրչի մեկ հարվածով: Էլ չենք խո-

¹⁸ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 16.05.1998:

սում Ռուսաստանի մի քանի միլիոնացի հայ համայնքի մասին, ԱՄՆ-ի հայ ազգաբնակչության գերակշիռ մասը կազմող արևելահայության մասին:

Հին ուղղագրությունը տասնյակ անգամ ավելի խրթին է, որի յուրացումը կպահանջի երկարատև ժամանակահատված: Նշենք, որ ժամանակին Մ. Աբեղյանը նոր ուղղագրության յուրացման համար նախատեսում էր առնվազն 20 տարի /այս դեպքում մեկ դար կպահանջվի հավանաբար/: Եվ ովքե՞ր պետք է ուսուցանեն հին ուղղագրությունը, Սփյուռքից եկած ուսուցիչները... Երևի պիտի նորից բացվեն «լիկկայաններ», որտեղ Ս. Նազարյանի ասած՝ նույն աշակերտական մատարանին կնստեն աշակերտն ու պրոֆեսորը... Հագարավոր քանի՜ բառացանկեր պիտի հիշի խեղճ հայ երեխան, որ ճիշտ գրի **է/ե, օ/ո, յ/հ, վ/ւ/ու**: Էլ չենք խոսում բառի թեքման ժամանակ հնչյունի գրային նշանի փոխվելու դեպքերի մասին /**թիւ**, բայց՝ **թուեր, թուով** և այլն/: Այդ դեպքում այբուբենից պետք է հանվեն **օ** և **ֆ** տառերը, քանի որ մաշտոցյան այբուբենում դրանք չեն եղել, 12-13-րդ դդ. նոր մտել են գործածության մեջ և այլն, և այլն: Հ. Թումանյանը ժամանակին գրել է. «Ուղղագրությունը գիտություն է, և նրա դեմ կարելի է դուրս գալ կամ նրան փոխել միայն գիտությունով»¹⁹:

Միասնական ուղղագրություն ունենալու պահանջը իբրև կովան ներկայացնողների մտքով ինչու՞ բնավ չի անցնում, որ այդ միասնականությանը կարելի է հասնել արևմտահայերենի ուղղագրությունը փոխելով. ավելորդ չէ երևի նշել, որ ոչ մի միասնական ուղղագրություն էլ չկա հայկական գաղթօջախներում: Արևմտահայերը լսել անգամ չեն ուզում այդ մասին, և դա իրենց իրավունքն է:

Շատերն էլ միամտաբար կարծում են, որ եթե ստեղծվի մեկ միասնական ուղղագրություն Հայաստանում և Սփյուռքում, դա վճռական քայլ կլինի նաև լեզվի միասնականացման ճանապարհին:

19-րդ դարի կեսերից, երբ վերջնականապես ձևավորվում էր աշխարհաբարը, նրա երկու ճյուղերի առկայությունը պատմական փաստ էր: Այդ ժամանակ նույնպես շատ մտավորականներ նման

¹⁹ **Թումանյան Հ.**, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1951, էջ 139:

փորձեր կատարել են, որոնք ապարդյուն են անցել: Մի՞թե գրական լեզուների տարբերությունը միայն ուղղագրության մեջ է, հապա հնչյունական համակարգը, քերականական կառուցվածքը, բառապաշարը և այլն, և այլն...

Երկու գրականները միավորելը միամիտ երազանք է կամ դիտավորություն: Մ. Ասատրյանը գրել է. «Հայ ազգը գրական լեզվի միասնության կարող է հասնել միայն այն դեպքում, երբ կվերանա պատմական աղաղակող անարդարությունը, հայ ժողովրդին կվերադարձվեն նրա արևմտյան տարածքները, և, այսպիսով, սփյուռքի հայությունը հնարավորություն կունենա զանգվածորեն ներգաղթելու ..., ահա այդ ժամանակներից կսկսվի երկու գրական լեզուների մրցակցությունը:...Իսկ թե երկուսից ո՞րը կհաղթի, այս հարցին կարող է պատասխանել միայն Աստված»²⁰:

Ուղղագրության միասնականացման և երկու գրականների մերձեցման շղարշի տակ շատերն էլ ձգտում են դրանցից մեկի վերացմանը. հասկանալի է՝ թիրախը արևելահայերենն է: Նման գործընթաց իրականացնելու համար պահանջվում են նյութական վիթխարի միջոցներ, որն ի գործու է կատարել միայն սփյուռքահայությունը:

Այսպիսով, ուղղագրության փոփոխման հարց կարող է առաջանալ միայն այն դեպքում, եթե այն չհամապատասխանի տվյալ լեզվի հնչյունական համակարգին. սա է ուղղագրության փոփոխության հիմքը: Այդ պատճառով է, որ հին ուղղագրության կողմնակիցները չեն էլ ուզում քննել, թե ո՞ր ուղղագրությունն է առավել ճշգրիտ արտացոլում մեր լեզվի օրինաչափությունները:

Հայերենի գործող ուղղագրության մեջ հմտորեն միահյուսված են հնչյունական ու ավանդական սկզբունքները, այն միանգամայն համապատասխանում է արդի գրական արևելահայերենի ոգուն ու էությանը: Նոր ուղղագրությունը պատճառաբանվում և հիմնավորվում է ինչպես տեսականորեն, գիտականորեն, այնպես էլ գործնականորեն ու մանկավարժորեն:

Եվ վերջապես ի՞նչ խնդիր ենք լուծում: Խնդիրն արհեստածին է:

²⁰ Ասատրյան Մ., ն. տ.:

Եռանդն ու ժամանակը անհրաժեշտ է ծախսել իրական խնդիրների վրա, օրինակ՝ գրական և առօրյա-խոսակցական լեզուների մերձեցում, լեզվի անադարտության ապահովում, պայքար նրա գոեհկացման, ժարգոնի դեմ, որն ամփնա տարածում են զանգվածային լրատվության միջոցները, և ոչ թե *պարրապրավաժ, մեր կարծիքով, կեղծ օրակարգի*:

Առաջարկում ենք լեզվի մասին օրենքում հստակ ձևակերպել **գործող ուղղագրությունը պարտադիր է Հայաստանի բոլոր քաղաքացիների համար, ինչպես մնացած բոլոր օրենքները:**

Արդի արևելահայերենի ուղղագրությունը փոխելու փորձերը անիմաստ են, հակաարդյունավետ, հակապատմական, վտանգավոր ու կործանարար հայ ժողովրդի համար բոլոր առումներով՝ թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական, թե՛ սոցիալական, թե՛ մշակութային, հոգևոր ու կրթական:

Բանալի բառեր՝ դասական ուղղագրություն, բարեփոխում, հնչյունական համակարգ, սիյուրք, արևելահայերեն, արևմտահայերեն, լեզվական նորմ, բառապաշար, հնչյունափոխություն, լեզուների մերձեցում:

АННА АБАДЖЯН – Необоснованная критика абебяновской действующей орфографии. – Вопрос об изменении орфографии возникает только тогда, когда она начинает не соответствовать фонетической системе данного языка: вот основа изменения орфографии. В действующей орфографии армянского языка соединены 2 принципа – фонетический и традиционный. Она полностью соответствует сущности и духу современного восточноармянского языка. Новая орфография обоснована как теоретически, так и практически, педагогически. И, в конце концов, какую задачу мы решаем: проблема надумана.

В данной статье мы предложили четко сформулировать в Законе о языке, что соблюдение действующей орфографии также обязательно для всех граждан Армении, как и соблюдение всех законов республики.

Попытки изменить орфографию современного восточноармянского языка бессмысленны, антиисторичны, опасны и губительны для армянского народа во всех смыслах – и в историческом, и в политическом, и в

экономическом, и в социальном, и в культурном, в духовном, в образовательном.

Ключевые слова: классическая орфография, реформа, фонетическая система, Диаспора, восточноармянский и западноармянский языки, языковая норма, лексика, фонетические изменения, сближение языков.

ANNA ABAJYAN - The groundless criticism to Abeghyan operating orthography. – The question about changing the spelling can arise only when it does not correspond to the phonetic system of the language: this is the basis of changing the spelling. In the current spelling of the Armenian language with experience, two principles are combined - phonetic and traditional. It fully corresponds to the essence and spirit of the modern Eastern Armenian language. The new orthography is justified both theoretically and practically, pedagogically. And, in the end, what problem we solve. The problem is artificial.

We propose to the Law on Language to formulate clearly: the current orthography is obligatory for all citizens of Armenia, as well as all other laws.

Attempts to change the spelling of the modern Eastern Armenian language are meaningless, antihistorical, dangerous and pernicious for the Armenian people in all senses - historically, politically, economically, socially, and culturally, spiritually, and educationally.

Keywords: classical orthography, reform, phonetic system, diaspora, Eastern Armenian and Western Armenian languages, language norm, vocabulary, phonetic changes, convergence of languages.

ԱՐԱՋՅԱՆ ԱՆՆԱ (ԵՊՀ)

abajyan.anna@ysu.am

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՔՆԱՐ (ԵՊՀ)

ասպիրանտ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ»

ԵՐԿԻ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ

(կառուցվածքային քննություն)

Ժամանակակից հայերենի դարձվածքները հանգամանալից ուսումնասիրության են ենթարկվել 20-րդ դարի 50-ականներից սկսած՝ դարձվածաբանությունն իբրև առանձին գիտաճյուղ հաստատվելուց գրեթե մի քանի տասնամյակ անց: Դարձվածային միավորների համակողմանի քննությունը շարունակվել է ընդիուպ մինչև մեր օրերը, ճշգրտվել են դարձվածաբանության տեսական հարցեր, կազմվել բառարաններ, վեր հանվել արդի հայերենի դարձվածքների կառուցվածքային օրինաչափություններն ու իմաստային-ոճական յուրահատկությունները: Սակայն մույնը չենք կարող ասել գրաբարի դարձվածքների քննության մասին: Թեև հայերենի զարգացման նախորդ փուլերի՝ գրաբարի և միջին հայերենի դարձվածքների ուսումնասիրության բացը տարբեր առիթներով մատնանշել են լեզվաբաններից շատերը, սակայն մինչ օրս համակողմանի քննություն չի կատարվել. կան հարցին վերաբերող մասնավոր ուսումնասիրություններ և հոդվածներ, որոնք կա՛ն գրաբարյան դարձվածային համակարգը ներկայացնում են շատ ընդհանուր հատկանիշներով, կա՛ն նվիրված են որոշ մասնավոր երևույթների, կա՛ն էլ վերաբերում են գրաբարյան առանձին երկերի դարձվածային համակարգի քննությանը¹. անգամ գրաբարի դարձվածա-

¹ Այս մասին տե՛ս **Հարությունյան Ք.**, «Գրաբարի դարձվածքների և ոճերի քննությունը հայ լեզվաբանության մեջ» հաղորդումը, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական V գիտաժողովի զեկուցումներ, Եր., 2015, էջ 95-101:

բանական առանձին բառարանը տպագրվել է վերջերս², թեև գրաբարի բառարաններում և հատկապես «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում մեծ մասով տրվում են դարձվածքները:

Սույն աշխատանքով նպատակ ունենք ներկայացնելու Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկի դարձվածքների միայն կառուցվածքային քննության արդյունքները³: Քննությունը կատարել ենք ըստ նշյալ երկի վերջին՝ «Մատենագիրք հայոց» մատենաշարի հրատարակության⁴, մեր քարտագրումները համեմատել երկի Համաբարբառի⁵ տվյալների հետ, ապա ստուգել «Նոր բառգիրք հայկազեան լեզու»⁶, Լ. Հովհաննիսյանի «Նոր Հայկազյան բառարանում չվկայված բառեր» (Երևան, 2010), Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Նորայայտ բառեր գրաբարում» (Երևան, 2007) բառարաններով:

Մ. Խորենացու երկի լեզվի մասին տարբեր առիթներով խոսել են Ս. Մալխասյանը, Մ. Աբեղյանը, Վ. Առաքելյանը, ովքեր հատկապես շեշտում են լեզվի պերճ, զարդարուն, շքեղ, միաժամանակ դյուրին, հասկանալի ու կանոնիկ, ոչ երբեք արհեստական լինելը: «...Շատ կանոնավոր ու դյուրին, միանգամայն և ախորժելի, երբեք չոր և ցամաք»⁷, - գրում է Մ. Աբեղյանը: Իսկ լեզուն շքեղ, զարդարուն, «ախորժելի» դարձնող կարևոր բաղադրիչներից մեկն էլ դարձվածքներն են:

² **Ղազարյան Ռ.**, Գրաբարի դարձուածաբանական բառարան, Եր., 2012:

³ Ընդ որում, այստեղ ներկայացնում ենք միայն այն դարձվածքները, որոնք՝ իբրև դարձվածք, ներկայացված են վերը նշված բառարաններում, մեր ուսումնասիրության շնորհիվ քարտագրած որոշ դարձվածքներ, որոնք բառարաններում արձանագրված չեն, ներկայացնելու ենք առանձին հաղորդմամբ:

⁴ **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Մատենագիրք հայոց, Ե դար, Բ հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1743-2121:

⁵ Համաբարբառ Մովսես Խորենացույ «Պատմութիւն հայոց» երկի, հ. 1-3, Եր., 1975, 1976:

⁶ **Աւետիքեան Գ., Միսրմէլեան Խ., Աւգերեան Մ.**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Բ, Վենետիկ, 1836, 1837:

⁷ **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Գ, Եր., 1968, էջ 319:

Մ. Խորենացու երկի լեզվի ու ոճի, հետևաբար և բառապաշարի քննությամբ զբաղվել են Վ. Առաքելյանը, Օ. Խաչատրյանը⁸: Վ. Առաքելյանը ներկայացրել է բառապաշարի առանձնահատկությունները, իսկ Օ. Խաչատրյանը՝ կատարել բառապաշարի վիճակագրական քննություն, բայց դարձվածքներին առանձնապես չեն անդրադարձել: Անշուշտ, մեր քննության ժամանակ ըստ հարկի կօգտվենք նրանց կատարած քննությունից և եզրակացություններից:

Ըստ ձևաբանական հատկանիշի, այսինքն՝ հաշվի առնելով իմաստային, բառաքերականական և գործառական հատկանիշները՝ արդի հայերենում ընդունված է առանձնացնել գոյականական, ածականական, բայական, մակբայական, եղանակավորող դարձվածային միավորներ⁹: Նման ձևաբանական դասակարգում կարելի է կիրառել նաև գրաբարի դարձվածքների համար: Այս տեսանկյունից քննելով՝ Մ. Խորենացու երկի դարձվածքներից միայն մեկը գոյականական է՝ **կենաց դեղ** (մասնակաղապարը՝ եզ. սեռ.+ողղական), մնացած բոլորը՝ բայական: Սա իրականում զարմանալի չէ և պայմանավորված է նրանով, որ ինչպես բայ խոսքի մասն է հայերենում կարևոր դեր խաղում և առանձնանում իր քերականական հարուստ համակարգով, այնպես էլ բայական դարձվածային միավորները: Եվ այս ընդհանուր տեսական եզրակացությունն անշուշտ դրսևորվում է մասնավոր երկերում և կիրառություններում: Լեզվում բայական դարձվածքների գերակշռությունը և ճոխությունը նկատել և արձանագրել են նաև ժամանակակից հայերենի դարձվածքներն ուսումնասիրող լեզվաբանները: Այսպես՝ Խ. Բաղիկյանը գրում է. «Իրենց իմաստաքերականական բազմազան առանձնահատկությունների, քերականական կարգերի հարստության, կառուցվածքային տիպերի բազմազանության շնորհիվ ինչպես շատ լեզուների,

⁸ **Առաքելյան Վ.**, Խորենացու լեզուն և ոճը, Պատմաբանասիրական հանդես, 1975, հ. 2, էջ 105-120, **Խաչատրյան Օ.**, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» բառապաշարի քննություն, Եր., 2011 թ.:

⁹ **Բաղիկյան Խ.**, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986, էջ 91:

այնպես էլ հայերենի դարձվածաբանության համակարգում ամենամեծ կշիռն ու գործածության ոլորտն ունեն բայական դարձվածային միավորները»¹⁰, և դրա պատճառներից մեկը համարում է հայերենի հարադրավոր բայերը, որոնք կարևոր աղբյուր են բայական դարձվածային միավորների ստեղծման համար¹¹: Առանց վաբանելու կարող ենք ասել, որ այդպես է նաև գրաբարում:

Մյուս կողմից էլ՝ Մ. Խորենացու երկի բառապաշարի վիճակագրական քննությամբ Օ. Խաչատրյանը պարզել է, որ «նրա (Մ. Խորենացու) բառագործածությունների ընդհանուր թվի մեջ բայերը զգալի քանակ են կազմում՝ համադրական և հարադրական կազմությունները միասին 27,7%: Սա բավականին բարձր ցուցանիշ է, եթե համեմատենք Պ. Պողոսյանի բերած տվյալների հետ (զիտական խոսքում և հրապարակախոսության մեջ 9%, իսկ գեղարվեստական խոսքում 18-19%)»¹²: Օ. Խաչատրյանը Խորենացու բառապաշարի ինքնատիպություն և հեղինակային ոճի անհատականության դրսևորում է համարում նաև վերլուծական կառուցվածքի (հարադրավոր) բայերի գործածությունը, «որոնց հարաբերական տոկոսը նույնպես բավականաչափ մեծ է, քեև զիջում է համադրական կազմություններին (18,8% և 8,9% համապատասխանաբար)»¹³:

Ըստ բաղադրիչների քանակի՝ դարձվածային միավորները լիևնում են երկանդամ և բազմանդամ: Բայական դարձվածքների համակարգում ամենամեծ թիվն ու գործածության հաճախականությունն ունեն երկանդամ կառույցները: Դա բացատրվում է նրանց կարճությամբ, հեշտ վերարտադրելիությամբ և մեծ թվով հիմնականում երկանդամ հարադրավոր բայերից առաջացած լինելու հանգամանքով¹⁴:

Բոլոր դեպքերում գերադաս անդամը անորոշ դերբայն է, որը գուրորդվում է այլ խոսքի մասերի հետ: Մ. Խորենացու երկում գործած-

¹⁰ Նույն տեղում, էջ 158:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 161:

¹² **Խաչատրյան Օ.**, նշվ. աշխ., էջ 115:

¹³ Նույն տեղում, էջ 116:

¹⁴ Տե՛ս **Բաղիկյան Խ.**, նշվ. աշխ., էջ 163-164:

ված՝ 253 բայական դարձվածքներից երկանդամ են 243-ը, եռանդամ՝ 9-ը, քառանդամ՝ 1-ը:

ՔԱՌԱՆԴԱՄ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐ: Մեր ունեցած միակ օրինակն է՝ *երկիւղ մահու դնել ի վերայ* (մահուան սպառնալիք անել¹⁵, «Վասն որոյ պաշարեալ զնոսա Արարաշխի եւ երկիւղ մահու եղեալ ի վերայ», 2 ԻԸ¹⁶)՝ Գ+Գ+Բ+Մ կաղապարով:

ԵՌԱՆԴԱՄ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐ¹⁷: Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց» աշխատության մեջ կա 9 եռանդամ դարձվածք, որոնք 3 մասնակաղապարներով են հանդես գալիս՝

ա. Բ+Գ+Գ - 3 օրինակ. *անկանել ի բանս հրապուրանաց* - հրապուրվել («Եվ նորա անկեալ ի բանս հրապուրանաց, ասելով...», 3 ԿԴ), *խաւսիլ ի հաշտութիւն խաղաղութեան* - հաշտության բանակցություն սկսել («Խաւսի ընդ նոսա ի հաշտութիւն խաղաղութեան, տալով զհարկս...», 3 ԻԴ), *հարկանել սրով սուսերի* - սրակոտոր անել («...եւ հարին զնա սրով սուսերի յառնէ մինչեւ ցկին...», 3 ԻԷ):

բ. Գ+Գ+Բ - 5 օրինակ. *խոյզ խնդրոյ առնել* - քննություն կատարել («Ընդ որ տարակուսեալ մեր՝ բազում խոյզ խնդրոյ արարութ», 3 ԻԷ), *հանգոյց ի հագոցէ փախչել* - իջևանից իջևան փախչել՝ առանց կանգ առնելու («...հեծեալ ի նոր ձիս հանգոյց ի հանգոցէ փախչել», 2 ԽԶ), *ուշ ի կուրծս անկանել* - ուշքի՝ խելքի գալ («Ուստի ուշ ի կուրծս եկեալ եւ ի միտս եկեալ նախարարացն Հայոց՝ ժողովեցան...», 3 Դ), *պէտք յանձին ունել* - հոգալ («...գոր եւ ոչ մի որ ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենագրել», 1 Գ), *փոյթ յանձին ունել* - ջանալ, հոգալ («...ոչ որ այսպիսի իրաց փոյթ յանձին ունէր», 1 ԺԴ):

գ. Մ+Մ+Բ - 1 օրինակ. *ցիրք ընդ ցիրս լինել* - ցրվել («Խաղացին ի մէջ ճակատուցն եւ ցիրք ընդ ցիրս լինէին» 3 ԼԷ):

¹⁵ Դարձվածքների բացատրությունները տալիս ենք ըստ Ռ. Ղազարյանի նշված բառարանի:

¹⁶ «Պատմութիւն Հայոց» երկից բերված օրինակներից հետո թվով նշում ենք երկի գրքերից յուրաքանչյուրի համարը, տառերով՝ գրքերից յուրաքանչյուրի գլուխը:

¹⁷ Եռանդամ ենք համարում նաև այն դարձվածքները, որոնցում հարադիր բայն է լրացվում այլ խոսքի մասերով, քանի որ դա ընդունված մոտեցում է նաև արդի հայերենի դարձվածքների քննության ժամանակ (տես **Քաղիկյան Խ.**, նշվ. աշխ., էջ 176):

Անշուշտ, այս կադապարները կարելի է ներկայացնել՝ նրանց մեջ ևս առանձնացնելով ենթակադապարներ՝ ըստ այն հանգամանքի, թե ինչ հոլովով են դրված և բայի ինչ լրացումներ են գոյականները, սակայն նման քննությունը տեղին կլինի ավելի ընդգրկուն և շատ օրինակներով տեսական ուսումնասիրություններ կատարելու դեպքում, ուստի այստեղ դրանց չենք անդրադառնում:

ԵՐԿԱՆԴԱՄ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐ: Սրանք, ինչպես արդեն նշեցինք, ընդհանրապես հայերենի բառապաշարում և մասնավորապես Մ. Խորենացու երկում ամենաշատն ու բազմազանն են իրենց կադապարներով: «Պատմութիւն Հայոց» երկում երկանդամ դարձվածքները հանդես են գալիս հետևյալ մասնակադապարներով՝ Գ+Բ, Բ+Գ, Ա+Բ, Բ+Ա, Մ+Բ, Բ+Մ, Բ+Դ, Բ+Բ. ընդամենը՝ 243 դարձվածային միավոր:

ա. Գ+Բ – 105 դարձվածք, որը կազմում է երկանդամ դարձվածքների մոտ 43%-ը (չհաշված մույն Դ.-ի կրկնությունները). *ակն ածել* («...ինքն ի Տիսրոն փութայր հասանել, ի ծերութենէ հարն ակն ածեալ...», 3 Ծ), *գիոգիւն աւանդել* («...ուր երանելին գիոգիւն աւանդեաց», 3 ԿԷ), *դէպ լինել* («...պատուէր տայ զաւրապետաց իւրոց, թէ դէպ լինիցի՝ հնարել ապրեցուցանել զԱրայն», 1 ԺԵ), *գրռամբ ածել* («...ոչ այնչափ ի սպանանել զմա եւ ի հալածել փութայր, քան թէ ի նուաճել կամ զբռամբ ածել...», 1 ԺԵ), *զմլրաւ ածել* («Իսկ նախարարացն զմտաւ ածեալ, իբր թէ խաբկանաւք իցէ գործն...», 3 ԿԳ), *ընդ կրունկ դառնալ, թիկունս առնել, խորհուրդ բերել, չայն արկանել, յարրասուս հարկանել, տեղի տալ, փոյթ առնել, յաշխարհէ փոխել* և այլն:

բ. Բ+Գ – 42 դարձվածք (մոտ 17%). *ածել ի գիրութիւն* («գորս գտեալ՝ ածէ եւ զնոսա ի գիտութիւն ճշմարտութեան...», 3 Կ), *ածել ի կարարումն* («Յաղագս որոյ հեշտաբար ընկալեալ զբո խնդիրդ՝ աշխատասիրեայց ածել ի կատարումն...», 1 Ա), *անցանել ընդ թիւ* («Արդ՝ անցցուր այսուհետեւ ընդ թիւ թագաւորաց ցեղին Արտաշիսի մինչեւ ցբառնալ ի նոցանէ տէրութեան», 2 ԿԹ), *գալ ի հնազանդութեան* («...առաքէ ի կողմն հիւսիսոյ զմի ոմն յորդոց իւրոց առ Հայկ արամբք հաւատարմաւք, գալ նմա ի հնազանդութիւն...», 1 ԺԱ),

դնել ի մորի («Մի՛ դիցե՛ ինքնակալդ ի մտի, եթե առ ատել զձեզ նշկա-
հեցաք...», 3 ԻԹ), *դնել վկայութիւն* («...մեծն Ներսէս դներ վկայու-
թիւն ի մէջ արքային Պապայ եւ ի մէջ նախարարացն», 3 ԻԹ), *առ-
նել ընդունելութիւն, կապել թագ, ի քթել ական, լուծանել ի կենցա-
ղոյս, հաճել զմիրս, յօրինել ճակար, մրանել ընդ հարկաւ, մարել ի
սուգ, լինել ուրնկոշի, ունել պահ, առնել պարիւ, վարել ի գերութիւն,
յրալ ի ձեռս, փոխել յաշխարհէս* և այլն:

գ. Ա+Բ – 55 դարձվածք (22,6%). *անկասկած լինել* («մինչեւ յոչ
կամաց երդնուլ՝ անկասկած լինել մանկանն», 2 ՀԳ), *անփոյթ առ-
նել* («...զիմաստութենն եւ զբաշութենն եւ զբարի յիշատակացն ան-
փոյթ արարեալ, ծառայ եւ ստրուկ որովայնի արդարեւ լինելով», 2
ԻԲ), *անլրես առնել* («Եւ ապա յանդիմանութիւն այսոցիկ զի՞նչ, եթե
ոչ անտես առնել Աստուծոյ», 3 ԿԸ), *արտասահման լինել, գազա-
նակոյր լինել, գիրակ լինել, դաշնատր լինել, դիաթաւալ կացուցա-
նել, երկայնակեաց լինել, զօրավիգ լինել, թափանցիկ լինել, խարա-
նագգեսոր լինել, խեղդամահ առնել, խորասոյգ լինել, կիսախողխող
առնել, հեղձամղձուկ լինել, հնազանդ լինել, ձեռնորու լինել, ի
չքմեղս լինել, յապուշ դառնալ, չարախօս կալ, փախստական ար-
կանել* և այլն:

դ. Բ+Ա – 2 դարձվածք (0,8%). *լինել բարեխօս* («Եւ ինքն խոս-
տանայր լինել բարեխօս», 2 ԺԹ), *զնալ փախստական* («...սպան
զնա սրով եւ ինքն գնաց փախստական ի Տաւրոս Կիլիկեցոց», 2
ՂԱ):

ե. Մ+Բ – 34 դարձվածք (14%). *առաջի առնել* («...հրամայե՛ ա-
ռաջի առնել նմա զդիւանն արքունի...», 1 Թ), *զհետ երթալ*
(«...զհետ երթալով առասպելին՝ յաւոր միաշաբաթոջ երիցս կամ
չորիցս բախսն գալմ...», 2 ԿԱ), *զհետ լինել* («ձիգ զհետ եղալ՝ ան-
ցանն ընդ կապանն ճորայ», 2 ԿԵ), *ընդ առաջ ելանել* («Ընդ առաջ
նորա ելին զարք այնր կողմանն», 2 ԽԵ), *ի վերայ անկանել, ի վե-
րայ կալ, յանդիման առնել, յառաջ մարտուցանել* և այլն:

զ. Բ+Մ – 3 դարձվածք (1,2%). *ածել առաջի* («Իսկ Պարգև ի կա-
լանս ըմբռնեալ՝ ածաւ առաջի Արարաշրի», 3 Ծ), *բառնալ ի միջոյ*
(«Եվ կոյորեհաց զբազումս ի նախարարացն, մանաւանդ զազգն

Կամսարականաց, բառնայր ի միջոյ...», 3 ԼԱ), հասանել ի վերայ («Իսկ Բիրասպեայ ժողովեալ զգրուեալսն, յանկարծարէն հասանել ի վերայ...», 1 Բ):

Է. Բ+Դ - 1 դարձվածք (0,4%). *թափել յինքն* - գրավել, ազատել, («Եվ տայ պատերազմունս սաստկիս յոյժ, թափելով յինքն զամենայն արեւելս», 2 Բ):

Ր. Բ+Բ - 1 դարձվածք (0,4%). *տալ ածել* - առաքել, ուղարկել («Այլ վասն այնր, զի գրեցեր առ իս, թէ տուր ածել զայրոյ բժիշկ...», 2 ԼԳ):

Ինչպես երևում է, ամենագործուն ենթակադապարներն են՝ Գ+Բ, Ա+Բ, Բ+Գ, Մ+Բ:

Կան մի շարք դեպքեր, երբ մույն դարձվածքի բաղադրիչները կիրառված են տարբեր շարադասություններով, օրինակ՝ *ունել բողոք* («...մինչեւ առ Շապուհ եւս ունել նոցա բողոք», 3 ԻԷ, էջ 2040) և *բողոք կալեալ* («Իսկ սոցա առաւել եւս բողոք կալեալ առ արքայի...», 2 ԿԲ, էջ 1942), *կապել թագ* («...քանզի Ամանուն որդի մորա կապեաց թագ՝ թագաւորել յԵդեսիայ...», 2 ԼԴ, էջ 1905) և *թագ կապել* («Իսկ Սանատրկոյ թագ կապեալ ինքեան՝ ունի զբաղաքն Փայտակարան», 3 Գ, էջ 2011), *առնուլ կին* («...եւ ի ժառանգութիւն՝ յաւել առնուլ զկին մորին զՓառանձեմ...», 3 ԻԴ, էջ 2037) և *կին առեալ* («Քանզի նախ զդուստրն Արետայ արքայի կին առեալ Հերովդի...», 2 ԻԹ, էջ 1895), *փոխել յաշխարհէս* («Յաղագս թագաւորելոյն Տիրանայ, եւ փոխելոյ յաշխարհէս...», 3 ԺԱ, էջ 2020) եւ *յաշխարհէ փոխել* («...երանելին Մեսրոպ յաշխարհէ փոխեցաւ ի Վաղարշապատ քաղաքի...», 3 ԿԷ, էջ 2111):

Այս երևույթը նկատել և իբրև գրաբարի՝ աշխարհաբարի դարձվածքներից ունեցած տարբերություն և յուրահատկություն է դիտել դեռևս Պ. Բեդիրյանը: Այսպես՝ «Եթե աշխարհաբարի բառակապակցություններում, այդ թվում Դ-ներում, բայի լրացումների մեծ մասի (ուղիղ) շարադասությունը կարծեք թե ընդհանուր առմամբ որոշված է՝ լրացյալից առաջ, ապա գրաբարն այս հարցում դեռ այն սատիճանի հստակություն չի դրսևորում: Համենայն դեպս, կան բազմաթիվ Դ-ներ (ու այլ կայուն կապակցություններ), որոնց հա-

մար դժվար է ասել, քե հատկապես ո՞ր շարադասությունն է բնորոշ: Օրինակ՝ առնում յանձն եւ յանձն առնում, հասանեմ ի վերայ և ի վերայ հասանեմ...»¹⁸:

Նման դեպքերում, որպեսզի հստակ պատկեր ունենանք, օրինակներից յուրաքանչյուրը դիտարկել և հաշվել ենք իր համապատասխան կադապարի մեջ:

Հետևյալ 17 դարձվածային միավորների մասնակադապարները չենք առանձնացրել, քանի որ նրանց ոչ բայական բաղադրիչներն առանձին վկայված չեն «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», ինչպես նաև Լ. Հովհաննիսյանի «Նոր Հայկազյան բառարանում չվկայված բառեր», Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Նորայայտ բառեր գրաբարում» բառարաններում. *աշխար լինել* (չարչարվել. «...գրեցի ես առ քեզ՝ աղաչել գրեզ, զի աշխատ լինիցիս եւ եկեսցես առ իս...», 2 ԼԱ), *արփայագնաց լինել* (արագորեն հեռանալ, հեռու սլանալ. «Եվ զայս ասացեալ յոյժ քամահրաբար, ի ձիարձակարանէն արփայագնաց լինէր», 3 ԾԵ), *բնաբարձ առնել* (բնաջնջել. «Չորս բնաբարձ արարեալ երանելոյն», 3 Կ), *բնաջինջ առնել* (բնաջնջել. «...եւ գլեղուգական բնաջինջ արարեալ ի լեռնէն...», 2 ԺՉ), *բնաջինջ լինել* (բնաջնջվել), *գամագիւր լինել* (ելք, հնար գտնել. «Եվ ոչ եղև ի մմա գամագիւտ սատանայ...», 3 ԼԱ), *դեղակուր լինել* (թունավորվել. «Եվ ի մտերմացն Շապիոյ դեղակուր եղեալ մեռանի», 2 ՉԷ), *իրագգած լինել* (տեղեկանալ, իմանալ. «Որում իրագգած եղեալ արքային Երուանդայ, հետայոյգս առաքէ», 2 ԼԷ), *խոյս րսալ* (խուսափել, հեռանալ), *ծայրաքաղ առնել* (ծայրերը կտրել), *հեյրահաս լինել* (հետևից հասնել, հալածելով հասնել), *ձեռնամուխ լինել* (ձեռնարկել, սկսել), *յակճիռս կալ* (ուշի ուշով, ուշադրությամբ ականջ դնել, լսել), *յուդարկ երթալ* (ճանապարհել), *նգախարխար առնել* (նիգով խարխալել, քանդել), *սուսերահարն լինել* (սրախտոլիտոլ լինել), *վերահասու լինել* (իրագել լինել, տեղեկանալ): Ինչպես երևում է, արդի լեզվամտածողությամբ և հայերենի բառակազմական օրինաչափությունները հաշվի առնելով՝ որոշ բառեր

¹⁸ **Քեդիրյան Պ.**, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., 1973, էջ 217:

կարելի է ածական համարել, բայց քանի որ գրաբարում դրանք անկախ կիրառություն չեն ունեցել կամ գոնե այսօր չունենք դրանց մասին նման վկայություններ, ուրեմն չենք կարող վստահորեն որևէ դատողություն անել նաև նրանց խոսքիմասային պատկանելության մասին: Մյուս կողմից՝ կարող ենք առաջարկել մի վարկած, ըստ որի՝ գուցե սրանք այն դարձվածքներն են, որոնք գրաբարը վերցրել է բարբառներից իբրև պատրաստի, վերարտադրելի կառույցներ, այդ պատճառով էլ նրանց բաղադրիչները գրական լեզվում վկայված չեն: Իհարկե, այս ենթադրությունը կարող է հաստատվել կամ հերքվել միայն հետագա ուսումնասիրությունների ընթացքում:

Այսպիսով՝ քննելով Մ. Խորենացու «Պատմություն Հայոց» երկի բառապաշարի դարձվածքների կառուցվածքը՝ կարելի է փաստել, որ կան երկբաղադրիչ և բազմաբաղադրիչ դարձվածքներ, որոնցում երկբաղադրիչները կազմում են կիրառված բայական դարձվածքների գրեթե 96%-ը, իսկ բազմաբաղադրիչները միասին՝ 4%-ը: Երկբաղադրիչները հանդես են գալիս 8 մասնակաղապարներով՝ ա. Գ+Բ – 105 դարձվածք, բ. Ա+Բ – 55, գ. Բ+Գ – 42, դ. Մ+Բ – 34, ե. Բ+Մ – 3, զ. Բ+Ա – 2, է. Բ+Դ – 1, ը. Բ+Բ – 1:

Առանձին խումբ են կազմում և ոչ մի մասնակաղապարում չեն դասակարգվում 17 դարձվածքներ, որոնց ոչ բայական բաղադրիչները գրաբարի բառարաններում վկայված չեն. դա թույլ է տալիս կարծել, որ այդ դարձվածքները գրաբարը ժառանգել է կա՛մ բարբառներից, կա՛մ ժողովրդախոսակցական լեզվից:

Բանալի բառեր՝ գրաբարյան դարձվածքներ, կառուցվածքային քննություն, բայական դարձվածքներ, երկբաղադրիչ դարձվածքներ:

АННА АБАДЖЯН, КНАР АРУТЮНЯН – Фразеологизмы в “Истории Армении” Мовсеса Хоренаци – В данной статье исследованы фразеологизмы в “Истории Армении” Мовсеса Хоренаци. В связи с тем, что очень сложно определить происхождение древнеармянских фразеологизмов, мы проводим только их структурный и морфологический анализ. В результате исследования мы пришли к выводу: 1. из рассмотренных нами 254 идиомов только в одном случае главным

компонентом являлось имя существительное, во всех остальных – глагол;
2. большинство идиомов – двухкомпонентные (около 96%).

Ключевые слова: *фразеологизмы древнеармянского языка, структурный анализ, глагольные фразеологизмы, двухкомпонентные фразеологизмы.*

ANNA ABAJYAN, QNAR HARUTYUNYAN- Idioms in Movses Khorenatsi's "History of Armenia" - In our report we present idioms in Movses Khorenatsi's "History of Armenia" forming structural classification. In conclusion we generalize that from 254 idioms only one is noun, the others are verbs. About 96% of them are composed from 2 components, the others from three and four components.

Keywords: *idioms of Old Armenian, structural classification of idioms, noun phrases, verb phrases, 2-component idioms.*

**ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ՀԱՅԱՅՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ
ԱՐՏԱՅՈՒՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Անհատին շրջապատող իրականությունը, արտացոլվելով ուղեղում, արտացոլվում է հոգեկան աշխարհում: Անհատի հոգեկան աշխարհն արտացոլվում է անհատի հայացքներում¹: Ահա, ընդհանուր ձևակերպմամբ, ինչ կարելի է ասել հոգեկան աշխարհի և հայացքների աղերսի մասին: Բայց այսքանն ասել նշանակում է գրեթե ոչինչ չասել: Հոգեկան աշխարհը ներառում է արտաքին ազդեցությունների նկատմամբ մարդու հակազդեցությունները, արձագանքները, իրերի և հասարակական փոխհարաբերությունների ընկալումը, իբրև այս ամենի արդյունք՝ մարդու դրական կամ բացասական վերաբերմունքը, ապրումները, զգացումները, հույզերը, մի աշխարհ, փոխաբերաբար ասած, վիթխարի գունապատկերով՝ բազմաթիվ նրբերանգներով:

Համապատասխանաբար նույնպիսի մի աշխարհ է բազմաթանակ ու բազմատեսակ հայացքների ամբողջությունը՝ հայացքանին՝ դարձյալ բազում նրբերանգներով, քանի որ չկա հուզաշխարհի մի բաղադրիչ, որն անհատը չարտահայտի հայացքի միջոցով: Հայացքն իր հերթին արտացոլվում է լեզվի մեջ հետևյալ միջոցներով՝ համաբարոյ բառերով (*արծվահայաց, ժպտահայաց, լրջահայաց*), գոյականական կամ բայական բառակապակցություններով (*խիստ հայացք, երկչոր հայացք, սիրալիր հայացք, հայացքով ցույց տալ, հայացքով կշտամբել, հայացքը խոնարհել*), նախադասություններով (*հայացքը կանգ առնել, հայացքը հուսահատություն արտահայտել, հայացքում բախիժ կարդացվել*):

¹ Այստեղ նկատի չունենք *հայացք* բառի «կարծիք, աշխարհըմբռնում» իմաստը, այլ «տեսողական՝ աչքերով արտահայտվող երևույթ» իմաստը:

Ընդհանրապես, խոսքի մեջ (գրավոր թե բանավոր) հայացքների տեսակները կարելի է բնութագրել 2 կերպ: Մի դեպքում նկարագրվում է, թե ինչ դիրք են գրավում բիրը, աչքն առհասարակ, հոնքերը, շրթունքները, և ինչպես, ինչու, հատկապես դեպի ուր է ուղղվում հայացքը: Սա անհրաժեշտ է վերլուծել գիտական (հոգեբանական, դիմագիտական, ֆիզիոգնոմիկական, քատերագիտական), արվեստագիտական (նկարչություն, քանդակագործություն) և գեղագիտական այլ նպատակներով: Նման վերլուծությունը խոսքի մեջ, զուտ հիշատակման առումով, երկար է և հարմար չէ: Մյուս դեպքում հիշատակվում են հայացքը բնորոշող բառը, բառակապակցությունը, նախադասությունը, ինչը խոսքային առումով կարճ է և հարմար: Մենք կգնանք այս երկրորդ ճանապարհով, մանավանդ որ լեզվական միավորները միաժամանակ մատնանշում են, թե ինչ կերպ են հայացքի տեսակներն արտացոլվում արդի հայերենում և բացահայտում հայացքի տեսակն ու դրա իմաստը: Այսպես՝ *հպարտ հայացք*. «Թագուհին մի *հպարտ հայացք* նետեց ամուսնուն...» (Ս. Խանգաղյան, Հողը, Եր., «Հայաստան» հրատ., 1967, հ. 2, 12): Տե՛ս նկ.1: *Սպառնական հայացք*. «Եթե դրսումը լիներ, ես քո կողքերը կշարդեի,- ավելացրեց նա *սպառնական հայացք* ձգելով ... պատանու երեսին» (Բա.Ֆիլի, Ղարիբ մշեցին, Եր., Հայպետհրատ, 1958*): Տե՛ս նկ. 2:

Ըստ արտահայտած իմաստների՝ հայացքները մենք բաժանում ենք 2 կարգի: **Առաջինը**, որ որակապես մեծամասնություն է կազմում (մոտ 80 տոկոս), վերաբերմունք, ապրումներ, հույզեր արտահայտողներն են: Դրանք կոչվում են **հուզական**: Լայնորեն ուսումնասիրված են հոգեբանների, հասարակագետների, դիմագետների, մանկավարժների, արվեստագետների, արվեստաբանների կողմից:

Այս կարգի հայացքները լինում են դրական կամ բացասական՝ *ուրախ հայացք, հարցական հայացք, հիացական հայացք, գայրացկոյր հայացք, հուսահատ հայացք*:

* Ընթերցումը կատարվել է բրայլյան համակարգով, որը չէր համապատասխանում մաշտոցյան ուղղագրությամբ գրքերին, ուստի որոշ տեղերում էջերի բացակայությունը վրիպակ չէ:

Երկրորդ կարգի մեջ ենք ներառում.

ա. Ֆիզիկական, արտաքին, ձևային հատկանիշներով հայացքները՝ *կապույտ հայացք, շեղ հայացք*:

Օրինակներ. «Անտոնինայի աչքերը հանդարտ բացվեցին, և Սիբայելի վրա սևեռվեց դրանց *կապույտ հայացքը*» (Սկրտիչ Արմեն, Երկեր, հ. 3, Եր., «Հայաստան» հրատ., 1967, 95), «Էմիլ Պերրենի արտասովոր շլոթյան պատճառով երբեք հնարավոր չէր որոշել, թե որ կողմն է նայում: Դեբյուտանտը, նկատելով Պերրենի՝ իրեն ուղղված *շեղ հայացքը*, սկսում էր նյարդայնորեն ուղղել փողկապը» (Անդրե Մորուա, Երեք Դյումա, Եր., «Հայաստան» հրատ., 1965, 520):

Ամմիջապես նկատելի է, որ բերված օրինակներում գործ ունենք փոխանունության հետ. աչքերի հատկանիշները վերագրվում են հայացքին: Իսկ փոխանունությունը հայացքներում տարածված երևույթ է: Կամ օրինակ՝ *ծխուր հայացք*, որ ունենում են ծխողները ծուխն արտաշնչելու պահին:

բ. Տևողություն ցույց տվող տեսակները՝ *ակնթարթային հայացք, կարճ հայացք, թռուցիկ հայացք*:

գ. Մեկին (մի բան) տեսադաշտի մեջ առնելը կամ տեսադաշտից դուրս թողնելը ցույց տվողները՝ *հայացքը դարձնել դեպի մեկը, հայացքը բարձրացնել մեկի վրա, հայացքը հեռացնել մեկից (մի բանից)*:

Երկրորդ կարգի հայացքները հուզական առումով չեզոք են և հայացքանու մոտ 20 տոկոսն են միայն:

Որպես արդյունք շրջապատող իրականության արտացոլման՝ կախված նրանից, թե ինչպիսի իրավիճակներ, հասարակական կամ միջանձնային ինչ փոփոխաբերություններ են եղել, և ինչպես է անհատը հակազդել դրանց, առաջ են եկել, ինչպես վերը նշեցինք, դրական, բայց նաև դրանց հակադիր՝ բացասական զգացումներ ու հույզեր: Երբ այսպիսի հակադրությունները հաղորդակցման ընթացքում արտահայտվում են հայացքների մեջ, առաջ են գալիս հականիշ հայացքները, որոնք արտացոլվում են հականիշ բառերով՝ *յրիտուր հայացք | ուրախ հայացք, արեւոթյամբ լի հայացք | սիրա-*

լիր հայացք, սևեռուն հայացք | քափառուն հայացք, թռուցիկ հայացք | երկար հայացք, հայացքը բարձրացնել | հայացքը իջեցնել:

Բնույթով մոտ զգացումներն ու հույզերը արտահայտվում են համանիշ հայացքներով: Այսպես՝ ունենք *բարկացկոյր, ուրախ, գայմացած հայացքներ*: Սրանց մերձիմաստ գույգերն են կազմում *գայրացկոյր, ցնծալից, ապշած հայացքներ*: Վերջիններն առաջինների սաստկական աստիճաններն են, արտացոլող բառերը համանիշ են: Միևնույն տեսակի հայացքը կարող է արտացոլվել նույնանիշային բառային շարքով՝ *հանդիմանական հայացք || նախադական հայացք || կշտամբանքով լի հայացք || կշտամբիչ հայացք || հանդիմանանքով լի հայացք*: Կամ՝ *երկչոյր հայացք || վախկոյր հայացք || վեհերոյր հայացք || վախալորած հայացք*:

Ընդհանրապես, բառի և հայացքի համադրումը բացահայտում է հետևյալը.

ա) Բառը հնչանշան է և ընկալվում է լսողությամբ: Դրա բազմիմաստության իմաստային տարբերությունները, նույնանիշությունը, համանիշությունը, հականիշությունը բացատրվում են մտային տրամաբանությամբ, լեզվական նրբերանգների տարրոշմամբ, որ պահանջում է մասնագիտական մոտեցում: Հայացքը փորձառական է, կատարվում է ի տես հաղորդակցվողների, ընկալվում է տեսողական ճանապարհով: Ըմբռնման գործընթացը, իմաստային տարրոշումը շատ ավելի հեշտ են, քանի որ ամեն ինչ աչքի առաջ է ու ակնհայտ:

բ) Բառը հասկանալի է միայն տվյալ լեզուն կրողներին, ուրեմն գործածության առումով սահմանափակում ունի: Հայացքների տեսակները հատուկ են ժողովուրդների մեծագույն մասին, հետևապես միջազգային են: Ուստի առնչվող հարցերը քննելիս հարմար է նաև դիմել տարբեր ժողովուրդների վարքին, գրականությանն ու արվեստին: Այդպիսի մի օրինակ վերևում արդեն հիշատակեցինք:

գ) Որևէ համատեքստում գործածվում է պահանջվող բազմիմաստ բառի մեկ իմաստը: Երկդիմի իմաստային գործածությունը կամ համանուն բառերից մեկը մյուսով փոխարինելը բառախաղ է, սակավ է լինում և ոչ օրինաչափ:

Այդպես չէ հայացքի պարագայում: Բարդ է մարդու հակազդեցության գործընթացը, և առկա փաստի հանդեպ վերաբերմունքը ոչ միշտ է միանշանակ: Հոգեկան աշխարհում միաժամանակ կարող են առաջ գալ մեկից ավելի, նույնիսկ հակադիր զգացումներ, հույզեր, և դրանք կարող են միատեղվել մեկ հայացքի մեջ՝ որպես երկարժեք (հոգեբանական բառերով ասած՝ ամբիվալենտ) երևույթի: Հոգեբանական այս երևույթը լեզվում արտացոլվում է հայացքը բնութագրող լեզվական միավորների թվարկումով, որի գատումները գրավոր խոսքում նշվում են հետևյալ միջոցներով.

Ա/ Չուգաղրական հարադրությամբ՝ միացման գծիկով: *Սպասողական–ադերսական*. «Ասացի նրան, որ նամակն ինքն է հորինել... Ասա, միթե ճիշտ չեմ ասել, (Մանեն) նայում էր եղբորն այնպիսի **սպասողական–ադերսական հայացքով**, որ կարծես նրա պատասխանից կախված լիներ իր փրկությունը» (Նար-Դոս, Պայքար, Եր., «Հայաստան» հրատ., 1968, 124): Տե՛ս նկ. 4: *Հանդիսավոր–հարցական*. «Միտոր Առնիլը **մի հանդիսավոր–հարցական հայացքով** նայեց բոլորին» (Թեոդոր Դրայզեր, հ. 4, Եր., «Հայաստան» հրատ., 1968, 623):

Բ/ Ստորակետով: *Տիրական, քնքուշ*. «Ժան Մարկի վրա էր գցում **տիրական, քնքուշ հայացքներ**» (Անրի Թրուայա, Էգլեթիերների ընտանիքը, Եր., «Սովետական գրող» հրատ., 152, 1980): Տե՛ս նկ. 3: *Սևեռուն, չար*. «Այդ բույներին Մարի Կլոդը վախենում էր նրանից, որովհետև տեսնում էր նրա դեմքը՝ **սևեռուն, չար հայացքով**» (Անրի Թրուայա, Սարդը, Էդիթ պրինտ, 140, 2009): Տե՛ս նկ. 9:

Գ/ Առդրությամբ. բնութագրումը կատարվում է իմաստային առումով ոչ առնչակից որոշիչներով, գատումը՝ բացատրով: *Կարեկցանքով լի հեզմական*. «Տիկիները **կարեկցանքով լի հեզմական** հայացքներ էին փոխանակում ...» (Հանս Ֆալլադա, Այն ժամանակ մեր տանը, Եր., «Սովետական գրող» հրատ., 1981, էջ 217): Տե՛ս նկ. 5: *Կարեկցական քնքուշ*. «Նրա տառապանքներն այնքան ակնառու էին, որ Սոլամեը ժամանակ առ ժամանակ նրան **կարեկցական քնքուշ հայացքներ** էր նետում» (Անրի Թրուայա, Դիմանկարը, Եր., Գրական հայրենիք, 2011, 201):

Գ/ Որոշակի դեպքերում նշված միջոցներին ավելանում է «կես» բառը: *Կես սպառնական, կես աղերսալի*. «Այո, գիտեմ, այսուհետև, քե ինչ պետք է անել... Եվ **կես սպառնական, կես աղերսալի մի հայացք** ձգելով Վարվառեի վրա...» (Շիրվանգաղե, Արամբին, հ. 1, Հայպետհրատ, 1958, 429): *Կես զարմացած - կես ապուշ*. «Շահյան Լևոն, - բացականչեց նա... Շահյանը **կես զարմացած – կես ապուշ հայացքով** նայեց նրա աչքերին» (Նար-Դոս, Մահը, հ. 4, Եր., «Հայաստան» հրատ., 1969, 9):

Ե/ «Եվ» կամ «ու» համադասական շաղկապներով:

Հասարակականություն ու վճռականություն. «Մարգարյանը դեռ երիտասարդ դեմք ուներ... Նրա **հայացքը հասարակականություն ու վճռականություն** էր արտահայտում» (Մերո Խանգաղյան, Հողը, Եր., «Հայաստան» հրատ., 1967, 233): *Ջայրալից և վճռական*. «Նա Վանքրին դարձրեց **գայրալից և վճռական հայացքը**: ... - Զգուշացնում եմ...» (Անրի Թրուայա, Դիմանկարը, Գրական հայրենիք, 2011, 16): Տե՛ս նկ.10²:

Բանավոր խոսքում գատող կետադրական միջոցներին փոխարինում են ձայնային հնչերանգը և համեմատաբար կարճ ու երկար դադարները:

Վերաբերմունքը դեպի կատարվող գործողությունները, մանավանդ դեպի հաղորդակցվողները լինում է նաև շատ ավելի բարդ՝ պայմանավորված ստացած տպավորությունների խորությամբ և ուժգնությամբ, տարակերպ հակազդելու մղումով: Այսպիսի պարագայում անհատը միաժամանակ ապրում է երկուսից ավելի զգացումներ: Մինչև հիմա մեկ հայացքում միատեղված էր երկու իմաստ, սակայն լինում են երեք, չորս, նույնիսկ ավելի իմաստներ: Խոսողը կամ հեղինակը կատարում է հայացքի վերլուծություն՝ գրավոր խոսքում տալով նկարագրական անհրաժեշտ փոքրիկ պատկերներ: Բերենք այդպիսի օրինակներ ևս:

Եռիմաստ. «- Աստված իմ, - պատասխանեց մայրը՝ աչքերը սրբելով, - ես նրանց համար դեռ ոչինչ չեմ պատրաստել ուտելու:

² Հոդվածը չծանրաբեռնելու համար վերջին վեց նկարները ներկայացվում են առանց գրական վկայությունների:

- Նայեց եղբորը մի հայացքով, որ միաժամանակ արտահայտում էր **և՛ աղերս, և՛ երկյուղ, և՛ ամոք»** (Շիրվանզադե, Քառս, Եր., «Սովետական գրող» հրատ., 1983, 67): Տե՛ս նկ. 6:

Քառիմաստ մեջբերումը Ավետիս Ահարոնյանի «Դարավոր կադնի» պատմվածքից է. Մելիքը մերժում է տեղ տալ ֆիդայուն: «- Մի գիշեր, Մելիք, միայն մի գիշեր... - Դո՛ւրս, դո՛ւրս իմ գյուղից, արյունն ու վիրավորները մեզ համար չեն:

Անձանոթը ոտքի կանգնեց... Հետ նայեց... Այդ **հայացքը՝ ցավակցական ու հպարտ, հանդիմանողական ու դառն**, Մելիքի հոգու խորքը թափանցեց» (Ավ. Ահարոնյան, Երկեր, հ. 1, Թեհրան, 1982, 314): Տե՛ս նկ. 7:

Բազմաթիվ իմաստների միատեղման պարագայում նշված տիպի օրինակներում «հայացք» գոյականն ունենում է համապատասխան քանակի բնութագրող բառեր: Վերջիններիս փոխարեն այլ կարգի օրինակներում դրվում է մեկ բառով արտահայտված ընդհանուր իմաստի մեկական որոշիչ, ինչպիսիք են՝ *բազմանշանակ, բազմանշանակալից, բազմախորհուրդ, բազմիմաստ, երկդիմի, նշանակալից*: Այդպիսի, սակայն, կոնկրետ չեն մատնանշում հայացքի որակական հատկանիշները:

Որոշակի հոգեվիճակներում հաղորդակցվողը հարմար չի տեսնում միարժեքորեն բացահայտել իր հայացքի կոնկրետ իմաստը: Ու թեև այն բազմիմաստ է, բայց մյուս հաղորդակցվողների կողմից ընկալվում է թե՛ մեկ, թե՛ այլ կերպ անգամ՝ հակասական կերպ, այսինքն՝ իբրև թե՛ դրական, թե՛ բացասական վերաբերմունքի արտահայտություն: Լեզվում այսպիսի հաղորդակցման եղանակն արտացոլվում է հետևյալ կարգի բառակապակցություններով.

Ձ/ Անհնարին է ասել, դժվար է ասել, չգիտես այս, թե այն, ոչ այն է... ոչ այն է... Օրինակ. «Նա **սկնապիշ հայացքով նայեց** ինձ... **զայրացած էր, ... զարմացած, դժվար էր ասել**, նա կատարելապես տիրապետում էր դեմքին» (Շառլոտա Բրոնտե, Ջեյն Էյր, «Սովետական գրող» հրատ., 1988, 427):

Է/ Թվարկվող որոշիչների վրա դրվում է հարցական նշան, դրանք անջատվում են թե՛ շաղկապով: Այսպիսի չտարբերվող հա-

յացք ունենում են ուժեղ բնավորությամբ մարդիկ, աչքի ընկնող անհատականությունները: Ինչպես. «Նա (ղբսուհի ո՛ր Էտամպը) սովորություն ուներ բարձրացնել ու խոնարհել աչքերը... Անհմարին էր հասկանալ՝ **նրա հայացքում քնքշությունն է պահված, քե՞ս պատմալիք**» (Ալեքսանդր Դյումա, Ասկանիո, Եր., «Հայաստան» հրատ., 1968, 67):

«(Նվարդը) ... **նայեց** Արարատին **այնպիսի մի հայացքով, որ դժվար էր ասել՝ արդահայրում էր փարակուսա՞նք՝** տեղի ունեցած ամբողջ պատմության հանդեպ, **քե՞ս կշտամբանք՝** ուղղված Արարատ Սուրենին՝ նրա անլրջությունների համար, **համաշայնություն՞ն, գղջու՞ն,** որ մերժել է նրան, **քե՞ս կարեկցություն,** որով միշտ էլ լի է լինում նույնիսկ ամենաչար կնոջ սիրտը... **Ամեն ինչ կարելի էր փսնել այդ հայացքի մեջ, նա այնքան խոր էր, միաժամանակ այնքան ծանր:** Արարատ Սուրենը մոտեցավ... - Այդ ինչ է պատահել Նվարդ...» (Հրաչյա Քոչար, Ամուսնություն, հ. 1, Եր., Հայպետհրատ, 1964, 349):

Վերջապես, այլ կարգի հոգեվիճակներում էլ հաղորդակցվողի հայացքի իմաստն ընդհանրապես մնում է անհայտ, ուրեմն մյուս հաղորդակցվողների համար անհայտ է մնում նրա վերաբերմունքը: Բազմիմաստությունը տարրորոշելու խնդիր այլևս չի դրվում: Եթե առօրյայում ընդհանուր առմամբ անհատների պահվածքը ժամանակ առ ժամանակ է այդպես լինում, ապա որոշ մասնագիտությունների, զբաղմունքի տեր մարդկանց (օրինակ՝ պետանվտանգության աշխատակիցներ, դիվանագետներ) այդպիսի վարքը մշտական է ու պարտադիր: Լեզվում նշված կարգի հայացքները բնութագրվում են *անբացադրելի, անբափանց, անբափանցելի, անիմանալի, անմեկին, անմեկնելի, անորոշ* ածականներով, հենց դրանցով էլ քննվող հայացքներն առանձնանում են որպես տեսակ: Բերենք օրինակներ: Առաջինը Ալեքսանդր Դյումայի «Կոմս Մոնտե-Քրիստո» վեպից է, որտեղ համանուն հերոսը իրեն չմատնող պահվածքով է վերաբերվում Բեռտուչոյին: «Բեռտուչոն ձեռքերով ծածկեց դեմքը, իսկ Մոնտե-Քրիստոն սկսեց նայել նրան **մի սևեռուն և անբացադրելի հայացքով**» (հ. 2, «Հայաստան» հրատ., 1966, 589): Տե՛ս նկ. 8: Նան՝

«Այդ լուռ տեսարանը տևեց երկար ժամանակ: Հանկարծ իշխանուհին գլուխը բարձրացրեց և **անորոշ հայացքով նայեց** Հարունյանին» (Նար-Դոս, Քնքուշ լարեր, հ. 2, Եր., «Հայաստան» հրատ., 1968, 392): Նշենք, որ թե՛ Մոնտե-Բրիատոն, թե՛ իշխանուհին ձգտում էին թաքցնելու իրենց զգացմունքները: Եվ կամ՝ «Քառփերփուղը լռեց: **Ոչինչ չէր կարելի կարդալ նրա անթափանցելի հայացքի մեջ**, չնայած տեսիլքը շլացրել էր նրան... Քառփերփուղի արտաքինը հաճելի էր, **հայացքն անթափանց էր**» (Թեոդոր Դրայզեր, Ֆինանսիստ, Եր., «Հայաստան» հրատ., 1967, 38):

Արդ, ներկայումս քանի՞ տեսակ հայացք են արտահայտում հայերը: Մենք մասնավորեցնում ենք ժամանակը և ժողովրդին, քանի որ հասարակական ավելի բարդ փոխհարաբերությունների, զարգացած մշակույթի պարագաներում ավելի հարուստ է նաև հուզաշխարհը, հարուստ է նաև հայացքների տեսակների թիվը և, ընդհակառակը, պակաս հարուստ հուզաշխարհի դեպքում պակաս կլինի նաև հայացքների տեսակների թիվը:

Այս հրատարակումից առաջ հաշվել ենք հայացքի շուրջ 400 տեսակ: Դրանք ներառել ենք բառարանում, ավելի ճիշտ՝ Հայացքաբանում, որտեղ տրվում է յուրաքանչյուրի իմաստը՝ գրական վկայություններով և արտացոլող լեզվական միավորներով: Սակայն նշված թիվը ավելանալու է, ուստի այն առայժմ կարելի է ընդունել իբրև նվազագույնը: Մեր ուսումնասիրությունները շարունակվում են:

Բանալի բառեր՝ հայացք, հոգեկան, լեզվական միավոր, արտացոլում, բառեր, հոմանիշ, հականիշ, միջազգային, բազմիմաստություն:

ЕРДЖАНИК ГЕВОРКЯН – Об отражении видов взгляда в современном армянском языке. – Окружающая нас действительность, отражаясь в мозге человека, передается через его психическое состояние. Психическое состояние, в свою очередь, отражается во взгляде, а взгляд – в языке. В речи различные виды взгляда можно передать при помощи сложных слов, словосочетаний и предложений. Выделяют две большие группы

взглядов: 1) эмоциональные, которые в свою очередь подразделяются на положительные и отрицательные; 2) не эмоциональные, указывающие на внешние формальные качества. Под воздействием внешних агентов в психике человека возникают противоположные чувства и восприятия, которые в процессе коммуникации выражаются антонимами, а близкие по значению – синонимами.

Каждый вид взгляда передается синонимичным рядом слов, который в одних случаях состоит из нескольких единиц, а в других – из десятков и более.

Проведенный нами сопоставительный анализ лексемы и обозначаемого ей взгляда показал, что лексема является звуковым знаком, воспринимается через слух лишь носителями данного языка и используется в конкретном тексте с одним конкретным значением. Взгляд же воспринимается через зрение и может быть распространен среди представителей нескольких народов, и в конкретном контексте может иметь либо одно значение, либо два или более одновременно.

На сегодняшний день насчитывается 400 видов взгляда, отражаемых языковыми средствами современного армянского языка. В дальнейшем, при проведении новых исследований этот показатель вероятно повысится.

Ключевые слова: *взгляд, психика, лингвистические единицы, отражение, слова, синоним, антоним, международный, полисемия.*

YERJANIK GEVORGYAN – On the Reflection of Types of Look in Modern Armenian. – Reverberated in a human brain, the surrounding reality is reflected in one's mental world, which, in its turn, finds its reflection in the look and is further reverberated in the language. The types of look in speech are characterized by compounds, nominal and verbal word combinations, sentences and are divided into two large groups:

1. Looks expressing either positive or negative emotions.
2. Looks with external indications, which can be contrary.

Contrary looks are expressed with antonyms and looks with similar meanings are expressed with synonymous words. Each type of look in a language is described with synonymic sets. Their number can reach a few in some and dozens in others. The association of a word and a look reveals that the former has a sounding and is restricted within the framework of native speakers of the given language and is used in a given context with a concrete meaning.

The second is perceived by sight; is internationally applied and it may have two or more meanings in a given context.

So far approximately 400 types of look have been revealed in Armenian. The number, however, is not inclusive and it will grow in the course of further investigations.

Keywords: *look, mental, linguistic units, reverberation, words, synonym, antonym, international, polysemy.*

ՊԱՏԿԵՐՆԵՐ



Նկ. 1. Հպարտ



Նկ. 2. Սպառնական



Նկ. 3. Տիրական, քնքուշ



Նկ. 4. Սպասողական-
աղերսական



Նկ. 5. Կարեկցանքով լի հեգնական



Նկ. 6. Աղերս-ամոթ-երկյուղ




**Նկ. 7. Ցավակցական ու հպարտ,
հանդիմանողական ու դառն**




Նկ. 8. Անբացատրելի



Նկ. 9. Սևեռուն չար



Նկ. 10. Զայրալից և վճռական




Հորդորոլ



Հուզված




Բարկացկոտ-կասկածոտ



Զարմացական-զգուշավոր



Արհամարհական-սպառնական-վճռական



Հուսահատ-հանդիմանական-համաձայնողական-զղջման

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԲԱՌԱՅԻՆ ՈՐՈՇ ՁՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Հայերենի և վրացերենի միջև առկա բառային բազմաթիվ ու բազմապիսի զուգաբանությունները վաղուց ի վեր կարոտ են առանձին համապարփակ հետազոտման: Այս նյութին հայ լեզվաբաններից այս կամ այն չափով անդրադարձել են Հ. Աճառյանը, Ա. Մուրվալյանը, Գ. Ղափանցյանը, Գ. Ջախուկյանը և ուրիշներ¹: Նրանք հայ-վրացական զուգաձևերը հիմնականում հանգեցնում են փոխադարձ փոխառությունների: Մեր մի հոդվածում փորձել ենք առանձնացնել հայ-վրացական բառային 8 զուգաբանություններ, որոնց մեծ մասն առաջին անգամ է դիտարկվել այդ տեսանկյունից: Այդ զուգահեռ ձևերի լեզվաբանական-բանասիրական քննությունը բերում է այն համոզման, որ դրանք չեն կարող փոխառյալ լինել իրարից կամ երրորդ աղբյուրից, այլ ցեղակից են միմյանց, ուստի սերում են միևնույն շերտից, որն ընդհանուր պետք է լիներ հայերենի ու վրացերենի համար²:

Երկու լեզուներում առկա նմանությունները դիտարկելիս շատ կարևոր է անկախաբար քննել յուրաքանչյուր լեզվում պահպան-

¹ Տե՛ս Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, I մաս, Եր., 1940, էջ 206-217, II մաս, Եր., 1951, էջ 218-225: Մուրվալյան Ա., Հայ-վրացական բանասիրության մի քանի հարցերի շուրջը // Լեզվաբանական և հայագիտական հետազոտություններ (խմբ.՝ Գր. Ղափանցյանի), Կ. I, Եր., 1951, էջ 39-58: Капанцян Г., О взаимоотношении армянского и лазо-мегрельского языков, Ер., 1952: Ղափանցյան Գ., Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Եր., 1961, էջ 69-101: Джаукян Г., О стратификации и хронологизации картвельско-армянских совпадений // Арнольд Степанович Чикобава. Сборник, посвященный 80-летию со дня рождения, Тбилиси, 1979, с. 84-94: Ջախուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 585-599:

² Տե՛ս Գալսյան Տ., Հայերենի ենթաշերտային ծագման որոշ բառերի ստուգաբանություններ // Հայերենագիտական միջազգային 10-րդ գիտաժողով: Ձեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Եր., 2015, էջ 69-78:

ված ձևը՝ լեզվաբանական, բարբառագիտական և բանասիրական (աղբյուրագիտական) մանրակրկիտ մոտեցմամբ: Անշուշտ, միշտ չէ, որ կարելի է գուգահեռ ձևերը համարել ընդհանուր հիմքից ծագած: Մի շարք չափանիշներ կան, որոնք միանգամից թույլ են տալիս նմանությունները համարել իբրև փոխադարձ փոխառության արդյունք: Օրինակ՝ հայերենի արևելյան բարբառներում ունենք նոր փոխառություն վրացերենից՝ *բոլոկի* «բոլկի տեսակ»³. այս բառի դեպքում ակնհայտ է, որ նրա փոխատուն վրաց. ბოლოკი [բոլոկի *bolok*’i] հոմանիշն է, որն էլ իր հերթին հին փոխառություն կարող էր լինել հայ. *բողկ* ձևից՝ զանական ճյուղին հատուկ լիաձայնավորության հատկանիշի հանդես գալով եւ գրաբարյան /ո/ [t] > վրաց. /ლ/ [l] օրինաչափ հնչյունական անցումով, որը գործում է նաև այլ բաների պարագայում⁴:

Մրան հակառակ՝ բարբառագիտական-բանասիրական քննությունը ցույց է տալիս, որ հայ. *գջլի* «պոկել» բառը փոխառյալ պետք է լինի վրաց. აგლეჯა [ագլեջա *agleǰa*] (արմատը՝ *gleǰ-*) «վրայից պոկում, պոկում, գջում» ձևից: Հայերենում՝ Թիֆլիսի և Երևանի բարբառներում, *գջլի* բայը երկու իմաստ ունի՝ 1.«ուծով պոկել, գոփել, 2. հնարքով խլել, կորզել»⁵, որից նույն բարբառներում ունենք նաև *գջլիկ* «պատառոտել, քրքրել, քանդել, փչացնել» և *գջլիած* «խեղճ ու կրակ, պատռտված, զգզված, թափթփված»

³ Տե՛ս, օրինակ, «Ժողովուրդ» համացանցային քերքի 2015 թ. ապրիլի 2-ի հրապարակումը՝ «Սեդրակ Քոչարյանն Արարատում բողկ և բոլոկի» է ցանել. «Ժամանակ»» (աղբյուրը՝ <http://armkur.am/330785/>):

⁴ Տե՛ս **Դալայան Տ.**, Օսերենի հայկական փոխառությունների՝ երկրագործությանը առնչվող շերտը // Արևելագիտական ժողովածու, հ. V (խմբ.՝ Գ.Վ. Մելիքյան), Եր., 2004, էջ 79: **Dalalyan T.**, The Terms Concerning the City Life Borrowed from Armenian and Georgian into Ossetic (Alanian) // Revue des études arméniennes, Paris, 2011, Tome 33, p. 2-3, իսկ լիաձայնավորության հատկանիշի վերաբերյալ տե՛ս **Դալայան Տ.**, Գրիգոր Դափանցեանը եւ Մատի «յաբեթական» տեսութիւնը. հայ-քարթուրեական լեզուական առընչութիւնների մեկնաբանումը // Հոդվածների ժողովածու (Գ. Դափանցյանի ծննդյան 90-ամյակին նվիրված), Եր., 2017, էջ 113-131:

⁵ **Ամատունի Ս.**, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 153: **Աճառեան Հ.**, Հայերէն գաւառական բառարան // Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 256: **Մալխասեանց Ս.**, Հայերէն բացատրական բառարան, հ. 1, Եր., 1944, էջ 471:

ձևերը⁶, իսկ Խաղխաղի բարբառում *գջլվել* նշանակում է «պոկվել, կտրվել, անջատվել»⁷: Թիֆլիսի բարբառում *գջլվիլ* կրավորական ձևի փոխաբերական նշանակությունն է՝ մարդկանց հավաքվելը (այսինքն՝ մի բանից պոկվելը)։ «Ամբողջ քաղաքը գջլվել է՝ տեսարան գնացել»⁸։ Հայ. *գջլիլ* բայի առաջին հայտնի կիրառությունը Րաֆֆու երկում է («Չախրումար», 1871)⁹։ Հետաքրքիր է, որ նրանից, Նար-Դոսից, Շիրվանգաղեից, Ատրպետից ու Դ. Դեմիրճյանից հետո բառը գրեթե չի գործածվել գրական հայերենում։ Ակնհայտ է, որ տվյալ դեպքում բարբառներն են եղել գրական լեզվի աղբյուրը։ Ինչպես տեսանք, *գջլիլ* բայը և նրա տարբերակները վկայված են Արարատյան, Թիֆլիսի ու Խաղխաղի բարբառներում։ Հաշվի առնելով բարբառային սահմանափակ կիրառությունը՝ հավանական է ենթադրել ուղղակի փոխառություն վրացերենից։

Սույն հոդվածի մեջ կփորձենք հնարավորինս մանրամասն ստուգաբանական քննության ենթարկել հայ-վրացական բառային հինգ զուգաբանություններ, որոնք, ի տարբերություն վերը բերված երկու օրինակների (բողկ և գջլել), հնչյունաբանական և այլ հատկանիշներից ելնելով, անհնար է դիտարկել իբրև փոխադարձ փոխառություններ, ուստի ամենահավանական բացատրությունը դրանք ընդհանուր նախաշերտի գոյությամբ պայմանավորելն է։

Հայ. *բղավել* «գոռալ, պոռալ» – վրաց. აბღავლება [աբղավլեբա abğavleba] «բառաչել, մայել, մոնչալ», ამობღავლება [ամոբղավլեբա amobğavleba] «բառաչ արձակել, բառաչել»։

Հայ. *բղավ*- բայարմատի առաջին նշանակությունն է «բարձր ձայնով խոսել, գոռալ», և գլխավորապես այս իմաստով է այն կիրառվում արդի արևելահայերենում։ Սակայն կա նաև բառի քիչ

⁶ Աճառեան Հ., Հայերեն գառառական բառարան, էջ 256; Մալխասեանց Ս., նշվ. աշխ., հ. 1, էջ 471։ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 1, Եր., 2001, էջ 285։

⁷ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 1, էջ 285։

⁸ Աճառեան Հ., Հայերեն գառառական բառարան, էջ 256։

⁹ Տե՛ս «Արեւակ» համացանցային շտեմարանի տվյալները.

http://www.eanc.net/EANC/search/context.php?doc_id=8866&start_sent_no=&end_sent_no=&found1=1748.38&query=page=2&sid=71234&search_language=armenian1&interface_language=am&contexts_output_language=armenian1

հայտնի նշանակությունը՝ «ռչխարների աղմկելը, բառաչելը՝ մայունը»։ Ս. Մալխասյանցի բառարանում երկու իմաստներն էլ նշվում են։ *Քղալ-* բայարմատից է կազմված *քղալոց* բնածայնական գոյականը, որը նշված երկու իմաստներն էլ պարունակում էր¹⁰։ Սակայն ժամանակակից բացատրական բառարաններում արդեն տրվում է բառի կա՛մ միայն առաջին նշանակությունը¹¹, կա՛մ էլ վերջին նշանակությունը նշվում է իբրև խոսակցական ձև¹²։

Քղալիլ բառի հոմանիշներն են՝ գոչել, աղաղակել, աղմկել, պոռալ (բոռալ), դժժալ, ճղավել, ճչալ, որոտալ և այլն¹³։ Արևմտահայերենում ավելի գործածական է *պոռալ* հոմանիշը, սակայն մամուլում՝ արևմտահայ գրավոր խոսքում, հանդիպում ենք *քղալիլ* բառի ուշ գործածության («Ազգ», 2005.03.05, տե՛ս «Արեւակ»¹⁴)։ Առաջին անգամ *քղալիլ* բառի վկայությունը գտնում ենք 1906-ին «Կայծ» պարբերականում (06/02, № 22¹⁵; 07/30, № 44¹⁶)։

Հ. Աճառյանի և Գ. Ջահուկյանի ստուգաբանական բառարաններում այս արմատը ընդգրկված չէ հավանաբար այն պատճառով, որ իր գավառական բառարանում Աճառյանը այն համարել է նոր վրացական փոխառություն։ Բառը տարածված է արևելահայ տարածության բարբառներում՝ Արարատյան, Արցախի, Խաղխաղի, Թիֆլիսի, Ախալցխայի¹⁷։ Հ. Մարտիրոսյանը *քղալ-իլ* բայարմատի կազմությունը համեմատում է *կռալ-իլ* «կռկռալ» բայարմատի կազ-

¹⁰ Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, հ. 1, էջ 375:

¹¹ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (ԺՀԼԲԲ), հ. 1, Եր., 1969, էջ 324:

¹² Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Եր., 1976, էջ 193:

¹³ Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 1967, էջ 150-151:

¹⁴ http://www.eanc.net/EANC/search/context.php?doc_id=2974&start_sent_no=&end_sent_no=&found1=204.166&query=sid=66373&page=1&search_language=armenian1&interface_language=am&contexts_output_language=armenian1

¹⁵ http://www.eanc.net/EANC/search/context.php?doc_id=7244&start_sent_no=&end_sent_no=&found1=155.8&query=sid=66373&page=1&search_language=armenian1&interface_language=am&contexts_output_language=armenian1

¹⁶ http://www.eanc.net/EANC/search/context.php?doc_id=7276&start_sent_no=&end_sent_no=&found1=39.19&query=sid=66373&page=1&search_language=armenian1&interface_language=am&contexts_output_language=armenian1

¹⁷ Աճառեան Հ., Հայերէն զարառական բառարան, էջ 195:

մության հետ՝ առանձնացնելով *-ալ* վերջածանցը և պարզական արմատը համարելով *բղ-ալ*¹⁸ (հմմտ. նաև բարբառային ճղավ-ել ձևը):

Ինչպես հայտնի է, բնաձայնական արմատների դեպքում պարտադիր չէ փոխառություն ենթադրելը, մանավանդ եթե նույն *բղալ*-արմատի պարզական տարբերակը վկայված է հայերենում. այսպես՝ Վանի բարբառում *բղալ* նշանակում է «փոքր մանուկների՝ լալով բարձրաձայն կանչելը», որից՝ *բղոց* «բղալու ձայն, ժխոր»: Երևանի և Թիֆլիսի բարբառներում արձանագրված է *բղղալ* «մայել, բառաչել» բնաձայնական բայը՝ գործածված ոչխարի, գառան, կովի համար, որի գոյականը՝ *բղղոց* «բառաչ (հորթի), բղավոց, գոռոց», ինչպես նաև պատճառական ձևը՝ *բղղացնել* «գոռալ տալ, գոռացնել» վկայված են Արցախի բարբառում: Երևանի և Արցախի բարբառներում վկայված է նույն պարզական արմատի կրկնավոր տարբերակը՝ *բղբղալ*, որ նշանակում է «ճչալ, դժժալ» և հատկապես գործածված է խոզի խոճկորի ձայնը բնորոշելու համար. այստեղից են *բղբղոց* «բղավոց», *բղբղնել* «գոռալ տալ» ձևերը՝ վկայված Արցախի բարբառում¹⁹:

Ճիշտ է, որ չհաշված Վանի բարբառի պարզական ձևը՝ *բղալ*-արմատը և դրա մյուս պարզական ձևերը տարածված են արևելյան բարբառներում, և դրանցից է *բղալ*- արմատն անցել գրական արևելահայերենին, սակայն բազմազան գործածությունները ցույց են տալիս, որ այն չի կարող փոխառություն լինել վրացերենից: Ոչ էլ վրացերենը կարող է փոխառած լինել հայերենից, քանի որ այն պահել է միայն բառի հիմն՝ նախնական նշանակությունը: Հետևաբար երկու լեզուներում խնդրո առարկա արմատի զուգաձևերը բնիկ են և միմյանց ցեղակից, ուստի ակնհայտ է դրանց ընդհանուր ենթաշերտային ծագումը:

¹⁸ Martirosyan H., Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon, Leiden-Boston, 2010, p. 178. Այս *բղ*- արմատը միացվում է *բողոք*- արմատի՝ հ.-ե. ծագման * բող - պարզական արմատին [Նույն տեղում, էջ 182], սակայն նշյալ կապը լրացուցիչ պարզաբանման կարիք ունի:

¹⁹ Նույն տեղում: Տե՛ս նաև *բոռոց*, *բոռոց*, *բոռալ* (Ամատունի Ս., նշվ. աշխ., էջ 106, 118-119):

Հայ. *բուրդ* – վրաց. აბურდულ-ი [աբურიդու-ի aburdul-i] «խճճված», აბურცვა [აბურიცვა abureva] «այտուցում», აბურცული [აბურიცული aburcul-i] «այտուցված, թեթևակի ուռած», აბურძგვნა [აბურიძგვნა aburzgvena] «գզգզում, խճճում»²⁰:

Բուրդը ոչխարի, ուղտի և մի շարք այլ կաթնասունների մարմնի վրա աճած խիտ ու փափուկ գունավոր մազերի ընդհանրական անվանումն է՝ գեղմ(ն): Բուրդը լվանում են, գզում, մանում և զանազան գործվածքներ պատրաստում դրանից, որոնք մույնպես կոչվում են բուրդ: Բավական գործածական են *բանը բուրդ է* «գործերը վատ են», *մեկի բուրդը գզել* «բզկտել, դատափետել, սաստիկ ծեծել» արտահայտությունները: Որոշ հարադիր բարոյությունների մեջ նշանակում է «կտոր-կտոր», օրինակ՝ *ջարդ ու բուրդ, բուրդ ու բզիկ*²¹: Միջին հայերենում փոխաբերաբար գործածվել է նաև «մամուռ» իմաստով²²:

Առաջին հայտնի վկայությունը Ս. Գրքի հայերեն թարգմանության մեջ է (5-րդ դ.): Հ. Աճառյանը *բուրդ* բառը համարում է ծագած *բրդիլ* «մաս-մաս անել» (հատկապես հացը) բայարմատից՝ բերելով ասորերենի գուգահեռները, որտեղ «խուզել» արմատին կցված վերջածանցի միջոցով կազմված է «բուրդ» բառը: Հայ. *բուրդ*- «կտոր, պատառ» արմատին վերագրվում է հ.-ե. ծագում՝ սկսած եվրոպացի հնդեվրոպաբաններից²³: Գ. Ջահուկյանը մույնպես իբրև *բուրդ* բառի նախնական իմաստ դնում է «մաս, կտոր, պատառ» նշանակությունը և բխեցնում հ.-ե. *bherdh- «կտրել» նախաձևից²⁴:

Հ. Աճառյանը հայ. *բուրդ* «գեղմ» բառից փոխառնյալ է համարում վրաց. ბურდო / ბურდ-ი [burdo / burd-i բուրդո / բուրդի] (վրացերեն-

²⁰ Վրացերենի տվյալները հիմնականում քաղել ենք հետևյալ աղբյուրից՝ Գորգաձե Ռ., Վրացերեն-հայերեն բառարան, Եր., 2005:

²¹ Գաբումաճեան Ս., Նոր բառգիրք հայերեն լեզուի, Կ. Պոլիս, 1910, էջ 292: Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. 1, էջ 393: ԺՀԼԲԲ, հ. 1, էջ 354: Աղայան Է., նշվ. աշխ., էջ 210:

²² Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Եր., 2009, էջ 126:

²³ Աճառեան Հ., Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ), հ. 1, Եր., 1971, էջ 488-489, 492:

²⁴ Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 140:

նի արդի բառարանում կա միայն *բურձո* [բուրդո *burdo*] ձևը) «ծուտ, կիսածեծ օրան» բառը, ինչպես մաս *բურճեղ-օ* [բուրտկոլ-ի *burt'q-l-i*] «փետուր, աղվամագ (կատվի, մապաստակի)» կազմությամբ: Սակայն *բურձո* [բուրդո *burdo*] բառի նշանակությունից երևում է, որ այն ավելի մոտ է *բուրդ*- «մաս-մաս անել» արմատին, իսկ *աբուրճեղ-օ* [աբուրդուլ-ի *aburdul-i*] «խճճված» և *բურճեղ-օ* [բուրտկոլ-ի *burt'q-l-i*] բառերում *բուրճ-* [*burd-*] / *բուրճ-* [*burt'-*] արմատն արտացոլում է հենց *բուրդ* «գելմ» բառի նշանակությունը: Այսպիսով՝ վրացերենում առկա են *բուրդ* «գելմ» և *բուրդ* «մաս, կտոր, պատառ» նշանակություններից երկուսն էլ:

Հայերեն բուրդ արմատի բաղդատումը վրաց. *բուրճ-* / *բուրծ-* / *բուրց-* / *բուրճ-* գոգահեռների հետ ցույց է տալիս, որ գործ ունենք ընդհանուր ենթաշերտային մի ձևի հետ, որը երկու լեզուներում էլ բազմաթիվ ու բազմազան կիրառություններ ունի: Հնարավոր է ենթաշերտային և հնդեվրոպական մախաձևերի բաղարկումը կամ ընդհանուր ծագումը: Հայերենում *բուրդ* բառը համընդհանուր տարածում ունի գրեթե բոլոր բարբառներում²⁵:

Հայ. *բռնկ(ու)ել* – վրաց. *աբրիալեբա* [աբրիալեբա *abrialeba*] «բոցավառում, բռնկում», *աբրճկվիալեբա* [աբրճկվիալեբա *abrč'qvialeba*] «պսպլում», «պսպլալ»:

Հայ. *բռնկ(ու)ել* բայը նշանակում է «բոց առնել», այսինքն՝ կրակի կաշելը, միանգամից բոցավառվելը: Երկու ձևով էլ (բռնկել / բռնկուել) ունեցել է կրավորական իմաստ, սակայն արդի արևելահայերենում *բռնկել* կամ *բռնկեցնել* ձևերն ունեն ներգործական, իսկ բռնկվել ձևը՝ կրավորական նշանակություն²⁶: Բարբառային հոմանիշն է վոթ(կ)ալ կամ ֆոթկել²⁷: Արևմտահայերենում գործածական է

²⁵ Աճառեան Հ., ՀԱԲ, հ. 1, էջ 489; Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 1, էջ 224:

²⁶ Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. 1, էջ 397: ԺՀՀԲԲ, հ. 1, էջ 345:

²⁷ Ամատունի Ս., նշվ. աշխ., էջ 119: Սուքիասյան Ա., նշվ. աշխ., էջ 130:

կրավորական ձևը՝ *բռնկիլ*, որից ունենք *բռնկան* «բռնկիչ նիւթ, որուն միջոցով կը պայթի լիցքը կրակ տալով»²⁸:

Հայ. *բռնկիլ* բայի առաջին հայտնի վկայությունը Կլիկիո Մմբատ սպարապետի պատմության, ինչպես նաև «Գիրք Վաստակոց»-ի մեջ է (13-րդ դ.): Հ. Աճառյանը *բռնկ(ու)իլ* բայը կապում է *բռնիլ* բային, որոնց հիմքը հանգեցնում է *բուռն* «ձեռքի ավի պարունակածը» արմատին՝ վերջինը համարելով անհայտ ծագման բառ²⁹: Գ. Ջահուկյանը, հետևելով Յ. Պոկոռնիին, *բուռն* «ձեռքի ավի պարունակածը» արմատը բխեցնում է հ.-ե. *bher- «բերել, տանել» արմատի մի ձայնդարձ: Սակայն նա *բուռն* «ուժգին, սաստիկ» բառն առանձնացնում է առաջինից և բխեցնում հ.-ե. այլ նախաձևից: *Բռնկ(ու)իլ* բայի կազմության մասին որևէ բան չի գրում³⁰:

Անկախ հայերեն բառի ծագումից՝ այն տարբեր բնաձայնական աճականներով, բաղաձայների կուտակումով արտացոլում է հանկարծական և ուժգին բոցավառում, ինչպես, օրինակ՝ բարբառային *բռնցկիլ* «բռնկեցնել» բայը (Ախալցխա, Մուշ)³¹, որից կազմված է *բռնցկիլիք* «կաչան, չոր և դյուրավառ նյութ» (տաշեղ, խոփ, արքատ) բարբառային բառը՝ վկայված Մուշում, Կարինում, Սիվրիհիսարում, Շիրակում և Արարատյան դաշտում³²: Վրացերենում նույնպես *ծր- [*br-] արմատին հավելված են զանազան ածանց-աճականներ, մասնավորապես «պսպղում» բառի մեջ. սրա ծր՝ցց- [brč'qV-] հիմքը հար և նման է հայերեն բարբառային *բռնցկ-* հիմքին: Հնա-

²⁸ Աճառեան Հ., Հայերեն գաղառական բառարան, էջ 209: Գրիգորեան Պ., Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. 1, Հալեպ, 1954, էջ 720: Տեր-Խաչատուրեան Ա., Գանգրունի Հ., Տօփիկեան Փ., Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրոս, 1968, էջ 81: Սարգսյան Ա., Արևմտահայերենի բառարան, Եր. 1991, էջ 57: Գրեգորեան Գ., Տօփիկեան Փ., Տեր Խաչատուրեան Ա., Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրոս, 1992, էջ 350:

²⁹ Աճառեան Հ., ՀԱԲ, հ. 1, էջ 486-487:

³⁰ Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 140:

³¹ Աճառեան Հ., Հայերեն գաղառական բառարան, էջ 209. Աճառյանն այս ձևը միացնում է Պոլսո բարբառի *բռնկցնիլ* «կրակ տալ, վառել» ձևին:

³² Ամատունի Ս., նշվ. աշխ., էջ 119: Մալխասեանց Ս., նշվ. աշխ., էջ 397: Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 1, էջ 214:

րավոր է ենթադրել հայերենի և վրացերենի անկախ ծագում և հետագայում բարբառային ձևերի բնաձայնական բաղադրված կամ էլ ենթաշերտային և հնդեվրոպական նախաձևերի ընդհանուր ծագում: Հայերեն բառը վկայված է արևմտյան բարբառներում:

Հայ. *գանգալար* – վրաց. განგაშ-ო [գանգաշ-ի gangaš-i] «տագնապ», აგანგაშება [ագանգաշերა agangašeba] «տագնապեցնել, տագնապել»:

Գանգալար բառը հայերենում նշանակում է «դժգոհություն, ցավ հայտնելը՝ բանավոր կամ գրավոր»³³: Հոմանիշներն են՝ տրտունջ, բողոք, դժգոհություն, փնթփնթոց, գանգատանք, բողոքանք, դժգոհանք, տրտնջյուն, կեղերջ, կեղերջանք, հայց³⁴: Հայ. *գանգալար* բառի առաջին հայտնի կիրառությունը Գրիգոր Մագիստրոսի երկում է (11-րդ դ.)³⁵: Միջին հայերենում վկայված է *գանկալար* և *գանկարել* ձևերով³⁶:

Հ. Աճառյանը համարում է կրկնավոր արմատով կազմված բառ՝ անհայտ ծագումով³⁷: Գ. Ջահուկյանն առաջարկում է հ.-ե. ծագում *ghan- «բերանը լայն բաց անել, հորանջել» նախաձևից³⁸, ինչն անհավանական է ոչ միայն իմաստային անհամատեղելիության պատճառով, այլև որ միայն երկու լեզվի գուգահեռներ են բերվում, այն էլ կասկածելի: *Գանգալար* բառի կազմության վերաբերյալ Հ. Աճառյանի ենթադրությունը խիստ հավանական է, մանավանդ եթե հաշվի առնենք գրաբարում հայտնի *գանգանակ առնել* «հանդիմանել» արտահայտությունը՝ վկայված Ս. Գրքի հայերեն թարգմանության

³³ Գաբամանեան Ս., նշվ. աշխ., էջ 304: Մալխասեանց Ս., նշվ. աշխ., էջ 411-412: Գիզմեճեան Պ., Հայերեն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հ. 2, Հալեպ, 1957, էջ 17: ԺՀԼԲԲ, հ. 1, Եր., 1969, էջ 369-370:

³⁴ Սուրիապյան Ա., նշվ. աշխ., էջ 136:

³⁵ Աճառեան Հ., ՀԱԲ, հ. 1, էջ 515:

³⁶ Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 133:

³⁷ Աճառեան Հ. Լեզուաբանական. հայերենի բնաձայն եւ կրկնադր բառերը (630 բառի քննություն) // Հանդես ամսօրեայ, 1899, ԺԳ տարի, 8, էջ 233բ: Աճառեան Հ., ՀԱԲ, հ. 1, էջ 515:

³⁸ Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 150:

մեջ (5-րդ դ.)³⁹: Ըստ այդմ՝ *գան- «դժգոհություն» պարզական արմատը կարող է ունենալ բնաձայնական ծագում և զարգացած լինել «սահազանգ» նշանակությունից: Նույն արմատը գտնում ենք հետևյալ բնաձայնական բառերի մեջ՝ գանգ, գանգիւն, գանգաչ, գանգաշյուն, գանգաշում(ն) «մետաղի հնչյուն» երբ նրան հարվածում են կարծր իրով. զնգոցի նման, բոմբյուն»⁴⁰:

Վրաց. ջանջաձ-օ [գանգաշ-ի gangaš-i] «տագնապ» բառը նույնպես, ամենայն հավանականությամբ, կազմված է ջան- [gan-] պարզական արմատի կրկնությամբ, բայց այլ ածականով: Ըստ ամենայնի՝ գործ ունենք ընդհանուր ենթաշերտային արմատի հետ հայերենում և վրացերենում, որ ի վերջո բնաձայնական ծագում ունի: Այնպես որ Աճառյանի ենթադրությունը, թե վրացերեն բառը փոխառյալ է հայ. *գանգաչ* բառից, անհավանական է մաս հնչյունաբանական տեսանկյունից, քանի որ այդ դեպքում սպասելի կլիներ վրաց. *ջանջաձ-օ [գանգաշ-ի gangač-i] ձևը:

Հայ. *կոտր(ը)ր-ել, կոտրոր-* «կտոր» – վրաց. Յოტრ-օ [կոտր-ի k’ot’r-i] «սնանկացում, bankrupt»:

Հայ. *կոտր-* «կտորել, կտրել» արմատը արևելյան բարբառներում (Երևան, Արցախ, Լոռի, Ախալցխա, Թիֆլիս) գործածվում է «սնանկ» իմաստով, *կոտր ընկնել*՝ «սնանկանալ», իսկ *կոտր գցել*՝ «սնանկացնել», Շիրակի բարբառում՝ *կոտր* «սնանկ»⁴¹:

Հայերենում *կոտր, կոտրո, կտոր, կտուր, կտիր* ձևերը դիտարկվում են իբրև նույն արմատի տարատեսակ ձայնավորահարդ տարբերակներ: Գ. Ղափանցյանը այս տարածայնավոր արմատական շարքը համարում է հնդեվրոպական ձայնավորային հերթագայու-

³⁹ Տե՛ս Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառարան - Նոր Հայկազյան բառարանում չվկայված բառեր, Եր. 2010, էջ 80ա:

⁴⁰ Տե՛ս Աճառեան Հ., ՀԱԲ, հ. 1, էջ 489:

⁴¹ Նաասարդեանց Տ., Բառգիրք Արարատեան բարբառի, Տփլիս, 1903, էջ 60: Ամատունի Ս., նշվ. աշխ., էջ 362: Աճառեան Հ., Հայերեն գաղաղական բառարան, էջ 598: Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Եր. 1944, էջ 475: Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 3, Եր. 2004, էջ 157:

քյան ազդեցության հետևանք⁴²: Այդուհանդերձ, Հ. Աճառյանը հայ. *կոոր(ո)ր* արմատը համարում է անհայտ ծագման⁴³, իսկ Գ. Ջահուկյանը դնում է ենթաշերտային բառերի մեջ⁴⁴: Թեև Հ. Աճառյանը բառի ծագումը չի գտնում, սակայն վրաց. ՅՐԵՐ-օ [կոտոր-ի k'ot'or-i] «հացի կտոր», ՅՐԵՐ-օ / ՅՅԵՐ-օ [կոտր-ի k'ot'r-i / կուտր-ի k'ut'r-i] «սնանկություն» և մյուս քարթվելական ձևերը փոխառյալ է համարում հայերենից:

Օսերենում նույնպես առկա է *кот(ы)р* [կոտոր k'ot'ər] բառը՝ «սնանկացում, bankrupt» իմաստով, որը, ըստ Վ. Աբաևի, փոխառյալ պետք է լիներ վրացերենից: Սակայն օսերեն ձևը չունի վրացերենից փոխառյալ բառերին բնորոշ վերջահար *-i* ձայնավոր, այդ պատճառով մեր մի հողվածում ենթադրել էինք, թե օսերենը փոխառյալ է հայերենից⁴⁵: Իրականում, սակայն, կարծես թե առավել հավանական է ընդհանուր ենթաշերտային ծագում ենթադրելը բոլոր երեք լեզուներում՝ հայերենում, վրացերենում և օսերենում: Այստեղ կրկին չի բացառվում հնդեվրոպական և ենթաշերտային ձևերի բաղարկումը:

Փորձենք ամփոփել. լինելով տարածաշրջանի երկու բնիկ լեզուներ՝ հայերենն ու վրացերենը բնականաբար սնվել են միևնույն աղբյուրից, որը կազմված էր տարածաշրջանը բնակեցնող հնագույն ցեղերի և ցեղամիությունների լեզվաբարբառների կամ բարբառախմբերի ամբողջությունից: Որոշ դեպքերում էլ համեմատվող հայերեն բառերի համար ունենք բավական վատահեղի հնդեվրոպական ստուգաբանություններ, այդուհանդերձ վրացերեն գուցահեռ

⁴² **Ղափանցեան Գ.**, «Հայա-արմենական» լեզուախմբի ազգակցական բովանդակությունը, Ս. Էջմիածին, 1917, էջ 20:

⁴³ **Աճառեան Հ.**, ՀԱԲ, հ. 2, Եր. 1973, էջ 641-643:

⁴⁴ **Джаукян Г.**, О стратификации и хронологизации картвельско-армянских совпадений, с. 93-94: **Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 422: Հնդեվրոպական ծագման տեսակետին է հակվում **Զարարյան Հ.**, Կարին, կարճ, կիրճ եւ մի քանի այլ բառերի ստուգաբանություն // Լեզուն եւ գրականությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում. գիտական նյութերի ժողովածու, Վանաձոր, 2016, էջ 88-89:

⁴⁵ **Dalalyan T.**, The Terms Concerning the City Life Borrowed from Armenian and Georgian into Ossetic (Alanian), p. 5.

ձևերն ակնհայտորեն փոխառյալ չեն հայերենից: Այս պարագայում հնարավոր է ենթադրել վրացական ձևերի ծագումը նոստրատիկ նախալեզվից կամ անցումային մի լեզվավիճակից, ինչը կրկին ցուցում է հայերենի և վրացերենի բնիկ լինելը տարածաշրջանում, ինչպես նաև այդ լեզուների՝ իրար հետ ունեցած վաղնջագույն շփումները:

ТОРК ДАЛАЛЯН – О некоторых армяно-картвельских лексических изоглоссах. – В статье подвергаются этимологическому анализу пять армяно-грузинских лексических изоглосс. Делается попытка показать, что сравниваемые в двух языках слова, согласно своим фонетическим и семантическим свойствам, не могут быть заимствованы друг у друга и, следовательно, происходят от общей субстратной праосновы. Будучи двумя автохтонными языками региона, армянский и грузинский языки естественным образом питались из общего источника, который объединял в себе племенные языки и диалекты, на которых говорили древнейшие племена и племенные союзы региона. В некоторых случаях для соответствующих армянских слов имеем достаточно достоверную индоевропейскую этимологию, тем не менее грузинские параллельные формы очевидно не заимствованы из армянского языка. В таких случаях возможно предположить происхождение грузинских форм из ностратического праязыка или же из промежуточного языкового состояния, что, опять-таки, указывает на автохтонность армянского и грузинского языков в регионе, а также на древнейшие контакты, имевшие место между данными языками.

Приведенные в статье изоглоссы касаются следующих армянских корней: *bġaw-el* ‘блеять’, *bourd* ‘шерсть’, *břnk-el* ‘воспламенить’, *gangat* ‘жалоба’, *kotr-* ‘банкрот’.

Ключевые слова: армянский, грузинский, изоглосса, субстрат, *блеять, шерсть, воспламенить(ся), жалоба, банкрот.*

TORK DALALYAN - On Some Armenian-Kartvelian Lexical Isoglosses. - In this paper, Armenian-Georgian five lexical isoglosses are examined from an etymological point of view. Through a thorough linguistic analysis, we try to show that the words compared in these two languages, according to their phonological and semantical features, can not be borrowed

from each other and hence come from a common substrate basis. Being two autochthonous languages of the region, Armenian and Georgian have naturally fed from a common source, which united the local languages and dialects of the tribes and the tribal unions which ever inhabited the region. In some cases, there exist quite reliable Indo-European etymologies for appropriate Armenian words, nevertheless, the Georgian cognate forms are obviously not borrowed from Armenian. In such cases, it is possible to assume the origin of the Georgian forms from the Nostratic protolanguage or from an intermediate language state, which, again, proves the autochthonous nature of the Armenian and the Georgian languages, as well as the ancient contacts which have existed between them.

The discussed isoglosses refer to the following Armenian roots: *bġaw-el* ‘to bleat’, *bourd* ‘wool’, *břnk-el* ‘to ignite’, *gangat* ‘complaint’, *kotr-* ‘bankrupt’.

Keywords: *Armenian, Georgian, isoglosse, substrate, to bleat, wool, to inflame (to ignite), complaint, bankrupt.*

**ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱՆՈՒՆ-ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ
ՍՏՈՒԳԱՔԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ**

Ժողովրդանունների ստուգաբանության և ծագումնաբանության հանդեպ հետաքրքրությունը 21-րդ դարի լեզվաբանական և պատմագիտական գրականության մեջ ոչ միայն չի մարում, այլև միջամուխ է նոր շրջափուլ: Թե՛ նոր կայացող, թե՛ արդեն պետական-քաղաքական գործունեության հարուստ փորձ ունեցող ազգերը վերստին անդրադառնում են իրենց վաղմջական և շրջանառության մեջ գտնվող անվանումներին և ինքնանվանումներին՝ դրանց մեջ վերականգնելով իրենց սկզբնական բնակավայրերը, ծագումը և տեղաշարժերը: Ըստ էության, աստվածաշնչյան երեք հայտնի հարցերի պատասխաններն էլ գիտականորեն որոնվում են ժողովրդանունների մեջ՝ ա. Ո՞ր ես դու, բ. Ուստի՞ գաս, գ. Յ՞ո երթաս: Ժողովրդանուններն արդեն ենթարկվում են բազմակողմ հետազոտության՝ իրենց պարունակած լեզվական և արտալեզվական բովանդակության գուգադրմամբ:

Հայոց հատկանվանաբանության մեջ իրավիճակը համահունչ է միջազգային զարգացումներին, ուստի մենք ականատեսն ենք մի իրողության, երբ ժողովրդանունները սկսում են խորապես հետազոտվել ոչ միայն պատմագետների, լեզվաբանների և բանասերների կողմից, այլև մշակութաբանների, կրոնագետների և բանագետների: Այս գիտակարգերի տվյալների համահավաք վերլուծությունը ստեղծում է կայուն հիմք ժողովրդանունների առավել հավանական և սակավակասկած մեկնաբանությունների համար: Մեր ուսումնասիրության մեջ փորձել ենք ի մի բերել հայոց հիմնական ժողովրդանունների ստուգաբանությանը վերաբերող այն աշխատությունների և հոդվածների պնդումները, որոնք 2000 թվականից հետո են տպագրվել և հին ու նոր ըմբռնումների հետաքրքիր համակցություն

են ստեղծում: Նշենք, որ այս հարցով հետևողական զբաղվում է Արմեն Պետրոսյանը, որը ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն, անգլերեն լույս է ընծայել իր հայագիտական ուսումնասիրությունները մեր խնդրո առարկա նյութի վերաբերյալ¹:

Հայոց հիմքային ժողովրդանունները փաստացի նույնացվում են այն ժողովրդատեղանունների հետ, որոնք վկայված են հնագույն աղբյուրներում: Ժողովրդանունները դժվար ստուգաբանելի միավորներ են, քանզի նրանց նախնական նշանակությունը և հնչյունական պատկերը մթազնած են, սկզբնաձևերը զգալի փոփոխությունների են ենթարկվել հազարամյակների ընթացքում, ուստի բացի զուտ լեզվական գործիքներից՝ դրանց իմաստների վերականգնման համար անհրաժեշտ է ոչ միայն հայերի, այլև հնդեվրոպական այլ ժողովուրդների, ինչպես նաև ոչ հնդեվրոպական, բայց մեզ հարևան՝ սեմական, կովկասյան հնագույն ազգերի ազգածագման բանագիտական նյութի համադրումը: Ըստ էության, առաջ է մղվում ժողովրդանուն-դյուցազնանունների (էպոնիմ) մեկնաբանությունը տարբեր մակարդակներում՝ ներառյալ էթնոգենետիկ առասպելի վերլուծությունը՝ *Հայ*→*Հայկ*→*Հայք* կամ *Արմեն*→*Արման*→*Արմենիս* շղթայի օղակներին համապատասխան: Ազգածագման առասպելի վերականգնումը վերջին շրջանում հանգում է մեր առաջնային ժողովրդանունների՝ *հայ*-ի և *արմեն*-ի ընդհանրության բացահայտմանը:

Նախ սկսենք *հայ* անվանման մեկնաբանությունից. հայտնի է, որ *հայ* անվանումը բխեցվում է մեր առասպելական նախահայր Հայկ դյուցազնի անունից: Մենք համարվում ենք հայկյան զարմ, ուստի *հայ* ժողովրդանունն այսօր պետք է քննել ոչ միայն իբրև ժողովրդանուն, այլև որպես հասարակության սոցիալական կառուցվածքի եզրույթ: Հայագիտության մեջ հատկապես տարածված է այն վարկածը, թե *հայ* անվանումը բխում է **poti* հիմքից, որ նշանակում է *յրեր-յրանյրեր*: Ինչպես ազգագրական-բարբառային նյութի հիման վրա նշում է Ա. Պետրոսյանը, այս ստուգաբանությունը

¹ Տե՛ս Պետրոսյան Ա., Հայոց ազգածագման հարցի շուրջ //Հայոց ազգածագման հարցեր, Եր., 2006, նաև Петросян А., Арменоведческие исследования, Ер., 2014:

բարձր հավաստիություն ունի ոչ միայն հնչյունաբանական, այլև բարբառային և դիցաբանական հիմնավորումների շնորհիվ: Որոշ բարբառներում տարեց կանայք իրենց ամուսիններին անվանում են երրորդ դեմքով՝ *մեր հայր*, այսինքն՝ *ամուսինը*, *ընտանիքի գլխավորը*: *Գլխավոր* բառը հոմանիշ է *գլխավորեր* արտահայտությանը, որ նշանակում է *իմ գլխի տեր*: Վերջինս կարելի է կապել **poti* հնդեվրոպական հիմնաձևի հետ թե՛ ձևով, թե՛ բովանդակությամբ²: Ըստ այսմ՝ Հայկը հայրիշխանական տոհմի գլուխն է, նրա անձնանունն էլ բառակազմորեն վերլուծվում է երկու բաղադրիչների՝ **հայ** արմատի և **-իկ** ածանցի, որը հին հայերենում ուներ ժողովրդավանական գործառույթ՝ *պարսիկ, հնդիկ, տաճիկ, տաջիկ, ռուզիկ*: Ենթադրաբար նման կառույցներում **-իկ**-ը հավաքականություն և հոգնակիություն էր արտահայտում *մարդ-մարդիկ* ձևերի համաբանությամբ և հոմանիշ էր **-ք** ձևային՝ *հայ-հայիկ/Հայկ-Հայք*: Նման նշանակություն կարող էր ունենալ նաև **-ակ** ածանցը Հայկի որդու *Արամանեակ*-ի անվան մեջ: Այս **-իկ/-ակ** ածանցների ծագման վերաբերյալ ավանդույթի ուժով գործում է դրանց իրանական ընկալման կարծրատիպը, որովհետև պարսկերենում այն գործում վերջնամասնիկ էր, և բազմաթիվ իրանական բառեր փոխառել ենք հենց այս ածանցներով: Բայց նշյալ վերջաածանցներով կազմությունների առկայությունը մեծ հնություն ունեցող բառաձևերում վկայում է, որ **-ակ/-իկ**-ը բնիկ հ.-ե. ածանցներ են: Հիշենք, որ գրաբարում պահպանվել են դրանց հոլովման հնագույն ձևերը՝ ներքին թեքման դեպքում *ն*-ի վերականգնումով *ա* հոլովիչի հետ (*ան*)՝ *աղջիկ-աղջկան*, *Յուսիկ-Յուսկան*, հոգնակի ուղղականի *-ունք*-ով կազմությունները, որոնց հիման վրա կարելի է վերականգնել ***ակն/ *իկն** վաղնջական բնիկ ձևերը: Գ. Ջահուկյանն իր «Ստուգաբանական բառարան»-ում **-ակ/-իկ**-ի իրանական ծագումը կասկածի է ենթարկում: Նա նշում է, որ այս բազմիմաստ ածանցների համար հնարավոր է վերականգնել հ.-ե. ***kon** բաղադրյալ նախածնը ***ի** կամ ***ա** հիմքակազմ

² Հմմտ.՝ **Խաչատրյան Հ.**, Ամուսին հասկացության անվանումները հայերենի բարբառներում // Գիտություն և տեխնիկա, Եր., 2003, հ. 1, էջ 19, նաև **Петросян А.**, նշվ. աշխ., էջ 71:

տարբերով: - **kon**-ից ստացել ենք **կն**, ապա եզակի ուղղականում բառի բնի **ն**-ն ընկել է՝ վերականգնվելով թեք հոլովածներում: Գ. Ջահուկյանը եզրակացնում է, որ հենց իրանական կազմության **—իկ** հիմքի հետ բաղարկության հետևանքով կարող էր բնի **—ն**-ն ընկնել³:

Հայկը նահապետ էր, տոհմի ավագն ու տերը. այս կարգավիճակին էլ համապատասխանում էր նրա անվան առաջնային նշանակությունը: Ինչպես պնդում էր Ղ. Ալիշանը, Հայկի հակառակորդ Բեյի անվան մեջ ևս վերականգնվում է *յրեր-յրիրակալ* իմաստը⁴:

Հայ ժողովրդանվան մեկնաբանության առավել հավաստի տվյալներ գտնելու համար անհրաժեշտ է փորձել Հայկի ավանդագրույցին համահունչ առասպելներ գտնել հնդեվրոպական և այլ հին ժողովուրդների բանահյուսության մեջ: Այս գուգադրահամեմատության մեջ ավելի դյուրին է վերականգնել ժողովուրդների անվանադրման նախնական կաղապարները: Վաղնջական ժամանակներում աստվածայինը միշտ կապվել է նախնիների պաշտամունքի հետ, այսինքն՝ տարբեր ժողովուրդների նախահայրերը աստվածներն էին դառնում, և նրանց անվանադրման ձևիմաստային կաղապարների վերհանումը կօգնի ժողովրդանունների նախնական իմաստների բացահայտմանը: Նախնիների պաշտամունքի հետ են կապվում նաև հայ ժողովրդի երկու այլ անվանումները՝ *Թորգոնյան ազգ*, *Ասրանազյան ազգ*:

Գ. Ջահուկյանն իր «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ, անդրադառնալով հնդեվրոպացիների պաշտամունքային աշխարհին, առանձնացնում է մի կողմից շողացող երկնքի և լուսավոր օրվա, մյուս կողմից՝ ավագ սերնդի ներկայացուցիչների, նախնիների, հոր աստվածացումը⁵: Այսինքն՝ տոհմերի նահապետների անուններն ամրակայվում էին

³ Ջահուկյան Գ., Ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 807-808:

⁴ Հմմտ.՝ Ալիշան Ղ., Հին հավատք կամ հեթանոսական կրոնք Հայոց, Վենետիկ, 1895, էջ 119:

⁵ Տե՛ս Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 84:

նաև երկնային մարմինների անուններում: Հայկական ավանդու-
թյամբ Օրիոնի համաստեղությունը կոչվել է Հայկ նահապետի
անունով: Երկու տիրակալների՝ Հայկի և Բելի պատերազմում, Խո-
րենացու ավանդաբույսի համաձայն, Հայկը Բելին գետին է տա-
պալում իր աղեղի երեքթևյան նետի հարվածով: Հնդկական դիցա-
բանության մեջ առկա է համահունչ առասպել: Այսպես՝ աղեղնա-
վոր Հայկ նահապետը աղերսներ ունի հին վեդայական Ռուդրա բու-
ժարար աստծո հետ, որը պատկերվում է հզոր որսորդի կերպարով:
Ռուդրան ապրում էր մնացյալ աստվածներից հեռու՝ Հիմալայան
ցուրտ լեռներում, ինչպես Հայկը, որը հեռացավ Բաբելոնից դեպի
մեր լեռնային սառնաշունչ սրբավայրը: Ռուդրան ևս տոհմի հզոր
առաջնորդն էր, որը հանուն իր ցեղի պատերազմի է ելնում հակա-
ռակորդ Պրաջապատի աստծո դեմ: Պրաջապատի դիցանունն ուղ-
ղակի նշանակում է *արարածների տեր*՝ պրաջա-պատի (**poti*): Ռուդ-
րայի տոհմի անդամները նրա անունով կոչվում էին ռուդրաներ, ինչ-
պես հայկյան զարմի ներկայացուցիչները՝ հայեր: Հնդկաստանում
Օրիոնի համաստեղությունը կապվում է Պրաջապատի արարիչ
աստծո հետ, որին Ռուդրան խոցում է երեքմասնյա նետով: Հիշենք,
որ Օրիոնի համաստեղությունը հայտնի է իր երեք պալծառ աստղե-
րով, որոնք կազմում են նրա գոտին: Համաստեղության այս երեք
աստղերը հայերը կոչել են *Շամփուրք Հայկի, Զար ու Կշեռք*: Ռուդ-
րա աստծուն տրվող մակդիրները՝ *ganarpati, pasurpati, vratarpaty, grahapti, sabhapati* և այլք, կազմված են հնդեվրոպական **poti* հիմ-
նաձևից, ինչպես նաև նրա կողմից խոցված Պրաջապատի՝
Prajapati հակառակորդ աստծո անունը: Այս համաբանությամբ էլ
Ա. Պետրոսյանը բացատրում է Հայկ և Բել անունների մախնական
նշանակությունը՝ *հայ* անվան հիմքում հնդեվրոպական **poti* հիմ-
նաձևի վերականգնումը համարելով առավել հավաստի⁶:

Հայք անվանման մախնական իմաստի վերականգնման քննար-
կելի տարբերակներ կան նաև հունական դիցաբանության մեջ:

⁶ Տե՛ս **Петросян А.**, նշվ. աշխ., էջ 72-75:

Հունական աղբյուրներում տարբեր հիշատակումներ կան, որոնց համաձայն՝ **հայ** բառը կարող է կապվել Կողքիսի հին **Աֆ** անվան և քեսալական համանուն քաղաքի հետ. **Աֆ** նշանակում է *մեծ մայր* կամ *երկիր*. այս իմաստները միավորվում են որպես *մայր երկիր*: Այստեղ տեղին է հիշատակել արգոնավորողների հունական առասպելը և նրա հերոսներից *Արմենիոն Թեսալացուն*⁷: Ըստ առասպելի տարբերակներից մեկի՝ արգոնավորողները նավում են ոչ թե դեպի Կողքիս/Կոլխիդա, այլ *Այա* երկիր, որտեղ պահվում էր հաջողության և բարգավաճման գրավական Ոսկե գեղմը:

Հայր ժողովրդանուն-տեղանվան սեռական հոլովածնից՝ *Հայոց*, հնարավոր է վերականգնել *hayo նախասիմքը վաղնջահայերենում, հետագայում բնի ձայնավորն ընկել է և վերականգնվել որպես հոլովիչ թեք ձևերում, թեև չի բացառվում *haya հերթագայությունը: **Աֆ** / **Այա** անվանումը որոշ հետազոտողներ հնչյունական շղթայական անցումներով հանգեցնում են **Հայասա** տեղանվանը՝ **Այա>Հայա>Հայասա**: Այս համընկնումը ամրակայվում է նաև տեղագրական տվյալներով, և փաստորեն ուղղակի կապ է ստեղծվում *հայ* և *արմեն* անվանումների միջև, որոնք ի սկզբանե հոմանիշ էին:

Արմեն ժողովրդանվան համար իբրև սկզբնաձև վերականգնվում է ուրարտական սեպագիր արձանագրություններում վկայված Arme/ Urme հայտնի էթնոտեղանունը⁸: Հայոց ազգածագման վերաբերյալ իր աշխատանքներով հայտնի Յոզեֆ Մարկվարտը **արմեն** ժողովրդանվան հիմքում տեսնում էր *arm-*arim- կամ *arum- արմատը, որին կցվել էր ուրարտական *-ini* վերջավորությունը, այստեղից էլ՝ սեպագիր աղբյուրներում վկայված Armeni / Armeni ձևերը: *Arm արմատը նա զուգադրում է «Իլիական»-ում հիշատակված Չևսի և Տիվոնի մենամարտի վայրի անվան հետ՝ εἰν Ἀρίμοις: *Արիմո ցեղանունը Մարկվարտը կապում է Աստվածաշնչի Արամի

⁷ Հմմտ.՝ **Պետրոսյան Ա.**, Հայոց արմեն ցեղանունը, *Պարմաքսանասիրական հանդես*, Եր., 2014, №3, էջ 224-236:

⁸ Հմմտ.՝ **Потровский Б.**, Ванское царство, М., 1959, էջ 124, I.M. Dikonoff, The Prehistory of Armenian people, Delmar, 1984, էջ 159, **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 285-288:

և ուրարտական առաջին արքա Արամոյի անունների հետ, իսկ **հայ** ինքնանվանումը համարում է ավելի ուշ առաջացած ձև: *Արամ*-ը փաստորեն դիտարկվում է որպես հայ ժողովրդի բուն ցեղանուն: Հետազոտողները Մարկվարտի տեսությունը խոցելի են համարում՝ ելնելով այն իրողությունից, որ նա հայոց ազգաձագման հիմքում դնում է ոչ թե ինքնանվանումը՝ ավտոնիմը՝ *հայ*, այլ ուրիշ ազգերի կողմից մեզ տրված ժողովրդանունը՝ ավոնիմը՝ *արմեն*⁹:

Արմեն անվան ստուգաբանությունը առկա է ամենից առաջ հայ մատենագրության մեջ: Խորենացին այն կապում է Հայկի հաջորդներից *Արամ*-ի անվան հետ՝ մեզ կոչելով *Արամեան ազն*: Իսկ Մեբեոսը *Արմեն*-ը բխեցնում է *Արամանեակ* անունից, որն էլ գիտնականները զուգադրում են ուրարտական (Ք.ա. 625-605 թթ.) թագավորի անվան հետ՝ վերականգնելով դրանց ընդհանուր լեզվական հիմքը: Այս անունը հետազոտողները փորձել են կապել նաև ուրարտական Aramu թագավորի անվան հետ:

Արամը ևս դյուցազն-նահապետ էր, տոհմապետ-թագավոր, որը սպանում է ասորական հերոս *Բարշամին*: Փաստացի դիցաբանական մակարդակում Հայկը և Արմենը համարժեք կերպարներ են, ինչպես և հատկանվանագիտական մակարդակում նրանց անունները հոմանիշներ են: Առասպելաբանության մեջ Բարշամն աստված էր՝ ասորերեն՝ Ba'al Šamin «երկնքի տիրակալ»: Վերջինս հայոց պատմիչների երկերում ունի «սպիտակափառ» մակդիրը, և ավանդաբար նրա կուռքը պատրաստում էին փղոսկրից կամ արծաթադիր բյուրեղապակուց (Ագաթանգեղոս, Խորենացի): Ա. Պետրոսյանը փորձում է գտնել այս ավանդազրույցի նախատիպը ևս դարձյալ հնդկական դյուցազներգություններում՝ հայոց Արամին համարժեք համարելով հնդկական Ռամա աստվածությանը, որի անունը ստուգաբանվում է հնդեվրոպական *r̥e-mo «մուգ, սև» արմատի միջոցով: Հնդկական էպոսում Ռաման տապարով հաղթում է մեկ այլ հերոսի՝ Arjuna Karatavirya-ին, որի անունն էլ ծագում է հականիշ *harg - «վառ, սպիտակ» արմատից: Փաստացի ունենք հնագույն ա-

⁹ Տե՛ս **Петросян А.**, նշվ. աշխ., էջ 82-83:

ռասպելական հակամարտություն՝ սևի և սպիտակի, լուսի և խավարի, որն առկա է աշխարհի բոլոր ժողովուրդների բանահյուսության և դիցաբանության մեջ:

Ա. Պետրոսյանն իր հետազոտության մեջ կարևորում է *Արգեա/Արգայոս/ Արգեոս* լեռնանունը, որի մոտ Արամը սպանում է հակառակորդին՝ այս լեռնանվան մեջ վերականգնելով նույն *harg արմատը: Արամի կերպարի դիցաբանական բնութագրիչներից ելնելով՝ հետազոտողները նրան նույնացնում են ամպրոպի սև աստվածության հետ, որը հակամարտության մեջ է իր սպիտակ հակառակորդի հետ: Այս մեկնաբանությամբ *Արմեն* ժողովրդանվան համար իբրև հնագույն նախաձև վերականգնվում է հնդեվրոպական *r̥e-mo «մուգ, սև» արմատը. վերջինս տարբեր հերթագայություններով դարձել է *Արամ-Արամանեակ-Արմենակ*:

Ուշագրավ է նաև Ի. Դյակոնովի՝ հետմահու լույս ընծայված հոդվածում առաջարկված նոր ստուգաբանական վարկածը, որտեղ **Արմեն** անվանումը կապվում է հունարեն ἄρμενος արմատի հետ, որն ուներ «բարեկամ, համակիր» իմաստները, այսինքն՝ *ոչ թշմամական*. այս անվամբ հույները հայ-արմենների հակադրում էին Փոքր Ասիայի մնացյալ ժողովուրդներին, որոնց հետ հույները մշտապես թշմամական հարաբերությունների մեջ էին¹⁰:

Ամփոփելով կարող ենք արձանագրել, որ ժողովրդանունների հիմքում այն հայկական տոհմերի իրական նահապետներն էին, ովքեր բնակեցրել են Հայկական բարձրավանդակը հազարամյակներ առաջ՝ մարտնչելով հակառակորդների դեմ, միաժամանակ ունենալով դաշնակիցներ և իրենց հետքը թողնելով դիցաբանական, բանահյուսական աղբյուրներում: Ժամանակի ընթացքում նրանք դարձել են աստվածներ՝ երկրային հերոս-նահապետներից վերածվելով երկնային պաշտամունքի միավորների:

Քանակի բառեր՝ ժողովրդանուն, հայ, արմեն, դիցաբանություն, ստուգաբանություն, վերականգնում, նախնական իմաստ, տեր, նահապետ, նախնի, աստված:

¹⁰ St'u Дьяконов И., О самоназвании армянского народа// Историко-филологический журнал, М., 2005, №2, էջ 277:

НАРИНЕ ДИЛБАРЯН – Современные подходы к этимологии армянских этнопонимов. – Этимология этнонимов занимает важное место в современной ономастике, и на каждом этапе реконструкции первоначальных форм древнейших этнонимов, которые одновременно функционируют и как топонимы, требуются новые подходы. В XXI веке методы реконструкции базируются не только на языковых, но и на экстралингвистических данных: на историко-фольклорном материале, мифологии разных народов. Наши предки обожествлялись, и семантико-структурные модели теонимов могут помочь при выяснении исконных значений этнопонимов. Благодаря этим данным, мы выявили общие древние модели именования разных народов и этнических групп.

Как основа для этнонима *хай* выделяется индоевропейский корень **poti* со значением *господин*. В этнониме *армен* можно восстановить индоевропейскую проформу **r̥e-mo*, со значением *темный, черный*. Оба предводителя армянского народа – Хайк и Армен были храбрыми воинами и победителями. Между армянскими этнопонимами и индийскими (ведийские), а также греческими названиями богов можно провести параллели, что позволяет восстановить общеиндоевропейские принципы именования и миропознания.

Ключевые слова: *этноним, топоним, хай, армен, мифология, этимология, реконструкция, первоначальное значение, предводитель, господин, предок, бог.*

NARINE DILBARYAN - Modern approaches of etymology of Armenian ethnotoponyms. – The etymology of ethnonyms has an important place in modern onomastics, and at each stage, new approaches are required to reconstruct the original forms of the oldest ethnonyms that simultaneously function as toponyms. In the XXI century reconstruction methods are based not only on linguistic, but also on extralinguistic facts: on historical and folk art material, mythology of different peoples. Our ancestors became gods, and the semantic-structural models of the theonyms can help to find the original meanings of ethnotoponyms. Using these facts can be restored common ancient models of naming peoples and ethnic groups.

As the basis for the ethnonym *hai* stands out the Indo-European root **poti*, with the meaning of *the lord*. In the ethnonym of *Armen* you can restore the Indo-European root **r̥e-mo*, means *dark, black*. Both leaders of the Armenian people Hayk and Armen were brave fighters and winners. Between Armenian

ethno-toponyms and Indian (Vedic), also Greek names of gods there are many analogies that allows to restore the Indo-European general principles of naming and world view.

Keywords: *ethnonym, toponym, Hay, Armen, mythology, etymology, reconstruction, original meaning, leader, lord, parent, god.*

**ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒԶԱԿԻՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ ՀԱՅՐԵՆՆԵՐԻ ԵՎ
ՆՐԱ ԱՆՈՒՆՈՎ ՄԵԶ ՀԱՍԱԾ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ
ՏԱՂԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Հայագիտության մեջ դեռևս 1882 թ. Արիստակես վարդապետ Տևկանցը սկզբնավորել է մի թյուրիմացություն, ըստ որի՝ հայկական ժողովրդագուսանական հայրենները վերագրվել են Նահապետ Քուչակին:

Այդ թյուրիմացությանը սկզբում նպաստել է Արշակ Չոպանյանը¹, հետագայում՝ առավելապես Ավետիք Դուկասյանը², Մկրտիչ Մկրյանը³ և այլք:

Թեև հայագետների մեծ մասը՝ Տ. Պալյանը⁴, Մ. Աբեղյանը⁵, Աս. Մնացականյանը⁶, Օ. Եգանյանը⁷, Պ. Սևակը⁸, Հ. Սահակյանը⁹, Ս. Հարությունյանը¹⁰, Շ. Գրիգորյանը¹¹, Խ. Ամիրյանը¹², Պ. Խա-

¹ Տե՛ս Չոպանյան Ա., Նահապետ Քուչակի դիվանը, Փարիզ, 1902:

² Տե՛ս Նահապետ Քուչակ, Հայրենի կարգավ, Եր., 1957, էջ 3-35:

³ Տե՛ս Մկրյան Մ., Նահապետ Քուչակ, տե՛ս Հայ մշակույթի նշանավոր գործիչները V-XVIII դարեր, Եր., 1976, էջ 464-476:

⁴ Տե՛ս Պալյան Տ., Անյիշատակ հայ աշուղ մը, Հանդես ամսօրյա, Վիեննա, 1897, էջ 344-345:

⁵ Տե՛ս Աբեղյան Մ., Երկեր, հտ. Բ, Եր., 1967:

⁶ Տե՛ս Մնացականյան Աս., Հայրենների և Նահապետ Քուչակի մասին, Պատմա-բանասիրական հանդես, թիվ 2, Եր., 1958, էջ 234-257, Մնացականյան Աս., Միջնադարյան սիրո հայրենների անդրանիկ ժողովածուն և հայրենների հարցը, Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության, Եր., 1971, էջ 96-126: Հայրեններ, աշխ. Աս. Մնացականյանի, Եր., 1995, էջ 8-40:

⁷ Տե՛ս Եգանյան Օ., Նահապետ Քուչակի հայատառ բուրբերեն տաղերը, Բանբեր Մատենադարանի, թիվ 5, Եր., 1960:

⁸ Տե՛ս Պարույր Սևակ, Սայաթ-Նովա, Եր., 1987, էջ 110:

⁹ Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը, աշխ. Հ. Սահակյանի, հտ. Ա., Եր., 1986:

¹⁰ Տե՛ս Հարությունյան Ս., Նահապետ Քուչակ, Հայկական տվետական հանրագիտարան, հտ. 8, Եր., 1982, էջ 172-173, Հարությունյան Ս., Հայրենների խնդիրը և

չատրյանը¹³, Վ. Եղիազարյանը¹⁴, Քուչակին չեն ընդունել որպես հայրենների հեղինակ, այլ իրավամբ համարել են աշուղ, սակայն հայրենները թարգմանվել են աշխարհի տարբեր լեզուներով և տարածվել որպես Նահապետ Քուչակի ստեղծագործություն¹⁵:

Սույն հոդվածի **արդիականությունը** հայրենների տաղաչափության և Քուչակի աշուղական երգերի տաղաչափության համեմա-

Ասատուր Մնացականյանի գիտական նոր համահավաքը, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1996, թիվ 1-2, էջ 153-168:

¹¹ Տե՛ս **Գրիգորյան Շ.**, Հայ հին գուսանական երգեր, Եր., 1971: **Գրիգորյան Շ.**, Ռ՞վ է, ի վերջո, Նահապետ Քուչակը, Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 1984, № 7: **Գրիգորյան Շ.**, Ռ՞վ է իրականում Նահապետ Քուչակը, Բազմավեպ, Վենետիկ, 2000, ճՃԸ 1-4, էջ 231-246: **Գրիգորյան Շ.**, Հայ աշուղական գրականության պատմություն, Եր., 2002, էջ 76-102:

¹² Տե՛ս **Ամիրեան Խ.**, Թուրքալեզու հայ աշուղներ. Օսմանյան Կայսրություն. 16-20-րդ դարեր, Փարիզ, 1993:

¹³ Տե՛ս Գանձարան հայ հին բանաստեղծության, աշխ. **Պ. Խաչատրյանի**, Եր., 2000:

¹⁴ Տե՛ս **Եղիազարյան Վ.**, Հայրեններ, Վանաձոր, 2007: **Եղիազարյան Վ.**, Քուչակյան բյուրիմացություն, թե՞ անիմացություն, Գրական թերթ, Եր., 2008, 25 հունվարի: **Եղիազարյան Վ.**, Նահապետ Քուչակը և նրա անունով մեզ հասած երգերը, Գրականագիտական հանդես, Եր., 2016:

¹⁵ Տե՛ս **Ֆրանսերեն՝** Tchobanian A., La roseraie d'Arménie, t. 2, Paris, 1923, նաև Cent poèmes d'amour d'exil /par Nahapet Khutchak; Trad. par Vahé Godel. Paris : Orphee; La difference, 1991. 125 p., նաև **ռումիներեն՝** Nahapet Kuceac, Cântece - ANI – Anuarul culturii armene, București, 1941, pag. 256. Traducere de Mircea Gheorghiu și Gr. Avakian, նաև **անգլերեն՝** Blackwell, Alice Stone. Armenian Poems, Rendered into English Verse. Boston, MA: Atlantic Printing Company, 1917, նաև Come Sit Beside Me and Listen to Kouchag: Medieval Poems of Nahabed Kouchag. Translated by Diana Der Hovanesian. Ashod Press, 1984, 85 p., նաև A hundred and one hayrens /Nahapet Kouchak; Introd. by W. Saroyan; English transl. by E. Osers. Yerevan : Nairi, 1998. 127 p. A hundred and one hayrens =Հարյուր ու մեկ հայրեն /Nahapet Kouchak; Design by G. Marikian. Yerevan : Nairi, 2012. 108 p., նաև **ռուսերեն՝** Нахабед Кучак: Синя птица, златно перо: стихотворения.- Пловдив: Изд. Хоризонти, 2009.- 128 с. Подбрал и превел превод Марко Марков, նաև Нахабед Кучак: Целувката, която ти дари ми...- София Пловдив: Парекордзаган, 2011.- 63 с. Превод от арменска език Агоп Мелконян, նաև **ռուսերեն՝** Песни любви, пер. А. Амбарцумяна, СПб, 1904, նաև Напет Кучак. Стихотворения, пер. Ал. Степана, предисл. М. Мкряна, Ер., 1941, նաև Сто и один айрен, предисл., составл., подстроч. пер. Л. Мкртчяна, Ер., 1976, նաև **գերմաներեն՝** Hundertundein Hairen /Von Nahapet Khutschak. Jerewan : Nairi, 1999. 106 S. Hundertundein hairen =Հարյուր ու մեկ հայրեն /Nahapet Khutschak; Umschlaggestaltung von G. Marikian. Jerewan: "Nairi", 2012. 105 S. և այլն:

տական քննությունն է, որով ևս հիմնավորապես հերքվում է հայրենների՝ Նահապետ աշուղ Քուչակին վերագրելու անհիմն վարկածը:

Հոդվածի **նպատակն** է համեմատության մեջ ցույց տալ, որ հայրենների տաղաչափությունը ոչ մի կապ չունի ձեռագրերով մեզ հասած և աշուղներից գրի առնված Քուչակի աշուղական երգերի տաղաչափության հետ: **Խնդրո առարկան** աշուղ Քուչակ Վանեցու հայատառ թուրքերեն երգերի և հայրենների տաղաչափության քննությունն է, որ կատարում ենք հերմենևտիկայի մասնագիտական, ինչպես նաև վերլուծական, համադրական, համեմատական **մեթոդների** կիրառմամբ:

Այսպես՝ նախ քննենք թյուրիմացաբար քուչակյան համարված հայրենների հարցը:

Հայրեն բառը Մ. Աբեղյանը կապել է **հայկական** բանաստեղծության հետ, Ավ. Դուկասյանը այն փորձել է կապել **հայրենիք**, Պ. Սևակը՝ **հայ** բառի հետ, մինչդեռ Աս. Մնացականյանը գրում է. ««Հայ» բառը հեր կամ հար՝ ձևով չի կարող հնչել, իսկ «հայր»-ը հնչել է և՛ մեկով, և՛ մյուսով: Դա արդեն որոշիչ նշանակություն ունի և իրավունք է տալիս հայրեն, հայրեն ձևի հիմքում տեսնել հայր արմատը: Հետևապես հայրեն (հայրենի) բառը պիտի ընկալել հայրական (հայրենի) իմաստով, ինչպես որ այն պահպանված է «հայրենի կարգա» դարձվածքում («հայրենի»)»¹⁶:

«Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանի հեղինակները **հայրենի** բառը բացատրում են որպես «սեփական հոր, և հարց, և նախնեաց. հայրական, հայրենեան. և իւրական, սեպիական, պապեմական, հին, բուն»¹⁷, որով ևս հաստատվում է հայրենների կապը նախնյաց երգարվեստի հետ:

Մանուկ ան մանկանն ասեմ,

Որ հնաբէ հայրեն ու ասէ.

ԶՀայրենն ի դաթարն ասէ,

¹⁶ Հայրեններ, աշխ. Աս. Մնացականյանի, Եր., 1995, էջ 34:

¹⁷ Աւետիքեան Ա., Սիւրմէեան Խ., Սւգերեան Հ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. Բ, Վենետիկ, 1837, էջ 34:

Որ ետևս դալատ չի բերե¹⁸:

«Ղաթար»-ը չափն է, իսկ Մ. Աբեղյանը «Հայրենի առանձնահատուկ ռիթմը» գլխում¹⁹ նկատել է, որ հայրենի բանաստեղծական չափը 15-վանկանի յամբ-անապեստյան կազմությամբ վանկա-շեշտային ոտանավորն է՝ 7+8 հատածով, որին հատուկ է պարտադիր շեշտը 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ, 12-րդ, 15-րդ վանկերում: Սա հայրենի ժանրակազմ կարևորագույն առանձնահատկությունն է՝ պարտադիր և կրկնվող բոլոր հայրեններում, իսկ հայրեն աստղը այնպես պիտի ասի, որ **«ղախար»-պակասություն, քերություն** չլինի: Ուրեմն հայրենի համար անչափ կարևոր են բանաստեղծական ձևը, կազմությունը, և պատահական չէ, որ այս հայրենում հատուկ անդրադարձ է արվել նշված խնդրին, քանզի հայրենի ժանրակազմ գլխավոր առանձնահատկությունը հենց ձևի մեջ է: Հայրենի ժանրի բնորոշման համար կարևոր են նաև դրա կատարման եղանակը, արտահայտման կերպը:

Կասեմ, թե հայրեն ասա,

Թե չէ ես ասեմ՝ դուն լսե.

Զբերանդ ալ քենով ամե

Ու զականջդ ալ ի գոց դու պահե²⁰:

Այս հայրենի **«ես ասեմ՝ դուն լսե»** արտահայտությունը մեզ բառացիորեն հիշեցնում է ժողովրդական ստեղծագործություններին հատուկ դիմելաձևը, ասացող գուսանի խոսքը:

Հայրենների ժանրակազմ առանձնահատկությունների տեսական բնութագիրը տվել ենք մեր «Հայրեններ» ուսումնասիրության մեջ, ըստ որի՝

«1. Հայրենը 7 և 8 վանկանի կիսատողերից կազմված 15 վանկանի ոտանավորն է՝ կառուցված վանկաշեշտային սկզբունքով, և ունի յամբ-անապեստյան կազմություն, այսինքն՝ շեշտակիր են 2, 5, 7, 10, 12, 15-րդ վանկերը:

2. Հանգավորված են բոլոր 15-րդ վանկերը:

¹⁸ Հայրեններ, աշխ. Աս. Մնացականյանի, Եր., 1995, էջ 58:

¹⁹ Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 38-53:

²⁰ Նույն տեղում, էջ 316:

3. Հայրենի մեկ տունը կարող է լինել 2-10 տողանի, հիմնականում՝ 8 տողանի (վերջինս տաղաշարքերում ավելի հաճախադեպ է):

4. Հայրեններին բնորոշ է տաղաշարքեր կազմելու հատկությունը:

5. Թեև հայրենների երաժշտությունը մեզ անհայտ է, սակայն պիտի ընդունենք, որ դրանք ունեցել են առանձնահատուկ երաժշտություն, որով ասվել կամ երգվել են»²¹:

Այս նշված հատկանիշները կայուն են և կրկնելի բոլոր հայրենների համար, այսինքն՝ հայրենի ժանրը բնութագրվում է վերոհիշյալ ժանրակազմ առանձնահատկություններով:

Հայրենների և Քուչակի աշուղական երգերի տաղաչափությանն անդրադարձել է Շավիղ Գրիգորյանը՝ գրելով, թե «հայրենները հայրենական են, աշուղականը՝ օտարամուծ, հայրենները միայն մերն են, աշուղականը՝ նաև մերը»²²: Ավելին՝ աշուղական երգերը և հայրենները «ժանրային առումով միանգամայն տարբեր և այլասեռ ստեղծագործություններ» են, որոնք ոչ միայն չի կարելի նույնացնել, այլև շփոթել անգամ չի կարելի²³:

Շ. Գրիգորյանը իրավացիորեն պնդում է, որ հայրենները կապ չունեն Քուչակի անվան հետ, վերջինս մի աշուղ է՝ հայատառ թուրքերեն երգերի հեղինակ, որի «աշուղական հայատառ թուրքերեն երգերը, հիրավի բարձրարվեստ գործեր են՝ Սայաթ-Նովայի, Բեսիկի-ի, Վազիֆի, Սաիբ և Կովսի Թավրիզեցիների, Վիդադիի, Սալմաստեցի Դուլ-Հարությունի, Դավլաթ-Մուրադի, Շիրինի, Դավիթ Քեշիշ-օղլու ստեղծագործություններին համահավասար: Հենց այն բանը, որ այդ երգերը գրի են առնվել ու պահպանվել Թավրիզում, Հայաստանի հեռավոր շրջաններում, Թիֆլիսում և այլուր, խոսում են Քուչակի ունեցած մեծ համբավի, ճանաչված լինելու մասին»²⁴:

Սակայն, ցավոք, աշուղագետը կանգ չի առնում աշուղական տաղաչափական ձևերի և հայրենների տաղաչափական առանձ-

²¹ Եղիազարյան Վ., Հայրեններ, էջ 36-37:

²² Նույն տեղում, էջ 90:

²³ Տե՛ս նույն տեղը, էջ 91:

²⁴ Գրիգորյան Շ., Հայ աշուղական գրականության պատմություն, էջ 89:

նահատկությունների ուսումնասիրության վրա, որով առավել հստակ է դառնում, որ հայրենները որևէ կապ չունեն աշուղ Քուչակի հետ:

Այժմ կանգ առնենք աշուղ Քուչակի անունով մեզ հասած մի քանի հայատառ թուրքերեն աշուղական երգերի վրա՝ ուշադրություն դարձնելով դրանց տաղաչափական առանձնահատկություններին:

Գաղտնիք չէ, որ աշուղական երգարվեստն ունի իր նրբությունները և տաղաչափական հնարանքները: Ինչպես արդեն իրավամբ նկատված է, «հայ գուսանը մուսուլմանական աշխարհում վերածվում է պարսկալեզու, ապա առավելապես թուրքալեզու միստիկաշուղի»²⁵: Դրանով է բացատրվում աշուղ Սայաթ-Նովայի (և նրանից առաջ հանդես եկած բոլոր աշուղների) թուրքերեն ստեղծագործելը:

Բլբուլ է կատարյալ խոսքի իմաստը,
Խոսքի (այս) իմաստը քառսուն ոտք ունի,
Իմ սիրտը քաղաք է, հազար տեսակ է,
Ինչպիսի քաղաք է, քառսուն ոտք ունի:

Ինչպիսի քաղաք է, քառսուն պահակ կա,
Քառսունի հոգսերին մեկն է ենթակա,
Թանաքաման, քառսուն ծայր, մի փախչող մոլլա,
Ինչպիսի մոլլա է, քառսուն ոտք ունի:

Քուչակն ասում է փողոց է սա մի,
Հաշվիր այս փողոցը, տես քանի կանի,
Թող քառսուն աշուղ գա այս խոսքը բացի,
Խոսքի այս իմաստը քառսուն ոտք ունի²⁶:

Նկատենք, որ այս երգն աշուղական հարցեր առաջադրող, վարպետ աշուղի երգած **դափուլլամա** է («նշանակում է *փականքաբար*, կոչվում են այն երգերը, որոնց ամեն մի տողում կամ երկտողում մի

²⁵ Բախչինյան Հ., Սայաթ-Նովա, Եր., 2010, էջ 106:

²⁶ Եզանյան Օ., նշվ. աշխ., էջ 467-468:

հարց է առաջարկվում»²⁷), իսկ «բաս» մտած մրցակցող աշուղը փորձում է հանկարծախոսությամբ տալ պատասխանը:

Ինչպես գրում է Գ. Լևոնյանը. «Հակառակորդը յուր բոլոր ուժը, ընդունակությունը, շնորհքը գործ է դնում, որ նրա երգելու միջոցին մտքի մեջ մեկնե բոլոր հարցերը ու ոտանավորի վերածե նույն չափով ու հանգով: Այստեղ է, ահա, աշուղական արվեստի ամենադժվարին կողմը, այստեղ է աշուղի հանկարծախոսության (եմբոլիսասիոն) ընդունակության չափը հայտնի լինում»²⁸:

Աշուղական երգին հատուկ է գեղեցկուհու արտաքինի գովք-փառաբանությունը, որը «Վարսաղ Քուչակին» երգում ինքնատիպ արտահայտություն է գտել.

Շրթներդ նման են քաղցր շաքարի,
Հասակդ տոսախ է, մազդ՝ անթերի,
Ելել է բլբուլը թովիչ շուրջպարի,
Դենում է դյուրված վաղ առավոտից²⁹:

Հարկ է փաստել, որ **վարսաղը** ևս աշուղական տաղաչափական երգատեսակ է, որի մասին գրել է նաև աշուղագետ Գ. Լևոնյանը³⁰:

Աշուղական բանաստեղծության ինքնատիպ տեսակ է **թեջնիսը**, որի մի գեղեցիկ նմուշ է Քուչակից մեզ հասած թուրքերեն երգը՝ «Երբ տգետը գիտունից դաս չի առնում» սկսվածքով, որ վերնագրված է «Թեջնիս»:

Տգետը նետվում է վեճի առ ճակատ,
Գիտուն մարդն ընտրում է գոհարազարդ պայտ,
Աստծո առյուծը Ալին է՝ Սուրբըն այդ,
Նա Քառասնյաց առաջնորդն է, ի՞նչ կասեք³¹:

Այստեղ Քուչակը հեզնում է սուրբ Ալիին: Պահպանվել է նաև մի գրույց, ըստ որի՝ աշուղ Քուչակը և մի թուրք աշուղ Բաղեշում մրցում են. հաղթում է Քուչակը: Պարտված թուրք աշուղը վիրավորում է

²⁷ Լևոնյան Գ., Երկեր, Եր., 1963, էջ 184:

²⁸ Նույն տեղում, էջ 189:

²⁹ Նույն տեղում, էջ 478:

³⁰ Նույն տեղում, էջ 177:

³¹ Նահապետ Քուչակ. աշուղական երգեր, աշխ. Վանո Եղիազարյանի, Ե., 2017, էջ 105:

Քուչակին՝ վագող խոզին հայ տերտեր անվանելով, իսկ Քուչակը բառախաղով ետ է վերադարձնում վիրավորանքը: Մուսուլմանական միջավայրում գործող հայ աշուղը քրիստոնեական հավատի ու պատգամների քարոզիչ-երգիչ է, ինչն ակնհայտ է այս **ղոշմա թեջ-նիսում**.

Վանլի Քուչակն ասաց՝ աղքատ եմ ու որբ,
Մեկ Աստված գիտեմ՝ նրան եմ հետևորդ,
Թռչնաբարբառ մարգարեին Սողոմոն,
Թե դրախտի թռչուն կոչենք, ի՞նչ կասեք³²:

Ղոշման 11 վանկանի 6+5 հատածով աշուղական տաղաչափություն ունեցող երգ է, որի առաջին տան 2-րդ և 4-րդ տողերը վերջանում են նույն բառով, որը կրկնվում է բոլոր հաջորդ տների 4-րդ տողի վերջում, որին նախորդող բառերը ունենում են ներքին հանգ, իսկ 2-րդ տնից սկսած՝ մյուս բոլոր տների 1-ին, 2-րդ և 3-րդ տողերն ավարտվում են նույն հանգով: Իսկ թեջնիս երգատեսակին հատուկ է միևնույն բառը տարբեր տների մեջ հիմնական, հակառակ կամ բոլորովին այլ իմաստներով գործածելը, ուստի թեջնիսի տների վերջին բառերը թեև միանման են, սակայն ունենում են տարբեր նշանակություն:

Մի խոհական երգ է «Ով գիտուններ, ինձ տանջում է...» սկսվածքով **դիվանին**, որի տաղաչափությունը 15 վանկանի է՝ 4+4+4+3 հատածով:

Ով գիտուններ, այս երեքը՝ երեք անկեղծ չեն լինի,
Երեքն էլ այս աշխարհում հույս չեն՝ մի ձի, մի թուր, մի կին³³:

Մուսուլմանական աշխարհում տղամարդու պատվի խորհրդանիշներ են ձին, թուրը և կինը, մինչդեռ աշուղ Քուչակն ակնարկում է նաև դրանց անհուսալի լինելը:

Ով գիտուններ, այս երեքը թե մեկտեղվեն՝ պարզ և,
Քոչաքներին թող վիճակվի՝ մի լուր, մի բախտ, մի դրախտ³⁴:

³² Նույն տեղում:

³³ Նույն տեղում, էջ 107:

³⁴ Նույն տեղում:

Այս վերջին տողը թարգմանված է «Koçaklara nasib olsun bir çav bir uğur bir ahret» թուրքերեն տողից: **Koçaklara** նշանակում է «**Կոչաք, քոչաքոքյուն, քոչաքներ**»: Անատոլիայում **քոչաքներ** էին անվանվում այն տղամարդիկ, որոնք թաքնվում էին կանացի գգեստի մեջ և հատուկ շարժումներով պարեր պարում³⁵: Սա հատկապես շեշտում ենք, որ բանասիրության մեջ նոր շփոթի տեղիք չտա: Իսկ երգի վերջում աշուղը կրկին տալիս է իր անունը.

Քուչակն ասաց, այս երեքի մեկտեղումն է կատարյալ,
Մեկմեկու յար կլինեն մի լեզու, մի միտք, մի աշխարհ³⁶:

«Բենդի-Մահու» հայատառ թուրքերեն **դյուպեխ** երգը Բերկրի գետի գովքն է, որի վերջում աշուղ Քուչակը վկայում է, որ Վանն իր հայրենիքն է:

Հանց աշուղ Քուչակի վաթան,
Փառավորվես, դու չքնաղ Վան³⁷:

Այս թուրքերեն երգը գրառվել է աշուղներից, ուստի «Բենդի՝Մահու՝ բենդ իսթինե,/ Աղբրեջան եօլ իսթինե» տողերը Հ. Աճեմյանը տպագրել է այնպես, ինչպես լսել է խառակոնիսցի աշուղ Ուստա Ղազարից, որն էլ իր հերթին սովորել է այս երգն իր համագյուղացի Կուլիջանից, իսկ վերջինս աշակերտել է Պոլսում աշուղ Լիսանին³⁸: Իրականում այստեղ խոսքը ոչ թե Աղբրեջանի մասին է, այլ Առեստավան քաղաքի, որ հենց Բերկրի գետի եզերքին է: Բենդի-Մահու՝ Բերկրի գետն անցնում է Առբերան գավառի կենտրոն Առեստավան քաղաքով, որն անվանվել է նաև Բանդումահի, Բանդիմահի, Եռաստավան և այլն³⁹: Պարզ է, որ խոսքն այստեղ հենց Առեստավան

³⁵ St'u <http://www.radikal.com.tr/radikalist/bir-anadolu-kulturu-koceklik-hakkinda-10-sey-1217103/>, հասանելի էր 21.02.2017 թ., նաև <http://www.hurriyet.com.tr/kastamonuda-kocek-yasagi-40095502>, հասանելի էր 21.02.2017 թ.:

³⁶ Նահապետ Քուչակ, աշուղական երգեր, աշխատասիրությամբ **Վանո Եղիազարյանի**, Եր., 2017, էջ 107:

³⁷ Նույն տեղում, էջ 99:

³⁸ Տե՛ս «Ծաղկաբաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահյուսության» ժողովածուն, Էջմիածին, 1917, էջ 93:

³⁹ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. Ա, Եր., 1986, էջ 325:

քաղաքի մասին է, ուստի քարգմանության մեջ կատարել ենք այդ ուղղումը:

Բենդի-Մահու, հենց հանգույցին,

Առեստավանն է քո ճամփին.

Բլբուլը թառել է վարդին,

Քեզ Բենդի-Մահու են ասում⁴⁰:

Երգի մեջ հիշատակված Արճեշը Վանա լիճն է կամ նրա ափին գտնվող Արճեշ քաղաքը:

Աջ կողմումդ վճիտ ջրեր,

Չախից Արճեշը կոլիտեր,

Ափիդ բուրում են ալ վարդեր,

Քեզ Բենդի-Մահու են ասում⁴¹:

Առբերան գավառում է գտնվում նաև Բերկրիի գեղատեսիլ ջրվեժը:

Աշխարհի ունայնության մասին է «Արի, քեզնից խաբար առնեմ» խոհական երգը, որ ևս մի **դյուպեիտ** է՝ աշուղական 8 վանկանի երգ, որի բոլոր տների վերջին տողերը նույնն են, և այն կրկնվում է նաև առաջին տան երկրորդ տողում: Այնուհետև հաջորդ տների առաջին, երկրորդ, երրորդ տողերը նույնահանգ են: Դյուպեիտը սովորաբար ունենում է 3-5 տուն, Քուչակի այս դյուպեիտը 3 տնից է կազմված: Դյուպեիտն առավել շատ գործածական երգածն է իր հեշտության պատճառով:

Վանլի Քուչակ մնաց անճար,

Ինչ ցանեց, այն հնձեց արդար,

Եկողը հյուր, հյուրն էլ անցորդ,

Ո՞վ է քեզ մնացել, աշխա՛րհ⁴²:

«Գարնան թագով ամառ եկավ» **դյուպեիտ** երգում էլ աշուղ Քուչակը դիմել է վարդի և սոխակի այլաբանությանը: Սիրահար աշուղն իր սիրո դարդը փորձել է սփռվել վարդի և սոխակի սիրերգով:

Ես հասել եմ վարդի փնջին,

⁴⁰ Նահապետ Քուչակ. աշուղական երգեր, աշխ. **Վանո Եղիազարյանի**, էջ 99:

⁴¹ Նույն տեղում:

⁴² Նույն տեղում, էջ 109:

Մի հավատա բոգի խաղին,
Վանեցի Քուչակի դարդին,
Վշտակից դարձավ բլբուլը⁴³:

«Ով գիտուններ, մուսուլմաններ» թուրքերեն երգը ևս աշուղական **դյուպեխո** է, որի ավարտական տան մեջ՝ թափշուրմաշում, աշուղը վերստին տալիս է իր անունը՝ այս անգամ Վանլի Գյոչէկ անվանումով⁴⁴:

Վանլի Քուչակ դեպ քեզ եկավ,
Հառաչանքս ավելացավ,
Որպես միջնորդ՝ մի խոսք ընկավ
Քաղցրախոս բերանից, յաման⁴⁵:

Արդ՝ Վանեցի Քուչակը՝ հայ աշուղների նահապետը, մեր առաջին եռալեզու աշուղն է: Նրանից մեզ հասել են **դափուլլամա, վարսաղ, դոշմա, քեջնիս, դիվանի, դյուպեխո** և այլ աշուղական երգատեսակներ՝ հայերեն, հայատառ թուրքերեն և հայերեն-պարսկերեն: Քուչակի հանգույն հետազայում աշուղական տաղաչափական բազմաթիվ ձևերով և երեք լեզուներով ստեղծագործեց նաև Սայաթ-Նովան:

Համեմատելով Նահապետ Քուչակի բազմաձև աշուղական երգատեսակները հայրենների յամբ-անապեստյան միօրինակ տաղաչափության հետ՝ հստակ կարող ենք ասել, որ Քուչակի աշուղական երգերը ոչ մի կապ չունեն հայրենների տաղաչափության հետ: «Տարբերությունն այդ երկու ժանրերի միջև ավելի զգալի է պոետիկական տաղաչափական առումով: Աշուղական երգերն ունեն շատ ավելի ժողովրդամոտ, դիդակտիկ խրատական բնավորություն, հորինվում են հեղինակային օժտվածությամբ բացատրվող գեղարվեստական ամենատարբեր մակարդակներով ու բառ ու բանով և բնավ ենթակա չեն փոփոխության, որովհետև անմիջապես գրառվում են դավթարներում կամ փոխանցվում բերնեբերան, իսկ հայրենները մի տեսակ կոլեկտիվ ստեղծագործության բնույթ են կրում և մշտապես

⁴³ Նույն տեղում, էջ 111:

⁴⁴ Նույն տեղում, էջ 112:

⁴⁵ Նույն տեղում, էջ 113:

ենթակա են փոփոխման կամ կատարելագործման», - նկատել է Շ. Գրիգորյանը⁴⁶:

Հարկ ենք համարում հավելել, որ աշուղական տաղաչափությունն ունի իր առանձնահատկությունները՝ ձևավորելով 60-ից ավելի տաղաչափական ձևեր, որոնք բոլորովին տարբեր են հայրենների յամբ-անապեստյան տաղաչափությունից, որը միմիայն 15 վանկանի ոտանավոր է՝ 7+8 հատաժով, որի 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ, 12-րդ և 15-րդ վանկերը շեշտակիք են, մինչդեռ աշուղական չափերը խիստ տարբեր են, ինչպես՝ դյուպեիտը՝ 8 վանկանի՝ երկու հատաժով, դիվանին՝ 15 վանկանի՝ 4+4+4+3 հատաժով, ղոշման՝ 11 վանկանի՝ 6+5 հատաժով, դաստան՝ 11 վանկանի՝ 4+4+3 հատաժով, մուխամազը՝ 14 վանկանի՝ 4+3+4+3 հատաժով, բայաթին՝ 7 վանկանի՝ 4+3 հատաժով, թաղալան՝ 16 վանկանի՝ 5+5+6 հատաժով և այլն, և այլն: Ինչպես արդեն վերոշարադրյալից պարզվեց, աշուղ Նահապետ Քուչակի երգերը աշուղական տաղաչափության կանոններով հորինված երգեր են, իսկ հայրենները սիլաբո-տոնիկական տաղաչափությամբ՝ յամբ-անապեստյան կազմությամբ հայկական գուսանական երգատեսակ:

Եզրակացություն. Ճշմարիտ էր Մ. Աբեղյանը, որ գրում էր, թե «միջին հայերենով հորինված բազմաթիվ անանուն տաղերը, որ կան տաղարանների մեջ՝ անհիմն կերպով վերագրված են և վերագրվում են 16-րդ դարում ապրած Նահապետ Աշուղ Քուչակին: Դրանք մեր հին աշխարհիկ քնարերգության մնացորդներն են, մի առանձին բանաստեղծական չափով հորինված «հայերեն» կոչվող քնարերգությունը, որ սկզբից ի վեր գոյություն է ունեցել մեզանում»⁴⁷: Հայրենները մաքուր հայկական են՝ մեր նախնյաց ժողովրդագուսանական երգերը, որոնք ունեն միակերպ տաղաչափություն, իսկ Քուչակի աշուղական երգերը՝ արևելյան ժողովուրդներին հատուկ եռալեզու աշուղական բազմազան տաղաչափական ձևեր՝ **ղափուլամա, վարսաղ, ղոշմա, թեջնիս, դիվանի, դյուպեիտ**, ինչպես նաև այլ աշուղական երգեր, որոնց տաղաչափությունը բոլորովին

⁴⁶ **Գրիգորյան Շ.**, Հայ աշուղական գրականության պատմություն, էջ 91:

⁴⁷ **Աբեղյան Մ.**, նշվ. աշխ., էջ 279-280:

տարբեր է և ոչ մի կապ չունի գուսանաժողովրդական հայրենների յամբ-անապեստյան տաղաչափության հետ: Հայրենների լեզուն միջին հայերենն է, մինչդեռ Քուչակի անունով մեզ հասած երգերի լեզուն՝ գրաբարախառն հայերենը, պարսկերենն ու քուրքերենը:

Քանալի բառեր՝ աշուղ, գուսան, հայրեն, յամբ-անապեստյան փաղաչափություն, աշուղական փաղաչափական ձևեր:

ВАНО ЕГИАЗАРЯН – Сравнительное исследование стихотворных размеров айренов, приписываемых Наапету Кучаку, и ашугских песен, дошедших до нас под его именем. – Айрены имеют чисто армянское происхождение – это народно-гусанские песни наших предков, написанные однотипным стихотворным размером, а ашугские песни Кучака составлены разнообразными трехязычными ашугскими метрическими формами, свойственными поэзии восточных народов: кафуллама, варсаг, дошма, теджнис, дивани, дюпеит, а также другие ашугские песни, размер которых отличается и не имеет никакого отношения к ямбическо-анапестному размеру народно-гусанских айренов. Язык айренов – среднеармянский, в то время как язык песен, дошедших до нас под именем Кучака, – среднеармянский, смешанный с древнеармянским, а также персидский и турецкий языки.

Ключевые слова: *ашуг (народный сказитель), гусан (народный певец), айрен (гнома), ямбическо-анапестный стихотворный размер, ашугские метрические формы.*

VANO YEGHIAZARYAN - Comparative Analysis of Metrics of the Hayrens and Bard Songs Ascribed to Nahapest Kuchak. – Hayrens are pure Armenian songs - our ancestors' goosan songs, which are of identical prosody, whereas Kuchak's bard songs are of various trilingual bard metrical forms, i.e. ghapulama, varsagh, ghoshma, tejnis, divani, dyupeid., as well as other bard songs, prosody of which is quite different and therefore has nothing to do with the goosan-ethnic hayrens iambic-anapestic prosody. The Hayrens' language is Middle Armenian, whereas the language of Kuchak's songs known to us, is Grabar-mixed Armenian, Persian and Turkish.

Keywords: *bard, goosan, hayren, iambic-anapestic prosody, bard metrical forms.*

**ԽԵՆՈՒՆԶ, ՔՐՔՐ, ԿՈՊԻՏԵՎ ՄԻ ՔԱՆԻ ԱՅԼ ԲԱՌԵՐԻ
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Ինչպես հայտնի է, հ.ե. *sek- «կտրել, հատել, ճեղքել» պարզական արմատը և դրա՝ սղված, ապա զանազան ածականներով ընդլայնված, ձայնդարձի տարբեր աստիճաններով արտահայտված տարբերակները լայն տարածում ու ճյուղավորումներ ունեն դուստր լեզուներում, այդ թվում՝ հայերենում¹: Ստորև կներկայացվեն այդ արմատից սերած մի քանի իմաստային բառափնջեր՝ ստուգաբանության նոր վարկածներով:

1. Խղունջն, կողինջ, քարթոշ, խէգ, կրեայ, կոտ:

Նշված հ.ե. *sek- արմատի սղված ու ընդլայնված տարբերակներից են՝ *(s)keu-, *(s)ker-, *(s)kei-t-, *khed-sk- և այլն, որոնցից են առաջացել, ի շարս այլ բառերի, «խեցի» և տարբեր խեցեմորթներ, պատենավոր սողուններ, խայթող միջատներ նշանակող մի քանի հայերեն բառեր՝ **խեց(ի)** «կավե աման, խեցի, կտոր, խեցեմորթի պատյան», **խեցգետին** < *khed-sk- (ՀՄԲ, 328), **խեփոր** «խեցեմորթի պատյան» < *khe-bh- (ՀՄԲ, 328), **խէչափառ** «ծովախեցգետին» < *kheutio- < *(s)kei-t- (ՀՄԲ, 329), **խոյթ (խութ)** «կոկորդիլոս» < *kheuto- < *(s)k(h)ai-t- «կտրել, խփել, հրել» (ՀՄԲ, 340), **քարք** «արքայիկ օձ» < *(s)kr-p- < *(s)ker- (ՀԱԲ, 4, 561, ՀՄԲ, 778), **կարիճ**

¹ Ածանցյալների այդ հսկա բազմությանը կարելի է ծանոթանալ Յ. Պոկոռնու «Հնդեվրոպական ստուգաբանությունների բառարան»-ում [Պոկ.] և Ս. Նիկոլասի «Հնդեվրոպական ստուգաբանության շտեմարան»-ում [Նիկ.], մասնավորապես ***sken-** «կտրել, պոկել», ***(s)ken-(d-)** «մաշկել, ճեղքել», ***(s)ker-4, (s)kerə-, (s)krē-** «կտրել», ***(s)ker-p-** «կաշվի կտոր, կոշիկ», ***(s)keu-2, (s)keuə, (s)kū-** «ծածկել, քաքցնել, փաթաթել, ծածկոց», ***(s)keu-l- (kh-)** «ծածկ, քաղամբ, կաշի, մորթի», ***(s)ko-l-** «կտրել» և այլ գլխաբառերի տակ:

< *(s)kər-, **կոր** «կարիճ» < *(s)kor-² (հմմտ.՝ լատ. scorpion, հուն. σκορπιός «կարիճ» < *(s)kor-/*(s)ker- «կտրել»): Ստուգաբանական պրպտումները ցույց են տալիս, որ այս շարքը կարելի է լրացնել ևս մի քանի հայերեն բառով:

Խղունջն (խխունջ, խնճուղ)³ «պարուրածն խեցիով կակղամորթ» բառը Հ. Աճառյանը ենթադրում է փոխառություն ինչ-որ մի անծանոթ լեզվից, որից, ըստ նրա, պետք է որ ծագած լինեն նաև սեմական նույնիմաստ xalazon, halazuna և մման բառեր (ՀԱԲ, 2, 376): Գ. Ջահուկյանն այս բառը **կողինջ** բառի հետ համեմատում է հուն. σκολιζ «որդ, ճիճու, հարսնյակ, թրթուր», լատ. coluber «փոքր օձ» անհայտ ծագման բառերի հետ և համարում է, որ եղած ստուգաբանությունները գոհացուցիչ չեն (ՀՍԲ, 334): Իմաստից ելնելով՝ առաջարկում ենք **խղունջն** <*khu-lo- <*(s)keu- վերականգնումը⁴:

Կողինջ (կողլեգ, կողլանջ)⁵ «խխունջ, լարտուկ, լորտնուկ, շոդոտ» բառը քե՛ Հ. Աճառյանը (ՀԱԲ, 2, 621), քե՛ Գ. Ջահուկյանը (ՀՍԲ, 416) **խ/կ** անցումով կապում են նախորդ բառի հետ՝ հավաստի ստուգաբանություն չմատնանշելով: Առաջարկում ենք **կողինջ** <*(s)ko-lo- <*(s)keu- վերականգնումը⁶: Ինչ վերաբերում է ածանց-

² Վերջին երկուսի ու զանազան լեզուներում դրանց ցեղակից գուգահեռների մասին տե՛ս **Զարթայան Հ., Կարիճ, կարճ, կիրճ** և մի քանի այլ բառերի ստուգաբանություն, «Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում» IV միջազգային գիտաժողով (2016 թ. հոկտեմբերի 13-14, ՀՀ, ք. Վանաձոր), գիտական նյութերի ժողովածու, Եր., 2016, էջ 87-91:

³ **Խնճուղ**-ը նույն **խղունջ**-ն է՝ մի շարք դրավոխությունների և հնչյունափոխության ենթարկված:

⁴ Բառասկզբի *(s)kh->խ- համապատասխանության համար հմմտ. հ.-ե. նույն *(s)ker- <*sek- «կտրել» արմատից ծագած **խա-խիծ** «մամր, կտոր-կտոր» <*khidio-, **խզել (խուզ)** «պոկել, կտրել» <*khu-g-h-, **խորշ** «1. փոս, անկյուն, ծալք, կնճիռ, 2. խոշոր կտոր, կոճ» <*khor-s-, **խրամ** «փոս, առու, ճեղք» <*khrəm- և մի շարք այլ բառերի ստուգաբանությունը (տե՛ս ՀԱԲ և ՀՍԲ համապատասխան բառահոդվածները): Այս **խ** (<*kh) հնչյունը հետևանք է *k-ի շնչեղացման (*k > *kh):

⁵ **Կողլեգ** տարբերակը (Մալխ., 2, 460) թերևս բաղադրություն է **խլեգ** բառի հետ, իսկ **կողլանջ**-ը առաջացել է **կողլեգ**-ի **-եգ** ածանցը **-անջ**-ով փոխարինելով:

⁶ Բառասկզբի *(s)k->կ- համապատասխանության այլ օրինակներ են նույնարմատ **կեղև** [*keleb- կամ *kel-ep-], **կտել** «կեղև » [**(s)kei-t-], **կոփ (կուփ)** [**(s)kep/b(h)- «սուր գործիքով կտրել, ճեղքել»], **կոտոր, կտուր, կուրտ** [**(s)keu-t-] և այլ բառեր [տե՛ս ՀՍԲ համապատասխան բառահոդվածները]:

ներին, ապա **-անջ/-ինջ/-ունջ**-ի համար հմմտ.՝ *դող-անջ, խրի-ինջ, եղ-ինջ, շշ-ունջ, մրմ-ունջ* և այլն:

Քարթոշ (քարթալոշ) «1. խխունջ, 2. մողես» բառը (Մալխ., 4, 562) բացակայում է ստուգաբանական բառարաններում: Սրա արմատը ակնհայտորեն **քարթ**-ն է [*<*kə-r-t- <*(s)keu-*]⁷: Իսկ **-ալ, -ոշ** ածանցների համար հմմտ.՝ *դանդ-ալ-ոշ, լմի-ոշ, մռթ-ոշ, քրի-ոշ, րկո-ոշ, քրդ-ոշ, պո-ոշ* և այլն (**-ալ-ը -աղ** ածանցի տարբերակ է՝ հմմտ.՝ *կենց-աղ, հապ-աղ, կախ-աղ-ան, փակ-աղ-ակ, խանդ-աղ-ալը-անը, հուր-աղ, խաղ-աղ* և այլն):

Խլէգ «1. մողես, 2. խխունջ» բառը ևս ստուգաբանական բառարաններում կապված է **խղունջն** բառի հետ՝ համանման մեկնաբանություններով (ՀԱԲ, 2, 373, ՀՍԲ, 333): Առաջարկում ենք **խլէգ** *<*khu-lo- <*(s)keu-* վերականգնումը՝ **-էգ** ածանցով (հմմտ.՝ *կոճղ-էգ, քգ-էգ* և այլն):

Կրեայ (կրայ, կուրիա, կուրուրիկ) «կրիա» բառի **կուր-** արմատը կարելի է կապել **խեց** արմատի «խեցի» իմաստի հետ՝ որպես ***կուրեայ** *<*(s)kōr-* (բառացի՝ «խեցեայ») (չնայած Գ. Ջահուկյանը կասկածով բխեցնում է հնիլ. **geu-ro-* «ծռել, կամար կազմել» արմատից. տե՛ս ՀՍԲ, 434): Մեր առաջարկի օգտին են խոսում բարբառային **կրեանկոտ, կոտկիրիբա (կողկիրիբա)** «կրիա» բառերը (բառացի՝ «խեցե պատյան, խեցե կոտ»): Նույն **(s)kōr-* նախաձևի իմաստային այլ զարգացում է **կուր** «նավակ, մակույկ, տաշտակ» բառը (չնայած Գ. Ջահուկյանը սա ևս կասկածով բխեցնում է հ.-ե. **geu-ro-* «ծռել, կամար կազմել» նախաձևից. տե՛ս ՀՍԲ, 428), որի հետ էլ Հ. Աճառյանը կապում է **կրեայ** բառը՝ իբրև «տաշտեայ», «կոնակին տաշտ ունեցող», ինչպես մի շարք այլ լեզուներում, նաև հայ. բրբռ. **կոնակոտ, տաշտիկոնակ** «կրիա» (բառացի՝ «կոնակին պատյան՝ կոտ կամ տաշտ ունեցող») բառերում, որ գուցե պատճեն-

⁷ Սկզբնահնչյունի **ք-կ** համապատասխանության (հերթագայության) համար հմմտ. հ.-ե. նույն **(s)ker-* *<*sek-* «կտրել» արմատից ծագած **քաղել** *<*(s)kl-*, **քերել** *<*(s)ker-*, **քերթել** *<*(s)ker-p-*, **քերծել** *<*(s)ker-ծ*, **քորել** *<*(s)kor-*, **քարթ** «արքայիկ օձ» *<*(s)kr-p-* բառերի ստուգաբանությունը (տե՛ս ՀԱԲ և ՀՍԲ համապատասխան բառահոդվածները): Դա նշանակում է, որ հ.-ե. **(s)k-*-ին հայերենում նույն հաջորդությամբ համապատասխանում են մերթ **կ**, մերթ **ք** սկզբնահնչյունները:

ված են պարսկերեն **լաքփուշտ** (բառացի՝ «տաշտակոճակ») բառից (ՀՄԲ, 2, 679-680):

Ինչպես տեսնում ենք, «խեցի, պատյան» իմաստը կարող է հանգեցնել «աման, անոթ», այնուհետև՝ «գուռ, փոս, հոր» իմաստների (հմմտ.՝ լատ. *scrobis* «փոս, հոր» < **(s)ker-*, **կօշ** «1. ամուր կեղևով դրում, որից ջրաման են պատրաստում, 2. կրիայի պատյան» < **(s)kəu-skə-*, **կօշ (գօշ, գուշ)** «փայտե աման», **կօշարայ** «սափորածն աման»)՝ Այդ իմաստային անցման արդյունք են **կուրիկ (կուրիկ, կուռա, կուռ)** «1. ընդդեմի չափաման, 2. գավաթ» (ՀԼԲԲ, 3, 214-215, 219), **կրեճ (կրիճ)** «1. աման, թաղար, 2. փոքր գուռ, փոս, 3. կոտրված ամանի տակը» (ՀԼԲԲ, 3, 190), **կրիճակ** «1. կրիայանման ծածկոցով կողպեք, 2. գուշ» (Մալխ., 2, 504, ՀԼԲԲ, 3, 191) բառերը, որ չկան ստուգաբանական բառարաններում: Սրանք **կուր** «նավակ, մակույկ, տաշտակ» բառի հետ կունենան հ.-ե. **(s)kō-r-* < **(s)keu-* նախածկը:

Կուռ «1. պատյան, խեցի (կրիայի), 2. թասածն գլխադիր, 3. գլխարկ, քոլոզ, 4. գանգ, գլուխ, 5. փոքր կարաս, 6. չափաման, 7. սնամեջ դրում» բառը (ՀԼԲԲ, 3, 155), որ ստուգաբանական բառարաններում չկա, իմաստից ելնելով, մույմպես կարելի է կապել այս խմբի բառերի հետ: Սրա համար ենթադրում ենք հ.-ե. **(s)ko-t-* < **(s)keu-* նախածկ:

2. **Կորճ, կողինճ, կաղաղ, քրծին, խեճեճ, խեճոռք:**

Հայտնի է, որ **sek-*ի սղումով առաջացած հ.-ե. **(s)keu-* «կտրել, ճեղքել» արմատից են բխում նաև «կեղև, կճեպ, մորթի, մաշկ, պատյան» իմաստով բառեր տարբեր լեզուներում: Հայերենում դրա օրինակներ են՝ **կեղև (կեղեք, կլեպ, քեղեփ)** < **kel-eb(h)-* / **kel-ep(h)-* (ՀՄԲ, 398), **կտե/քքի** «կեղև» < **(s)kei-t-* (ՀՄԲ, 432), **խեճեպ (կճեպ, փոճուկ)** «կեղև, պատյան» < **(s)k(h)ed-* (ՀՄԲ, 327), **խորխ** «մորթ,

⁸ Վերջին 3 բառերի ստուգաբանության մասին տե՛ս **Ջաքարյան Հ.**, «Ռոմանյան» և «կաշի» նշանակող մի քանի բառերի ստուգաբանություն, «Ջահուկյանական ընթերցումներ». ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի ծննդյան 95-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր (Երևան, հունիսի 4-5, 2015), Եր., «Գիտություն», 2015, էջ 53-60:

կճեայ, կաշի, օձի շապիկ» < *khor-kh- (ՀՄԲ, 344), **կաշ-ի** < *(s)kə(u)-skh-⁹ և այլն (նշված տեղերում կան օրինակներ նաև այլ լեզուներին): Այս շարքը կարելի է լրացնել ևս մի քանի բառով:

Կորճ (կոռճ) «կեղև, կճեայ» բառը առաջին հավաստի ստուգաբանություն չունի (ՀՄԲ, 2, 651-652, ՀՄԲ, 424): Նկատենք, որ **կորճ**-ը ձևով շատ մոտ է **կարճ** < *(s)kər-d-io- և **կիրճ** < *(s)kēr-d-io- բառերին¹⁰: Չնից և իմաստից ելնելով՝ **կորճ** բառի համար ենթադրում ենք հ.-ե. ***(s)kor-d-io-** < ***(s)keu-** նախաձևը:

Կողինճ «1. հացի կեղև, 2. ամանի՝ արկղի պատեր, 3. կարծր կեղևով կորիզ» (Մալխ., 2, 460) բառը ստուգաբանական բառարաններում չկա: Իմաստից ելնելով՝ նրա համար ենթադրում ենք հ.-ե. ***(s)ko-lo-** < ***(s)keu-** նախաձևը՝ **-ինճ** ածանցով, որ վերոհիշյալ **-ինջ**-ի տարբերակ է (հմմտ.՝ *փոխ-ինջ*, *սոս-ինջ* և այլն):

Կաղաղ «1. ընկույզի կանաչ կեղև, 2. խակ ընկույզ» բառը (ՀԼԲԲ, 3, 24) ստուգաբանական բառարաններում չկա: Իմաստից ելնելով՝ նրա համար ենթադրում ենք հ.-ե. ***(s)kə-lo-** < ***(s)keu-** նախաձևը՝ վերոհիշյալ **-աղ** ածանցով: Թերևս մույնի իմաստային մեկ այլ զարգացում է **կաղաղ** «գազանի կամ սողունի որջ» (Մալխ., 2, 370) բառը:

Քրծին (քրծեն) «ծառի մատղաշ կեղև» (Մալխ., 4, 594) բառը ստուգաբանական բառարաններում չկա: Իմաստից ելնելով՝ առաջարկում ենք **քրծին** < ***ku-r-d-io-** < ***(s)keu-** վերականգնումը (**-ին** ածանցի համար հմմտ.՝ *լուս-ին*, *հուս-ին*, *սղ-ին*, *ճախ-ին*, *ծոթր-ին*, *լրկող-ին*, *դարբ-ին*, *մարս-ին*, *գեյր-ին* և այլն):

Խեճճ «կորիզի կճեայ, պատյան, բամբակենու կնգուղ» բառը (Մալխ., 2, 258) ստուգաբանական բառարաններում չկա: Նկատի ունենալով իմաստային և ձևային ընդհանրությունը **խեճեայ** «կեղև, պատյան» բառի հետ՝ առաջարկում ենք **խեճճ** < ***(s)k(h)e-d-** < ***(s)keu-** վերականգնումը՝ **-ճճ** ածանցով (հմմտ.՝ *բու-ճճ*, *պլ-ճճ*, *բրռճճ* և այլն):

⁹ Այս բառերի ստուգաբանությունը տես մույն տեղը:

¹⁰ Այս բառերի ստուգաբանությունը տես **Ձաքարյան Հ., Կարին, կարճ, կիրճ** և մի քանի այլ....:

Խեճոռք «ձվի կեղև» բառը (Մալխ., 2, 258) նույնպես չկա ստուգաբանական բառարաններում: Ունի նույն արմատը, ինչ **խեճեճ**-ը և **խեճեալ** -ը: Ինչ վերաբերում է **-ոռք** վերջնամասին, ապա **-ոռ**-ը թերևս **-որ** ածանցի (դրա մասին տես ստորև) սաստկականն է, ինչպես **խոժոռ** (<խոշոր), **ոլոռ** (<ոլոր), **թանխոռք** (<*թանխորք) բառերում:

3. Կուճ, կիճ, կինճ «խիճ», **կռճել, գռիճ, կոպիճ, խիպար, խշուր, խոշոր, խոժոռ, խժռել, խոլոր, քրքիր, կակուղ, կրկտել, կրկուտ, քայքայել, քուջուջել**

Հ.-ե. *sek- «կտրել, հատել, ճեղքել» արմատի զարգացումների մի ճյուղը հանգեցրել է «մանրացնել, փշրել», այնուհետև՝ «քեկոր, փշուր» իմաստներին, որոնց դրսևորումներից կարելի է հիշել **քերել** <*(s)ker- (ՀՄԲ, 781), **խզել (խուզ)** «պռկել, կտրել» <*khu-g'h- (ՀՄԲ, 328), **խուզել (խոյզ)** «կտրել, հնձել» <*kheu-g'h- (ՀՄԲ, 346), **ճղել/ճեղքել** <*skel- (Աղ., 113-115), **ցավատ** «ծվեն, պատառ» <*skəu- (ՀՄԲ, 742), **շերտ** <*skhed-ri- (ՀՄԲ, 586), **կտոր/կտոր** <*(s)keu-t- (ՀՄԲ, 422), **խիճ** «քարի կտորտանք» <*khidio-՝ *keid- «կտրել, անջատել» (ՀՄԲ, 330-331), **խրխոր (խրխուր, խրխիր)** «1. փշուր, մանր կտոր, չնչին բան, 2. փուխր» <*khor-՝ կրկնությամբ (ՀՄԲ, 355), **խախիճ** «մանր, կտոր-կտոր» <*khidio-՝ կիսակրկնությամբ (ՀՄԲ, 310), **ցլեալ** «ծեղ, շերտիկ» <*sk(ē)leb- (Ջահ. 130), **ցել** «ճեղք, պատռվածք» <*sk'el- (ՀՄԲ, 742) և այլ բառեր: Այս շարքին կարելի է ավելացնել հետևյալ բառերը:

Կուճ «մարմար» բառի համար Գ. Ջահուկյանը նշում է, որ անհավանական է կապը հ.-ե. *gudio- <*geu- «ծռել, կամար կազմել» արմատի հետ (ՀՄԲ, 426): Իսկապես, իմաստային անցումը համոզիչ չէ: Նկատի ունենալով, որ կուճը՝ մարմարը, արդյունահանվում է ժայռը կտրելով կամ ճեղքելով, միանգամայն տրամաբանական կլինի նրա համար վերականգնել հ.-ե. <*(s)ku-d-io- <*sek- «կտրել, ճեղքել» նախաձևը¹¹:

¹¹ **Կուճ (կիճ)** «մարմար» բառի՝ *keid- «կտրել, անջատել» նախաձևի հետ կապի մասին Գ. Ջահուկյանը ակնարկել է **խիճ** բառի ստուգաբանության առիթով (ՀՄԲ, 330-331)՝ նշելով **կիճ** տարբերակը, որը, սակայն, **կուճ** բառահոլովածում, հետևելով

Կիճ «քարի ծերպ՝ ճեղք» բառի համար Գ. Ջահուկյանը նշում է, որ հազիվ թե կապ ունենա հ.-ե. *gidio- <*geid- «ծակել, խայթել, խուտուտ ածել» արմատի հետ (որից սերված է **կիճ** «խայթոց» համանունը) (ՀՍԲ, 404): Իսկապես իմաստային անցումը համոզիչ չէ: Մինչդեռ նկատի ունենալով «ծերպ, ճեղք» իմաստը՝ միանգամայն տրամաբանական կլինի նրա համար վերականգնել հ.-ե. <*(s)kē-d-io- <*sek- «կտրել, ճեղքել» նախաձևը:

Կիճն «խիճ» բառը Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը համարել են փոխառություն վրացերենից (կենճի) (ՀՍԲ, 2, 591, ՀՍԲ, 431): Իրականում սա թերևս **խիճ**-ի բարբառային մի տարբերակն է՝ **խ/կ** հերթագայությամբ և **ն**-ի հավելումով¹²: Նրա համար կարելի է վերականգնել հ.-ե. <*(s)kē-d-io- կամ *(s)ki-d-io- <*sek- «կտրել, ճեղքել» նախաձևը:¹³

Կոճել «խփել, ջարդել, փշրել, աղալ» բառի համար Գ. Ջահուկյանը նշում է, որ հազիվ թե կապ ունենա հ.-ե. *ger- «պտտել, ոլորել» արմատի հետ (ՀՍԲ, 431): Դիտարկումը համոզիչ է: Բառի իմաստը և ձևը հուշում են, որ նա կարող է ծագումնաբանորեն կապված լինել հ.-ե. *sek- «կտրել, ճեղքել» արմատի հետ: Ի դեպ, **կոճել**-ի հետ մույնարմատ են համարվում նաև **կոճոն/կոճունք** «ուտելիքի մնացորդ», **կոճամ/կոճիմ** «խոշոր աղացված ալյուր», **կոռն/կոռոճ** «ջարդած պինդ նյութի փոքր կտոր, կոշտ, բեկոր» (ՀՍԲ, 2, 671-672) բառերը: Վերջինս (կոռն/կոռոճ) Հ. Աճառյանը համարել է այս բառափնջի առավել ամբողջական արմատական ձևը: Սրանից ելնելով՝ առաջարկում ենք **կոռն/կոռոճ** <*(s)kōr- վերականգնումը՝ **-ուճ/-ոճ**-ը դիտարկելով ածանց (հմմտ.՝ *պարկ-ուճ, բրդ-ուճ, բլ-ոճ, կլ-ոճ* և այլն):

Գռիճ «աղաքարի կտոր» բառը ստուգաբանական բառարաններում համարված է փոխառություն պարսկ. girēj «կտոր, մաս» բա-

Հ. Աճառյանին, համարել է քյուրիմացություն՝ սխալ վերականգնում տված թեք ձևերից (ՀՍԲ, 426, ՀՍԲ, 2, 588):

¹² Հմմտ.՝ **կից** > **կիճ** «աբացի» (ՀՍԲ, 405), **մեծ** > **մենճ** և նման այլ անցումներ:

¹³ Վրացերենի **կենճի**-ն պետք է ենթադրել փոխառություն հայերենից, մանավանդ որ Հ. Աճառյանը կովկասյան այլ լեզուներից զուգահեռներ չի նշում:

նից (ՀԱԲ, 1, 601, ՀՍԲ, 175): Հ. Աճառյանը որպես դրա բարբառային տարբերակ է նշում **կռոճ** բառը, որ նույն ձևով ու իմաստով տրված է նաև որպես վերոհիշյալ **կռուճ** բառի տարբերակ: Ուստի ավելի հավանական է **գրիճ/կռոճ**-ը համարել **կռուճ**-ի բարբառային տարբերակներ, այլ ոչ թե փոխառություն իրանական մի բառից, որը՝ որպես ենթադրյալ սկզբնաղբյուր, թե՛ իմաստով, թե՛ ձևով շատ ավելի հեռու է ու անհամոզիչ: Ինչ վերաբերում է **-իճ** ածանցին, ապա դա էլ վերոհիշյալ **-ուճ/-ոճ**-ի մի տարբերակն է (հմմտ.՝ *պապ-իճ, ուր-իճ, լվ-իճ, կապ-իճ, կալ-իճ, կրր-իճ* և այլն): Կա նաև **քոճ** «խիճ, քարի մանրուք» բառը (ՀԼԲԲ, 7, 149), որ փաստորեն նախորդների մի տարբերակն է (**-էճ** ածանցի մասին տե՛ս վերը):

Կոպիճ «խիճ, մանր գլաքար» բառի մասին Գ. Ջահուկյանը գրում է. «Ծագումն անհայտ է: Թերևս կազմված է ***կոպ-** անժանոթ արմատից՝ **-իճ** վերջածանցով» (ՀՍԲ, 420): Իմաստից ելնելով՝ առաջարկում ենք <*(s)ko-b- <*sek- «կտրել, ճեղքել» ստուգաբանությունը, որով այս բառը ծագումնաբանորեն կապվում է **խիճ, խրխոր, խախիծ, ցլեպ, կինճ** և այլ հոմանիշ բառերի հետ:

Խիպար (խիբար) «մանր քար, խիճ, քարի կտորտանք՝ պատի շարվածքի համար» ցայսօր չստուգաբանված բառը (ՀԱԲ, 2, 368, ՀՍԲ, 331), որ շատ տարածված է ժողովրդական խոսքում, թե՛ իմաստով, թե՛ ձևով ակնհայտորեն առնչվում է **կոպիճ**-ին և վերոհիշյալ մյուս հոմանիշներին: Ուստի առաջարկում ենք **խիպար** <*khēb- <*sek- «կտրել, ճեղքել» վերականգնումը՝ **-ար**-ը դիտարկելով ածանց (հմմտ.՝ *զալ-ար, պալ-ար, կերպ-ար, տիպ-ար, պալտահ-ար, երկ-ար, արդ-ար* և այլն):

Խշուր (խուշուր) «1. կտորտանք, խռիվ, փշուր, մանրուք, տաշեղ, 2. քիչ, սակավ» բառի ծագման համար Հ. Աճառյանը հղում է տալիս **խոշոր, խոժոռ** բառերին՝ համարելով դրանց տարբերակ (ՀԱԲ, 2, 382): Գ. Ջահուկյանը հակված է համարելու բնաձայնական-պատկերավոր կազմություն (ՀՍԲ, 336-337): Սրանից են ածանցված **խշրել/խշրտել** «փշրել, մանրել, բրդել, ջարդել, կտոր-կտոր անել», **խշրուք** «փշրանք, մանրուք» և այլ բառեր: Սա ևս թե՛ իմաստով, թե՛ ձևով ակնհայտորեն առնչվում է **խիպար**-ին, **կոպիճ**-ին և վերոհի-

շյալ մյուս հոմանիշներին: Ուստի առաջարկում ենք **խշուր/խուշուր** <*khō-skh- <*sek- «կտրել, ճեղքել» վերականգնումը՝ **-ուր-ը** դիտարկելով վերոհիշյալ **-ար** ածանցի տարբերակ (հմմտ.՝ *մր-ուր, բլ-ուր, բար-ուր, կր-ուր, փշ-ուր* և այլն): **խշուր-ի** ձայնդարձային մի տարբերակ պիտի համարել **խեշեր(անք)** «բեկորներ, մնացորդ, մանրուք» բառը (Մալխ., 2, 259, ՀԱԲ, 2, 359, 395, ՀՍԲ, 327): Կա նաև արմատական **խեշ** «1. կոշտ, ջլոտ, կոպիտ, 2. մաշկ, մորթ» բառը (ՀԼԲԲ, 2, 312), որ ձևով կապվում է **խեշեր-ի** հետ, իսկ իմաստով՝ նույնարմատ **խոժոռ-ի** (տե՛ս ստորև) և **խեճեպ/կճեպ-ի** հետ:

Խոշոր (խաշար, խաշոր) «մեծ կտորներով, մեծահատ, մեծ» բառը Հ. Աճառյանը կապել է վրացերեն, պարսկերեն, արաբերեն նմանահունչ և հոմանիշ բառերին, բայց անստույգ է համարել դրանց ծագումնաբանական հարաբերությունը կամ հնարավոր ընդհանուր աղբյուրը (ՀԱԲ, 2, 395-396): Գ. Ջահուկյանը համակարծիք չէ և հակված է սա նույնպես համարելու բնաձայնական-պատկերավոր կազմություն (ՀՍԲ, 341): Նկատի ունենալով **խշուր/խուշուր** բառի հետ ակնհայտ ընդհանրությունը՝ առաջարկում ենք **խոշոր/խաշար/խաշոր** <*kho-skh-/*khə-skh- <*sek- «կտրել, ճեղքել» վերականգնումը՝ **-որ-ը** դիտարկելով վերոհիշյալ **-ար/ուր** ածանցի տարբերակ (հմմտ.՝ *պղր-որ, մոլ-որ, բոլ-որ, սինլք-որ, բեկ-որ, հալր-որ, կր-որ* և այլն)¹⁴: Ի դեպ, բարբառներում կա **խոշուկ/խոշուր/խոշունք** «1. խոշոր աղացած ալյուր, 2. դարմանի ծեծելուց մնացած խոշոր մնացորդ» բառը (ՀԼԲԲ, 2, 350)՝ առանց **-որ/ար** ածանցի: Սա կարող է փաստարկ ծառայել Հ. Աճառյանի բերած տարալեզու զուգահեռների մեջ հայերենը առաջնային՝ սկզբնաղբյուր դիտարկելու համար, քանի որ մյուս լեզուների բոլոր ձևերը ունեն **-որ/ար-ը** կամ դրա մնացորդները:

Խոժոռ «կոշտ, անհարթ, կոպիտ, դաժան, խիստ, խեթ, դժնյա» բառը քե՛ Հ. Աճառյանը, քե՛ Գ. Ջահուկյանը կապել են **խոշոր** բառի հետ (ՀԱԲ, 2, 384-385, ՀՍԲ, 337)՝ որպես իմաստային մի զարգա-

¹⁴ Բարբառներում կա **խոշորտանք/խուշուրտանք** «լավաշի կտորտանք» բառը (ՀԼԲԲ, 2, 350), որ մի ավելորդ անգամ փաստում է **խուշուր** և **խոշոր** բառերի ծագումնաբանական ընդհանրությունը:

ցում (ՀԱԲ, 2, 396): Հ. Աճառյանը նկատել է, որ հին հայերենում դրանք նույնիմաստ են եղել (տե՛ս նույն տեղը): Ըստ երևույթին՝ **խո-ժոռ**-ը **խոշոր**-ի սաստկականն է եղել՝ շ>ժ ձայնեղացմամբ և **ր>ռ** կոշտացմամբ: Հետագայում տեղի է ունեցել հոմանիշների իմաստային տարբերակում ու ինքնուրույնացում:

Խժռել «1. խշրել, փշրել, մանրել, 2. կրծել, ծամել, 3. խոշոր պատառներով ուտել՝ լավել» բառը իր առաջին և երկրորդ իմաստներով սաստկական հոմանիշն է վերոհիշյալ **խշրել**-ի, իսկ երրորդ իմաստով կապվում է **խոշոր** բառի հետ¹⁵: **Խժռել**-ի հետ են կապված **խժել** «մի չոր բան ատամներով կտրատել՝ մանրել», **խժպել** «արագ-արագ ուտել, խժռել», **խժռանք** «մանրուք, կտորտանք, խեշերանք» (Մալխ., 2, 262), **խժուժիկ** «շատ մանր» (ՀԼԲԲ, 2, 323), **խժիկ** «կավե փոքր աման», **խժի** «պինդ, դժվար կտորվող ու մաքրվող (ընկույզ)», **խժիկ-մժիկ** «ընկույզի չորաբեկ պճեղ» (ՀԼԲԲ, 2, 322) բառերը: Վերջապես, կա **խժեք** «կեղև» բառը, որ համարվում է **կճեպ**-ի տարբերակ (ՀԼԲԲ, 2, 322):

Խոլոր (**խոլոռ**, **խոլեռ**, **խոլուռ**) «խեթ, խոժոռ» բառը Գ. Ջահուկյանը կասկածով համարել է ենթաշերտային, «որ **լ/ժ** և **լ/շ** հերթագայություններով կապված է **խոժոռ** և **խոշոր** բառերի հետ» (ՀԱԲ, 338): Առաջարկում ենք այս բառը ինքնուրույնաբար բխեցնել հ.-ե. նախաձևից **խոլոր** <*kho-l- բանաձևով, որտեղ **-որ**-ը ածանց է: **Խոլոռ**-ը **խոլոր**-ի սաստկականն է: Կա նաև **խոլոլ** առնմանական տարբերակը (ՀԼԲԲ, 2, 346):

Քրքիր (**քիրքիր**, **քրքուր**) «փխրուն, փափուկ» բառը քե՛ Հ. Աճառյանը, քե՛ Գ. Ջահուկյանը ներկայացրել են որպես կրկնավոր կազմություն **քիր** անձանոթ արմատից (ՀԱԲ, 4, 603, ՀԱԲ, 790): Իմաստից ելնելով՝ կարծում ենք, որ սա ևս հ.-ե. *(s)ke- <*sek- «կտրել, ճեղքել» արմատի ածանցյալներից է: Ուստի առաջարկում ենք **քրքիր** <*քիր-քիր <*kē-r- (կրկնությամբ) բանաձևը: Սրանից են՝ **քրքրել** «բայքայել, պատառոտել, պրպտել, տնտղել, կրկտել,

¹⁵ **Խժռել** բառը նույնպես Հ. Աճառյանը համարել է **խոշոր**-ի ածանցյալ (ՀԱԲ, 2, 382):

զննել», **հետաքրքիր** «ուշագրավ» և այլն: **Քրքուր**-ը դրա ձայնդար-
ձային տարբերակն է (ՀԼԲԲ, 7, 156):

Կակուլ «փափուկ, դյուրաթեք» բառը, որ լայն տարածում ունի
հայերենի բոլոր տարբերակներում, Գ. Ջահուկյանը ենթադրել է
կա՛մ կրկնավոր կազմություն (*մամուլ, մամուռ* տիպի) հ.-ե. *gel-
«զնդվել, կլոր բան» արմատից, կա՛մ **-ուլ** ածանցով կազմություն
հ.-ե. *gag- «կլոր բան, գունդ» արմատից (ՀՍԲ, 375): Իմաստային
առումով ավելի հավանական է **կակուլ** <*կուղ-կուղ <*(s)kō-l-
(կիսակրկնությամբ) կամ կակ-ուղ <*(s)kō-g- <*(s)ke- <*sek-
«կտրել, ճեղքել» ստուգաբանական բանաձևը (**-ուլ** ածանցի հա-
մար, որ վերոհիշյալ **-աղ**-ի մի տարբերակն է, հմմտ.՝ *պղ-ուղ, ցնց-
ուղ, խճ-ուղ, քնք-ուղ* և այլն):

Կրկտել «քրքրել, փորփորել, պրպտել, տնտղել, փնտրտել, որոնել,
խուզարկել» բառը, որի հիմքն է **կրկիտ**-ը, իմաստով և ձևով
առնչվում է **քրքրել** բառին: Հետևաբար դրա համար կարելի է առա-
ջարկել **կրկիտ** <*կիր-կիր-տ <*(s)kē-r- (կիսակրկնությամբ և **տ**
սաստկական ածականով) ստուգաբանական բանաձևը:

Կրկուտ «փայտի կտորտանք, խռիվ» բառը Հ. Աճառյանը չի
ստուգաբանել, իսկ Գ. Ջահուկյանը կասկածով բխեցրել է *ger-
«հավաքել» արմատի կրկնավոր ***կերկ-** ձևից՝ **-ուտ** ածանցով: Բայց
նկատենք, որ **կրկուտ**-ը իմաստով և կառուցվածքով համընկնում է
կրկիտ-ին՝ տարբերվելով արմատի ձայնավորմամբ: Ուստի առա-
ջարկում ենք **կրկուտ** <*կուր-կուր-տ <*(s)kō-r- (կիսակրկնությամբ և
տ սաստկականով) վերականգնումը:

Քայքայել «խախտել, քանդել, ավերել» բառը թե՛ Հ. Աճառյանը,
թե՛ Գ. Ջահուկյանը ներկայացրել են որպես կրկնավոր կազմություն
քայ- անձանոթ արմատից (ՀԱԲ, 4, 550, ՀՍԲ, 775)¹⁶: Իմաստից ել-
նելով՝ կարծում ենք, որ սա ևս հ.-ե. *(s)ke- <*sek- «կտրել, ճեղքել»

¹⁶ Հ. Աճառյանը **քայքայել** բառը տվել է որպես թե՛ առանձին արմատ (ՀԱԲ, 4, 550),
թե՛ **քրքրել**-ի բարբառային տարբերակ (ՀԱԲ, 4, 603): Սա նշանակում է, որ **քայքա-
յել** ձևը կարող էր առաջանալ ոչ միայն ինքնուրույնաբար, այլև **քրքիր**-ից՝ բարբառ-
ներից բնորոշ հնչյունափոխությամբ:

արմատի ածանցյալներից է: Ուստի առաջարկում ենք **քայքայել** <*kəi- (կրկնությամբ) ստուգաբանական բանաձևը:

Քուջուջել (քջուջել, քջել) «փորփրել» բառը (Մալխ., 4, 589) ստուգաբանական բառարաններում չկա: Տարածված է ժողովրդական խոսքում: Իմաստից ելնելով՝ առաջարկում ենք **քուջուջել** <*քուջ-քուջ- <*kō-dh-io- (կիսակրկնությամբ) ստուգաբանական բանաձևը:

Այս փնջի բառերն ունեն նույն նախաձևից սերված մի շարք այլալեզու հոմանիշներ: Դրանցից են՝ անգլ. scree «խիճ, քարահոսք, քարաթափվածք, քարացրոնք», shred «շերտ, կտոր, փշուր, մասնիկ, քուլա, մանրել, կտրել, կտրտել, քերել, բրդել»¹⁷, scale «թեփուկ»¹⁸, իռլ. cert «մանր, փոքր», հ. անգլ. sceard «փշուր» (Պոկ, 938-947), լիտվ. skiedà «տաշել», հուն. σχιδάξ «տաշել» (ՀՄԲ, խիճ), կերպ «մանր փող», σκάλλω «փորել, քաղիանել», ալբ. haľe «տաշել, ցլեպ», ռուս. щель «ճեղք» (ՀՄԲ, ցել), լատ. cordus «կրտսեր», հ. հնդկ. krdhuh «կարճեցված, փոքր» (Նիկ., 125), գուցե նաև ռուս. щёбень «խիճ», κρόχα «փշուր, փոքրիկ» և այլն:

4. Կոպիտ, կոշտ, կոշկոռ, կրկիտ «պինդ», քուրշ, կարծր, խիստ:

Նշված **խշուր - խշոր - խժոռ** ձևաիմաստային անցումները, ինչպես նաև **խեփ** «կարծր, պինդ» [<*(s)kep- «կտրել, ճեղքել»] (ՀՄԲ, 328), **խորդուբորդ** [<*khor-th- «կաշի, կեղև» <*(s)keu- «կտրել, ճեղքել»] (ՀՄԲ, 344), **խեռ** «ըմբոստ, խժոռ, խեթ» [<*kher-s-] (ՀՄԲ, 327), **խեթ (խէթ)** «խժոռ» [<*khet- <*(s)k(h)ai-d/t- «խփել, հրել» <*kh₂eyd- «կտրել, տաշել»]¹⁹, **խափար** «թավ, հաստ (ձայն)» [<*khəph- <*(s)kep- «կտրել, ճեղքել»] (ՀՄԲ, 325), **խիղբ** «ստվար» [*(s)kel-(e)p- «կտրել»] (ՀՄԲ, 330), **սեղմ** [<*k'el-m- «ծածկել, պատել» <*(s)keu- <«կտրել, ճեղքել»] (ՀՄԲ, 675) բառերը հիմք են ենթադրելու, որ նույն *(s)keu- «կտրել, ճեղքել» արմատի ածանցյալներ են նաև «ամուր, պինդ» իմաստով հետևյալ բառերը:

¹⁷ St'u <https://en.wiktionary.org/wiki/shred#English>

¹⁸ St'u http://www.etymonline.com/index.php?term=scale&allowed_in_frame=0

¹⁹ St'u <https://en.wiktionary.org/wiki/Reconstruction:Proto-Indo-European/kh%E2%82%82eyd->

Կոպիտ «կոշտ, բիրտ» բառը համարվում է անհայտ ծագման (ՀԱԲ, 2, 636-637, ՀՍԲ, 420): Դրա համար առաջարկում ենք հ.-ե. **(s)ko-b-* նախաձևը: Ակնհայտորեն **կոպիտ**-ից է ածանցված **կոպտոն** «կտավատի թեփ, քուսպ» բառը²⁰ (**-ոն** ածանցի համար հմմտ.՝ *կիրր-ոն, գող-ոն, լց-ոն, բափ-ոն, ծամ-ոն, կոճ-ոն* և այլն):

Կոշտ «1. գուղձ, 2. մեծ կտոր, 3. կոշտուկ, 3. կարծր, 4. կոպիտ, 5. անհարթ» ցայսօր չստուգաբանված (ՀԱԲ, 2, 634-635, ՀՍԲ, 419-420) բառի համար առաջարկում ենք հ.-ե. **(s)ko-skh-d-* նախաձևը:

Կոշկոռ «1. խոշոր ու կարծր կտոր, 2. մարմնի վրայի կոշտեր» բառի համար Գ. Ջահուկյանը կարծիք է հայտնել. «Թերևս *կոճ-կոռ* բարդությունից» (ՀՍԲ, 419): Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 2, 634): Առաջարկում ենք **կոշկոռ** <**(s)ko-skh-g-* ստուգաբանությունը (**-ոռ** ածանցի մասին տե՛ս վերը):

Կրկիտ «պինդ, ամուր, կռու, ժլատ» բառը (ՀԼԲԲ, 3, 193) համարում է վերոհիշյալ **կրկիտ** «քրքիր, փխրուն» բառին: Հավանաբար տեղի է ունեցել իմաստների բևեռացում (բառիմաստի շրջում): Ահա թե ինչու մույն արմատից կամ նախաձևից ունենք թե՛ «փափուկ, փխրուն», թե՛ «պինդ, կոշտ», թե՛ «մանր», թե՛ «խոշոր» իմաստներով բառեր:

Քուրշ «պնդացած ձյուն» բառի (Մալխ., 4, 588) համար, որ ստուգաբանական բառարաններում չկա, առաջարկում ենք հ.-ե. **(s)kōr-skh-* նախաձևը:

Կարծր «պինդ, կոշտ, խիստ» բառը Գ. Ջահուկյանը Հ. Աճառյանի և այլոց հետևողությամբ համարում է **garəgʻ-* «սարսափելի, սհեղ, սարսափ» նախաձևից ծագած, բայց վերապահում է անում՝ «իմաստի վերականգնումը պայմանական է» (ՀՍԲ, 392): Հենց այս վերապահումն էլ հիմք է տալիս ավելի պատճառաբանված (ոչ պայմանական) մոթ ստուգաբանությունն առաջարկելու՝ **կարծր** <**(s)kər-*

²⁰ Գ. Ջահուկյանը ենթադրում է՝ կա՛մ հայերեն **կոպտոն**-ն է փոխառություն քրք. *kōftun*-ից, կա՛մ հակառակը՝ քուրքերեն բառն է փոխառություն հայերենից (ՀՍԲ, 420): Մեր առաջարկած ստուգաբանությամբ հավանական է դառնում միայն երկրորդ տարբերակը, որ մաս Հ. Աճառյանի կարծիքն է (ՀԱԲ, 2, 637):

g'-: **Կարծր** բառի արմատն է **կարծ**²¹, որի մի իմաստային ճյուղավորումն է համարվում **կարծել** բառը: Այս դեպքում ևս Գ. Ջահուկյանը վերապահում է անում՝ «իմաստի վերականգնումը պայմանական է» (ՀՄԲ, 392): Իսկ երբ դարձյալ **(s)keu-* «կտրել, ճեղքել» նախածկից ենք բխեցնում այդ բառը, այն դառնում է համարմատ **խել-ք** «միտք, բանականություն, հմտություն, հնարք» [**khel-* *<*(s)kel-* «կտրել»] (ՀՄԲ, 325), անգլ. *skill* «հմտություն, իմանալ, հասկանալ, ջոկել, տարբերել, առանձնացնել, զատել», իսլ. *skilja* «հասկանալ, ըմբռնել»²², հ. հնդկ. *kalā* «արվեստ» (ՀՄԲ, խելք) և այլ բառերի, մի հանգամանք, որ ավելի համոզիչ է դարձնում մեր առաջարկած ստուգաբանությունը:

Խիստ «կարծր, ամուր, պինդ, հույժ, դժվարին, կտրուկ, դաժան» բառը Գ. Ջահուկյանը, հետևելով Շեֆտելովիցին, կապել է **խիտ** [*<*(s)k(h)aid-to-* *<*skid-to-* «խփել, հրել»] բառի հետ (ՀՄԲ, 331-332): Սակայն Հ. Աճառյանը Շեֆտելովիցի ստուգաբանությունը հավաստի չի համարել (ՀՄԲ, 2, 369-370): Այս տարակարծությունը նկատի ունենալով՝ առաջարկում ենք այս բառը կապել **կարծր, կոշտ, կոպիտ** հոմանիշների հետ՝ **խիստ** *<*(s)kheu-s-t-* *<*(s)keu-* ստուգաբանական նոր վարկածով:

Այլ լեզուներից օրինակներ են՝ հուն. *σκληρό* «մահալ» *<*skēu-* (Պոկ., 954), ռուս. *крупный* «խոշոր», *крепкий* «ամուր», լիտվ. *kraupu-*, շվեդ. *skroflig*, հ. անգլ. *hrēof* «կոպիտ, կոշտ, անհարթ», բոլս. *A kärpi*, *B kärpiye* «կոպիտ, անմշակ» *<*(s)krewəp-* (Նիկ., 125) և այլն:

²¹ **Կարծր-ի -ր** [*<ōr/-er/-ro*] ածանցի համար հմմտ.՝ *ծաղր, բարձր, մանր, փոքր, ծունր, մեղր, ասր, եզր, կողր, ոսկր, ազդր*:

²² Տե՛ս <https://en.wiktionary.org/wiki/skill>

Համառոտագրություններ

ՀԱԲ – Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հհ. 1-4, Եր., 1971-1979:

ՀԼԲԲ – Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. Ա-Է, Եր., 2001-2012:

ՀՍԲ – Գ. Ջահուկյան, *Հայերեն սրուգաբանական բառարան*, Եր., 2010:

Բանալի բառեր՝ *հայոց լեզու, սրուգաբանություն, հնդեվրոպական նախալեզու, խխունջ, քրքիր, կոպիւր:*

ОГАНЕС ЗАКАРЯН – Этимология армянских слов խխունջ, քրքիր, կոպիւր и некоторых других слов. – Армянские слова խխունջ, քրքիր, կոպիւր и другие считаются заимствованными или же не этимологизированными. В настоящей статье на основе фонетического, словообразовательного и семантического анализов предлагаются их новые этимологии, согласно которым данные слова являются исконно армянскими словами индоевропейского происхождения. Эти этимологии: խխունջ «улитка» <*khu-lo- <*(s)keu- «резать, раскалывать», քրքիր «рыхлый» <*ke-r- «резать», կոպիւր «грубый» <*(s)ko-b- <*(s)keu- «резать, раскалывать» и т.д.

Ключевые слова: *армянский язык, этимология, праиндоевропейский язык, улитка, рыхлый, грубый*

HOVHANNES ZAKARYAN – Etymology of Armenian Words խխունջ, քրքիր, կոպիւր and Several Other Words. – Armenian words խխունջ, քրքիր, կոպիւր etc are not etymologized or are considered to be borrowings. The article, dwelling upon phonetic, morphemic and semantic analyses, puts forward new etymologies for them as native Armenian words of I. E. origin. They are: խխունջ "snail" <*khu-lo- <*(s)keu- "to cut, to split", քրքիր "crumbly" <*ke-r- "to cut", կոպիւր "coarse" <*(s)ko-b- <*(s)keu- "to cut, to split" etc.

Keywords: *Armenian, etymology, Protoindoeuropean, snail, crumbly, coarse.*

ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ ԳՐԱԲԱՐԻ ԲԱՅԵՐՈՒՄ

Փոխանցումը քերականական մի կարգից մյուսին անցումն է, որը բառերի բազմիմաստության, փոխաբերական իմաստների դրսևորման արդյունք է՝ հիմնված այդ բառերի շարահյուսական կիրառության վրա: Խոսքի մասերի փոխանցման մի շարք տիպեր կան՝ գոյականացում, ածականացում, մակբայացում և այլն: Մի խոսքի մասից մեկ այլ խոսքի մասի փոխանցվելիս բառը ստանում է ձևաբանական և շարահյուսական նոր հատկանիշներ: Դերբայները, օրինակ, սովորաբար վերածվում են ածականների և գոյականների, գոյականները՝ կապերի և այլն: Որոշ դերբայներ, առարկայի հատկանիշ, վիճակ արտահայտելուց բացի, քանի որ ունենան առարկայական նշանակություն, կարող են գործածվել թե՛ գոյականաբար, թե՛ ածականաբար: Նման գործառույթը պատճառ է դառնում դերբայների գոյականացման կամ ածականացման, ինչպես՝ *ամբաստանյալ, հեծյալ, սառուցյալ, մեռյալ* և այլն:

Գրաբարի բայերում փոխանցումները կատարվում են ձայնավոր խոնարհիչների (բնակեմ//բնակիմ, կիզում//կիզեմ//կիզիմ), սուկածանցների փոխարկման կամ դրանց հավելման միջոցով (թաքնում//թաքչիմ, բաղձամ// բաղձանամ)՝ առանց տվյալ խոսքի մասի քերականական կարգի փոփոխության: Եթե խոսքի մասերի փոխանցման ժամանակ փոխվում է տվյալ բառի խոսքիմասային պատկանելությունը, ապա բայերի խոնարհման համակարգում տեղի ունեցող փոխանցումների դեպքում փոխվում են բայի լծորդությունը, կազմությունը, հաճախ նաև սեռի քերականական կարգը:

Սեռը բայի կարևոր հատկանիշներից է: Դիոնիսիոս Թրակացիին իր «Քերականական արուեստ» երկում առանձնացրել է բայի երեք սեռ՝ ներգործական, կրավորական և միջին: Միջին սեռի համարվող բայերը կրավորակերպ ներգործականներն են, որոնց վերաբերյալ

Գ. Թրակացու երկի հայ թարգմանիչը նշում է հետևյալը. «Տրամա-
դրութիւնք են երեք, ներգործութիւն, կիր, միջին. ներգործութիւն է որ-
գոն *գաւնիւմ*, եւ կիր՝ որգոն *գաւնիւմ*, իսկ միջին է, որ երբեմն ներգոր-
ծութիւն եւ երբեմն կիր յարկացուցէ, որգոն *մեռանիւմ*, *խորհիւմ*, *սխա-
ծայ*, *մոռացայ*»¹: Բայի երեք սեռ է ընդունում մաս Անանուն Սեկնի-
չը՝ միջին կոչվող սեռի համար առանձնացնելով երկու տիպ՝ կրավո-
րաձև ներգործական և ներգործաձև կրավորական: Փորձելով
հստակեցնել ասվածը՝ գրում է. «Տրամադրութիւնք երեք, ներգործու-
թիւն եւ կիր եւ միջին: Ներգործութիւն է, յորժամ ես ի յայլս ազդեմ:
Իսկ կիր, յորժամ ես ի յայլոց ազդիւմ, որպէս կոփիւմ: Իսկ միջին է,
յորժամ ձայնն կրատրական եւ իրքն ներգործական, որպէս տանիւմ.
Եւ կամ յորժամ ձայնն ներգործական եւ իրքն կրատրական, որպէս
զգենում»²: Հետագայում Կդեմես Գալանոսը, հաշվի առնելով բայի
արտահայտած սեռի քերականական իմաստների բազմազանու-
թյունը, կատարում է հավելումներ լեզվական նյութի հիման վրա և
նախորդ քերականների ընդունած սեռերին ավելացնում է ևս երեքը՝
դրանց թիվը հասցնելով վեցի՝ ներգործական (*activum*), կրավորա-
կան (*passivum*), չեզոքական (*neutrum*), հասարակ (*commun*), ձայ-
նակրական (*deponens*), անցողական (*transitivum*)³: Կդեմես Գալա-
նոսը այս խմբավորումը կատարել է ըստ բայերի արտահայտած
իմաստների և ձևաբանական հատկանիշների: Անվանի քերականը
ա, *ե*, *ու* լծորդության չեզոք սեռի բայերից առանձնացնում է *ի* լծոր-
դության չեզոք սեռի բայերը՝ դրանք անվանելով ձայնակրականներ:
Անցողական է համարում պատճառական բայերը՝ *զգեցուցանիւմ*,
ուրախացուցանիւմ և այլն:

Բայի սեռի վերաբերյալ ուշագրավ դատողություններ է անում
Մ. Չամչյանը: Նա նշում է, որ բայերի սեռերի միջև երբեմն փոխան-
ցումներ են լինում: Ե լծորդության որոշ ներգործական բայեր գոր-
ծածվում են իբրև չեզոքներ (*ասպարակիւմ*, *բղիսիւմ*, *լռիւմ* և այլն), մի

¹ Աղոնց Ն., Երկեր, հ. Գ, Եր., էջ 22:

² Նույն տեղում, էջ 147:

³ Տես Կդեմես Գ., Քերականական եւ տրամաբանական ներածութիւն, Հռ., 1645, էջ 53-54:

շարք կրավորականներ՝ իբրև ձայնակրականներ (*ամբոխիւմ, բոր-բորիւմ, գումարիւմ* և այլն), որոշ կրավորականներ՝ իբրև հասարակ-ներ (*անիրաւիւմ, աշխատիւմ, զօրեւորիւմ*) և այլն: Եվ կան *ի* լծորդու-թյան այնպիսի բայեր, որոնք կարող են *ե* լծորդության բայերի նման խոնարհվել⁴: Չայնակրական, ինչպես նաև հասարակ բայերի վե-րաբերյալ նոր պարզաբանումներ է կատարում Գաբրիել Ավետի-քյանը: Հետևելով Մխիթար Սեբաստացուն և Մ. Չամչյանին՝ Գ. Ավետիքյանը իր «Քերականութիւն հայկական» աշխատության մեջ առանձնացնում է բայի չորս սեռ՝ ներգործական, կրավորական, չեզոքական և հասարակ՝ նոր տեսանկյունից քննելով և միաժամա-նակ ընդլայնելով *հասարակ* կոչված բայերի թիվը: Եթե Մ. Չամչյա-նը հասարակ է համարում *ի* լծորդության այն բայերը, որոնք միև-նույն ձևով կարող են արտահայտել թե՛ ներգործական, թե՛ կրավո-րական իմաստներ, ապա Գ. Ավետիքյանը, *ի* լծորդության բայերից զատ, հասարակ է համարում նաև *ա* և *ու* լծորդության ներգործա-կան սեռի այն բայերը, որոնք կարող են արտահայտել նաև կրավո-րական իմաստ: Բայի սեռը քննելիս Գ. Ավետիքյանը բայերը բա-ժանում է հետևյալ խմբերի՝ ա) ներգործականներ՝ *ազդիւմ, առակիւմ, բ*) ներգործակերպ չեզոքներ, որ կրավորական ձև չունեն՝ *ապաշա-ւիւմ, դանդաշիւմ, գ*) կրավորակերպ չեզոքներ՝ *աշխատիւմ, բնակիւմ, դադարիւմ* (այս բայերից ոմանք եմ-ով կխոնարհվեն՝ *դադարեւմ*), դ) հասարակ բայեր՝ *բարբառիւմ, դատիւմ, ե*) անցողական բայեր՝ *դարձուցանել* և այլն⁵:

Նոր հայկագյան բառարանի հեղինակներ Գաբրիել Ավետիքյա-նը, Խաչատուր Սյուրմեյանը, Սկրտիչ Ավգերյանը բայի հինգ սեռ են առանձնացնում՝ ներգործական, կրավորական, չեզոք, ձայնա-կրական (կրավորաձև չեզոքներ) և հասարակ: Բառարանում զե-տեղված յուրաքանչյուր բայի դիմաց նշվում է համապատասխան սեռը՝ հայ մատենագրությունից քաղված բնագրային օրինակներով: Ուսումնասիրվող բայերի փոխանցումների և դրանց օրինակների

⁴ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Գրաբարի քերականության պատմություն, Եր., 1974, էջ 319:

⁵ Տե՛ս **Աւետիքեան Գ.**, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, էջ 53-79:

համար իբրև սկզբնաղբյուր ծառայել է Նոր հայկազյան բառարանը: Բոլոր օրինակները քաղված են հիշյալ բառարանից:

Բայի սեռի քերականական կարգը կայուն հատկանիշ չէ: Այն կապված է բայիմաստի հետ, որի փոփոխությամբ էլ պայմանավորված է սեռի փոփոխությունը: Լեզվի պատմական զարգացման ընթացքում այդպիսի բայերը դառնում են կրկնասեռ կամ եռասեռ: Քերականական այս երևույթը նոր բայաձևերի, խոնարհման տիպերի փոփոխության, ինչպես նաև միևնույն բայերի, բայց տարբեր լծորդության կրկնակների, այսինքն՝ խոնարհիչ ձայնավորների փոխանցումների առաջացման պատճառ է դառնում: Ըստ մեր վիճակագրական տվյալների՝ լայն տարածում ունեն *ես/իմ* փոխանցման բայերը, օրինակ՝ *արշակեմ//արշակիմ*⁶, *ճակարեմ//ճակարիմ*, *արշաւեմ//արշաւիմ*, *քերկրեմ//քերկրիմ*, *աշխարեմ* «աշխատ առնել»//*աշխարիմ* «վատակել», *այլակերպեմ//այլակերպիմ*, *սպրեմ* «ազատել, պահպանել»//*սպրիմ* «ազատվել, փրկվել, ճողոպրել», *համարշակեմ//համարշակիմ*, *հնազանդեմ//հնազանդիմ*, *վախճանեմ//վախճանիմ* և այլն: Այս շարքի բայերից առաջինները, որպես կանոն, արտահայտում են ներգործական, մասամբ նաև չեզոք, իսկ երկրորդները՝ կրավորաձև չեզոք (ՆՀԲ հեղինակների ձևակերպմամբ՝ ձայնակրական) և կրավորական սեռի իմաստներ: Օրինակ՝ *Բնակեաց* (չ) յայրի անդ: Ես եկից ես *բնակեցայց* (ձ) ի միջի քում: Արշաւեցին (չ) այլազգիք յերկիրս: Ընդ արեւմուտս արշաւիցին (ձ): Սմբատ երթեալ *հնազանդէ* (ն) զամենեսեան: *Հնազանդեցաւ* (ձ) երկիրդ առաջի տեառն: Ի մմին վայրի ես ես զբանս *վախճանեցից* (ն): *Վախճանեաց* (ն) զխօսելն ընդ մմա: *Վախճանեցաւ* (ձ) արքայն եգիպտացոց: *Արշակէ* (ն) զկապեալս տէր: *Արշակիմ* (կ) ի խաղաղութենէ: Այս շարքում հանդիպում են *ես/իմ* փոխանցում ունեցող այնպիսի բայեր, որոնք տարբեր են ոչ միայն լծորդությամբ, այլև իրենց արտահայտած իմաստային նրբերանգներով, օրինակ՝ *համարշակեմ* նշանակում է «հրաման տալ, թույլ տալ, քաջալերել», *համարշակիմ*՝ «համարձակ լինել, գորանալ, իշխել, քաջալերել».

⁶ Աւետիքեան Ա., Սիւրմէեան Խ., Ազեբեան Հ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836:

Առն միում *համարչակեցէք* խօսել բանս այսպիսիս: Ո՞վ *համարչակիցի*: Յարեայց *համարչակեցայց* ի նոսա և այլն:

Առանձին խումբ են կազմում այն բայերը, որոնք բայական նույն ձևով արտահայտում են թե՛ ներգործական, թե՛ կրավորական իմաստներ: Նման բայերը գրաբարի քերականները անվանում են *հասարակ* բայեր, որոնց արտահայտած սեռը որոշվում է համատեքստում կամ շարահյուսական մակարդակում: ՆՀԲ-ում վկայված հասարակ բայերից են՝ *բաժանիմ, դարիմ, խոսարովանիմ, համարիմ, հնարիմ, մանկածնիմ, ճարակիմ* և այլն, օրինակ՝ *Մի՛ դարիք, զի մի՛ դարիցիք: Խոսարովանեցի* յիս: *Խոսարովանեցի* յամենեցունց: Կրավորածն խոնարհման այս բայերը խոնարհվում են նաև եմ-ով՝ որպես ներգործականներ՝ *բաժանեմ, համարեմ, դարեմ, խոսարովանեմ, հնարեմ, ճարակեմ, մանկածնեմ* և այլն: Այսպես՝ Ոչ տարապարտուց *դարեցիք*: Եւ նա *բաժանեաց* նոցա զկեանս: Որ *խոսարովանեացն* զմեղս: Հասարակ բայ է նաև *բարբառիմ*-ը և նշանակում է «խոսել, արտաբերել, գոչել, ձայն արձակել, կարդալ»՝ Չպարկեշտս *բարբառիմ*: Հարցուկք *բարբառեցան*: Չայս աւետիս հնչեալ *բարբառեմ* և այլն:

Գրաբարի բայերում փոխանցում է կատարվում նաև *ան* ածանցի հավելման, ինչպես նաև *ն*, *չ* ածանցների փոխարկման միջոցով: Նման բայերի պարզ և սոսկածանցավոր զուգադրական ձևերը բաժանվում են հետևյալ խմբերի՝ ա) **անամ** // **եմ**. *անուշանամ//անուշեմ, անօսրանամ//անօսրեմ, բողբոջանամ//բողբոջեմ, ազազանամ//ազազեմ, անգարդանամ//անգարդեմ* և այլն, բ) **անամ** // **իմ**. *անգզայանամ//անգզայիմ, աղբարանամ//աղբարիմ, ապառաժանամ//ապառաժիմ, ապշանամ//ապշիմ, դժուարանամ//դժուարիմ, երկբայանամ//երկբայիմ, զմայլանամ//զմայլիմ, խօլանամ//խօլիմ* և այլն, գ) **եմ** // **անեմ**. *անջարեմ//անջարանեմ, առասեմ//առասանեմ, լուծեմ//լուծանեմ, բուծեմ//բուծանեմ, եղծեմ//եղծանեմ*/նաև՝ *եղծնում*, դ) **ամ** // **անամ**. *բաղչամ//բաղչանամ, բղչամ//բղչանամ, խրոխարամ//խրոխարանամ, կաղամ//կաղանամ* և այլն, ի) **նում** // **անեմ** կամ **անիմ**. *լքնում//լքանեմ, քքնում//քքանեմ* (նաև՝ *քքեմ*), *մածնում//մածանեմ* // *մածանիմ*, ե) **նում** // **չիմ**. *զարթնում//զարթչիմ*

(նաև՝ *գարթնանամ*), *բաքնում*//*բաքչիմ*, *խրրնում*//*խրրչիմ*, *ոսրնում*//*ոսրչիմ*, գ)*եմ*//*ում*//*անեմ*//*իմ*. *կիզեմ*//*կիզում*//*կիզանեմ*//*կիզանիմ* և այլն:

Բերված բնագրային օրինակներում բայական փոխանցումները կարևոր նշանակություն ունեն հատկապես բայերի սեռերի արտահայտման և դրանց տարբերակման տեսակետից: Գրաբարում բայի սեռը երբեմն արտահայտվում է խոնարհման հատուկ վերջավորություններով: Այսպես՝ *ե* լծորդության ներգործական սեռի բայերի կրավորականը կազմվում է ե>ի փոխարկումով՝ գրեմ=գրում եմ, գրիմ=գրվում եմ, գրեցայց=գրվեմ, կգրվեմ և այլն: Կրավորականի կազմությունը հին հայերենում ձևակազմական արժեք ունի, քանի որ բայական կրավորական սեռատարբերակիչ մասնիկներ գրաբարում չկան: Գրաբարում սեռային-քերականական մասնիկ է պատճառական *–ուցան* ածանցը, որի միջոցով առավելապես չեզոքներից կազմվում են ներգործական սեռի բայեր:

Կարծիք կա, որ գրաբարի *ա, ե, ի, ու, ռ* ձայնավոր խոնարհիչները բայի սեռերը տարբերակող մասնիկներ են⁷: Հետագայում բայի խոնարհումների փոխներթափանցման, սեռի քերականական կարգի և բայմաստի սերտ հարաբերակցության հետևանքով այդ խոնարհիչների դերը՝ իբրև սեռատարբերակիչ ձայնավորների, աստիճանաբար նվազում է: Ե խոնարհման բայերը, օրինակ, հիմնականում ներգործական, իսկ *ա* խոնարհման բայերը չեզոք սեռի են: Լեզվի պատմական զարգացման ընթացքում *ե* խոնարհման բայերի մի մասը դառնում է չեզոք, այսինքն՝ ձևի և իմաստի փոխհարաբերության մեջ առաջնահերթություն է ստանում բայիմաստը:

Անշուշտ վերը նշված զուգահեռ ձևերից բոլորը հավասարապես գործածական չեն: Կան գերակշռող և մեկ կամ մի քանի վկայություն ունեցող ձևեր, որոնք ներկայացնում են տվյալ բայի ձևաբանական տարբեր դրսևորումների պատմական զարգացումները: Պարզ և ածանցավոր բայերի զուգադիր ձևերում ակտիվ և առավել կենսունակ է *ան* ածանցը, որով հին հայերենում ածանցավոր և

⁷ Տե՛ս Առաքելյան Վ., Գրաբարի քերականություն, Եր., 2010, էջ 117:

անաժանց հիմքերով հակադրվող մի ամբողջ շարք է ձևավորվում, օրինակ՝ *բաղձամ-բաղձանամ, բղձամ-բղձանամ, կաղամ-կաղանամ, անջարտեմ-անջարտանեմ, բեկեմ-բեկանեմ, կիզում-կիզանեմ* և այլն: Նման կառուցատիպերով բայական կրկնակները դրսևորում են խոնարհման տիպերի տարբերություններ՝ *կաղամ-կաղացի* և *կաղանամ-կաղացայ, եղծեմ-եղծեցի* և *եղծանեմ-եղծի* և այլն: Անկատարկատարյալ հակադրությունից բացի՝ այս շարքի բայերն արտահայտում են նաև միակատարության և բազմակատարության կամ տևականության և ոչ տևական կերպային հակադրության իմաստներ, այսինքն՝ ցույց են տալիս գործողության կատարման քանակը: Օրինակ՝ *գինեմ-գինենամ* չեզոք սեռի բայի գույք ձևերից *գինեմ* ձևը նշանակում է «զվարթանալ», իսկ *գինենամ*-ը՝ «խապառ արբենալ»։ *Գինելն*, որ եւ յիմաստունա անկանի: Ոմանք յանմտացն առ ի հինգ ատուրս պահոց *գինենան*:

Առանձին խումբ են կազմում մինչև եռանդամ և քառանդամ կրկնակներ ունեցող տարբեր լծորդության բայաձևերը: Դրանցից են՝ *ազազեմ // ազազիմ // ազազանամ, անպարսպեմ // անպարսպիմ // անպարսպանամ, արզելում // արզելիմ // արզելանիմ, եղծեմ // եղծնում // եղծանիմ, ընդոսարիմ // ընդոսարնում // ընդոսարչիմ, լքեմ // լքնում // լքանեմ // լքանիմ, ծփամ // ծփեմ // ծփիմ, կիզում // կիզեմ // կիզանեմ // կիզանիմ, հեղձնում // հեղձանեմ // հեղձանիմ // հեղձիմ, մածնում // մածանեմ // մածանիմ* և այլն: Նշված բայերը միմյանց հակադրվում են ոչ միայն լծորդությամբ կամ կազմությամբ, այլև իրենց արտահայտած քերականական սեռով, օրինակ՝ *ծփալ* բայը չեզոք սեռի բայ է, *ծփել*-ը՝ ներգործական, *ծփիլ*-ը՝ կրավորական և այլն: *Ծփայր* ի խորհուրդս իւր իբրեւ զծով: *Ծփէ* ընդդէմ ալիքն զմիտս: Ի կոծ մրրկաց *ծփիմ*: *Լքի* գտուն իմ: *Լքան* ձեռք մեր: *Լքանիլ* ի յուսոյն կամ ի գուարթութենէ: Ոչ *լքնուն* ջերմութեամբ արեգականն: *Մածանի* սփածանելի զմիջով մարդոյ: Որ զառեալ ի գետոյն (զջորն) ի նոր երանգ բոսորային *մածեի* արիւն ի ցամաքի: Առաւելագոյն քան զկաթն *մածեայք*:

Ըստ մեր վիճակագրական տվյալների՝ *եմ//իմ* փոխանցում ունեցող բայերի մեծ մասը չեզոք սեռի բայեր են: Դրանք բաժանվում են

երկու խմբի՝ ներգործածն չեզոքներ (Բնակեաց յայրի անդ) և կրավորածն չեզոքներ (Բնակեցաւ առ կաղնուջն): Այս շարքի որոշ բայեր *եւ*-ով խոնարհվելիս գործածվում են ներգործական, իսկ *իւ*-ով խոնարհվելիս՝ չեզոք սեռի նշանակությամբ, օրինակ՝ Արձակե գնա: Արձակեցան և գնացին ժողովեալքն: Չեզոք սեռի բայեր են ընդհանրապես *նուս*//*չիս* փոխանցման բայերը՝ *գարթնուս*//*գարթչիս*, *բարնուս*//*բարչիս*, *թռնուս*//*թռչիս* և այլն: Նշված բայերում *ն* և *չ* հիմնականում չեզոք սեռի բայեր են *աւ*//*անաւ*-ով վերջացողները:

Հավարտ հանգում ենք այն մտքին, որ գրաբարի ձայնավոր խոնարհիչների և այլ կարգի փոխանցումների միջոցով արտահայտվում են բայի սեռի քերականական կարգը, անկատար-կատարյալ, ինչպես նաև տևականության և ոչ տևական կերպային հակադրությունները, որոնք էլ միևնույն բայի կրկնակների բազմազանության պատճառ են դառնում: Շատ հաճախ, սակայն, փոխանցումից հետո բայի սեռը չի փոխվում՝ բայիմաստով պայմանավորված: Այս անցումները միաժամանակ բարբառների ազդեցության, բայագործածության զարգացման արգասիք են և ունեն ժամանակագրական տարբեր դրսևորումներ (*ու* խոնարհման *մածնուս* բայը գործածվել է V, իսկ նույն բայի *մածանեւ* տարբերակը՝ X դարում):

Բանալի բառեր՝ *խոնարհուս*, *բայի խոնարհման համակարգ*, *հին հայերեն*, *սեռ*, *խոնարհիչ ձայնավորներ*, *ներգործական սեռ*, *կրավորական սեռ*, *չեզոք սեռ*, *հասարակ բայեր*:

АЛВАРД ХАЧАТРЯН – Конверсия в глаголах древнеармянского языка. – В данной статье рассматривается конверсия. Конверсия в системе спряжения древнеармянского языка – это смена спрягающих гласных. Считалось, что с помощью конверсии различались не только типы спряжения, но и залоги, виды. В результате конверсии в древнеармянском языке формировались ряды глаголов, которые могли спрягаться и по

пассивному, и по активному типу. Создавалась общая форма для выражения двух или трех залогов – активного, пассивного, среднего. В древнеармянском языке самый распространенный тип конверсии – это *էւ-իւ* (em/im). Например, *բաժանել- բաժանիւ, բարբառել- բարբառիւ, ապրել- ապրիւ* и т.д. Встречаются также следующие возможные типы конверсий; *անամ/եմ* – *անուշանամ - անուշեմ, անամ/իւ* (анам/им) *ապառաժանամ - ապառաժիւ, եմ/անեմ* (ем/анем) *եղծել- եղծանել, ամ/ անամ* (ам/анам), *բաղձամ- բաղձանամ, նում/անեմ* (нум/анем) *մածնում- մածանել, նում/անամ զարթնում- զարթնանամ* (нум/анам), *նում/չիւ*(нум/чим) – *զարթնում- զարթչիւ* и т.д.

Ключевые слова: глагольная конверсия, глагольная система спряжения, древнеармянский язык, залог, спрягательные гласные, активное спряжение, пассивное спряжение, медиопассив, простые глаголы.

ALVARD KHACHATRYAN – Conversion in the verbs of the Old Armenian language. – Conversion in the system of conjugation of the Old Armenian language is a change of conjugating vowels. The change of conjugated vowels was a way of differing the types of conjugation, pledges and aspects. A common form was created for the expression of two or three pledges – active, passive, medium. In the Old Armenian language the most common type of conversion is: *էւ-իւ* (em / im). As for example, *բաժանել- բաժանիւ, բարբառել- բարբառիւ, ապրել-ապրիւ* etc. There are also the following possible types of conversions; *անամ / եմ* (anam/em) - *անուշանամ - անուշեմ, անամ / իւ* (anam/ im) - *ապառաժանամ - ապառաժիւ, եմ / անեմ* (em /anem) – *եղծել- եղծանել, ամ / անամ* (am/ anam) - *բաղձամ- բաղձանամ, նում / անեմ* (noot / anem) - *մածնում- մածանել, նում / անամ* (num / anam) - *զարթնում- զարթնանամ, նում / չիւ* (num / chim) - *զարթնում - զարթչիւ* etc.

Keywords: verbal conversion, verbal conjugation, Old Armenian language, pledge, conjugated vowels, active conjugation, passive conjugation, mediopassive, simple verbs.

**ՄԱՆՈՒԿ ԱՔԵՂՅԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ԸՍՏ ՀԱՍՄԻԿ
ԱՔԵՂՅԱՆԻ «ՕՐԵՐՍ ԻՆՁ ՀԵՏ ԵՆ...» ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ**

Մանուկ Արեղյանի գիտական վաստակը վաղուց արդեն իր հաստատուն և անփոխարինելի տեղն ունի հայ մշակույթի պատմության մեջ: Նրա ժառանգությանը վերաբերող ուսումնասիրություններում ուրվագծվում է հայագետ գիտնականի բացառիկ կերպարը, իսկ տարբեր առիթներով ժամանակակիցների հուշ-պատասխաններում՝ նաև նրա մարդկային նկարագիրը իր գիտական շրջապատի հետ բազմաբնույթ հարաբերություններում: Գիտնականի թոռնուհու՝ Հասմիկ Արեղյանի՝ «Օրերս ինձ հետ են...» հուշագրությունը ներկայացնում է մեծանուն հայկաբանի մարդկային տեսակը ընտանեկան, մտերմական, ընկերական, առհասարակ առօրյա-կենցաղային միջավայրի հետ բազմապիսի շփումների ոլորտում, որ շատ քիչ է ծանոթ սերունդներին: Այս անծանոթ մարդ-անհատականությունը Հասմիկ Արեղյանի հուշագրության մեջ ներկայանում է ամենից առաջ վեց-յոթ տարեկան աղջնակի մանկական տպավորություններով, որոնք ամենաանմիջականն են ու հավաստին և երբեք չեն ջնջվում մարդու հիշողությունից: Հուշագրողի համար վավերական վկայություններ են նաև ընտանիքի անդամների հուշ-պատմությունները, որոնց՝ ըստ պատշաճի ու տեղին օգտագործումով ավելի է ամբողջանում գիտնականի մարդկային կերպարը:

Հասմիկ Արեղյանի հուշագրությունը ժամանակային և տարածական առումով բավական տարողունակ հուշամատյան է, որտեղ միահիյուսվում են մարդկային բազմերանգ փոխհարաբերությունները, զգացմունքային-հուզական շեշտադրմամբ նկարագրությունները, հետաքրքիր կառուցվածքը, ինքնատիպ ու գեղեցիկ գրելաոճը, գեղարվեստական շունչն ու գիտական լրջությունը: Գրքի էջերից կենդանանում ու հառնում են վաղուց հեռացած շատ սիրելի և հա-

բազատ, հայտնի և անհայտ դեմքեր՝ հետաքրքիր, ուրախ ու տխուր պատմություններով: Այդ դրվագների բազմերանգ գունապնակում, սակայն, առանձնանում է հուշագրողի համար ամենից հարազատն ու սիրելին՝ Մանուկ Աբեղյան պապիկը, որ տարիների հեռավորությունից անգամ չի կորցնում իր մշտակա ներկայությունը, հմայքն ու մեծությունը բռնուհու հուշաշխարհում:

Հուշագրության ամբողջական քննությունը, որ շատ տեսակետներից շահեկան կլիներ մեծանուն գիտնականի ապրած ժամանակն ու միջավայրը ավելի լավ ճանաչելու համար, այս համառոտ հաղորդման խնդիրը չէ. մեր նպատակը առավելապես Մանուկ Աբեղյան մարդու կերպարի բացահայտման լուսաբանումն է «Օրերս ինձ հետ են...» հուշապատումի էջերում: Անշուշտ, կերպար եզրույթի գործածությունն այս դեպքում որոշ առումով պայմանական է. եթե գեղարվեստական ստեղծագործության մեջ գործող անձերը սովորաբար հեղինակի երևակայության ծնունդ են, և նրանց վարքագիծը վերջին հաշվով ուղղորդվում է հեղինակի կողմից, ապա հուշագրության մեջ հանդես են գալիս իրական մարդիկ: Այս պարագայում հուշագրողից պահանջվում է ավելի շրջահայաց դիտողականություն՝ մարդու մեջ հայտնաբերելու և սպառնիչ ներկայացնելու բնավորության ու վարքագծի այն կողմերը, որոնցով բնութագրվում է նրա անկրկնելի անհատականությունը: Հուշագրողի գործը դժվարանում է նաև նրանով, որ վերջինս այս կամ այն չափով առնչվել է իր «հերոսների» հետ և նրանց բնութագրելիս պիտի կարողանա նվազագույնի հասցնել սուբյեկտիվության պահը՝ միշտ նկատի ունենալով, սակայն, որ հուշագրությունը, այնուամենայնիվ, իր ժանրային բնույթով չի կարող իսպառ գերծ լինել գեղարվեստական պայմանականությունից: «Օրերս ինձ հետ են...» հուշապատումը շարադրված է այս ամենի հստակ գիտակցմամբ:

Հասմիկ Աբեղյանը պապի մասին իր հուշերը սկսում է իբրև գրականագետ. տվյալներ քաղելով Սարգիս Հարությունյանի «Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը» արժեքավոր աշխատությունից՝ ներկայացնում է ապագա մեծ գիտնականի մանկությունը, ուսումնառության տարիները, աշխատանքային, բանահավաքչական և գիտա-

կան գործունեությունը: Այս, կարելի է ասել, նախաբանը ինքնանպատակ չէ. դրանով հուշագրողի համար շատ բան նոր իմաստ է ստանում պապի մասին իր հիշողություններում մնացած մանկական տպավորություններից: Պատահական չէ, որ այս «գիտական» նախադրությունից գործողությունների երկարուձիգ շղթայում անցումը մարդկային սովորական իրականություն կատարվում է ընթերցողի համար գրեթե աննկատելի՝ բացելով Աբեղյան մարդու ներաշխարհի, մտածողության, հոգեբանության անտեսանելի նրբերանգները:

Մեծ հայրենասեր էր Մանուկ Աբեղյանը: Արտասահմանում ուսումնառությունից հետո նա գերադասում է վերադառնալ հայրենիք և գիտելիքների ողջ պաշարը ի սպաս դնում հայրենական կրթության և լուսավորության գործին:

Որդիներին ևս դաստիարակում է նույն ոգով: Անթաքույց հուզմունքով է պատմում հուշագիրը վաղամեռիկ Գագիկ հորեղբոր մասին, որ աչքի է ընկել ոչ միայն հազվագյուտ ընդունակություններով, այլև մարդկային լավագույն որակներով: Այսպես, օրինակ, 15 տարեկան դպրոցական՝ հրաժարվում է նոր վերարկուից, քանի որ ընկերը վերարկու չուներ, և հայր Աբեղյանը վերարկու է գնում նաև ընկերոջ համար: 16-ամյա Գագիկի մահը մեծ ցավ է պատճառում ծնողներին: Հուշագրողը որդուն կորցրած հոր տառապանքը ներկայացնում է ոչ թե ուրիշներից բանավոր լսածը վերապատմելով, այլ մեջբերելով «Հառաջ» թերթում տղայի մահվան կապակցությամբ տպագրված մահախոսական հոդվածը. «Միշտ համեստ, լուռ ու զգայուն Գագիկն իր պատրաստությամբ ապագա խոստացող էր, ճշմարիտ հայ և շիտակ հայրենասեր: Իզուր չէր, որ թաղման օրը հոր վիշտը կրկնակի էր նրանով, որ նա արցունք էր թափում ոչ միայն իր մեցուկ և սիրած որդու կորստի համար, այլև ողբում էր «մի պատրաստի և շիտակ հայրենասերի մահը», ինչպես ինքը՝ պ. Աբեղյանն էր ասում»¹:

¹ Տե՛ս **Աբեղյան Հ.**, Օրերս ինձ հետ են, Եր., 2014, էջ 18:

«Հառաջ»-ի այս մահախոսականը պերճախոս վկայություն է գիտնական Աբեղյանի մարդկային ազնվական որակներից մեկի. նա՝ իբրև հայր, շատ է կարևորել իր զավակների ազգային-հայրենասիրական դաստիարակությունը՝ սկսելով մայրենի լեզվի և գրականության, Հայաստանի աշխարհագրության ուսումնասիրությունից: Պատահական չէ, որ հաճախ է որդիների հետ շրջել Հայաստանի գրեթե բոլոր կողմերում. չէ՞ որ հայրենիքը սիրելու համար պետք է ճանաչել նրա բնաշխարհն ու մարդկանց: Հայրենիքի նկատմամբ նույն անվերապահ սերն է մղում Աբեղյանի մյուս որդուն՝ Սուրենին, 1941 թվականին կամավոր մեկնելու ռազմաճակատ՝ հրաժարվելով տաղանդավոր դերասանի և թատերագրի խոստումնալից հեռանկարից: Իբրև դերասան՝ նա արդեն ճանաչված էր Սունդուկյանի անվան թատրոնում: Աբեղյան հայրը, բազմազբաղ լինելով հանդերձ, մշտապես դիտում էր որդու մասնակցությամբ ներկայացումները և ասում իր ծանրակշիռ խոսքը, որ դերասան որդին չափազանց կարևորում էր:

Հուշերում վերակենդանացած յուրաքանչյուր միջադեպ նրբորեն բացում է Աբեղյանի բնավորության և հոգեբանության նորանոր շերտեր: Նախանձելի ուղղախոս է եղել գիտնականը կյանքում, կենցաղում: Մարդկային տարատեսակ հարաբերություններում երբեք չի կեղծել, մշտապես ասել է այն, ինչ մտածել է, անգամ եթե դա կարող էր տհաճություն պատճառել դիմացիին: Այդպիսի մի միջադեպ է հիշում հուշագիրը մոր և տատի պատմածներից: Երբ երևանյան մի շոգ ու քամոտ օր Շուշանիկ տատիկի քույրերը իրենց ամուսինների հետ այցելում են նրանց՝ միաժամանակ դժգոհելով անտանելի քամուց ու փոշուց, Աբեղյանը հանգիստ պատասխանում է. «Բայց չէ՞ որ ես ձեզ չեի խնդրել գալ այս պահին, չգայիք»²:

Հայտնի է, որ ցանկացած գիտնականի համար ընտանեկան անդորրն ու հոգու խաղաղությունը բեղմնավոր աշխատանքի կարևոր նախապայմաններ են: Այս կապակցությամբ հուշագիր թոռնուհին գիտնական պապի կողքին հաճախ հիշատակում է նրա կնոջը՝ Շու-

² Նույն տեղում, էջ 14:

շանիկ տատին: Վերջինս, մեծ սիրով և հոգատարությամբ շրջապատելով ամուսնուն, մշտապես աջակցել է նրան, ազատել կենցաղային տարատեսակ հոգսերից, եղել նրա կողքին: «Այն մեծ հարգանքն ու սերը պապիս նկատմամբ, որ իշխում էր տանը, ընտանիքում, գալիս էր նաև տատիցս, որ առաջին հերթին ամուսնու մեջ տեսնում և գնահատում էր գիտնականին»³: Խստապահանջ և լուրջ գիտնականը ինքն էլ իր կողմից բարձր է գնահատել կնոջը, նույնը ներշնչել նաև որդիներին: Առանց վարանելու ի լուր ամենքի բարձրաձայնել է, որ առանց Շուշանիկի հոգատարության՝ ինքը չէր արժանանա ակադեմիկոսության աստիճանին:

Լինելով ինքնուրույն և անկախ բնավորություն՝ Աբեղյանը շատ բժախնդիր չի եղել կենցաղային պայմանականություններում: Այս տեսակետից հետաքրքիր դրվագ է Սուրենի և Մարգարիտայի նշանադրության նկարագրությունը, որտեղ երևան է գալիս Աբեղյանի մարդկային տեսակի յուրօրինակ դրսևորումներից մեկը: Ավանդապահ լինելով համդերձ՝ նա ամենևին էլ անհրաժեշտ չի համարում անպայման հետևել հարսնախոսության ընդունված կանոններին, եթե դրա հարկը չկա: Համոզված, որ սերը փոխադարձ է, առանց այլևայլի սեղանին է դնում կոնյակը և շնորհավորում՝ չհարցնելով խնամիների կարծիքը: Վերջում խստապահանջ հայրը օրհնում է գույզին: «Բախտավոր եղեք, սիրե՛ք միմյանց, հարգե՛ք մեզ,- ասում է գիտնականը, ապա դառնալով դերասան որդուն՝ ավելացնում: - Սուրիկ, չմոռանաս, որ սա բեմական ամուսնություն չէ, որ վարագույրը փակվի, և ամեն ինչ վերջանա: Սա կյանք է...»⁴:

Այստեղ մի նոր գիծ է երևան գալիս Աբեղյանի կերպարում. մշտապես լուրջ ու խոհուն գիտնականը մեծ ջերմությամբ է վերաբերվում հարսին, ընդունում է իբրև հարազատ դստեր, արգելում նրան Գրետ անվանել. «Դու իսկական մարգարիտ ես, մարգարիտ»⁵:

³ Նույն տեղում, էջ 15:

⁴ Նույն տեղում, էջ 42:

⁵ Նույն տեղում, էջ 43:

Հայոց լեզվի մաքրության նկատմամբ նախանձախնդիր գիտնականը մեծ սիրով և համբերությամբ քիֆլիսահայ հարսին սովորեցնում է ճիշտ գործածել և արտաբերել բառերը: Առհասարակ նկատելի է՝ Աբեղյանը ուներ հայկական օրինակելի ընտանիքի իր պատկերացումը, որտեղ հատուկ հարգանքի արժանի էին տան մայրը, կինը: Պատահական չէ, որ նա մեծ հոգատարությամբ և ջերմությամբ էր վերաբերվում հարսին, որ ամուսնու ռազմաճակատ մեկնելուց հետո աշխատում և միայնակ մեծացնում էր երեխային: Աբեղյանը՝ իբրև ընտանիքի ավանդապաշտ հայր, խիստ կարևորում է բացակա որդու ընտանիքի ամբողջունը՝ թույլ չտալով որևէ մեկին նեղացնել կամ վիրավորել Մարգարիտային, անգամ եթե դա լիներ իր հարազատ որդին:

Սակայն, երբ վտանգ է սպառնում ավանդական ընտանիքի բարոյական հիմքերին, գիտնական Աբեղյանի մեջ սկսում է խոսել ընտանիքի խստապահանջ հայրը: Բոլորովին այլ վերաբերմունք է դրսևորում նա մյուս հարսի՝ Միերի կնոջ՝ Լուսիկ Թոթովենցի նկատմամբ: «Պապս չի ներում և չի ընդունում այդ ամուսնությունը,- գրում է Հասմիկ Աբեղյանը:- Հարգանքը Թոթովենց գրողի և անձնավորության նկատմամբ թույլ չի տալիս օրինապաշտ մարդուն համակերպվել այդ միության հետ, և մինչև վերջ Լուսիկին անվանում էր «Թոթովենցի կին»»⁶: Աբեղյանի որոշմամբ՝ չորսսենյականոց բնակարանը կիսվում է, և գույգերը ապրում և սնվում են առանձին:

Աբեղյանի մարդկային տեսակի ուրիշ կողմի մասին է խոսում մեկ այլ միջադեպ, որ հիշում է Հասմիկ Աբեղյանը Շուշանիկ տատի պատմածից: 1937 թվականի մահասարսուռ օրերից մի օր, երբ մահվան ուրվականը շրջում էր ամենուրեք, Աբեղյանը վերադառնում է տուն, կնոջը հայտնում, որ գրադարանում հավաքել են իր գրքերը և շուտով գալու են իր հետևից: Որոշ ժամանակ անց՝ կեսգիշերին, իսկապես թափում են նրանց դուռը: Պարզվում է, սակայն, որ սև բաճկոնավորները շփոթել են հասցեն. պետք է ծեծելին դիմացի դուռը: Սեփական անձի փրկությունը չի ուրախացնում գիտնականին. հա-

⁶ Նույն տեղում, էջ 55:

մոզված էր՝ ստալինյան զոհեր են դառնալու ուրիշ անմեղները, նրանց մեջ՝ լուսավոր և տաղանդավոր մարդիկ: «Շուշանի՛կ,- ասում է նա կնոջը,- էլի անմեղ մարդու տարան»⁷:

Առհասարակ Աբեղյան գիտնականի մարդասիրությունը նրա մարդկային կարևոր որակներից է: Նույն 1937 թվականի երկրաշարժի օրերին իր շուրջն է բոլորել սարսափած մարդկանց, հարևաններին և հեքիաթներ պատմել նրանց զբաղեցնելու համար:

Հուշագրության մեջ ամենահետաքրքիր և հուզաթաթալ մասը քերևս «Իմ պապիկը՝ առաջին ուսուցիչս» հատվածն է, որտեղ հուշագիր հեղինակը վերափոխվում է փոքրիկ աղջնակի և մանկան պարզ աչքերով ներկայացնում սիրելի պապիկին: Տողերի միջից վեր է հառնում Մանուկ Աբեղյանի դիմանկարը՝ բարի ժպիտը դեմքին, թռնուիտն հեքիաթ պատմելիս, սենյակում կամ պատշգամբում լուռ, մտախոհ շրջելիս, գրասեղանի մոտ աշխատելիս: Բազմաբղետ, երբեմն էլ զվարճալի պատմությունները, աշխույժ երկխոսությունները, մարդկային տարաբնույթ հարաբերությունները նոր գծերով են ներկայացնում Աբեղյանին: Կարգ ու կանոն, ճշտապահություն սիրող պապիկը լավագույն օրինակն էր թռնուիտ համար: Մանկավարժական բացառիկ հմտությամբ ուսուցիչ պապը նկատում էր թռնուիտ վարքագծում նոր-նոր ձևավորվող հատկանիշները՝ տարբեր մեթոդներով ուղղելով անցանկալիները: «Երեխային երբեք թույլ չտաս նմանվել մեծերին. ամեն ինչ լավ է իր ժամանակին»⁸, - ասում էր նա հարսին: «Երեխան չպետք է կամակոր լինի»⁹, - պնդում է մեկ այլ անգամ, բայց և ներողամտորեն ու անհուն բարությանը շարունակում վայելել չարաճճի թռնուիտ ներկայությունը: Բազմազբաղ լինելով հանդերձ՝ Աբեղյան պապիկը սիրով, հոգատարությամբ է վերաբերվում նրան, մեծ պատրաստակամությամբ արձագանքում նրա գրել-կարդալու ցանկությանը: Առաջին ուսուցիչը փոքրիկ Հասմիկին սովորեցնում է հայոց այբուբենը, թվաբանու-

⁷ Նույն տեղում, էջ 184:

⁸ Նույն տեղում, էջ 71:

⁹ Նույն տեղում, էջ 84:

քյուն, ժամացույցից օգտվել, ավելի ուշ՝ հանձնարարում պարապել նաև ռուսերեն և գերմաներեն:

Սեպտեմբերի մեկին, երբ Հասմիկն առաջին անգամ դպրոց է գնում, հավասարակշռված ու խոհուն գիտնականը երեխայի պես հուզվում է՝ ուշադրությամբ որսալով դպրոցից լսվող ձայները, ուրախանում՝ կնոջն ասելով. «Շուշանի՛կ, երեխաները խաղում են, Հասմիկս էլ նրանց հետ է, կարծես լսում եմ ձայնը...»¹⁰:

Հուշագրության մեջ հուզիչ են հատկապես այն էջերը, որտեղ հեղինակը պատմում է ծերացող պապի կյանքի վերջին տարիներին ապրած քախժալի պահերի մասին, երբ նա թոռնուհուն խնդրում էր իր համար արտասանել Թումանյանի «Ամպն ու սարը» ոտանավորը հաճախ նաև իրեն այցելած բարեկամ-ընկերների ներկայությամբ: Հ. Աբեղյանը հիշում է, թե ինչպես այդպիսի մի օր՝ մանուկ թոռան անպաճույճ արտասանությունը լսելուց հետո, պապը տխուր հոգոցով ասում է Իսահակյանին. «Ավետի՛ք, լավ օրերս անցան, կորան...»¹¹:

Վեց-յոթ տարեկան աղջնակն այն ժամանակ լավ չէր հասկանում, իհարկե, թե պապն ինչո՞ւ է սիրում Թումանյանի այդ փոքրիկ ոտանավորը կամ ինչո՞ւ Իսահակյանին դիմեց այդ տխուր խոսքերով: Բայց նրա հիշողության մեջ անջնջելի են մնացել ոտանավորը և պապի խոսքերը, և այսօր էլ, երբ առիթ է լինում, հուզմունքով է հիշում այդ պահը՝ հուզելով նաև ունկնդիրներին:

Ջարմանալի մանրամասնությամբ է հիշում թոռնուհին Աբեղյան պապիկի կյանքի վերջին օրը, իրենց հրաժեշտը, հաջորդող սգո օրերը: «Այդ օրվանից պապիկս ինձ համար դարձավ հիշողություն, լավ, բարի երագ, մի սրբություն, որի պատկերը տարիները երբեք չմշուշեցին»¹²:

Հրաժեշտ տալով մանկության անմոռաց օրերին՝ հուշագիրը գրքի տարբեր էջերում ամենատարբեր առիթներով դարձյալ հիշում է մեծանուն պապին՝ ավելի հաճախ որպես հետազոտող գիտնա-

¹⁰ Նույն տեղում, էջ 82:

¹¹ Նույն տեղում, էջ 84:

¹² Նույն տեղում, էջ 86:

կանի, հիշեցնում անվանի ժամանակակիցների՝ Հ. Աճառյանի, Մ. Սարյանի, Ա. Իսահակյանի, Գ. Սևակի, Մ. Մկրյանի և ուրիշների հետ գիտական առնչությունների մասին պատմություններ, գնահատանքի խոսքեր, որոնք տարբեր կողմերից, ուղղակիորեն կամ անուղղակիորեն նորանոր նրբերանգներ են ավելացնում Աբեղյանի մարդկային և գիտական նկարագրին: Ահա, օրինակ, Ա. Ղանալանյանի դիպուկ բնութագիրը. «Աբեղյանը նույն դերն է կատարել հայագիտության մեջ, ինչ դեր որ կատարել են Կոմիտասը՝ երաժշտության և Թումանյանը՝ գրականության մեջ»¹³:

Գիտնական Աբեղյանի բացառիկությունը ընդգծելու համար բոռնոսիում հարկավոր չի եղել մեծ ջանքեր թափել. նա պարզապես սուր դիտողականությամբ կարողանում է ճիշտ տեսլում գտնել ու ներկայացնել անհրաժեշտ վկայությունները: Լավագույն օրինակներից մեկը բաքվեցի ուսանողի՝ 1940 թվականին գրած մամակին Աբեղյանի պատասխանն է: Դավթակ Քերթոլի ազգությամբ առնչվող հարցին ի պատասխան՝ գիտնականը մատնանշում է պատմական անառարկելի փաստեր և մանրամասն տեղեկություններ, որոնք այլևս կասկած չեն թողնում Քերթոլի՝ ազգությամբ հայ լինելու վերաբերյալ: Ընթերցողը մեկ անգամ ևս համոզվում է, որ գործ ունի բազմակողմանի իմացություններով, կոտ տրամաբանությամբ օժտված եզակի գիտնականի հետ:

Հուշագրության մեջ Հասմիկ Աբեղյանը ոչ պատահականորեն բերում է նաև Թորովեցցի՝ Մանուկ Աբեղյանին տված բնութագիրը, որ դիմանկարի բացառիկ օրինակ է՝ զարմանալի խորատեսությամբ: «Մանուկ Աբեղյան. կարծես մի հին բաբելոնացի, որ զարմանալի քմահաճությամբ ցանկացել է զարթնել և ապրել իբրև հայ՝ քսաներորդ դարում... Եթե մենք մի րոպե կասկածեինք նրա ոչ բաբելոնացի լինելուն, բայց պարտավոր ենք անպայման հավատալ, որ նա թև թևի ման է եկել Մովսես Խորենացու հետ, վիճել, հակաճառել նրան, և, թերևս, Խորենացուն երբեմն դեմ է տվել պատին իր երկաթյա տրամաբանությամբ և քաշվելով իր խուցը՝ գրի է առել մտքե-

¹³ Նույն տեղում, էջ 75:

րը երկաթագրերով... Մանուկ Աբեղյանը այն գիտնականներից է, որ պարտադրում է քեզ համոզվել իր ասածին»¹⁴:

Կարծես ամեն ինչ ասված է: Բայց բոռնուիտ հիշողության մեջ Մանուկ Աբեղյան գիտնականի կերպարը մնացել է մի ուրիշ, ոչ պակաս պերճախոս զուգադրությամբ. «Մասիսի վեհության, մեծության մեջ ես տեսնում էի իմ լավ, իմ բարի պապիկին: Նա մնաց իմ կյանքի Մասիս սարը»¹⁵:

Հասմիկ Աբեղյանի՝ «Օրերս ինձ հետ են...» հուշագրությունը օգնում է ընթերցողին շատ կողմերից այլ լույսի տակ տեսնել, ճանաչել Մանուկ Աբեղյանի մարդկային տեսակը, նաև վերաբժնորել նրան՝ իբրև հավասարը չունեցող գիտնականի:

Բանալի բառեր՝ Մանուկ Աբեղյան, հուշագրություն, հայրենասիրություն, մարդասիրություն, առաջին ուսուցիչ, անկրկնելի անհատականություն, մեծանուն գիրնակալ:

ЕВА МНАЦАКАНЯН – Образ Манука Абегяна по мемуарам Абегян Асмик «На днях со мной...» – Научные заслуги Манука Абегяна уже давно занимают прочное место в истории армянской культуры. Мемуары внушки ученого «На днях со мной...» по-другому раскрывают образ великого армениста, рассказывают о его общении в семейном кругу, в кругу знакомых и друзей. В них описываются стороны повседневной жизни ученого, меньше всего известные поколениям. В мемуарах Абегян Асмик человеческая личность ее деда предстает в первую очередь в воспоминаниях шести-семилетней девочки, которые никогда не сотрутся из человеческой памяти. Для автора мемуаров документальным доказательством ее воспоминаний являются также воспоминания членов семьи, уместное и надлежащее использование которых раскрывает более полный образ ученого как человека.

Со страниц книги возрождаются в памяти давно ушедшие любимые и родные, известные и неизвестные лица, интересные, веселые и печальные истории. Однако из разноцветной палитры этих эпизодов выделяется дедушка Абегян, человек, ученый, обаяние и величие которого постоянно присутствуют в воспоминаниях внушки.

¹⁴ Նույն տեղում, էջ 318-319:

¹⁵ Նույն տեղում, էջ 86:

Ключевые слова: *Манук Абебян, мемуары, патриотизм, гуманизм, первый учитель, неповторимая личность, великий ученый.*

EVA MNATSAKANYAN –Manuak Abeghyan’s image in the memorandum “My days are with me” by Hasmik Abeghyan. – The scientific heritage that Manuk Abeghyan left has its constant and irreplaceable place in the history of Armenian culture. The memorandum by the scientist’s granddaughter Hasmik Abeghyan presents the scientist’s human characteristics in family, friendship and in daily life relationships in general: something little known by the generations. This unknown person-identity is presented in the memorandum of Hasmik Abeghyan first of all through the eyes and child impressions of a six-seven years old girl, which never vanish from the human memory. The author presents documentation of memories on family members, the appropriate use of which makes the image of the scientist more complete.

The book breathes life into favorite, famous and sometimes unknown people, with their happy and sad stories. In the colorful background of these scenes, however, the image of Abeghyan, a grandfather, a person, a scientist stands apart, without losing its eternal presence, attraction and greatness in his granddaughter’s memory.

Keywords: *Manuk Abeghyan, memorandum, patriotism, humanism, first teacher, irreplaceable identity, great scientist.*

**ՀՈԼՈՎԱԿԱՆ ԶՈՒԳԱԶԵՎՈՒԹՅԱՄԲ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ
ԻՄԱՍՏԱԿԻՐԱՌԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Քերականական գուգահեռ ձևեր կարող են լինել տարբեր համակարգերում: Ժամանակակից հայերենի գոյականի հոլովական համակարգին ևս բնորոշ են մի շարք գուգաձևություններ: Հոլովական գուգաձևություններ եղել են նաև գրաբարում և միջին հայերենում: Քերականական տարբեր համակարգերում գուգաձևությունների առկայությունը կարող է տարբեր պատճառներ ունենալ: Մ. Ասատրյանը, քննելով ժամանակակից արևելահայերենի հոլովական համակարգը, նշում է հետևյալը. «Զուգաձևությունների առկայությունը բացատրվում է՝ ա) ժամանակակից հայերենի ընդհանրական հոլովման՝ *Ի* հոլովման գերիշխող դիրքով, նրա՝ մյուս հոլովումների մի զգալի մասին փոխարինելու կարողությամբ, բ) ձևային, իմաստային և ձևաիմաստային հոլովումների փոխներգործություններով, գ) ժամանակակից հայերենի հոլովական ձևերին գուգահեռ գրաբարյան հոլովական ձևերի առկայությամբ, այսինքն՝ պատմական գործոններով (պատմական հոլովումների առկայությամբ)»¹: Եթե նկատի ունենանք, որ լեզվում սովորաբար գործում է խնայման օրենքը, այսինքն՝ լեզուն ազատվում է ոչ անհրաժեշտ տարրերից, ապա պետք է ենթադրենք, որ գոյություն ունեցող գուգահեռ ձևերը իրարից պետք է տարբերվեն և որոշ կիրառություններում փոխադարձ փոխարինելի չլինեն: Իրոք, հոլովական համակարգում եղած գուգաձևությունները իրարից տարբերվում են ոճական, կիրառական, իմաստաբերականական տարբեր հատկանիշներով: Սրանցից թերևս ամենից շատ ուշադրության են արժանացել ոճական, կի-

¹ Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու: Ձևաբանություն, Եր., 2002, էջ 85:

բառական տարբերությունները: Այսինքն՝ գոյություն ունեցող գուգահեռ ձևերից մեկը համարվում է հնացած (հմմտ.՝ *Ասործու-Ասործո*), խոսակցական (հմմտ.՝ *լեզրի-լեզոր*), որոշակի կայուն կապակցություններում գործածվող (հմմտ.՝ *պարվի հարց – պարվո պահակ*) և այլն: Անշուշտ, այս դիտարկումները միանգամայն ճիշտ են ներկայացնում գոյականի հոլովական համակարգում եղած գուգաձևությունների ոճական, կիրառական տարբերությունները: Այսինքն՝ շատ դեպքերում գուգաձև տարբերակներից մեկի ընտրությունը պայմանավորված է լինում ոճական կամ կիրառական գործոնով:

Ուսումնասիրողներն անդրադառնում են նաև բառի ունեցած տարբեր իմաստներին և դրա հիման վրա եղած կիրառական տարբերություններին, օրինակ՝ *շաքաթ* բառը որպես օրանուն և որպես յոթնօրյա ժամանակահատվածի անվանում գործածվելիս դրսևորում է հոլովական տարբերություններ²:

Պետք է նշել, որ կան նաև մասնավոր կիրառություններ, որոնցում միշտ գործածվում է որոշակի հոլովում: Դրանք հիմնականում կայունացած արտահայտություններ են: Օրինակ՝ *օր* բառը, որը կարող է հոլովվել ինչպես *վա*, այնպես էլ *ի* հոլովմամբ, հանգման խնդրի պաշտոնում կարող է երկու ձևով էլ գործածվել, ինչպես՝ *Նա չգիրում էր այդ օրվան*: *Նա չգիրում էր այդ օրին*: Իհարկե, ավելի տարածված են *վա* հոլովմամբ ձևերը: Բայց *Լավ օրի է հասել* նախադասության մեջ գործածված *օրի հասել* կապակցությունում միշտ գործածվում է *ի* հոլովմամբ ձևը: Սակայն այս դեպքերը, ինչպես ասվեց, կոնկրետ կիրառություններ են, իսկ ընդհանուր առմամբ շարահյուսական մույն պաշտոնում (այս դեպքում՝ հանգման խնդրի) հնարավոր է նաև *վա* հոլովմամբ կիրառությունը:

Մենք ցանկանում ենք այստեղ առաջին հերթին անդրադառնալ հոլովական գուգաձևություն ունեցող գոյականների շարահյուսական այն կիրառություններին, որոնցում, անկախ իմաստային կամ ոճական առանձնահատկություններից, գործում է գոյություն ունե-

² Տե՛ս Աբրահամյան Ս., Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981, էջ 156:

ցող գուգաձև տարբերակներից միայն մեկը: Այսինքն՝ դեր է խաղում միայն շարահյուսական պաշտոնը: Այս երևույթը բնորոշ է հիմնականում տրական հոլովով արտահայտվող կիրառություններին: Կանդրադառնանք նաև բառիմաստի խաղացած դերին:

Հայտնի է, որ *վա* հոլովումը իմաստային է. այս հոլովմամբ են հոլովվում ժամանակ ցույց տվող մի շարք բառեր՝ *ժամ, օր, ամիս, տարի, շաբաթ, ժամանակ, գիշեր, առավոտ* և այլն: Սրանք կարող են ենթարկվել նաև *ի* հոլովման: Տարբեր հոլովներով մի շարք կիրառություններում երկուսի գործածությունն էլ հնարավոր է, ինչպես՝ *մեկ ժամվա ընթացքում // մեկ ժամի ընթացքում*: Նման կիրառությունները իրարից տարբերվում են ոճականորեն, կիրառության հաճախականությամբ և այլն: Սակայն կա շարահյուսական մեկ պաշտոն, որում գործածվելու դեպքում վերը նշված ժամանակ ցույց տվող բառերը հոլովվում են միայն *ի* հոլովմամբ: Այսինքն՝ այդ դեպքում գուգաձևություն չի դրսևորվում, հետևաբար ոճական առումով ընտրության հնարավորություն չի լինում: Այդ կիրառությունը առնչվում է ժամանակային իմաստ արտահայտող հիմնական պաշտոնին՝ ժամանակի պարագային: Թեև *վա* հոլովման բնորոշման ու առանձնացման մեջ կարևորվում է հենց ժամանակային իմաստը, սակայն տրական հոլովով ձևավորվող ժամանակի պարագայի դեպքում գործածվում են միայն *ի* հոլովմամբ տարբերակները, ինչպես՝ *Գիշերվա այդ ուշ ժամին փողոցում ոչ ոք չկար: Նա կվերադառնա սեպտեմբեր ամսին: Երիտ ժամանակին վերադարձավ*: Այս դեպքում, ինչպես տեսնում ենք, կարևորվում է շարահյուսական գործառույթը, այսինքն՝ ժամանակ ցույց տվող մի շարք բառերով արտահայտված ժամանակի պարագան, որը ձևավորվում է այդ բառերի տրական հոլովով, արտահայտվում է գոյություն ունեցող գուգաձև տարբերակներից միայն մեկով:

Հավելենք, որ ժամանակ ցույց տվող որոշ բառեր ժամանակի պարագայի պաշտոնում տրական հոլովով չեն գործածվում: Այսպես՝ *տարի* բառը այս կիրառությունում դրվում է ներգոյական հոլովով, ինչպես՝ *Վերադարձավ այդ տարում*: *Առավոտ* գոյականի փոխարեն այդ կիրառությամբ գործածվում է *առավոտյան* մակբայը,

ինչպես՝ *Վերադարձավ առավոտյան*: Հայտնի է, որ *շաբաթ* բառը գործածվում է որպես յոթնօրյա ժամանակահատվածի և այդ հատվածի 6-րդ օրվա իմաստներով: *Շաբաթ* բառը յոթօրյա ժամանակահատված իմաստով նշված պաշտոնում գործածվում է ներգոյական հոլովով՝ *Վերադարձավ արշակուրդի երկրորդ շաբաթում*, իսկ որպես օրանուն՝ այդ պաշտոնում սովորաբար առանձին չի գործածվում, այլ հանդես է գալիս որպես *օր* բառի որոշիչ՝ *Վերադարձավ շաբաթ օրը*:

Վերը նշված օրինաչափությունները հիմնականում պահպանվում են մաս բաղադրյալ այն բառերի դեպքում, որոնցում վերջին բաղադրիչը ժամանակ արտահայտող նշված բառերն են, ինչպես՝ *կեսգիշեր, կեսօր, իրիկնաժամ* և այլն: Օրինակ՝ *Շոգ կեսօրին բա-կում ոչ ոք չկար: Կեսգիշերին պառկեց քնելու: Իրիկնաժամին փչեց մեղմ գեփյուն*:

Ժամանակ ցույց տվող բառերի մի մասը հոլովական գուգաձևու-թյուն է դրսևորում մաս բացառական և գործիական հոլովներում, ինչպես՝ *օրից//օրվանից, օրով//օրվանով* և այլն: Եթե ժամանակ ցույց տվող բառը փոխանուն է, պարտադիր գործածվում են երկ-րորդ ձևերը, ինչպես՝ *Մեկ օրում բավականին գունար վաստակեց և այդ օրվանով (այդ օրվա վաստակածով) կարողացավ մի քանի օր սպրել*:

Հոլովման ընտրության հարցում կարևորվում է մաս իմաստային գործոնը: Որպես յոթնօրյա ժամանակահատվածի անվանում՝ *շա-բաթ* բառը հոլովվում է *վա* հոլովմամբ, ինչպես՝ *Շաբաթվա վերջին կմեկնի*: Իսկ որպես օրանուն՝ հոլովվում է *ի*-ով (*Երկուշաբթի օրվա-նից անհամբեր սպասում էր շաբաթին*), թեև մեծ մասամբ գործած-վում է *շաբաթ օրվա* կապակցությունը: *Տարի* բառն էլ իմաստային տարբերակներ ունի՝ 365 օրից բաղկացած ժամանակահատված և մահվան տարելից: Երկրորդ իմաստով գործածվելիս ենթարկվում է *ի* հոլովման:

Անկյուն բառը կարող է հոլովվել ինչպես *ա* ներքին հոլովմամբ, այնպես էլ *ի* արտաքին հոլովմամբ: Այս դեպքում էլ կարևորվում է իմաստային գործոնը: Եթե *անկյուն* բառը գործածվում է առարկայի

երկու ներքին կողմերի կցման տեղի իմաստով, ապա հոլովվում է *ի* հոլովմամբ, օրինակ՝ *Մոսկեցավ սենյակի անկյունին*: Որպես երկրաչափական տերմին գործածվելիս *անկյուն* բառը ենթարկվում է *ա* ներքին հոլովման, օրինակ՝ *անկյան աստիճանը*:

Քրոջ // *քույրի* զուգաձևերի գործածությունն էլ պայմանավորված է իմաստային գործոնով. *ի* հոլովմամբ ձևերը կիրառվում են միայն *քույր* բառի՝ *բուժքույր* իմաստով գործածության դեպքում:

Նշվածներից բացի՝ կան շատ այլ դեպքեր, երբ կիրառվում է զուգաձև տարբերակներից միայն մեկը (օրինակ՝ *մահու չափ*), սակայն դրանք պայմանավորված են կոնկրետ կապակցությունների իմաստներով, այլ ոչ թե շարահյուսական պաշտոնով, ուստի այլ կապակցության մեջ շարահյուսական միևնույն պաշտոնով միևնույն բառը կարող է գործածվել հոլովական մյուս տարբերակով: Մենք փորձեցինք անդրադառնալ միայն այն դեպքերին, երբ զուգաձևության կիրառությունը սահմանափակվում է շարահյուսական գործառնությամբ կամ պայմանավորված է բառիմաստի տարբերակմամբ:

Քանակի բառեր՝ կայուն բառակապակցություն, ժամանակ ցույց տվող բառեր, գոյական անուն, հոլով, ժամանակակից հայերեն, խոսակցական լեզու, ուղղական հոլով, քերականական համալարգ, զուգահեռ ձևեր, հոլովական զուգաձևություն:

ВИКТОРИЯ МУРАДЯН – Смысловые различия, выраженные в падежных парадигмах современного восточноармянского языка. – Грамматические парадигмы есть в разных языках. Парадигма в грамматических системах может возникать по различным причинам. Существующие в падежной системе парадигмы отличаются друг от друга стилистически, смысловыми и грамматическими признаками, сферой использования. Исследователи обращаются и к различным значениям слова, и к основанным на них различиях. В данной статье мы в первую очередь обращаемся к падежной парадигме, в которой независимо от смысловых и стилистических особенностей действует одна из существующих форм.

Ключевые слова: *регулярные /устойчивые/ словосочетания, слова, выражающие категорию времени, существительные, падежи, современный армянский язык, разговорный язык, именительный падеж, грамматическая система, параллельные формы, падежные парадигмы.*

VIKTORYA MURADYAN - Different Usage of Noun Case Parallel Forms in Modern Armenian. – There are grammatical parallel forms in different systems. The being of ghosting in different grammatical systems can have different causes. In animated system ghostings differ from each other in different stylistic, applied and grammatical features. The examiners return to the different meaning of the word and applied difference based on it. Here first of all we return to such applications of animated ghosting syntactic noun in which, beside meaning and stylistic features from existing parallel differences is used only one.

Keywords: *regular expressions, time expressions, nouns, dialects, modern Armenian, spoken language, straight forward, grammatical system, parallel forms, animated ghosting.*

ԳՐԱԲԱՐԻ ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԸՍՏ Մ. ԱՐԵՂՅԱՆԻ

Մ. Արեղյանը գրաբարի բայական համակարգի համակողմանի քննություն է կատարում գրաբարի դասագրքերում, «Գրաբարի համառոտ քերականություն» (Վաղարշապատ, 1907) և «Գրաբարի քերականություն» (Երևան, 1936) աշխատություններում: «Գրաբարի դասագիրք»-ը առաջին (Թիֆլիզ, 1915) և երկրորդ (Թիֆլիս, 1916) գրքերից է կազմված: Գրաբարի դասագրքերում հեղինակը դիմավոր բայի 3 եղանակ է տարբերակում.

1. Սահմանական, որն ունի երեք ժամանակ՝ ներկա, անցյալ անկատար և անցյալ կատարյալ:

2. Ստորադասական, որն ունի առաջին և երկրորդ ապառնի ժամանակներ:

3. Հրամայական եղանակ, որն ունի ներկա, առաջին և երկրորդ ապառնի ժամանակներ:

Բայափիմքը Մ. Արեղյանն անվանում է *բուն* և տարբերակում է ներկայի կամ անկատարի հիմք, «որ է անորոշ դերբայը առանց լ վերջավորութեան կամ սահմ. ներկայի եզակի 1-ին դեմքը՝ առանց մ վերջավորութեան՝ խաղա-լ, գրե-լ, խօսի-լ, առնու-լ»¹:

Ա, ե, ի, ու ձայնավորներն անվանում է լծորդ ձայնավորներ:

Անկատարի բնից կազմվում են սահմանական եղանակի ներկան, անցյալ անկատարը, ստորադասական եղանակի առաջին ապառնին, հրամայական եղանակի ապառնի **Ա**, արգելական ներկա ժամանակները, դերբայներից անորոշը և ապառնին: Հրամայական եղանակի ապառնի **Ա** ժամանակաձևի տակ Մ. Արեղյանը դնում է հետևյալ նմուշները՝ գնայջիր-գնայջիք, ասիջիր-ասիջիք, լինիջիր-լինիջիք: **Ու** լծորդության բայերը չունեն այս ժամանակաձևը: Ըստ էության, այս ձևերը հեղինակը սկզբունքորեն որակում է իբրև

¹ **Արեղյան Մ.**, Գրաբարի դասագիրք, գիրք առաջին, Թիֆլիզ, 1915, էջ 97:

հրամայականի բայաձևեր, որոնք իմաստով համարժեք են բուն հրամայականին, ըղձական և պայմանական ապառնիներին: Սրանք քիչ հանդիպող միավորներ են, որոնք՝ իբրև հրամայականի կառույցներ, գրաբարագիտությունը չի արձանագրում, այնինչ Մ. Աբեղյանը դրանք համարում է գրաբարի խոնարհման համակարգի միավորներ, որոնց մասին տեսական մեկնություն չի տալիս, բայց հարացույցում ներկայացնում է՝ նշելով, որ **ու** լծորդության բայերը չունեն այդ ձևերը: Կատարյալի հիմքի (բուն) համար առանձնացնում է **սց(եսց)**-ով և **ոյց**-ով ձևեր, որոնց *ցոյական* անվանումը չի տալիս, և բայարմատին համարժեք ձևեր, որոնց *արմս-յրական* անվանումը չի տալիս: Կատարյալի հիմքի կառույցները ներկայացնում է ներգործակերպ և կրավորակերպ խոնարհման հարացույցներով:

Հրամայական ներկայի տակ հեղինակը ներկայացնում է բուն հրամայականի ձևերը, իսկ ապառնի **Բ**-ի տակ՝ հորդորական հրամայականի ձևերը՝ չօգտագործելով *հորդորական* անվանումը:

Ժխտական խոնարհման **մի** ձևության երեք գործառույթ է զանազանում. 1. մի+սահմանական ներկա, օր.՝ մի՛ գնար, մի՛ գնայք: 2. «Ապառնի ժամանակների հետ կազմում է ապառնի արգելական՝ Մի երդնուցուս սուտ = սուտ չերդուես: Անորոշ դերբայի հետ՝ Ամեննին մի՛ երդնուլ = ամեննին չերդուել կամ ամեննին չպիտի երդուել»²:

Բաղադրյալ ժամանակները կազմվում են **եմ**, **լինիմ** բայերով և ապառնի, անցյալ դերբայներով, ըստ որում, **լինիմ** բայը՝ իբրև օժանդակ բայ, գործածական է միայն անցյալ դերբայի հետ:

Հետաքրքիր է այն իրողությունը, որ անցյալ դերբայով հարացույցներում հարացուցային յուրաքանչյուր միավորի դիմաց գրում է նաև սեռականով ենթակայի ձևերը, օր.՝ *յրեսեալ եմ – իմ յրեսեալ է, յրեսեալ էին – նոցա յրեսեալ էին, յրեսեալ իցեմք – մեր յրեսեալ իցէ* են: Մ. Աբեղյանը «Սեռական ենթակայ» (էջ 113) վերնագրի տակ կանոնարկում է սեռականով ենթակայի կիրառությունը. հարացույ-

² Աբեղյան Մ., Գրաբարի դասագիրք, առաջին գիրք, էջ 117:

ցում նրանց ընդգրկումը վկայում է գրաբարում սեռականով ենթակայի կիրառության հաճախականության մասին, ինչը և հիմք է դառնում լեզվաբանի համար այն ներառելու հարացույցում՝ համարժեք միավորներով. այն ունի ուսուցողական նպատակ: Հարկադրական եղանակի իմաստի համար Մ. Աբեղյանը ներկայացնում է «պարտ է, պիտոյ է, արժան է, հարկ է + անորոշ դերբայ + տրականով ենթակա» (էջ 119) կառույցը: Անկանոն բայերի ցանկում Մ. Աբեղյանը ներկայացնում է և՛ հիմքականության (ասել, գիտել, կարել, մարթել ևն), և՛ խոնարհման անկանոնություններ ներկայացնող բայերը (օր.՝ *երթալ – չոգայ, ուրել – կերայ* ևն):

«Բայի ժամանակների նշանակությունը» վերնագրով մասում Մ. Աբեղյանը անդրադառնում է սահմանական ներկա և անցյալ ժամանակների՝ երկրորդական նշանակություններով կիրառությանը՝ իբրև ըղձական և պայմանական ապառնու միավորների:

«Գրաբարի դասագրքի» երկրորդ գրքում՝ «Բայի ժամանակների գործածությունը» վերնագրի տակ, անդրադառնում է նաև անցյալ անկատարի բայաձևերի կիրառությանը՝ իբրև պատմական ժամանակի, որի «փոխանակ աշխարհաբարում բանում է սահմանական ներկան կամ անց. կատարեալը, օրինակ՝ *իբրև գայն լսէր* (= լսեց կամ լսում է)»³: Հաջորդ կարևոր դիտարկումը վերաբերում է ստորադասական ապառնի **Ա** և **Բ** ժամանակների չսահմանազատված կիրառությանը: Չնայած, ըստ կազմության, նրանք պիտի տևական և ոչ տևական գործողություն ցույց տային, քանի որ կազմվում են տարբեր հիմքերից, «բայց դրանց այս տարբերությունը հնագույն մատենագիրների մեջ անգամ արդեն շփոթուած է, և այս երկու ժամանակները մեծ մասամբ նոյն նշանակությւնն ու գործածութիւնն ունին»⁴:

Մ. Աբեղյանը ժամանակների գործածության երկու կարևոր հատկանշի մասին է խոսում, որոնք գրաբարով մատենագրության մեջ տարածված են և ունեն ոճական կարևոր արժեք: Դրանք են.

³ **Աբեղյան Մ.**, Գրաբարի դասագիրք, երկրորդ գիրք, Թիֆլիս, 1916, էջ 135:

⁴ Նույն տեղում, էջ 136:

1. «**Եւ, լինիմ** բայերի եզակի 3-րդ դեմքի ձևերի գործածությունը անորոշ դերբայի հետ. համեմատենք՝

Ինձ լիցի ամենայն հնազանդութեամբ պաշտել զԱստուած արա-
րիչ (փոխ.՝ պաշտեցից = ես պիտի պաշտեմ)»⁵: Սրանք բարձր ոճի
կառույցներ են և ունեն մտքի ընդգծման կարևորություն:

2. Պարզ ժամանակների փոխարեն բաղադրյալ կառույցների
գործածությունը ոճավորման կարևոր միջոց է գրաբարյան մատե-
նագրության համար. համեմատենք՝ «Եւ յետ մարտին յաղթութեան
քաջութեանցն, զոր արար, դարձեալ լինէր (փոխանակ՝ դառնայր) ի
կողմանցն Յունաց Տրդատ արքայ Հայոց»:

Ելնելով դասագրքի պահանջներից՝ Մ. Աբեղյանը մանրամաս-
նում է ժամանակաձևերի գործածությունները, ինչը կարևորում է
բնագրային այն հատվածների ճշգրիտ թարգմանության համար, որ
տեղ են գտել դասագրքում: Այս իմաստով առանձին նշանակություն
են ստանում «Շարահյուսութիւն» բաժնում տեղ գտած դիտարկում-
ները, որոնք երկրորդ գրքում ավելի մանրամասնված են: Կարևոր-
վում են նաև «**որ** հարաբերական դերանվան և յօդերի գործածու-
թիւնները», որոնք ոչ միայն շարահյուսական կարևորություն ունեն,
այլև ոճական: Շարահյուսությունը դասագրքի երկրորդ գրքում
ավելի մանրամասնված է, ինչը ուղղված է թարգմանական հմտու-
թյունների մշակմանը դպրոցներում:

Դիմավոր բայի համար Մ. Աբեղյանը «Գրաբարի համառօտ քե-
րականութիւն» աշխատության մեջ առանձնացնում է երկու եղա-
նակ՝ սահմանական և հրամայական: «Գրաբարի քերականութիւն»
վերնագրով վերահիստարակության մեջ ստորադասական եղանա-
կը առանձնացնում է սահմանականից և բնորոշում իբրև առանձին
եղանակ՝ առաջին և երկրորդ ապառնի ժամանակաձևերով, որոնք
անվանում է ապառնի **Ա** և ապառնի **Բ**:

Հեղինակը բայի անդեմ ձևերի կառուցվածքային մանրակրկիտ
քննություն է կատարում՝ անդրադառնալով բայածանցներին, լծոր-
դիչներին և լծորդություններին, բաղադրյալ ժամանակների կազմու-

⁵ Նույն տեղում, էջ 137: Հաջորդ օրինակը նույնպես բերված է ըստ Մ. Աբեղյանի:

քյան մեջ անցյալ և ապառնի դերբայների մասնակցությամբ, անորոշ և անցյալ դերբայների հոլովմամբ, ուստի մաս նրանց՝ անվանական հատկանիշներով կիրառություններին:

Մ. Աբեղյանը բայական համակարգի միավորներ է համարում անորոշ դերբայի գործածությունները եղանակիչ կամ միադիմի բայերի հետ, որոնք արտահայտում են պայմանական (օր.՝ *Հնար է ինձ ուսանել*) և հարկադրական (օր.՝ *Պիտոյ է ինձ ուսանել*) եղանակների իմաստներ:

Ստորադասական եղանակի բայաձևերը, բազմիմաստ լինելով, հայ քերականագիտության մեջ միակերպ չեն բնորոշվել. ըստ որոշ քերականների՝ նրանք բնորոշվել են իբրև սահմանական եղանակի միավորներ⁶: Օրինակ՝ Մ. Ղազարյանը «Գրաբարի դասագրքում» այն դնում է սահմանականի մեջ, իսկ «Հայոց լեզվի համառոտ պատմության» մեջ՝ ստորադասականի մեջ⁷:

Մ. Աբեղյանը «Գրաբարի համառոտ քերականութուն» աշխատության մեջ, ստորադասական եղանակի բայաձևերը դնելով սահմանական եղանակի մեջ, ծանոթությամբ նշում է, որ որոշ քերականներ դրանք անվանում են ստորադասական եղանակի միավորներ: Իր մյուս աշխատություններում հեղինակը դրանք հանել է սահմանականի կազմից:

Դասական գրաբարի քերականության առանցքային բաժինը բայական համակարգն է, որի մանրակրկիտ վերլուծությունը մեծաճանաչ գիտնականի՝ գրաբարին նվիրված աշխատություններում պատահական չէ: Մ. Աբեղյանը ունի այն ճշգրիտ մոտեցումը, որ բայը հայերենի գլխավոր խոսքակազմիչ միավորն է: Անկախ նրանից, որ եղանակաժամանակային հարացույցների վերլուծության իր մեկնաբանություններում հեղինակը գրաբարի բայի եղանակների թվի փոփոխություններ է կատարում, այնուամենայնիվ, բայական հա-

⁶ Մանրամասն տե՛ս **Ավետիսյան Հ.**, «Գրաբարի ստորադասական եղանակը և նրա ըմբռնումը հայ քերականության պատմության մեջ», Բանբեր Երևանի համալսարանի, հ. 1, Եր., 1985, էջ 199-204:

⁷ Տե՛ս **Ղազարյան Ս.**, Գրաբարի դասագիրք, Եր., 1951, էջ 66, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 1981, էջ 111-115:

մակարգը ձևաբանական, շարահյուսական մակարդակներում ամբողջական և մանրագնին քննության է ենթարկված նրա բոլոր աշխատություններում. մասնավորապես «Գրաբարի դասագրքի» երկու գրքերում էլ հեղինակը գրաբարի բայի կառուցվածքային, ձևաբանական և գործառական մանրակրկիտ վերլուծություն է կատարում: Արժեքավոր են նրա դիտարկումները բայաձևերի գլխավոր և երկրորդական քերականական իմաստներով գործածությունների մասին:

Դրանց մանրամասնումը ևս պատահական չէ. դասագրքում հեղինակը ընդգրկել է բնագրային տարբեր հատվածներ, որոնց ճշգրիտ թարգմանության համար կարևոր է ոչ միայն բառապաշարի իմացությունը, այլև քերականության յուրաքանչյուր միավորի, մասնավորապես բայաձևի իմաստի ճիշտ և տեղին ընկալումը:

Բանալի բառեր՝ *գրաբարագետ, դիմավոր բայ, խոնարհում, հրամայական եղանակ, ներկայի հիմք, բայի ոճական գործածություն, բաղադրյալ և պարզ բայաձևեր, կարարյալի հիմք, ապառնի ժամանակաձևի առանձնահատկություններ, ժխտական խոնարհում*

АНАИТ ЮЗБАШЯН – Глагольная система грабара (классического древнеармянского языка) по М. Абегиану. – М. Абегиан оценивает армянский язык как глаголоцентричный. В своих работах, посвященных грабару, автор подробно представляет особенности глагольной системы классического грабара. Особенно важны его наблюдения по использованию глагольных форм, которые имеют стилистическую ценность для классического грабара. В глагольную систему М. Абегиан включает такие формы глагола, которые не упоминаются в грабароведении.

Ключевые слова: *специалист по древнеармянскому языку, личный глагол, спряжение, императив, основа настоящего, стилистические использования глагола, составные и простые формы глагола, основа совершенного вида, особенности будущего времени, отрицательное спряжение.*

ANAHIT YUZBASHYAN – Verbal system of grabar (Classical Old Armenian language) by M. Abegyan. – Abegyan evaluates the Armenian language as a verbal-centered one, therefore, in his works devoted to grabar, the

author presents in detail the congenialities of the verb system of the classical grabar, his observations on the use of verbal forms that have an important stylistic value for classical grabar, that are especially important. In the verbal system, M. Abegyan includes such forms of verbs that are not mentioned in grabar studies.

Keywords: *specialist of Old Armenian, personal verb, conjugation, imperative, the basis of the present, stylistic uses of the verb, compound and simple forms of the verb, the basis of the perfect species, the features of the future tense, negative conjugation.*

ՇԱՀՎԵՐԳՅԱՆ ԹԵՐԵԶԱ (ՎՊՀ)

ԱՅՎԱԶՅԱՆ ԹԻՐԱ (ՎՊՀ)

մագիստրանտ

ՊԱՐՈ՞ՂԻԱ, ԹԵ՞ ՀԱՐԱՍՈՒԹՅՈՒՆ¹

Գրականության պատմության մեջ հաճախ հանդիպող իրողություններ են այս կամ այն հեղինակի ոճի ընդօրինակումն ու կիրառումը որևէ այլ հեղինակի կողմից կա՛մ տվյալ դարաշրջանում, կա՛մ ավելի ուշ: Գոյություն ունեն «ուրիշի ոճի» ընդօրինակման մի քանի ձևեր՝ պարոդիա, փոփոխակ (վարիացիա) կամ հարասություն, նմանակում, ռճավորում: Սրանցից որևէ մեկի ընտրությունը կախված է ռճավորողի հետապնդած նպատակից: Ընդօրինակման այս տեսակների սահմանազատումը առաջին հերթին կարևորվում է հասկանալու համար, թե ինչ վերաբերմունք ունի ռճավորող հեղինակը ռճավորման հիմք հանդիսացող հեղինակային ոճի նկատմամբ: Եթե պարոդիան այս կամ այն հեղինակին բնորոշ առանձնահատկությունների կիրառմամբ հակադիր կամ ծաղրական բովանդակության արտահայտումն է, ապա փոփոխակը՝ վարիացիան, նույն առանձնահատկությունների ընդլայնումն է, փոփոխումը: Ռճավորումը որևէ հեղինակի ոճի վերաստեղծումն է, որ իրականացվում է այդ հեղինակին բնորոշ բառերի, ռճական և այլ հնարքների անմիջական կիրառմամբ, իսկ նմանակումը՝ «ուրիշի ոճի» գիտակցական կամ ոչ նպատակաուղղված յուրացումը: Ընդօրինակման ժամանակ ռճավորողը աշխատում է ամենաքիչը երկու տեքստերի հետ, ուստի երկու հայեցակետով: Մի դեպքում նրա ուշադրության կենտրոնում իր ռճավորվող տեքստն է, և հեղինակը այն փոփոխում, ձևափոխում է՝ այնտեղ ներմուծելով ռճավորման հիմք հանդիսացող


¹ Հարասություն եզրը գործածվել է Մ. Աբեղյանի վկայակոչմամբ և ըմբռնումով (տե՛ս **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Գ, Եր., 1968, էջ 543): Այստեղ նկատի չունենք «Հայերենագիտական բառարան»-ի բացատրությունը (տե՛ս **Պետրոսյան Հ.**, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 373):

հեղինակից նրան պատկանող ոճական իրողություններ, իսկ մյուս դեպքում ոճավորողի ուշադրության կենտրոնում ոճավորման հիմք հանդիսացող հեղինակի տեքստն է, և նա իրեն բնորոշ ոճական տարրերով վերափոխում է այդ տեքստը: Եթե ընդօրինակման տեսակները փորձենք տեղավորել այս երկու տիպերի մեջ, ապա կստանանք հետևյալ պատկերը՝


առաջին տիպ- ոճավորում, պարողիա

երկրորդ տիպ- փոփոխարկում (վարիացիա), մմանակում

Նկ. 1



Նկ. 2



Ոճավորման և պարողիայի դեպքում հեղինակը շեշտադրում է ոճավորվող, իր կողմից ստեղծվող տեքստը: Եթե ոճավորման դեպքում այդ տեքստ է բերում ընտրված հեղինակի ոճական տարրերը, ապա պարողիայի դեպքում դրանց ավելացնում է նաև երգիծանքը (հումոր, սատիրա): Ինչ վերաբերում է վարիացիային ու մմանակմանը, ապա հեղինակի դիտանկյունը փոխվում է, և նա շեշտադրում է ոճավորվող հեղինակի տեքստը, բայց եթե վարիացիայի դեպքում իր ոճական տարրերը տանում է այդ տեքստ, ապա մմանակման դեպքում հեղինակը իրեն հատուկ որևէ բան չի ավելացնում, այլ փորձում է ամեն կերպ իրենը համապատասխանեցնել ընտրված հեղինակի ոճին: Ընդօրինակման տեսակները հաճախ կիրառվում են համատեղ: Սրանցից մեկը հիմք է դառնում մյուսի համար: Այս առումով ամենից ընդգրկույնը պարողիան է: Հանդիպում ենք ոճավորման հիմքով պարողիաներ, մմանակման հիմքով պարողիաներ և պարողիաներ, որոնք առանց սրանց են կառուցվում: Նույնը նաև վարիացիայի դեպքում: Կան և՛ ոճավորման հիմքով վարիացիաներ, և՛ ուղղակի վարիացիաներ:

Հայ իրականության մեջ ոճական ընդօրինակման տեսակներից առանձնապես ուսումնասիրվել է պարողիան: Այն ուսումնասիրվել է

քե՛ գրականագիտական, քե՛ ոճագիտական տեսանկյունից²: Ինչպես նկատելի է, գրեթե բոլոր սահմանումների մեջ ընդհանրական է պարողիայի ենթարկվող հեղինակի լեզվաոճական գծերի օգտագործումը: Եթե պարողիայի հեղինակը օգտվում է ուրիշի նյութից և նրա մեջ դնում ճիշտ հակառակ բովանդակություն, ապա ոճավորման դեպքում գործ ունենք ոչ թե հակադրության հետ, այլ համադրության: Ոճավորող հեղինակը ընդունում է նախորդ հեղինակի ոճը, ավելին՝ այն համարում տվյալ բովանդակության արտահայտման ամենաընդունելի ու ամենատիպիկ տարբերակը: Այսպես՝ Չաբենցը «Տաղարան» շարքը ստեղծելիս դիմել է սիրո անգուգական երգչին՝ Սայաթ-Նովային, ով հայ գրականության մեջ սիրերգության անգերազանցելի վարպետ է (կիրառում է թիֆլիսահայ խոսվածքը, քնարական հերոսուհին դարձյալ գոգալն է, տարածքը՝ Թիֆլիսը): Ոճավորումը կիրառվում է նաև, երբ այս կամ այն հեղինակը բանաստեղծություն է նվիրում մի ուրիշ հեղինակի՝ օգտագոր-

² «Պարողիան հատկապես քնարական ժանր չէ, այն կարող է հանդես գալ նաև պատմողական ժանրերում, սակայն ավելի բնորոշ է լիրիկայի համար: Պարողիայի էությունն այն է, որ հեղինակը, օգտագործելով մի ուրիշ գրողի այս կամ այն երկի գեղարվեստական ձևի գծերը (տաղաչափական կառուցվածք, լեզվին բնորոշ հատկանիշներ), նրանց մեջ հակադրո բովանդակություն է դնում կամ այդ գծերը հասցնում է ծայրահեղության, որպեսզի ընդգծի նրանց թերությունները: Այդ խմաստով՝ պարողիաները իրենց ժամանակի գրական – հասարակական տարբեր ըմբռնումների բախման, պայքարի վկայություններն են»: **Ջրբաշյան Է.**, Գրականության տեսություն, Եր., 1967, էջ 331:

«Չափածո կամ արձակ երգիծական ստեղծագործություն, որը ծաղրում է գրական ուղությունը, ժանրը, գրողի ոճը՝ օգտագործելով ծաղրվող երևույթին բնորոշ լեզվաոճական գծերը: Գոյություն ունի պարողիայի երկու տեսակ՝ հումորիկ և սատիրիկ: Հումորիկը բարյացակամ է, սատիրիկը հակադրվում է օրիգինալին՝ ժխտելով նրա գաղափարական և գեղագիտական էությունը»: **Սանթրյան Մ.**, Գրականագիտական բառարան, Եր., 2009, էջ 200:

«Կա տեքստային կրկնության մի այլ տեսակ, որը բոլորովին այլ ոճական գործառույթ է իրականացնում. խոսքը վերաբերում է պարողիային, ծաղրամանակմանը: Ինչպես հայտնի է, կրկնության այս տարատեսակի դեպքում գրուցակիցներից մեկը ծաղրում է մյուսին՝ օգտվելով վերջինիս իսկ բառից, կրկնելով դրանք՝ որոշակի ձևափոխելուց հետո: Պարողիայի ժամանակ ծաղրամանակողը փորձում է առավելագույն չափով պատճենել ծաղրի օբյեկտ հանդիսացող նախատիպի լեզվի բառային ու շարահյուսական բնութագրական կողմերը՝ դրանք որոշակիորեն հարմարեցնելով իր աշխարհայացքային ըմբռնումներին»: **Շահվերդյան Թ.**, Ոճագիտություն, Եր., 2010, էջ 248:

ծելով վերջինիս կենսագրությունից կամ ստեղծագործությունից հայտնի իրողություններ: Այսպիսի օրինակները շատ են մեր գրականության պատմության մեջ, ընդ որում, հաճախադեպ են մաս արդի գրականության մեջ: Հիշենք Համո Սահյանի բանաստեղծությունները նվիրված Պարույր Սևակին («Պարույր Սևակին»): Արդի գրականության մեջ ընդօրինակման այս տեսակը շատ է կիրառվում Կ. Մելիքսեթյանի կողմից: Նա մմանատիպ բանաստեղծություններ ունի՝ նվիրված տարբեր գրողների («Վիկտոր Հյուգո», «Սիրելի Ավոյին», «Տաղ ըստ Ջիվանու», «Չարենցի հետ», «Նաղաշ Հովնաթան» և այլն): «Սիրելի Ավոյին» բանաստեղծությունը նվիրված է Ավետիք Իսահակյանին և ոճավորված է նրան բնորոշ ստեղծագործական փաստերով.

Նա հավերժական սիրով էր լեցուն՝

Չարոյից մինչև Լիլիթն անվախճան,

Արցունքից էր իր ծաղիկը բացվում

Հոգում իր անեզր ու մեծահանճար,

Մահը իր համար ակնթա՛րթ էր լոկ,

Հայրենիքն՝ անմահ ու կանգուն տաճար:

Երգում էր հրաշք **Ղազարապատից,**

Արագի ափին՝ կողքին՝ մի վրան,

Աչքերի խորքում ո՛ղջ տիեզերքի

Ցավն ու հրճվանքը՝ ճգնվող նռան,

Իսկ մարդկությունը ծեր **Արևելքից**

Մինչև «**Ռ-իսլտո**» լսում էր նրան³:

«Չարենցի հետ» վերնագրված բանաստեղծությունը ստեղծված է Չարենցին բնորոշ ոճական տարրերի կիրառմամբ, իսկ «Արնոտ փետուրն է ճոճվում միրհավի» սկզվածքով երկը՝ Բակունցի: Այսպես՝

Իմ մնացած կյանքի բոլոր օրերը ես կտամ սիրով,

Միայն, Չարենց, հրաշքի պես արթնացի՛ր գեթ մի օրով,

Ֆայտոն մատած՝ Նորքի կանաչ հին թաղերում պտտվեինք

³ Մելիքսեթյան Կ., Հարյուր և մեկ տաղ, Եր., 2001, էջ 8:

Ու Ջանգվի ձորն իջնեինք խումհար, **գուռնա ու դիողով:**

Կարսից եկող մարմանդ քամին մեր մագերի հետ մեղմ խաղար,

Սուրբ Սարգսի կողմից եկող պատարագի անձրև տեղար,

Սուփրան բացվեր, խորովածի հոտը բռներ ձոր ու երկինք⁴:

...Արնոտ փետուրն է ճոճվում միրհավի,

Բայց ում ձեռքերին հանկարծ իջնի նա,

Խփված միրհավն այն հրաշքով նորից

Իր հավերժական քնի՛ց կարթնանա:

Օդում փետու՛րն է դողում միրհավի,

Ո՞ւմ վրա կընկնի հարության բոթով⁵...

Չնայած պարողիայի և ոճավորման միջև եղած տարբերությանը՝ պիտի նկատել, սակայն, որ երկուսն էլ նույն սկզբունքով են կառուցվում, այսինքն՝ երկու դեպքում էլ ոճավորողը իր ստեղծագործությունն է ներմուծում ոճական օտար տարրեր, միայն թե պարողիայի դեպքում դրանց մեջ դնում է հակադիր, երգիծական բովանդակություն՝ համապատասխանեցնելով սեփական նպատակներին: Օրինակ՝ Մ. Նալբանդյանը Ռ. Պատկանյանի «Վարդանի երգ»-ի առթիվ գրեց «Մամիկոնյան մեծ Վահանի պատասխանը» պարողիան՝ պահպանելով հնչերանգը և կիրառելով վերջինիս ոճական առանձնահատկությունները՝ հինգ տողանի տուն և մեկ կիսատող, բայց փոխում է և «Հիմի՞ էլ լռենք» բառերի փոխարեն դնում է «Հիմի՞ էլ խոսենք», կամ Հովի. Թումանյանը պարողիա է գրում Հովի. Հովհաննիսյանի «Իմ հայրենիքը տեսե՛լ ես, ասա՛...» բանաստեղծության առնչությամբ, որտեղ պահպանում է ամբողջական տողեր, բայց նրա հովվերգական պատկերացումներին հակադրում է գյուղի իրական վիճակի թշվառ պատկերը⁶: Կարելի է եզրակացնել, որ պարողիան կարող է հիմնված լինել ոճավորման վրա՝ գումարած երգիծանքը: Այսպես՝

Տեսե՞լ ես արդյոք այն բլուրները,

Ուր ճոխ ծաղկում է մշտական գարուն,

⁴ Նույն տեղում, էջ 39:

⁵ Նույն տեղում, էջ 234:

⁶ Տե՛ս նաև **Շահվերդյան Թ.**, Ոճագիտություն, Եր., 2010, էջ 249:

Կանաչում քաղված այն այգիները,
Ուր իբրև գոհար խաղողն է հասնում⁷:
(Հովհ. Հովհաննիսյան)

**Տեսե՞լ ես արդյոք այն բլուրները,
Ուր ճոխ ծաղկում է մշտական գարուն,**
Ուր թալանում են մերոնք և այլերը,
Ուր հոսում է միշտ արցունք և արյուն⁸:
(Հովհ. Թումանյան)

Ոճավորման հետ սերտորեն կապված է մմանակումը: Անդրա-
դառնալով սրանց միջև եղած տարբերություններին՝ Մ. Բախտինը
առաջին հերթին կարևորում է հեռավորության (դիստանցիայի) գո-
յությունը: Ըստ հեղինակի՝ ոճը հեղինակային տեսանկյունների և
գնահատականների առկայությունն է, ուստի ոճավորումը հնարա-
վոր է այն դարաշրջանում, երբ այդ հայեցակետերն ու գնահատա-
կանները արդեն անցյալում են կամ երբ պատկանում են այլ մշա-
կույթի: Նմանակումը, ընդհակառակը, հնարավոր է նաև հեռավո-
րության բացակայության ժամանակ: Նմանակումը վերաբաղում
է ուրիշի ոճը՝ դարձնելով այն սեփականը, ոչնչացնելով հեռավորու-
թյունը⁹: Նմանակումը լինում է գիտակցական, երբ հեղինակը գի-
տակցաբար, ներքին հոգեկան համոզմունքով յուրացնում է ուրիշի
ոճը, գրում է ուրիշի ոճով, դառնում նրա հետնորդը: Օրինակ՝ քե՛
Ե. Չարենցը, քե՛, Ն. Չարյանը ստեղծագործության առաջին շրջա-
նում գրում էին տեղյանական ոճով, ձգտում էին մմանվել նրան:
Ահա Չարյանի առաջին շրջանի բանաստեղծություններից մեկը.

Դու չիմացար, որ կյանքիս ծիածանները բոլոր
Հյուսված էին քո սիրուց, շողում էին քեզ համար,
Չկար ոչ ոք աշխարհում, որ իմ հոգու մման խոր
Քո երազները սիրեր և քո հոգին հասկանար¹⁰...

⁷ [https:// hy wikipedia.org](https://hy.wikipedia.org).

⁸ Նույն տեղում:

⁹ Տես **Тамарченко Н.**, Теория литературы, т.1, Москва, 2004, էջ 465:

¹⁰ **Չարյան Ն.**, Բանաստեղծություններ և պոեմներ, հ. 1, Եր., 1984, էջ 210:

Երբեմն պարողիայի հիմքում ոչ թե ոճավորումն է, այլ նմանակումը: Այս դեպքում հեղինակը նմանակում է տվյալ հեղինակի ոճը երգիծելու նպատակով: Այսպիսի օրինակ ենք գտնում Խ. Մանուկյանի ստեղծագործության մեջ: «Թաց ու չորով» շարքում հեղինակը ներկայացնում է «Ավլեն, թափեն փոշին...» երգը ժամանակակից գրողների (Հովհ. Գրիգորյան, Արմեն Շեկոյան, Դավիթ Հովհաննես, Հրաչյա Սարուխան, Արտեմ Հարությունյան, Արմեն Մարտիրոսյան, Հենրիկ Էդոյան, Վիտենտ Գրիգորյան, Մարինե Պետրոսյան, Մետաքսե, Էդվարդ Հախվերդյան, Ներսես Աթաբեկյան, Ղուկաս Սիրունյան, Էդվարդ Միլիտոնյան, Աշոտ Խաչատրյան, Արմեն Դավթյան, Աղվան Վարդանյան, Հրաչյա Թամրազյան, Նարինե Ավետյան) երգերի ոճով, որոնք երկակի բնույթ ունեն. և՛ պարողիա են, և՛ վարիացիա («Ավլեն-թափեն փոշին» երգի փոփոխակներն են): Բերենք երկու օրինակ, թե ըստ Խ. Մանուկյանի, ինչպես կգրեն նվագախմբի երգը Հովհ. Գրիգորյանը և Մետաքսեն:

Ըստ Խաչիկ Մանուկյանի՝ այսպես կգրեր Հովհաննես Գրիգորյանը.

Սիրելի՛ս, այնքան փոքր է մեր հայրենիքը,
Որ ավլում ու չգիտես՝ որտեղ թափես փոշին,
Ստիպված հարևան թշնամի պետության
Գլխին ես շաղ տալիս¹¹:

Ըստ Խ. Մանուկյանի՝ այսպես կգրեր Մետաքսեն.
Երանի՛ քո ձեռքի ավելին,
Ավլում ու թափում ես փոշին,
Բայց չկա մի կարգին տղամարդ,
Որ գա ու խավիլա իմ դռնին¹²:

Ընդօրինակման տեսակներից է նաև փոփոխակը կամ վարիացիան: Հայ իրականության մեջ Մ. Արեղյանը, խոսելով հոգևոր երգերի ձևաբովանդակային առանձնահատկություններից, նշում է հետևյալը. «Հոգևոր բանաստեղծությունը ծագած և զարգացած լինելով Ս. Գրքի օրհնությունների ազդեցության տակ ու նրանց նմա-

¹¹ Մանուկյան Խ., Էն աշխարհը չի, Եր., 2010, էջ 369:

¹² Նույն տեղում, էջ 373:

նողությամբ՝ բանաստեղծական պատկերները, դարձվածներն ու արտահայտության եղանակներն ընդհանրապես Ս. Գրքի բանաստեղծություններից են առնված, և նույնիսկ պատմությունը, որքան կարելի է, Ավետարանի մոտիկ և նրա բառերով է արվում, կամ թե **հարասություն** են անում: Բանաստեղծները բարեպաշտական երկյուղածությամբ չէին համարձակվում շատ հեռանալ Աստվածաշնչի բնագրից»¹³: Երևույթի՝ արեղյանական այս մեկնաբանությունը անվանվել է **հարասություն**. այն գրականության մեջ հայտնի է **վա-րիացիա** եզրույթով: Այս դեպքում հեղինակը «ուրիշի» նյութը ազատ կերպով ընդլայնում է, փոփոխում ու հարստացնում սեփական ոճի տարրերով: Մի դեպքում նույն թեման է արտահայտման այլ ձև գտնում, մի այլ դեպքում տվյալ հեղինակի լեզվանյութն ու պատկերային համակարգն են կիրառվում որևէ այլ թեմա, գաղափար արտահայտելու համար: Հովհ. Թումանյանի, Չարենցի, Զահրատի ստեղծագործությունների մեջ կան այնպիսիները, որոնք արևելյան պոեզիայի այս կամ այն բանաստեղծի ստեղծագործություններից մեկի փոփոխակն են: Այսպես՝ Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության վերջին քառատողը Հաֆեզի քառյակներից մեկի փոփոխարկումն է.

Ե. Չարենց՝

Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ **չկա**.

Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ **չկա**.

Աշխարհի անցի՛ր, Արարատի նման ճերմակ գագաթ **չկա**.

Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում¹⁴:

Հաֆեզ՝

Իմ յարի պես քաղցրալեզու, նազիկ ու հեզ յար **չկա**,

Վերջ **չկա** իմ սրտի բոցին, ա՛խ նրա պես յար **չկա**,

Բերանը՝ փոքր, մարմինն՝ արծաթ, թևերը՝ լույս, դեմքը՝ լալ,

Աշխարհի անցի՛ր, իմ յարի պես գեղեցկատես յար **չկա**¹⁵:

¹³ Արեղյան Մ., նշվ. աշխ., էջ 543:

¹⁴ Չարենց Ե., Պոեմներ, բանաստեղծություններ, Եր., 1984, էջ 289:

Օմար Խայամի քառյակներից մեկի թեման ու պատկերային համակարգը փոփոխարկվել են Ջահրատի կողմից.

Օմար Խայամ՝

Հոգի՛ս, ես ու դու կարկինի ենք նման,
Երկու գլուխ, բայց մի մարմին անբաժան,
Շրջանաձև գծով պտույտ ենք գալիս
Մինչև նորից գլուխներս միանան¹⁵:

Ջահրատ՝

Մէկ ոտքին ես- մէկ ոտքին դուն
Դուն անմատոյց կեղդոն լոյսի
Ես բոլորտիքը շրջանակ թափառուն....
Սիրոյ կարկին
Մէկ ոտքն անշարժ
Միւսը խեղճով շրջանակ¹⁷:

Վարիացիային շատ է դիմել Հովհ. Թումանյանը քառյակագրության ժամանակ՝ փոփոխարկելով հայտնի քառյակագիրների թեմաները, լեզվանյութը.

Օմար Խայամ՝

Շատերը եղան, որոնց արյունը երկինքը թափեց,
Հողից շատ ծաղիկ բուսավ, ու կրկին ողջ հողը լափեց,
Ջիվանությանը ու գեղով, իմ հոգյակ, գուր մի պարծենալ,
Որքան չբացված կոկոն բացվելու գուր հույսը խաբեց¹⁸...

Հովհ. Թումանյան՝

Կյանքս արի հըրապարակ, ոտքի կոխան ամենքի,
Խափան, խոպան ու անպտուղ, անցավ առանց արդյունքի:
Ինչքա՛ն ծաղիկ պիտի բուսներ, որ չըբուսավ էս հողին...
Ի՛նչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տըվողին¹⁹...

¹⁵ **Հաֆեզ**, Լիլիկա, Եր., 1957, էջ 25:

¹⁶ **Խայամ Օ.**, Քառյակներ, Եր., 1959, էջ 77 :

¹⁷ <http://grapaharan.org>.

¹⁸ **Խայամ Օ.**, նշվ. աշխ., էջ 144:

¹⁹ **Թումանյան Հ.**, Քառյակներ և բալլադներ, Եր., 1987, էջ 34:

Օմար Խայամ՝

Այոքան գուր մի տանջվիր, ուրախ ապրիր,
Խռովահույզ այս ճամփին խաղաղ ապրիր,
Քանի որ այս կյանքը մի շունչ է լոկ,
Ենթադիր, թե չկաս, անկախ ապրիր²⁰:

Հովհ. Թումանյան՝

Հե՛յ ագահ մարդ, հե՛յ անգոհ մարդ, միտքըդ՝ երկար, կյանքըդ՝
կարճ,

Քանի՜ քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ.
Ի՛նչ են տարել նրանք կյանքից, թե ի՛նչ տանես դու քեզ հետ,
Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեդ²¹:

«Տաղի մոգերից մեկը» գրքում Մ. Սանթրոյանը, անդրադառնալով Հր. Սարուխանի երեք քառյակներին, նշում է, որ դրանցից երկուսը քումանյանական քառյակների վարիացիաներն են, իսկ երրորդը՝ վարիացիայի վարիացիա: Թումանյանը գրել է «Խայամն ասավ իր սիրունին...» քառյակը, որը Օ. Խայամի «Մեզանից առաջ օր ու գիշեր է եղել» քառյակի «կանոնիկ վարիացիան է», իսկ Սարուխանի «Աչքս շրջվել, էն աշխարհին է նայում» քառյակը Թումանյանինի վարիացիան է²²: Այսպես՝ ունենք հետևյալ պատկերը.

Օմար Խայամ՝

Մեզանից առաջ էլ գիշեր ցերեկ կար,
Երկինքն իր բանին էր վնասակար...
Ըզգույշ, կամաց դիր ոտդ այդ հողին,-
Դա բիրն էր կնոջ մի գեղանկար²³:

Հովհ. Թումանյան՝

Խայամն ասաց իր սիրուհուն «Ոտդ ըզգույշ դիր հողին»,
Ո՛վ իմանա՝ որ սիրունի բիրն էս կոխում դու հիմի...»

²⁰ Նույն տեղում, էջ 18:

²¹ Թումանյան Հ., նշվ. աշխ., էջ 22:

²² Տե՛ս Մանթրոյան Մ., Տաղի մոգերից մեկը, Եր., 2000, էջ 63:

²³ Նույն տեղում:

Հեն՝յ, ջան մենք էլ ըզգույշ անցնենք, ո՛վ իմանա, թե հիմի
էն սիրուիւո բի՞րն ենք կոխում, թե հուր լեզուն Խայամի²⁴:

Հր. Սարուխան՝

Աչքս շրջվել, էն աշխարհին է նայում՝
Տեսնի վախճանն ինչեր ունի մնայուն...

-Ինչ էլ լինի, բա՛ն չի ցույց տա աշխարհն էն,
Մինչև աչքդ հողի աչքին չխառնեն²⁵:

Ինչպես պարողիան կարող է հիմնված լինել ոճավորման վրա,
այնպես է՛լ վարիացիան: Այս առումով շատ կարևոր է նաև հեղինա-
կի հետևյալ դիտարկումը. «Սարուխանի քառյակում օգտագործվող
մոտիվի ուղղակի հղում չկա, այլ սոսկ աչքի, հողի, էն-ի հիշատա-
կումները մեզ ակամայից հիշեցնում են, տանում դեպի վերը նշված
քառյակները, և ծնվում է մի նոր քառյակ...»²⁶:

Թե՛ փոփոխակ-վարիացիան, թե՛ ընդօրինակման մյուս տեսակ-
ները կապող օղակ են դառնում ինչպես միևնույն գրական մշակույ-
թի տարբեր շրջանների միջև, այնպես էլ տարբեր գրական մշա-
կույթների, անգամ տարբեր գրական մշակույթների տարբեր շրջան-
ների միջև: Օրինակ՝ Օմար Խայամի քառյակները փոփոխակվել են
ոչ միայն Հովի. Թումանյանի կողմից, այլ նաև պարսիկ մի այլ հեղի-
նակի՝ Ջամիի կողմից.

Օմար Խայամ՝

Կյանքիս հույսի ձուկն ոռկանիցն իր դուրս գնաց,
Իմ կյանքն անկարգ, հարբած գիշեր, անլուս գնաց,
Մի կյանք, որի վայրկյանը մի աշխարհ արժե,
Ափսոս՝ ձեռքից անշահ, գուր, սուսփուս գնաց²⁷...

²⁴ Թումանյան Հ., նշվ. աշխ., էջ 26:

²⁵ Սանթրյան Մ., նշվ. աշխ.:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Խայամ Օ., նշվ. աշխ., էջ 128:

Ջամի՝

Օրբս՝ աշխարհի հոգսերով անցավ,

«Լինե՞լ- չլինե՞լ...» հարցերով անցավ,

Կյանքըս, որ ամբողջ մի աշխարհ արժեք,

Անօգո՞ւտ ու զո՞ւր մտքերով անցավ²⁸:

Ցանկացած հեղինակ, երբ կիրառում է ընդօրինակման տեսակներից որևէ մեկը, միաժամանակ կապ է հաստատում նաև տվյալ գրական ավանդույթի հետ՝ համադրելով իր անհատական ոճը եղած ավանդականի հետ: Ընտրված հեղինակի ստեղծագործությունն էլ իր հերթին դառնում է յուրօրինակ կադապար և օբյեկտիվանում է: Որպես արդյունք երկու և ավելի ոճերի համադրմամբ առաջացած ստեղծագործությունը կապող օղակ է ավանդույթների միջև, բայց այն ևս կարող է դառնալ ընդօրինակման համար հիմք: Այսպես՝ Ե. Չարենցը «Տաղարան»-ը գրեց սայաթնոլյան ոճով, բայց նույն «Տաղարան»-ը իր ոճական առանձնահատկություններով հետագա շրջանում դարձավ Չարենցին մվիրված բանաստեղծությունների համար ոճավորման միջոց:

Այսպիսով՝ հողվածում հայ և օտարագի գրողների ստեղծագործությունների ուսումնասիրությունների հիման վրա անդրադարձել ենք ոճական ընդօրինակմանը՝ կարևորելով դրա դերն ու նշանակությունը ինչպես տարբեր ազգերի գրականությունների, այնպես էլ որևէ ազգի գրականության տարբեր շրջանների փոխհարաբերության գործում: Ուսումնասիրել ենք գեղարվեստական գրականության մեջ հանդես եկող տարատեսակները՝ պարոդիա, փոփոխակ (վարիացիա) կամ հարասություն, մմանակում, ոճավորում՝ դասակարգելով դրանք ըստ հեղինակային հայեցակետի և բացահայտելով սրանց միջև եղած նրբիմաստային տարբերությունները:

Քանալի բառեր՝ *պարոդիա, փոփոխակ, մմանակում, ոճավորում, ընդօրինակում, ոճական օլրար տարրեր, երգիծական բովանդակություն:*

²⁸ Մարգարտաշար, Եր., 1990, էջ 181:

ТЕРЕЗА ШАХВЕРДЯН, ТИНА АЙВАЗЯН – Пародия или вариация? – В данной статье рассматривается художественный материал сочинений армянских и иностранных авторов, при изучении которого мы акцентируем внимание на взаимодействии типов стилистического копирования как в литературах разных национальностей, так и в литературе разных периодов одной нации. В статье анализируются типы пародии, вариации или стилистического копирования. Нами предложена их классификация по особенностям смыслового различия.

Ключевые слова: *пародия, вариант, подражание, стилизация, заимствование, чужеродные стилистические элементы, сатирическое содержание.*

TEREZA SHAHVERDYAN, TINA AYVAZYAN - Parody or Variation? – In the present article we have analyzed on the works of Armenian and foreign writers focusing on the stylistic copying emphasising its role and importance in the interrelation of different periods of literature of one nation as well as literature of different nations. We have studied types of parody, variation, stylistic copying in fiction classifying them according to author's viewpoint and exploring the shades of differences in them.

Keywords: *parody, variant, imitation, styling, assimilation, foreign stylistic elements, satirical content.*

ՊԱՐՈՆՅԱՆ ՆԱԻՐԱ (ԵՊՀ)
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ (ԵՊՀ)

nairaparonyan@ysu.am, susannagrigoryan@ysu.am

ՆՈՐ ԲԱՌԵՐ ՎԱՐԳԱՆ ԱՐԵՎԵԼՅՈՒ
«ՆԵՐՔՈՂԵԱՆՔ»- ՈՒՄ

Վ. Արևելցին հայ միջնադարյան մշակույթի նշանավոր գործիչներից է: Նա և՛ մատենագիր է, և՛ պատմագիր, և՛ աշխարհագրագետ, և՛ փիլիսոփա, և՛ գրող ու թարգմանիչ, և՛ մանկավարժ, և՛ գիտնական: Թվարկածին պետք է հավելել նաև նրա՝ ազգային – հասարակական գործիչ լինելը: Այս բոլոր արժանիքների համար նրան անվանել են «նոր լուսավորիչ», «եռամեծ»: Վ. Արևելցու երկերն իրենց բովանդակությամբ բազմազան են: Հատկապես հետաքրքիր են հեղինակի ներբողները, որոնք աչքի են ընկնում գեղարվեստական արժանիքներով: Դրանց մեջ հեղինակն արծարծել է ազգային – հասարակական հարցեր: Նա իր ներբողներն օժտել է սոցիալ – քաղաքական իրատեսությամբ և հայրենասիրական շնչով: «Նոր լուսավորիչ» նպատակը իր հայրենակիցների՝ ազգային արժանապատվության և ինքնագիտակցության, կորած պետականության վերականգնման հույսի պահպանումն է, իսկ ամենակարևորը՝ իրենց մշակութային ու հոգևոր կյանքի հետ անբաժանելի կապը: Եվ նա իր ժողովրդին կոչ է անում. «Ծանի՛ր զլաւութիւն քո»: Ներբողները նվիրված են Հովհաննես Մկրտչին, Գրիգոր Լուսավորչին, նրա որդիներին, թոռներին, Հովհաննես Օձնեցուն, Վահրամ Գրիգորիս Վկայասեր կաթողիկոսին: Այս երկերում դրսևորվում են հեղինակի հայրենասիրությունը, ազգի ցավով ապրելու կարողությունը, վեհ ու ազնիվ ապրումը՝ հայրենիքի ցավով ու հոգսով:

Սույն հոդվածում անդրադարձել ենք Վ. Արևելցու «Ներբողեանք»- ում տեղ գտած նորակազմություններին: Առանձնացրել ենք երկու տասնյակից ավելի նոր բառեր՝ ի համեմատություն «Նոր հայկազեան», Առձեռն, Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարան»,

Լ. Հովհաննիսյանի «Նոր հայկազեան բառարանում չվկայված բառեր» բառարանների¹: Եվ քանի որ Վ. Արևելցին միջնադարյան հեղինակ է, հետևապես մենք օգտվել ենք նաև Միջին հայերենի և Ստ. Մալխասյանցի բառարաններից²:

Ըստ անհրաժեշտության դիմելով հայերենի բառակազմական օրինաչափություններին, օգտագործելով մայրենի լեզվի բազմաթիվ հնարավորություններն ու իմաստային բազմազանությունը՝ Վ. Արևելցին ստեղծել է նոր բառեր ու արտահայտություններ՝ դրանով իսկ հարստացնելով ոչ միայն իր ներբողների, այլև մեր լեզվի բառային կազմը: Այս առումով Վ. Արևելցու ներբողներից քաղված բառերից հեղինակային նորակազմություն ենք համարել բոլոր այն բառերը, որոնք չկան վերոնշյալ բառարաններում: Ներկայացնենք այդ բառերը բնագրային օրինակներով.

Անհանդուրժողական, ած. «չհանդուրժող». «Եւ ապա վայրկենի միում ծնաւ ազգ մի ողջոյն միանգամայն զքիւրատոր բանակս հայկազնեայ զարմից, պտուղս հիսիրաշս իւրոցն տաժանաշատ կրիցն *անհանդուրժողականաց*, որ յայնժամ հիացոյց զտեսաւոսն ոչ միայն զերկրաւորս, այլ եւ՝ զերկնայինսն ամենայն»³:

Բազմապտուտ, ած. «բազում պտույտներով». «Քանզի որքան տեսակ *բազմապտուր* չարչարանացն Քրիստոսի մնաց զոր ոչ կրեսաց յինքեան սուրբն Աստուծոյ. մին բեւեռն թափանցանցս ընկալաւ երկնազնաց թաթ ոտից նորա» (313):

Բազումորդութիւն, գոյ. «շատ որդիներ ունեցող». «Որով ստացեալ զմեծագարն ազանց բազմութիւն իւր ժողովուրդ սեպիական, քահանայութիւն եւ թագաւորութիւն, հնազանդս եւ հլուս պատուի-

¹ Տե՛ս Աւետիքեան Գ., Սիրմէեան Խ., Ազեբեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, 1836-1837 (այսուհետ՝ ՆՀԲ): Ազեբեան Մ., Ճէլալեան Գ-ը., Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վնեւտիկ, 1865 (այսուհետ՝ ԱԲ): Ղազարեան Ռ., Գրաբարի բառարան, Անթիլիաս, 2004 (այսուհետ՝ ԳԲ): Հովհաննիսյան Լ., Նոր հայկազեան բառարանում չվկայված բառեր, Եր., 2010 (այսուհետ՝ ՉԲ):

² Տե՛ս Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հ.1-4, Եր., 1944-1945 (այսուհետ՝ ՀԲԲ): Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Եր., 2009 (այսուհետ՝ ՄՀԲ):

³ Արևելցի Վ., Ճառք, ներբողեանք, հ. Բ, Եր., 2000, էջ 315: Այսուհետ փակագծերում կնշվի միայն էջը:

բանացն Աստուծոյ, պատկազգեացս եւ մանեկարկուս ըստ առակի խոստման իմաստոյն ի լոյս ամեալ բազում որդիս ի փառս Աստուծոյ՝ հանգումատիպ երեւեալ յաւէտ մեծին Աբրահամու՝ ոչ աւագածինս հարն յաւատոց՝ *բազումորդութեամբ* վերապատուելով» (326):

Գիսանեայ, գոյ. «առատ մագերով մեկը». «Իսկ գաւազան անուանելի եւ քաջամարտիկն ունէր ի պատրաստի զՏրդատիոս, որով հարկաներ զղիմադարձսն փորձութեան իրաց, որպէս *զղեմեորքեանսն* եւ *զհասնեայսն* եւ զգողսն եւ զգազանս ատարոտիս սատակէր, որպէս զանարի հսկայն զբազատորն հիւսիսոյ զԳեղոռեհոն...» (312): Բացի *զհասնեայ* բառից՝ հեղինակը ստեղծել է նաև **ղեմեորեան** նորակազմ բառը: ՆՀԲ-ն, ԱԲ-ն, ԳԲ-ն, ՀՀԲ-ն ունեն *ղեմեոր* (հուն.) = 1. մայր երկիր, հող, հողաձինների մայր. 2. ստորգետնյա չաստվածուհի . 3.(ղից.) հին հունական աստվածուհի, Չևսի բույրը: Այստեղ *ղեմեորեան*-ը նշանակում է «փուկ, չար անձնավորություն»:

Գիւսփոփոխ, ած. «ղևի նման փոփոխվող». «Վասն որոյ գլեղյեղուկ բարս եւ *զղիւսփոփոխ*, որպէս զգործէին ստացեալ, այլ եւ յելուզակաց արշաւանաց միշտ պարապեալք էին» (346): ՄՀԲ-ում կա *ղիւսփոխիլ* = ղև դառնալ բառը, ՉԲ-ում՝ *ղիւսփոխել* = խելոքանալ, նախկին անարգ վարքը թողնել:

Խաչակառոյց, գոյ. «խաչ պատրաստող». «Մանաւանդ, զի արքահամեան գաւակի մանկունքն աստուածավաճառք, *խաչակառոյցք*, տիրասպանք եւ այլ զանազան չարեաւք լցեալք» (327):

Կիսաքուեայ, գոյ. «կիսախորանարդ». «Ամենառատ պարգեւաց բղխաւոր եւ հոգետր պատուի ընձեռաւոր, առաքելաշնորհք եւ մարգարեապատիւք *պսակաժառանգ* եւ *բրաքիոնագգեացք*, երկնահանգոյնք եւ վերնակայեանք, սիւնք եկեղեցոյ եւ խարիսխք հաւատոյ, բարձրացուցիչք մանկանց Սիոնի եւ բարեաց բաշխաւոր մանկանց Սիոնի հաւտին Քրիստոսի, սուրբ Արիստակէս եւ Վրդանէս, յոյս Յուսիկ եւ սուրբ Գրիգորիս, քառամիակք եւ կրկնագոյգք, *կիսաքուեայք* եւ եռամասնեայք, ընդ միակի յաղեալք ի լիութիւն աշխարհի լրման, լիացուցիչք լուսով լիապէս»: Այս նախադասության մեջ հեղինակը երեք նոր բառ է ստեղծել՝ **կիսաքուեայ**, **պսակաժառանգ**,

բրաբիոնազգեաց: *Պասկաժառանգ* նշանակում է «պսակը՝ թագը ժառանգող՝ թագաժառանգ», *բրաբիոնազգեաց*՝ «պսակն իր վրա կրող՝ պսակակիր» (349):

Կդերջանիկ, ամ. «գեղեցիկ հյուսված». «Որոց սաստկագին ի տեառնէ սպառնացեալ է դատաստան եւ պատիժ պատուհասի վասն մեծագոյն աւանդութեան եւ գիտութեամբ մեղանշելոյն, գորոց ի բաց թողլով *զկդերջանիկ* բանիցս դիտումն ի փութալին մեզ յառաջեցոյք, վասն զի կարի հեռացաք ի բանէն» (324):

Մեծաժառանգ, ամ. «հզոր ժառանգորդ». «Եւ ապա զկնի հարն բարեփառ որդին *մեծաժառանգ* յաջորդէր զնոյն պատիւ զկարգի, ըստ այնմ. «Փոխանակ հարց եղիցին որդիք»» (339):

Յեսունաւեան, ամ. «Հեսու Նավեին մմանվող». «...Որք անցեալ ընդ գետս կենդանիս սպիտակափայլ, ոսկիակիզն, նշուլագարդ, գեղապաճոյս փայլէին, որ ի միում աւուր բերս հնգետասան յարբունական զարացն քրիստոսազգեստէր նոր մեր *յեսունաւեան* եւ *յովսեղեկեան* քահանայն մեծ Գրիգորիոս» (312): Նույն իմաստն ունի նաև նորաստեղծ **յովսեղեկեան** բառը՝ Հովսեղեկին մմանվող:

Յուսաժառանգ, ամ. «վստահելի ժառանգորդ». «Շառաւեղն սրբութեան մեծայոյսն եւ *յուսաժառանգն*, որ յոլովագոյն յուսով յուսայր ի յոյսն առատապարգել՝ յուսով կարդալով զանունն Աստուծոյ ...» (339):

Շտեմարանեալ, բայ, «ի մի հավաքելով, իր մեջ ամփոփելով՝ թաքցնելով, պահելով». «Եւ դարմանէր զնա շտեմարանեալ զգանձն կենաց եւ զբազմալոյս արեգակն մեր զայնքան ժամանակս ի խորս անդնորց»: ՆՀԲ-ն, ԱԲ-ն և ԳԲ-ն ունեն *շտեմարանել* = ամբարել, մթերել, թաքցնել, ի մի հավաքել, իր մեջ ամփոփել՝ պահել, թաքցնել:

Չարչարակիր, ամ. «չարչարված, տանջված, տառապած». «Տասներորդ՝ կռուփն, զոր կռփահարեցաւ *չարչարակիր անշն նորա*» (314):

Ջրատանջ, ամ. «ջրագուրկ». «Յայնժամ ելեալ ի Վիրապէն սուրբ Գրիգոր եւ սկսաւ քարոզել տապ եւ բիրտ ազգիս Հայոց ասելով. վասն ձեր չարչարանս յոլով կրեցի, կտտանաց բազմաց համբերեցի,... գալլ ի բերան արկեալ տանջեցայ, կռփահարեցայ, ապ-

տակ ի դէմս առի եւ հարուած կառափնս, որովայնի *ջրարանջ* եղայ եւ հալեալ կապար ի բերանս արկին եւ յորովայնս իջուցին» (326):

Ստորագելու, ամ. «ցած սեղմող, ներքև ճնշող, գալարող». «Հինգերորդ՝ ջրաչարչար պարպատմամբ եւ ուռուցմամբ *սրորագելու* անարգանաք վտանգեցաւ ողջախոհ պարկեշտ եւ սուրբ որովայն նորա» (313):

Վեստեակ, գոյ. «վստահություն, քաջություն». «... Որք շրջէին եւ գործէին գգործ խոր մարդ եւ Որդի մարդոյ ի գործս Իւր եւ ի *վեստեակս* ձեռաց իրեանց» (315):

Նորակազմ բառերի մեջ, ըստ խոսքիմասային պատկանելության, գերակշռում են ածականական կազմությունները (թվով 12)՝ *անհանդուրժողական, բազմապտուր, բրաբիոնազգեսց, դիափոփոխ, կղերջանիկ, մեծաժառանգ, յեսունաւեան, յովսեփեկեան, յուսաժառանգ, չարչարակիր, ջրարանջ, սրորագելու*: Գոյականները քվաքանակով զիջում են ածականներին՝ *բազումորդութիւն, գիսանեայ, դեմեյրեան, խաչակառոյց, կիսաքուեայ, պսակաժառանգ, վեստեակ*: Ունենք ընդամենը մեկ բայ՝ *շրեմարանեալ*:

Նորակազմ բառերի ստեղծման բառակազմական եղանակները նույնն են՝ բառաբարդում և ածանցում՝ իրենց բազմազան արտահայտություններով: Նույնն են նաև գործառական ավելի մեծ հաճախականություն դրսևորող բաղադրյալ բառերի տեսակները, որոնք են ածանցավոր բառերը, հոդակապով ու անհոդակապ բարդությունները: Նորակերտ ածանցավոր բառերը ևս հիմնականում ընդունելի ձևեր են, համապատասխանում են հայերենի ածանցման օրենքներին ու օրինաչափություններին, ուստի և ոչ միայն ոճավորում են հեղինակի խոսքը, այլև համալրում են մեր լեզվի բառապաշարը: Վ. Արևելցին գործառության մեջ է մտցնում ինչպես նախածանցներ, այնպես էլ վերջածանցներ, որոնցով կազմված նորաբանությունները ոճական մեծ լիցքով են հատկանշվում, և այս կազմություններում մեծանում է ածանցի հատկանշային իմաստը: Քանակով խիստ զիջում են նախածանցավոր նորակազմությունները, որոնցից են **ան**-ով և **ստոր**-ով կազմված հետևյալ բառերը՝ *անհանդուրժողական, սրորագելու*: Հարկ է նշել, որ *անհանդուրժողական*

բառը, բացի նախածանցից, ունի նաև երկու վերջածանց –**ող** և –**ական**: Վերոնշյալ բառարաններում կա *անհանդուրժական* բառը. այսինքն՝ ընդամենը –*ող* ածանցի հավելումով Վ. Արևելցին ստեղծել է նոր բառ: Ինչպես *անհանդուրժողական*-ը, այնպես էլ *սրորազեղուլ* բառը նախածանցի հետ ունի նաև վերջածանց՝ –**ուլ**, այսինքն՝ երկուսն էլ համաձայնավոր բառեր են: Վերջածանցավոր նորակազմ բառերի մեջ առանձնանում են հետևյալ ածանցները՝ –**եալ** – *շրեմաբանեալ*, –**եայ** – *գիսանեայ*, *կիսաքուեայ*, –**եան** – *դեմեյրեան*, *յեսունաեան*, *յովսեդեկեան*, –**ութիւն** – *բազումորդութիւն*, –**ոյց** – *խաչակառոյց*: *Գիսանեայ* բառն ունի ոչ միայն –*եայ*, այլև –*ան* ածանցը:

Վ. Արևելցու նորակազմություններում գործածության որոշ հաճախականությամբ առանձնանում են նաև հոդակապով և անհոդակապ բարդությունները, ինչպես՝ *բազմապրուր, բրաբրոնազգեաց, դիսափոփոխ, խաչակառոյց, կիսաքուեայ, մեծաժառանգ, յուսաժառանգ, չարչարակիր, պասկաժառանգ, ջրաբանց, կդերջանիկ*:

Այսպիսով՝ Վ. Արևելցին հայերենի բառազանձը համալրել ու հարստացրել է նոր ու գեղեցիկ, ճաշակավոր կազմություններով: Նաև այս է պատճառը, որ նրա ճառերն ու ներբողները բանասիրական տեսանկյունից խիստ արժեքավոր են:

Բանալի բառեր՝ ներբողներ, նորակազմություններ, ածանցավոր բառեր, բառակազմական հնարավորություններ, բարդություններ, ածականական, գոյականական և բայական կազմություններ:

НАИРА ПАРОНЯН, СУСАННА ГРИГОРЯН – Неологизмы в одах Вардана Аревелци. – Оды В. Аревелци посвящены жизни и деятельности святых. В них поднимаются теологические проблемы и ритуальные вопросы. Автор од, по собственному свидетельству, пользовался разными письменными и устными, в частности научно-философскими, историческими источниками, античными и средневековыми комментариями к переводам и иноязычными произведениями. Эти оды составляют самую малоизученную часть богатого литературного наследия автора. Представленная статья посвящена изучению более 20 слов, не зафиксированных в больших толковых словарях древнеармянского и среднеармянского

языков. Автор од мастерски использовал богатый лексический состав армянского языка, а также, при необходимости, словообразовательные возможности языка, создавая новые слова, обогащая тем самым язык собственных произведений и состав литературного языка. Однако префиксально-суффиксальные неологизмы, которые в основном благозвучны и образованы соответственно законам и закономерностям словообразовательной традиции армянского языка, немногочисленны.

Ключевые слова: *оды, неологизмы, производные слова, словообразовательные возможности, сложные слова, адъективные, субстантивные и глагольные конструкции.*

NAIRA PARONYAN, SUSANNA GRIGORYAN - Neologisms in Vardan Areveltsi's Odes.— Vardan Areveltsi's odes are devoted to theological matters, ritual issues or the life and activity of saints. According to his own evidence, he made use of numerous written and oral sources, especially of scientific-philological, historical, antique and medieval interpretational translations and foreign-language works. These odes are the least investigated part of the author's rich literary heritage. The given article is devoted to the discussion of more than 20 words which are not present in the voluminous explanatory dictionaries of Old and Middle Armenian. The author made use of the whole rich vocabulary of the Armenian language and its word-formation regularities masterly, creating new words and word-combinations. In that way he not only enriched the language of his creations, but also the lexical structure of literary Armenian. There are a few prefixal - suffixal neologisms which are in general euphonious and formed according to the rules and regularities of Armenian word-formation.

Keywords: *odes, neologisms, derivational words, word-formation means, compound words, adjectival, nominal and verbal structures.*

**ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ
(16-18-ԲԴ ԳԳ. ՆՅՈՒԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

Համանունությունը լեզվաբանական աշխատություններում, այդ թվում՝ հայերենագիտության մեջ բավականաչափ նկարագրված է: Այն լեզվական միավորների փոխհարաբերություն է, երբ դրանք արտասանությամբ, հնչյունական կազմով նույնն են կամ նման, իսկ իմաստով և ծագմամբ՝ տարբեր: Հարցին հանգամանալից անդրադարձել են Ն. Պառնասյանը, Էդ. Աղայանը, Ա. Աբրահամյանը¹: Առավել մանրամասն նկարագրել է Ն. Պառնասյանը, որը մանրամասն տալիս է համանունության լեզվական երևույթի նկարագրությունը, տեսակների բազմազանությունը: Նրա «Քերականական համանունները ժամանակակից հայերենում» աշխատության «Քերականական համանունությունը և նրա տարբերակումը քերականական բազմիմաստությունից» գլխում, քերես ամենամանրամասնը հայերենագիտության մեջ, մանրամասն շարադրված են տեսական բոլոր հարցադրումները:

Համանունները դասակարգելիս լեզվաբանները առանձնացնում են բառային և քերականական համանունները: Բառային համանունները ձևով նույնական, իմաստով տարբեր բառերն են: Քերականական համանունների դրսևորման դաշտն առավել լայն է: Ընդ որում, քերականական համանունության մեջ մտնում են քերականական ձևայինները, բառաձևերը և շարահյուսական կառույցները, որոնք, լինելով նույնական արտահայտության պլանում, տարբեր-

¹ Տե՛ս, օրինակ, **Պառնասյան Ն.**, Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Եր., 1970: **Աբրահամյան Ա.**, Հայերենի քերականական համանունության շուրջը, ՊԲՀ, 1, Եր., 1974: **Շալունց Ռ.**, Համանուն բառերը ժամանակակից հայերենում.- Լեզվի և ոճի հարցեր, 4, Եր., 1977: **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984: **Գևորգյան Ե.**, Ժամանակակից հայոց լեզվի համանունների բառարան, Եր., 1978:

վում են բովանդակային պլանում, այսինքն՝ տարբեր են իրենց իմաստով և ունեն գործառության ու գուգորդելիության տարբեր ոլորտներ: Այդպիսի միավորներ են, օրինակ, **Ի** մասնիկը, որ միաժամանակ սեռական հոլովի վերջավորություն է և ըղձականի դիմային մասնիկ՝ *գրի*, **ՌԻ**-ն, որ կարող է լինել սեռական հոլովի վերջավորություն՝ *ամուսնու*, պատճառական բայերի հրամայականի վերջավորություն՝ *մոլորեցրու*, ապառնի դերբայի վերջավորություն՝ *գրելու*, ածանց՝ *հարու*, շաղկապ և այլն: Քերականական համաճարություն է համարում նաև տարբեր խոսքի մասերի փոխանցման երևույթը, օրինակ՝ *խավար* – գոյական և *խավար* – ածական: Թեև պետք է ասել, որ նրա բերած օրինակների մեջ քիչ չեն պատմական իմաստափոխության դրսևորումները. բառերն իրենց իմաստը փոխում են լեզվի մի փուլից մյուսին՝ անցնելիս, ինչպես, օրինակ՝ *վարենի* բառը միջնադարյան աղբյուրներում ունի «վատաբանել» իմաստը՝ ի տարբերություն «փչացնել, մսխել» իմաստի, *շող* բառը ստացել է «դրոշ» իմաստը, *երկաթ*-ը՝ «խարիսխ» և այլն: Նշված երկու՝ բառային և քերականական հիմնական տարատեսակներից զատ՝ մատնանշվում են համաճարության այլ մասնակի խմբեր:

Ըստ համաճարման միավորների ձևային մեծության՝ առանձնացվում են բացարձակ համաճարմաններ, որոնց դեպքում միավորները ձևային առումով համընկնում են լիապես, օրինակ՝ *մարյր* «ամսանուն» և *մարյր* «պատերազմ», և մասնակի համաճարմաններ, որոնց դեպքում համընկնումը մասնակի է՝ «*Կոմիտասը*» և «*Քո մի քասը*» (ըստ Պարույր Սևակի): Հաճախ նշվածներն անվանում են համահունչ, որոնք արտասանությամբ նույնն են, բայց գրությամբ՝ տարբեր (*անող-սևոթ*), համագիր (կամ նույնագիր)՝ գրությամբ նույնը, բայց արտասանությամբ տարբեր (*քազմակնություն* «շատ աչքեր ունենալը» և *քազմակ(ը)ություն* «մի քանի կին ունենալը») և այլագիր (կամ համահունչ), երբ միավորները հնչմամբ են համընկնում, իսկ գրությունը տարբեր է՝ *հարդ-հարք*:

Ըստ առաջացման հիմունքի՝ համաճարմանները լինում են համածին, երբ գոյանում են բազմիմաստության հիմունքով (*ակ* «աղբյուրի ակունք» և *ակ* «անիվ») և տարածին, երբ գոյանում են այլ ուղի-

ներով (*բալ* «միրգ» և *բալ* «միավոր»): Այլ երկերում դրանք կոչվում են համարմատ և տարարմատ:

Ըստ առաջացման ուղիների՝ տարբերակում են՝ 1. համանունություն հնչյունափոխությամբ. *հարկ (յարկ)* - *հարկ*, 2. համանունություն փոխառությամբ՝ *շինել* (կառուցել) - *շինել* (վերարկուի տեսակ), 3. համանունություն քերականական ձևերի մասնությամբ՝ *արի* (քաջ) – *արի՛* (բայաձև), 4. համանունություն բազմիմաստ բառերի իմաստների հեռացումով՝ *ճակատ* (ռազմաճակատ) – *ճակատ* (մարմնի մաս), թեև այս վերջին դեպքում դժվար է հստակ սահման դնել բազմիմաստության և համանունության միջև: Ուսումնասիրողները խոսում են նաև համանուն դարձվածքների մասին՝ *ձեռք տալ* (դիպչել) – *ձեռք տալ* (ձեռքը սեղմելով ողջունել) – *ձեռք տալ* (բավարարել):

Նշված բոլոր տարատեսակներն ի վերջո հանգում են երկու հիմնական խմբի՝ բառային և քերականական համանունների:

Ուսումնասիրման առարկա է դարձել նաև համանունության և բազմիմաստության փոխհարաբերության հարցը: «*Եթե տվյալ միավորը կարելի է դիտել որպես տարբեր հարացույցների անդամ, ապա մենք գործ ունենք համանունության հետ: Եթե տվյալ միավորի իմաստային տարբերությունները կախված են տարբեր կոնտեքստներից, ապա մենք գործ ունենք բազմիմաստության հետ*»², - սահմանում է Ա. Աբրահամյանը: Ըստ այդմ՝ հեղինակը տարբերակում է ներհարացուցային համանուններ, երբ մույն հարացույցի մեկից ավելի միավորները, ունենալով կարգային տարբեր իմաստներ, համընկնում են ձևով, և միջհարացուցային համանուններ, երբ ձևով համընկնում են տարբեր հարացույցների միավորները³: Պարզելու համար, թե քննվող միավորները բազմիմաստությամբ ոլորտից են, թե՞ համանունության, Ն. Պառնասյանը դիմում է կոմտեքստին. այդպիսին կարելի է դիտել նախադասությունը, քանի որ գրեթե բոլոր քերականական իրողությունները հանդես են գալիս նրանում: Յուրաքանչյուր բառ տվյալ կոմտեքստում կարող է պատկանել մի-

² **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 104:

³ Տե՛ս **Աբրահամյան Ա.**, նշվ. աշխ., էջ 26:

այն մեկ խոսքի մասի: Ն. Պառնասյանի պնդումից ենթադրելի է, որ եթե նույն միավորի տարբեր իմաստների միջև կա համաժամանակյա կտրվածքով իմաստային կապ, ապա դա բազմիմաստություն է, իսկ եթե կապը վերականգնվում է «միայն պատմականորեն, իսկ հաճախ այդպիսի կապ հնարավոր չէ գտնել», ապա գործ ունենք համանունության հետ:

Հայերենի հին և ուշ միջնադարի աղբյուրներում հանդիպում են մի շարք բառեր, որոնք ունեն նույն կազմությունը, բայց իմաստով ու նաև ծագմամբ տարբեր են, այսինքն՝ լիովին բավարարում են համանունության հատկանիշները: Խոսքը վերաբերում է, մի կողմից, գրաբարի կամ միջին հայերենի, մյուս կողմից՝ աշխարհաբարի աղբյուրներին: Հայերենի տարբեր փուլերում ծագած լինելով՝ այդ բառային միավորները (շարքերը) նույն ձևն ու կազմությունն են ստացել իրարից անկախ և տարբեր են նաև իմաստներով, ինչպես, օրինակ՝ *յուրնաչափ* բառը մեր քաղած բնագրում ունեցել է «ոտանավոր, չափածո» իմաստը, իսկ գրաբարի բառարաններում⁴ հանդիպում է «ոտքի բնական չափ» իմաստով, *դարակեղ*-ը հանդիպում է «դասակարգել» իմաստով, *ՀԲԲ*-ում՝ «դարանակել՝ գաղտնիքը դուրս հանել», *խոյակապ*-ը՝ «թագակապ՝ գմբեթավոր», *ԱԲ*-ում՝ «հոյակապ» և այլն: Նույնահունչ համանուն բառեր են ներկայացված միավորները, որոնք իրարից անկախ գոյացել են մեր լեզվի զարգացման տարբեր փուլերում:

Լեզվի տարբեր փուլերում իրարից անկախ առաջ եկած պատմական համանունների առաջացման ուղիները տարբեր են: Առանձնանում են հետևյալ մի քանի հիմնական խմբերը.

⁴ Գործածել ենք հետևյալ հապավումները բառարանների համար՝ ՆՀԲ - **Աւետիքեան Գ., Սիւրմէեան Խ., Ազերեան Մ.**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հի. Ա-Բ, Ե., 1979-81: ԱԲ - կազմ. **Ճէլաեան Գ.**, Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Ամբիլիս, 1988: ՀԲԲ - **Մալխասեանց Ս.**, Հայերէն բացատրական բառարան, հի. I-IV, Ե., 1944-45: Ն. Բիւզ. - **Բիւզանդացի Նորայր**, Բառգիրք ստորին հայոց, ի մատենագրութեանց ԺԱ- ԺԷ դարուց, հրատ. պատրաստեց Մ. Մինասեանը, Ժնև, 2000 (Պ-Ֆ տառերը՝ անմշակ): ՄՀԲ - **Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ.**, Միջին հայերենի բառարան, Եր., 2009: ՀԳԲ - **Հովհաննիսյան Լ.**, Գրաբարի բառարան (ՆՀԲ-ում չվկայված բառեր), Եր., 2010:

1. Պատմական համանունություն հնչյունափոխման հիմունքով: Այս դեպքում համանուններն առաջանում են հայերենի տարբեր փուլերում ի հայտ եկած հնչյունափոխական իրողությունների պատճառով, օրինակ՝ *այգենալ* - ԱԲ-ում և ՀԲԲ-ում *այգենալ* բառն ունի «այգը բացուել, լուսանալ» իմաստը, իսկ մեր քաղած բնագրում գործածվել է «հագենալ» իմաստով, որն առաջացել է *յագ* > *այգ* հնչյունափոխությամբ:

2. Պատմական համանունություն խոսակցական տարբերակի առաջացմամբ: Այս դեպքում համանուն շարքի անդամներից մեկն ունի խոսակցական, բարբառային ծագում, ինչպես՝ *լիս* - ՀԲԲ-ում ունի *լիս* «լոյս» (ոյ>ի) իմաստը, իսկ մեր դիտարկած աղբյուրներում հանդիպում է *լիս* «լիքը, լեցուն» իմաստով. «Ջմեծամեծ համբարանոցս լիս ցորենովք եւ ամենայն բարութեամբք իբրեւ միջաբեր գաւակի թողի ի ժառանգութիւն սմա» (Յիշ. Ուլն., 294): *Մունգ* - ՀԲԲ-ում գործածված է «յարդի հողախսառն մանրութ» իմաստով, մեր քարտագրած երկում՝ «աղմուկ, շփոթ»։ *Տրոսկ* (գրք. տրուսկ) - բոլոր բառարաններում «նուստ, խոնարի» իմաստով գործածվող *տրոսկ* > *տրոսկ* բառի դիմաց ՀԲԲ-ն ունի *տրոսկ*՝ «փոխակերպութիւն» իմաստով:

3. Պատմական համանունություն բառակազմական նոր տարբերակի առաջացմամբ: Այս դեպքում համանուններ են դառնում բաղադրյալ (ածանցավոր կամ բարդ) բառերը, որոնցից մեկը ծագել է ուշ՝ հետգրաբարյան շրջանում և իմաստով որևէ կերպ չի առնչվում գրաբարյան նույնակազմ բառին, օրինակ՝ *բիրեղէն* - հանդիպում է «բիրեղեայ» իմաստով, մինչդեռ ՄՀԲ-ն ունի *բիրեղէն*՝ «շատ» իմաստով: *Ճաշակ* - «գեղեցիկը ըմբռնելու ունակություն» իմաստից գատ՝ մեր աղբյուրներում հանդիպում է «ճաշակելիքի զգայարան» իմաստով:

4. Պատմական համանունություն բազմիմաստության հիմունքով: Շատ հաճախ միևնույն բառն այնպիսի իմաստային կերպարանափոխություն է ապրում, որ նման եղանակով ի հայտ եկած բառը պետք է համարել ոչ թե բազմիմաստության, այլ համանունության դրսևորում, օրինակ՝ *սևփորձ* - գործածվում է ոչ թե «փորձ չու-

նեցող», այլ «անփորձանք, փորձանքից զերծ» իմաստով: *Սյորորուր* - վաղաշխարհաբարյան աղբյուրներում կազմվել և գործածվել է ոչ թե «ստորին կողմ», այլ «ցած, անարգ» իմաստով: *Սյորորուր* բառը նշված իմաստով հանդիպում է գրաբարի *սյորորուրաբարշ* «նշանակ ցոփութեան» բառում (ըստ ՆՀԲ-ի), և *սյորորուր* բառի հատկապես այդ իմաստը անկախաբար գործածված հանդիպում ենք վաղաշխարհաբարյան բնագրերում: *Տէրունի* - ունի «անմիջապէս Էջմիածնին ենթակա, նրան պատկանող» (ըստ Լեոյի), նաև «անմիջականորեն արքունիքին ենթակա ժողովուրդ, բնակավայր» իմաստները, մինչդեռ ՀԲԲ-ն և ՄՀԲ-ն *յրէրունի* ունեն «կիրակի» իմաստով:

Նշված դեպքերում գործ ունենք լեզվի պատմական զարգացման հետևանքով ի հայտ եկած համանուն շարքերի, այլ կերպ ասած՝ պատմական համանունների հետ: Այստեղ անպայմանորեն առաջին պլան է մղվում տվյալ բառերի՝ լեզվի երկու տարբեր փուլերում իրարից անկախ ծագած լինելու հանգամանքը: Այսպիսով՝ պատմական համանուն ենք համարում լեզվական այն միավորները, որոնք, ձևով նման կամ նույնը լինելով, ծագել են լեզվի զարգացման տարբեր փուլերում իրարից անկախ (*սյորորուր* «լեռան ստորոտ» և *սյորորուր* «ցած, անարգ»):

Անհրաժեշտ է անդրադառնալ այն հարցին, թե լեզվում ինչ նշանակություն ունեն համանուն բառերը. դրանք կապվա՞ծ են լեզվի զարգացման ընդհանուր օրինաչափությունների հետ, թե՞ պատահական նմանությունների արդյունք են: Մանավանդ որ պատմական համանունությունը մեր ընկալմամբ վերաբերում է «ոչ թե բուն լեզվական նշանների նույնությանը և տարբերությանը (որոնց հետ գործ ունի լեզվաբանը), այլ միայն երկու կամ ավելի միավորների նույնությանը»⁵: Մեր համոզմամբ՝ պատմական համանունները լեզվի ոչ պարտադիր միավորներ են, սակայն և կտրված չեն լեզվի պատմական զարգացման ընթացքից այնքանով, որքանով համանունություն կարող է ի հայտ գալ լեզվի մեկից ավելի փուլերի դիտարկման դեպքում. համանուն շարքի միավորները պարտադիր

⁵ Исаченко А, О грамматическом значении, ВЯ, 1961, N 1, стр. 29:

պետք է ծագած լինեն լեզվի տարբեր փուլերում: Այսպիսով՝ պատմական համանունությունը լեզվի պատմական զարգացման ու փոփոխման եթե ոչ անհրաժեշտ, ապա նույն լեզվի փոփոխություններից բխող ուղեկից լեզվական երևույթ է:

Ստորև ներկայացնում ենք պատմական համանունների օրինակներ՝ բնագրային վկայակոչումներով, որոնք քաղված են ուշ միջնադարի հայերեն ձեռագիր և տպագիր աղբյուրներից, որոնց ցանկը տրվում է հրապարակման վերջում:

ԱՆՊԱՐ - ամբար, շտեմարան: ԱԲ-ում և ՀԲԲ-ում՝ *անպար* «պարելու անվարժ»: «Այլ ի վայր *անպարն* գարույ, որ է մինն մստեալ արքունեան»⁶:

ԳԵՂՁՈՒԿ - գյուղ, գյուղակ: ՀԲԲ-ում և ԱԲ-ում և այլուր՝ *գեղջուկ* «գյուղացի, ռամկական»: Երկուշաբթին յայն կոյս անցեալ մտաք ի *գեղջուկ* մի Սիջին անուն»⁷:

ԴԱՇՆԱԿԱՆ - համաձայնողական, փոխադարձ համաձայնությամբ: ՀԲԲ-ում՝ *դաշնականը* «ներդաշնակ երգ»: «Դարձեալ փակեցից զսա *դաշնական* վճռաւ և երդմամբք հաստատնովք: Գրեցաւ զիրս դաշնական ի թվականիս մերոյ ՌՃԺԶ»⁸:

ԴԱՇՏԻԿ - փոքրիկ դաշտ: ՄՀԲ-ում՝ *դաշտիկ* «խոց»: «**Դաշտիկ** ծաղկալի, որոյ սկիզբն է նախագգուշացումն խոստովանահարց եւ կոչնակիկն զարբուցողական»⁹:

ԴԱՐԱԿԵԼ - դասակարգել, ճանաչել: ՀԲԲ-ն ունի *դարակել*՝ «տե՛ս դարանակալել» հոլովով: «*Դարակելն* - ճանաչեմ այնքան նրբագունիւ խուզմամբ և հետազօտմամբ, մինչ մնայ և ո՛չ ինչ յեն-

⁶ Երեմիա Զեկաի Քեմիքճեան, Ստամբուլի պատմություն, հրատ.՝ Վահրամ Թորգոմեան, Վիեննա, 1913, էջ 26, 28:

⁷ Սիմեոն Դպրի Լեհացոյ Ուղեգրություն, հրատ.՝ Ներսես Ալիմեան, Վիեննա, 1936, էջ 6:

⁸ Դիւան Սուրբ Յակոբայ (Ա-ԺԹ), «Սիւն», 1930 նոյեմբեր - 1941 յուլիս-օգոստոս, էջ 127:

⁹ Գրիգորիս Ծ. Վ. Գալմբեարեան, Կենսագրություն երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու, Վիեննա, 1915, էջ 291:

քակայումն ճանաչելոջ, գաղեցեալ յիմոյս ճանաչման¹⁰»։ *Դարակել* - ճանաչել (Մաշտոցյան Մատենադարանի ք. 2019 ձեռ., 185բ)։

ՀԱԳԱԳ - քանկարժեք քարերի հղկիչ, ողորկիչ։ ԱԲ-ն ունի *հագագ*՝ «ձայն հանող շունչ» իմաստով։ «Այս լուսած ալմաստովն զմեծագին ալմաստն թրաշ կու անեն *հագագներն*¹¹»։

ՉԱՅՆԱԻՈՐ ԳԻՐ(Բ) - նոտագրած, խագագրած (գիրք)։ ԱԲ-ն ունի *չայնաւոր* «ձայն ունեցող, ձայնեղ երգելու յարմար», ՀԳԲ-ն՝ *չայնաւոր գործիք* «երաժշտական գործիք», ՄՀԲ-ն՝ *չայնաւոր* «խթաղիք»։ «Տէր Յոհան և իւր հայր Գրիգորն ետուն մէկ Յիսուս Որդի, մէկ *Չայնաւոր* գիրք, մէկ գիրքակալի շապիկ¹²»։

ՅԱՐԱԿ - միշտ, հարատև, հմնտ. գրաբարի *յարակունութիւն* «տևողություն» բառի հետ։ ԱԲ-ն և ՀԲԲ-ն *յարակ* բառը բերում են «ա. գ. կպած, կցուած» իմաստներով։ «*Յարակ* - մակբայ ժամանակական, ընդ երկարաձգութիւն ամանակի, լատ. *լրիոս*» (Վ. Յուն., 55)։

ՎԱՅՐԵՆԻԲ - հարազատ վայր, *հայրենիք* բառի համաբանութեամբ։ ԱԲ-ն ունի *վայրենի* «վայրի, կատաղի»։ «Միշտ որոնեմ *վայրենիք* ինձ երթալոյ/Ձի չկայ երբեք զիս հոգացող, ափսոսսս ինձ¹³»։

ՏԵՍԱԿ - տեսողություն, տեսողության զգայարան՝ ի տարբերություն բոլոր բառարաններում առկա «հատկություն, որով մի առարկա տարբերվում է մյուսից» հանրահայտ իմաստի։ «Ծանօթութիւնս այս յառաջագայի ի հնկից զգայութեանց գլխատորաց մարմնոյ, այսինքն ի *լիսակէ*, որ է յաչս, ի լսակէ, որ է յականջս, ի հոտոտակէ, որ է ի քիմս, ի ճաշակէ, որ է ի բերանն և ի շօշափակէ, որ է ի ձեռս¹⁴»։

¹⁰ **Վարդան Յունանեան**, Բառարան գրքոյս։- Յովհաննէս Պոնայի Չեքբաժութիւն յերկինս, Հռոմ, 1674, էջ 23։

¹¹ **Առաքել Դարիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխատ. Լ. Ա. Խանլարյանի, Եր., 1990, էջ 444։

¹² **Հակոբ Փափագյան**, Ակոռու Ս. Հակոբ վանքի քյոթուկը, «Բանբեր Մատենադարանի», ք. 12, Եր., 1977, էջ 208։

¹³ ՈՒշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ.), աշխատությամբ Հասմիկ Մահակյանի, Խո. Լ. Եր., 1986, էջ 180։

¹⁴ Նորագոյն ծաղիկ զօրութեանց, քարգմ. Յ. Կոստանդնուպոլսեցու, Վենետիկ, 1685, էջ 4։

ԼՈՒՍՈՅՄՕՏ - գործածվել է ոչ թե «պատուհան, լուսամուտ», այլ «լուսադեմ, լուսանալուն մոտ, առավոտ» իմաստով: «Թվին ՌՃՉԱ ապրիլի Ա օր, որ օրն է շաբաթ **լուսոյմօտն** Ովսեփն մօրեն ընծայեցաւ, աշխարհ եկաւ» (ՄԺ I, 294):

ՌԻՂՂԱԿԱՆ - Եփրեմ Ղափանցու (17-րդ դ.) «Ընդդէմ երկաքնակաց» ոտանավորում բառն ունի «ուղիղ՝ ուղղադավան» իմաստը և սոսկ համանուն է հանդես գալիս *ուղղական* (հոլով) բառին. «Սոյն այս կերպիս օրինաց բան / Միշտ պարսաւեն յազգս թորգոմեան / Թէ՛ ձեր օրենքն չէ ուղղական / Այլ է խոտան և անպիտան» (ՈւՄՀԲ I, 569):

ՎԵՀԵՐԵԻԵԼ - ԱԲ-ում բառն ունի «վախենալ, ծուլանալ» իմաստները՝ բաղադրված *վհհեր* արմատից, մեր քարտագրած բնագրում գործածվում է «վեհ տեսքով երևալ՝ ներկայանալ» (վեհ+երևալ) իմաստով: «Յօժանդակութեամբ սրբազան և **վեհերևեցեալ** հայրապետիս ... մեր ամենեքեան կնիք ունողքս կնքեցաք¹⁵»:

ՏԱՐԲԵՐԱՆԱԼ - ուշ միջնադարի աղբյուրներում գործածվել է ոչ թե «տարբերակել, տարբերել», այլ «տարուբերվել, թարթել» իմաստով, նույն իմաստով ՆՀԲ-ն ունի *տարբերիլ* բառը: «Բուրաստանեացն շուշանք և ի ջուրս, որ վայելչանայ / Գին չեն մազ մի թարթիչիդ վեր ի վայր, որ **տարբերանայ**» (ՈւՄՀԲ I, 445):

Բանալի բառեր՝ *համանուն, համանունություն, դասակարգում, հայոց լեզվի պայրություն, բնագրեր, ուշ միջնադար, օրինակներ:*

НОРАЙР ПОГОСЯН – Историческая омонимия в армянском языке. – Омонимия – отношение языковых единиц (слов, форм слов, частиц, грамматических конструкций), схожих по фонетическому составу и произношению, однако отличающихся значением и происхождением. Вопросы омонимии в арменистике подробно рассмотрены в различных теоретических исследованиях.

¹⁵ Դիւան Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի, մասն Ա, Էջմիածնի կաթողիկոսների կոնդակներ (1652-1705), աշխատասիրեց՝ Խաժակ Տեր-Գրիգորեան, Անթիլիաս, 2003, էջ 81:

В древнеармянских и средневековых источниках можно найти разнообразные слова, имеющие одинаковый состав, но отличающиеся по смыслу и происхождению. Возникшие на разных стадиях развития языка, эти лексические единицы имеют одинаковые структуры независимо друг от друга. Мы называем их историческими омонимами. В статье рассматривается несколько типов омонимов и приведено множество их примеров.

Ключевые слова: *омонимы, классификация, история армянского языка, оригинальные тексты, позднее средневековье, примеры.*

NORAYR POGHOSYAN - The historical homonymy in Armenian language. – Homonymy is a kind of interrelation of linguistic units (words, particles, grammatical structures) which are identical or similar in accent and phonetic constructions, but different in meaning and origin. The issues of homonymy have examined sufficiently in Armenian language. N. Parnasyan, Ed. Aghayan, A. Abrahamyan classify homonyms in different groups. Unlike lexical homonyms, we point out the historical homonyms, relying on armenian old and late Middle ages sources. Historical series of homonyms have originated in different stages of Armenian language, which have the same form and structure, but are independent from each other and have different meanings.

For example the word ‘յոսնւշափ’- in early ashkharabar had the meaning of ‘verse’, but in old armenian dictionaries has the meaning of “natural foot size”. A number of historical examples of homonyms are brought in the article, and we came to the conclusion, that although those are the units of non-binding language, but are not cut from the process of historical development of the language.

Keywords: *homonyms, classification, history of Armenian language, original texts, late middle ages, examples.*

**ԵՂԱՆԱԿԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՅՄԱՆԻ ՊԱՐԱԳԱ
ԵՐԿՈՐԴԱԿԱՆՈՎ ԲԱՐԳ ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ
ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Բարդ նախադասությունների բաղադրիչների՝ դիմավոր բայերով արտահայտված ստորոգյալների միջև մի շարք դեպքերում առկա է լինում եղանակաժամանակային համաձայնություն: Այդ համաձայնությունը բազմազան դրսևորումներ ունի, որոնք պայմանավորված են տարբեր հանգամանքներով: Թերևս այս է պատճառը, որ բարդ նախադասությունների բաղադրիչների միջև առկա եղանակաժամանակային համաձայնությունը բավականին քիչ է ուսումնասիրվել: Այս հարցին անդրադառնալիս Գ. Գարեգինյանը, տողատակում նշելով, որ «այս հարցը բազմակողմանի և լուրջ ուսումնասիրության կարոտ է», գրում է. «Բարդ ստորադասական նախադասությունների բաղադրիչները գրեթե բացառապես ձևավորվում են բայական ստորոգմամբ, հետևաբար դիմավոր բայերի համապատասխան եղանակների և ժամանակային ձևերի հարաբերակցությունը կառուցվածքային և կապակցական արժեք է ստանում: Նայած կառուցվածքին և կապակցության միջոցներին՝ բայական եղանակների և ժամանակների գործածությունը կարող է լինել *ազատ* և *ոչ ազատ*, այսինքն պարտադրված»¹:

Այդ համաձայնությունը կարող է պայմանավորված լինել տարբեր հանգամանքներով: Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս հարցում կարևորվում են բաղադրիչ նախադասությունների կապակցման միջոցը (շաղկապ, հարաբերյալ), ստորադաս նախադասության շարահյուսական գործառույթը (բնույթը), դիմավոր

¹ Գարեգինյան Գ., Ժամանակակից հայոց լեզու: Բարդ նախադասություն, ԵՊՀ հրատ., Եր., 1991, էջ 121:

բայերի եղանակը, ժամանակը, դեմքը, երբեմն նաև թիվը և սեռը, ստորոգյալների բառիմաստը, բաղադրիչ նախադասությունների շարադասությունը: Այս ամենից պարզ է դառնում, որ բարդ նախադասությունների բաղադրիչների դիմավոր բայերի միջև դրսևորվող եղանակաժամանակային համաձայնությունը ուսումնասիրելու համար տարբեր դեպքերում անհրաժեշտ է հաշվի առնել տարբեր հանգամանքներ: Այսինքն՝ հնարավոր է, որ գլխավոր և որևէ բնույթի ստորադաս նախադասությունների դիմավոր բայերի միջև լինի եղանակաժամանակային համաձայնական կապ, բայց միայն որոշակի շարադասության, կապակցման որոշակի միջոցների և նշված մյուս հանգամանքների առկայության դեպքում, իսկ դրանց փոփոխության դեպքում համաձայնական կապը կվերանա:

Եղանակաժամանակային համաձայնությունը առավելապես գործում է պարագա ստորադաս բաղադրիչ ունեցող նախադասություններում, իսկ ենթակա, ստորոգելի, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ և խնդիր երկրորդականներով նախադասություններում տարբեր եղանակներով և ժամանակներով բայաձևերի գործածությունը բավականին ազատ է:

Ասվածները ներկայացնելու համար անդրադառնանք պայմանի պարագա ստորադաս բաղադրիչ ունեցող բարդ նախադասություններին: Պայմանի պարագա երկրորդական նախադասությունների և նրանց գլխավորների դիմավոր բայ-ստորոգյալների միջև մի շարք դեպքերում հնարավոր է եղանակաժամանակային համաձայնության դրսևորում: Ն. Պառնասյանը պայմանի պարագա երկրորդականով նախադասությունները քննելիս գրում է. «Պայմանային հարաբերություններ պարունակող բարդ ստորադասական նախադասություններն ունեն այն առանձնահատկությունը, որ բայերի եղանակների և ժամանակների օգտագործումը գլխավոր և երկրորդական նախադասությունների մեջ ազատ չէ»²:

Պայմանի պարագա ստորադաս բաղադրիչով նախադասություններում դրսևորվող եղանակաժամանակային համաձայնու-

² Պառնասյան Ն., Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1961, էջ 165-166:

թյունը պարզելու համար նախ անհրաժեշտ է պարզել, թե գլխավոր և երկրորդական նախադասություններում որ եղանակների որ ժամանակաձևերով արտահայտված ստորոգյալներ կարող են հանդես գալ, այսինքն՝ պարզել բայաձևերի զուգորդելիությունը այդ նախադասություններում: Այնուհետև պետք է առանձնացնել այն կառույցները, որոնցում առկա է համաձայնություն: Քանի որ համաձայնական կապի դրսևորման հարցում էական դեր ունեն նաև կապակցման միջոցները, ապա անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև դրանց:

Պայմանի պարագա երկրորդականները գլխավորին հիմնականում կապակցվում են բառական հետևյալ միջոցներով՝ *եթե (սպա/ուրեմն/զուցե/թերևս/թող/այդ դեպքում), թե, որ, թե որ, պայմանով որ, երբ*:

Ոչ միայն պայմանի պարագա երկրորդականով, այլև ընդհանրապես բարդ ստորադասական նախադասություններում տեսականորեն հնարավոր են գլխավոր և ստորադաս բաղադրիչների դիմավոր բայերի հետևյալ զուգորդումները.

- ա) միևնույն եղանակի միևնույն ժամանակաձևեր,
- բ) միևնույն եղանակի տարբեր ժամանակաձևեր,
- գ) տարբեր եղանակների նույն ժամանակներ,
- դ) տարբեր եղանակների տարբեր ժամանակներ:

Առաջին դեպքում առկա կլինի թե՛ եղանակով, թե՛ ժամանակով համաձայնություն, երկրորդ դեպքում՝ եղանակով համաձայնություն, երրորդ դեպքում՝ ժամանակով համաձայնություն, իսկ չորրորդ դեպքում համաձայնություն չի լինի:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պայմանի պարագա ստորադաս բաղադրիչով նախադասություններում գործնականում հնարավոր են դիմավոր բայերի հետևյալ զուգորդումները (այստեղ չենք անդրադառնում երկրորդական-վերլուծական ժամանակաձևերի բայերով արտահայտված ստորոգյալներին):

Հայտնի է, որ պայմանի պարագա երկրորդականն արտահայտում է այն պայմանը, որի առկայության դեպքում հնարավոր է գլխավոր նախադասության մեջ ներկայացվող գործողության իրա-

կանացումը: Հետևաբար առաջ է գալիս տրամաբանական որոշակի հաջորդականություն, այսինքն՝ գլխավորի մեջ արտահայտվող գործողությունը չի կարող նախորդել երկրորդականի մեջ արտահայտվող գործողությանը: Այդ պատճառով էլ գլխավորում անկատար ներկան կիրառվում է ապառնու նշանակությամբ: Ընդհանրապես գլխավորում և երկրորդականում տարբեր ժամանակաձևերի գուգորդությունները իմաստային տարբեր հարաբերությունների արտահայտիչներ են դառնում:

Եթե երկրորդական նախադասության ստորոգյալն արտահայտված է անկատար ներկա կամ անցյալ ժամանակաձևով դրված բայով, ապա գլխավորի ստորոգյալը կարող է արտահայտվել անկատար ներկայով կամ անցյալով, ինչպես նաև հարկադրական անցյալով կամ ապառնիով դրված բայերով:

Երկրորդականում եղած անկատար ներկայի հետ գլխավորում գործածվում է անկատար ներկա, անկատար անցյալի հետ՝ անկատար անցյալ, ինչպես՝ *Եթե նրան ընդունում ես, ուրեմն ներում ես: Եթե գրում էիր, ուրեմն հոգնում էիր*: Այսինքն՝ այսպիսի նախադասություններում գլխավոր և երկրորդական նախադասությունների բայ-ստորոգյալների համաձայնությունը իրականանում է և՛ եղանակի, և՛ ժամանակի քերականական կարգերով: Պետք է նշել, որ այսպիսի կառույցները այնքան էլ տարածված չեն և գործածվում են որոշակի խոսքաշարերում:

Երկրորդականում եղած անկատար ներկայի հետ գլխավորում գործածվում է հարկադրականի ապառնի, իսկ անկատար անցյալի հետ՝ հարկադրականի անցյալ, ինչպես՝ *Եթե նրան ընդունում ես, ուրեմն պետք է ներես: Եթե նրան ընդունում էիր, ուրեմն պետք է ներեիր*: Հնարավոր է նաև *Եթե նրան ուղարկում ես, պետք է զգուշացնեիր* կառույցը: Փաստորեն առաջին դեպքում ո՛չ եղանակով, ո՛չ ժամանակով համաձայնություն չկա, իսկ երկրորդ (երկու անցյալի) դեպքում համաձայնությունը միայն ժամանակով է:

Երկրորդականում եղած վաղակատար ներկայի և անցյալի հետ գլխավորում գործածվում են սահմանականի անկատար ներկա/անցյալ, սահմանականի վաղակատար ներկա/անցյալ, սահմանակա-

նի ապակատար ներկա/անցյալ, հարկադրականի ապառնի/անցյալ, պայմանականի ապառնի/անցյալ, ինչպես՝ *Եթե վիրավորվել ես/էիր նրանից, ուրեմն իմանում ես/էիր նրա արարքների մասին: Եթե օգնել եմ/էին, ուրեմն իմանում եմ/էին նրա վատ վիճակի մասին: Եթե այցելել է/էր, ուրեմն իմացել է/էր նրա հիվանդության մասին: Եթե տոմսը գնել է/էր, ուրեմն մեկնելու է/էր: Եթե տոմսը գնել է/էր, ուրեմն պիտի մեկնի/մեկներ:*

Երկրորդականում եղած սահմանականի ապակատար ներկայի և անցյալի հետ գլխավորում գործածվում են սահմանականի ապակատար ներկա/անցյալ, սահմանականի անկատար ներկա/անցյալ, սահմանականի վաղակատար ներկա/անցյալ, սահմանականի անցյալ կատարյալ, հարկադրականի ապառնի/անցյալ, պայմանականի ապառնի/անցյալ, ըղձականի ապառնի/անցյալ: Օրինակներ՝ *Եթե գնալու է/էր, ուրեմն այնպես աշխատելու է/էր: Եթե գնալու է/էր, ուրեմն կարողում է/էր: Եթե գնալու է/էր, ուրեմն կարողել է/էր: Եթե վրեժխնդիր է/էր լինելու, ուրեմն վիրավորվեց նրա խոսքից: Եթե գնալու է/էր, ուրեմն պիտի աշխատի/աշխատեր: Եթե մնալու ես/էիր, կաշխատես/կաշխատեիր: Եթե աշխատելու ես/էիր, գուցե համաշայնեմ/համաշայնեի:*

Երկրորդականում եղած ըղձականի ապառնու/անցյալի հետ գլխավորում գործածվում են սահմանականի անկատար ներկա/անցյալ (ապառնու իմաստով), սահմանականի վաղակատար ներկա/անցյալ, սահմանականի ապակատար ներկա/անցյալ, սահմանականի անցյալ կատարյալ, հարկադրականի ապառնի/անցյալ, պայմանականի ապառնի/անցյալ, ըղձականի ապառնի/անցյալ (+թող), հրամայականի ապառնի, ինչպես՝ *Եթե օգնես/օգնեիր, ուրեմն հիշում ես/էիր նրա արած լավությունը: Եթե չգնաս/չգնայիր, ուրեմն մոռացել ես/էիր նրա արած լավությունը: Եթե չմեկնես/չմեկնեիր, ուրեմն բնակվելու ես/էիր այստեղ: Եթե իմանա/իմանար, պիտի զայրանա/զայրանար: Եթե գնաս/գնայիր, կիմանաս/կիմանայիր: Եթե գնա/գնար, թող բերի/բերեր: Եթե գնաս, մի՛ մոռացիր մեր ընկերությունը:*

Երկրորդականում եղած պայմանականի ապառնու/անցյալի հետ գլխավորում գործածվում են սահմանականի անկատար ներկա/անցյալ (ապառնու իմաստով), սահմանականի ապակատար ներկա/անցյալ, հարկադրականի ապառնի/անցյալ, ըղձականի ապառնի/անցյալ, պայմանականի ապառնի/անցյալ, հրամայականի ապառնի, ինչպես՝ *Եթե կգնաս/կգնայիր, ուրեմն հավանում ես/էիր: Եթե կհրավիրես/կհրավիրեիր, ուրեմն դիմավորելու ես/էիր: Եթե կհամաձայնես/կհամաձայնեիր, ուրեմն պիտի դիմանաս/դիմանայիր: Եթե կգնա/կգնար, բող բերի/բերիր: Եթե կգնաս/կգնայիր, հեղդ կբերես/կբերեիր: Եթե կգնաս, մի՛ մոռացիր:*

Երկրորդականում եղած հարկադրականի ապառնու/անցյալի հետ գլխավորում գործածվում են հարկադրականի ապառնի/անցյալ, պայմանականի ապառնի/անցյալ, ըղձականի ապառնի/անցյալ, հրամայականի ապառնի, ինչպես՝ *Եթե պիտի նրան այդ մասին ասես/ասեիր, պիտի չանես/չանեիր: Եթե պիտի աշխատես/աշխատեիր, կապրես/կապրեիր: Եթե պիտի շատ աշխատես/աշխատեիր, նախապատրաստվեք/նախապատրաստվեիք: Եթե պիտի խանգարես, հեռացի՛ր:*

Օրինակներից երևում է, որ շատ դեպքերում բայի տարբեր եղանակների տարբեր ժամանակաձևերով արտահայտված ստորոգյալների գուգորդում գլխավոր և երկրորդական նախադասություններում հնարավոր է լինում այն բանի շնորհիվ, որ դրանք տարբեր նրբիմաստներ են արտահայտում, ինչպես՝ ներկա ժամանակաձևը ապառնու փոխարեն, ներկան անցյալի փոխարեն և այլն: Երբեմն նման կիրառություններով է միայն հնարավոր լինում արտահայտել անհրաժեշտ իմաստը: Բայերի եղանակաժամանակային ձևերի իմաստները քննելիս Պ. Պողոսյանը անկատար ներկայի մասին հետևյալն է գրում. «Սահմանական եղանակի ներկան, փոխարինելով ըղձական եղանակի ապառնում (մնում ենք-մնանք, ուղարկում ենք-ուղարկենք), երկրորդական նախադասության մեջ արտահայտում է պայման (եթե մնանք, եթե ուղարկենք): Դրանով ըղձական և սահմանական բայաձևերը ունեն հավասար իմաստային արժեքներ, սակայն ըղձականը կարտահայտեր միայն պայման, այնինչ

ներկան պայմանից բացի արտահայտում է մի իմաստ ևս, որ չի կարող արտահայտել ըղձական եղանակի բայաձևը: Ներկայով արտահայտվածը մի գործողություն է, որը կատարվել է արդեն (մեկ անգամ, թե շատ անգամ, կարևոր չէ) և այժմ էլ կատարվում է, շարունակվում է կատարվել կամ մնում է կատարվելու հնարավորության մեջ: Այդ նշանակում է, որ այժմ էլ *մնում ենք, ուղարկում ենք* կամ *հնարավոր է, որ մնանք, ուղարկենք*³: Ահա նման կիրառությունների միջոցով էլ բազմազան են դառնում գլխավոր և երկրորդական նախադասությունների բայ-ստորոգյալների զուգորդելիությունները, որի հետևանքով էլ փոփոխվում են համաձայնական կապակցման ընդգրկումները:

Ամփոփելով ասվածը՝ աղյուսակով ներկայացնենք պայմանի պարագա երկրորդական ունեցող բարդ ստորադասական նախադասությունների գլխավոր և երկրորդական նախադասությունների բայ-ստորոգյալների հնարավոր զուգորդումները՝ նշելով, թե դրանք որ դեպքում քերականական որ կարգերով են համաձայնում:

ՊԼՅՄՆԻ ՊԼՐԱԳԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆՈՎ ԲԱՐԴ ՍՏՈՐԱԳԱՍԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ					
	ՍՏՈՐԱԳԱՍ ԲԱՎԱՐԻԶԻ ՍՏՈՐՈԳՅԱԼՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԻՄԼՎՈՐ ԲԱՅԻ ԺԱՄՆԱ- ՆԱԿԱԶԵՎԸ	ԳԼԽԱՎՈՐ ԲԱՎԱՐ- ԻԶԻ ՍՏՈՐՈԳՅԱԼՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԻՄԼ- ՎՈՐ ԲԱՅԻ ԺԱՄՆԱ- ԿԱԶԵՎԸ	ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ		
			ԵՂԱՆԱ- ԿՈՎ	ԺԱՄՆԱ- ԿԱԶԵՎՈՎ	ԺԱՄՆ- ՆԱԿՈՎ
1.	սահմանականի անկատար ներկա/անցյալ	սահմանականի անկա- տար ներկա/անցյալ	+	+	+
		հարկադրականի ապառնի/անցյալ	-	-	- +
2.	սահմանականի վաղակատար ներկա/անցյալ	սահմանականի անկա- տար ներկա/անցյալ	+	-	- +
		սահմանականի վաղա- կատար ներկա/անցյալ	+	+	+
		սահմանականի ապա- կատար ներկա/անցյալ	+	-	- +
		հարկադրականի	-	-	- +

³ Պողոսյան Պ., Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայե-
նքում, ԵՊՀ հրատ., Եր., 1959, էջ 50:

		ապառնի/անցյալ			
		պայմանականի ապառնի/անցյալ	-	-	- +
3.	սահմանականի ապակատար ներկա/անցյալ	սահմանականի անկատար ներկա/անցյալ	+	-	+
		սահմանականի վաղակատար ներկա/անցյալ	+	-	- +
		սահմանականի ապակատար ներկա/անցյալ	+	+	+
		սահմանականի անցյալ կատարյալ	+	-	- +
		ըղծականի ապառնի/անցյալ	-	-	+
		պայմանականի ապառնի/անցյալ	-	-	+
		հարկադրականի ապառնի/անցյալ	-	-	+
4.	ըղծականի ապառնի/անցյալ	սահմանականի անկատար ներկա/անցյալ	-	-	- +
		սահմանականի վաղակատար ներկա/անցյալ	-	-	- +
		սահմանականի ապակատար ներկա/անցյալ	-	-	+
		սահմանականի անցյալ կատարյալ	-	-	- +
		հարկադրականի ապառնի/անցյալ	-	-	+
		պայմանականի ապառնի/անցյալ	-	-	+
		ըղծականի ապառնի/անցյալ	+	+	+
		հրամայականի ապառնի	-	-	- +
5.	պայմանականի ապառնի/անցյալ	սահմանականի անկատար ներկա/անցյալ	-	-	- +
		սահմանականի ապակատար ներկա/անցյալ	-	-	+
		հարկադրականի ապառնի/անցյալ	-	-	+
		ըղծականի ապառնի/անցյալ	-	-	+
		պայմանականի ապառնի/անցյալ	+	+	+
		հրամայականի ապառնի	-	-	- +
6.	հարկադրականի ապառնի/անցյալ	հարկադրականի ապառնի/անցյալ	+	+	+
		պայմանականի ապառնի/անցյալ	-	-	+
		ըղծականի ապառնի/անցյալ	-	-	+
		հրամայականի ապառնի	-	-	- +

Բանալի բառեր՝ բայ, ժամանակ, քերականություն, հրամայական եղանակ, պայմանական եղանակ, համաչափություն, շարահյուսություն, կապակցություն:

АРТАШЕС САРКИСЯН – Условия согласования категории наклонения и времени в современном армянском языке в сложноподчиненных предложениях с обстоятельственными придаточными условия. – В статье представлено, как проявляется согласование по времени и наклонению в сложных предложениях с обстоятельственными придаточными условия.

Мы определили, что проявление этого согласования обусловлено рядом обстоятельств.

Ключевые слова: *глагол, время, грамматический, императивный метод, условный метод, согласование, синтаксис, отношение.*

ATRASHES SARGSYAN – Agreement of mood and time in complex sentences with adverbial modifier of condition in modern Armenian. – The article presents existent mood and time agreement in complex sentences with adverbial modifier of condition. The expression of the agreement is conditioned by a number of circumstances.

Keywords: *verb, time, grammar, imperative method, conditional method, consensus, syntax, relation.*

**ԱՐԱԿԱՆ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ
ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ
«ՀԱՅՈՑ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ»-ՈՒՄ**

ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՅՈՂ ԱՐԱԿԱՆ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՎ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆՈՒՄ

Հողվածում անդրադարձել ենք արական անձնանունների իմաստաբանական քննությանը, առանձնացրել տասը խումբ, որոնք ծագել են բույսերի, ծաղիկների, մրգերի, կենդանիների, մարմնի մասերի, պաշտոն, տիտղոս, արիեստներ նշանակող, երկնային մարմինների անվանումներից, կրոնական գաղափարների ազդեցությամբ, ածականներից, թվականներից, մակբայներից, բայերից, իմաստային այլ բաղադրիչներից: Կատարել ենք մաս բառակազմական քննություն՝ առանձնացնելով պարզ, ածանցավոր, բարդ (համադրական), բարդաձանցավոր արական անձնանուններ:

Յուրաքանչյուր անձնանուն բառ է, որն արտահայտում է որոշակի իմաստ: Հայկական կազմությամբ արական անձնանունների մեծ մասը առաջացել է հասարակ գոյականներից, որոնց մեջ առանձին խումբ են կազմում.

1. Բույսերի, ծաղիկների, մրգերի անուններից, ինչպես մաս բառաբանական հասկացություններից առաջացած անձնանունները.

Այգվարդ – նշանակում է իբր «առավոտվա վարդ», շատ քիչ գործածական նորակերտ անուն:

Բալաս – *Բալասան* անվան կրճատ և փաղաքշական ձևն է, սրանից են *Բալասյան*, *Բալասբեկյան* ազգանունները:

Բարունակ – «բարունակ» (ճյուղ, ոստ) բառից:

Բույս – «բույս» (տունկ) բառից, հմմտ.՝ նորատունկ:

Բուսիկ – «բուսիկ» (փոքր բույս) բառից: *Բույս* անվան գգվականն է:

Խնկիկ – «խունկ» բառի փաղաքշականից:

Խունկ – «խունկ» (կնդրուկ) բառից:

Ծառիկ – «ծառ» բառից: *Ծառ* անվան փաղաքշականն է:

Ծառուկ – «ծառ» բառից: *Ծառ* անվան փաղաքշականն է: Կենդանի է այժմ էլ Նոր Նախիջևանում, սրանից է *Ծառուկյան* ազգանունը (Պոլիս):

Կորկոտակ – «կորկոտ» (թեփահանած և ջարդած ցորեն) բառից:

Կորնկան – «կորնգան» կամ «կորնկան» բառից, որ նշանակում է «առվույտի նման մի խոտ»:

Մեխակ – *մեխակ* ծաղկանունից: Կովկասում տարածված անուն է:

Մրգիկ – «միրգ» բառից, որ «միրգ» (պտուղ) բառի փաղաքշականն է:

Ուռիջան - «ուռի» ծառի անունից + պրս. *ջան* (հոգյակ) փաղաքշականով:

Ջաջուռ - «ջաջուռ» (նորածիլ բույս) բառից:

Սոս - *սոսի* ծառի անունից:

Վարդկան (Վարդեան) - «վարդ» բառից, բայց ի՞նչ է (ան)-ը, հայտնի չէ:

Վարդկան - *Վարդիկ* անվան հին սեռական ձևն է:

Վարդուկ - «վարդ» բառով + *-ուկ* գգվական մասնիկով. ըստ Հր. Աճառյանի՝ սրանով վերանուն է *վարդիք* բառի հետ շփոթելու կասկածը:

Վարդուրախ - «վարդ» + «ուրախ» բառերից:

2. Կենդանիների անուններից առաջացած անձնանունները.

Առյուծ - *առյուծ* կենդանու անունից:

Արծիվ - «արծիվ» բառից, իբրև անձնանուն՝ քիչ գործածական է Կովկասում:

Արջուկ - «արջ» բառի փաղաքշականն է:

Արտույտ - *արտույտ* թռչունի անունից:

Բազա - *բազա կամ բազե* թռչունի անունից:

Բաթիկ (այժմ՝ Բադիկ) - «բադ» բառի փաղաքշական ձևից, հնչվում և գրվում է *Բաթիկ*, որից էլ՝ *Բաթիկյան* ազգանունը:

Գազան - «գազան» բառից:

Գալ - «գալ» բառից:

Գալձագ - «գալ» + «ձագ» բառերից:

Գալուկ - «գալ» բառի փաղաքշական ձևից:

Գառնիկ - «գառն» բառի փաղաքշականն է:

Եզնիկ - «եզն» բառից:

Ընձակ - «իճ» (վագր) բառի նվազականից, դարձել է *Ընձաք, Ընձակ, Ընծաք*:

Ընձեր - «իճ» բառի հոգնակի (ընձեր) ձևից:

Ընջուղ - «ընջուղ» (երինջ) բառից:

Կեչեղակ - *կաչաղակ* թռչնանվան ժողովրդական ձևից:

Կոռնակ - «կորյուն» (առյուծի ձագ) բառի գգվականն է՝ ըստ Հր.

Աճառյանի:

Կորյուն - «կորյուն» (առյուծի ձագ) բառից:

Ձագիկ - «ձագ» բառի փաղաքշականն է:

Ճնճուկ - *ճնճուկ* թռչնանունից:

Մարախ - «մարախ» (մորեխ) բառից:

Մուկն - «մուկն» բառից:

Յուշապ (Հուշապ) - «վիշապ» բառի ժղ. «ուշապ» կամ «յուշապ» ձևից:

Շերամ - «շերամ» (մետաքսի որդ) բառից: Նորահնար անուն է:

Սոխակ - *սոխակ* թռչունի անունից: Հազվագյուտ նոր անուն է:

Վիշապ - «վիշապ» (1. դից. Ամպրոպային չար ոգի՝ փոթորկի անձնավորումը, որ աշխատում է կլանել արեգակը: 2. Պտուտակահողմի անձնավորումը, սատանի քամի և թևավոր առասպելական հրեշ, որ կլանում է մարդկանց ու կենդանիներին: 3. Ահասարսափ հրեշ, դև: 4. Վիշապօձ: 5. Ծովային հրեշ: 6. Արևադարձային երկրներում ծառերի վրա ապրող մողես: 7. փխբ. Չարագործ արյունարբու մարդ, հրեշ) բառից: Անսովոր անուն է, պետք չէ շփոթել *Վիշապ* անվան հետ:

3. Ազգակցական կապեր ցույց տվող բառերից առաջացած անձնանունները.

Աղվերանի - «եղբայր» բառի հոգնակի ձևն է:

Աղբերիկ - «եղբայր» բառի ժողովրդական «աղբայր», «աղբեր» ձևերից:

Աղբերացեղ - «եղբայր» + «ցեղ» բառերից, նշանակում է իբր «եղբոր ցեղից»:

Եղբայր - «եղբայր» բառից, որ մաս իբրև անձնանուն է գործածվում:

Եղբայրիկ - *Եղբայր* անվան փաղաքականն է:

Թռռն - «թռռն» բառից, որից առաջացել է մաս գգվական *Թռռնիկ* անունը:

Թռռնիկ - «թռռն» բառից:

Խաչեղբայր - «խաչ» + «եղբայր» բառերից (հայերենում խաչեղբայրը կնքահոր օգնականն է պսակի արարողության ժամանակ):

Խաչպապ - «խաչ» + «պապ» բառերից:

Խերիներ - «խեր» բառից կրկնությամբ, նշանակում է «հոր հայրը՝ պապ»: Հայրը այսպես է կոչել որդուն՝ իբրև հիշատակ իր հոր:

Խերպարոն - «խեր» (հայր) + «պարոն» (1. պատմ. Կլիկյան շրջանում ազնվական կալվածատիրոջ տիտղոս: 2. Մեծավոր, տեր: 3. Տանտերը ծառայի նկատմամբ: 4. Տղամարդուն դիմելու հարգական բառ) բառերից:

Հայր - «հայր» բառից. իրապես անուն չէր, այլ տիտղոս, որ կրում էին Արշակունի թագավորների բոլոր մարդպետները (պալատի կանանոցի գլխավորը):

Հայրանուն - «հայր» + «անուն» բառերից, նշանակում է՝ ծնողները կարող են իրենց որդուն կոչել իր հոր անունով:

Հայրանտոն - «հայր» բառից + *Անտոն* անունից, որ մեր մեջ հարգված ճգնավոր է:

Հայրուկ - «հայր» բառից՝ *-ուկ* փաղաքական մասնիկով (սեռականը՝ *Հայրկան*, բայց գուցե ուղղականն է՝ *Հայրիկ*):

Հերիեր - «հայր» բառի կրկնությունն է, որ նշանակում է «հոր հայր կամ պապ» (կապ չունի համանուն գյուղի անվան հետ):

Որդյակ - «որդյակ» բառից, որը «որդի» բառի փաղաքշականն է:

Որդիք - «որդի» բառի հոգնակի ձևից:

Որդոց - «որդի» բառի սեռական *որդ(ւ)ոց* ձևից. ակնարկությամբ «Որդվույն, Որտոման»:

Պապիկ - «պապ» (մեծ հայր) բառով + *-իկ* փաղաքշական մասնիկով:

4. Մարմնի մասերի անուններից առաջացած անձնանունները.

Բազուկ - «բազուկ» (թև) բառից:

Գիսակ - «գիսակ» (վարս) բառից, հմմտ.՝ Վարսենիկ:

Թաք - «թաք» (ձեռք) բառից:

Թաթիկ - «թաք» (ձեռք) բառից, նրա փաղաքշական ձևն է, ինչպես ունենք նաև *Թաթուլ*:

Թաթուլ - «թաթուլ» (անասունների առջևի ոտքը) բառից, որ «թաք» բառի փաղաքշականն է:

Թև - *թև* բառից:

Թևիկ - «Թև» անվան փաղաքշականն է:

Ծոցիկ - «ծոց» բառի փաղաքշականից: Սրանից է *Ծոցիկյան* ազգանունը, որ այժմ էլ գործածական է:

5. Զբաղմունքի՝ պաշտոն, տիտղոս, արհեստներ նշանակող բաներից առաջացած անձնանունները.

Աղան - «աղան» բառից, որ հասարակ անուն է և նշանակում է «ազնվական, իշխան»:

Ամիրլույս (Ամիրլոյս) - արաբ. «amir» (իշխան) + հյ. «լույս», «լոյս» (լոյս) բառերի բարդությամբ, իբր համապատասխան հյ. *Պարոնլույս* և *Լույսպարոն* անուններից:

Առաջպարոն - «առաջ» + «պարոն» բառերից, նշանակում է «պարոններից առաջինը»:

Ասլիպարոն - արաբ. aslı «ասլի» (բուն) + հյ. «պարոն» բառերից, նշանակում է «նա, որի բուն ցեղը պարոններից է»:

Ասպետ - «ասպետ» (ձիավոր իշխան) բառից:

Ավագշահ - *Ավագ* անունից + պրս. Sah «շահ» (թագավոր) բառից:

Ավագպարոն - «ավագ» + «պարոն» (1. պատմ. Կիլիկյան շրջանում՝ ազնվական կալվածատիրոջ տիտղոս: 2. Մեծավոր, տեր: 3. Տանտերը ծառայի նկատմամբ: 4. Տղամարդուն դիմելու հարգական բառ) բառերից:

Ավագտեր - «ավագ» + «տեր» բառերից, կա նաև հակադիր ձևը՝ Տիրավագ:

Գուսան - «գուսան» (երգիչ) բառից:

Դասապետ - «դաս» + «պետ» (1. Որևէ բանի անմիջական ղեկավարությունն իրականացնող՝ ապահովող պաշտոնական անձ, վարիչ, կառավարիչ, ղեկավար: 2. Մեկի՝ մի բանի անմիջական կարգադրիչ՝ ղեկավար անձ: 3. Ջինվորական հրամանատար) բառերից:

Դպիր - «դպիր» հին գրք. (1. Քարտուղար: 2. Բանաստ. ձեռագիր ընդօրինակող, գրիչ: 3. Ուսյալ՝ գիտուն մարդ: 4. եկեղ. Եկեղեցու ընթերցող, երգիչ) բառից, ինչպես ունենք *Տիրացու* և *Գրոց*:

Ջորավար - «գորավար» բառից, որ սուրբ Սարգսի և քաջն Վարդանի վերադիրն էր:

Թագավոր - «թագավոր» բառից: Սրանից է *Թագավորյան* ազգանունը:

Լույսպարոն (Լոյսպարոն) - «լույս» + «պարոն» (1. պատմ. Կիլիկյան շրջանում՝ ազնվական կալվածատիրոջ տիտղոս: 2. Մեծավոր տեր: 3. Տանտեր ծառայի նկատմամբ: 4. Տղամարդուն դիմելու հարգական բառ) բառերից, սովորական է այժմ Խրիմում և Նախիջևանում: Սրանից է *Լուսպարոնյան* ազգանունը:

Խանապետ - բարդված է պրս. «խան» (ավատական իշխանների, կառավարիչների, ինքնակալի տիտղոս միջնադարյան Արևելքում, ինչպես և այդ տիտղոսը կրող անձ) + հյ. «պետ» (1. Որևէ բանի անմիջական ղեկավարությունն իրականացնող՝ ապահովող պաշտոնական անձ, վարիչ, կառավարիչ, ղեկավար: 2. Մեկի՝ մի բանի անմիջական կարգադրիչ՝ ղեկավար անձ: 3. Ջինվորական հրամանատար) բառերից:

Հագարապետ - «հագար զինվորների պետ» բառակապակցությումից:

Հոյ - «հոյ» արմատն է (օրինակ՝ հոյակապ): «Հոյ»-ը հին ու բնիկ անկախ հայերեն բառ է, որ նշանակում է «իշխան, պետ»:

Մախսագ - «մաղխագ» բառից, որ նշանակում է «հայ Արշակունիների թիկնապահ զորքի պետ (Ժառանգաբար ընտրվում էր Խոռխոռունիների կողմից)»:

Մաղխագ - «մաղխագ» բառից, որ նշանակում է «արքայական պահապանների գլխավորը»:

Մանկավագ - «մանուկ» + «ավագ» (1. Տարիքով մեծ՝ ամենամեծ: 2. Կոչումով՝ պաշտոնով ավելի բարձր: 3. Մարդկանց որևէ խմբի ղեկավար՝ մեծ պետ: 4. Ազնվականության բարձր խավին պատկանող) բառերից:

Մանկլավ - «մանկլավիկ» (արքունի սպասավոր) բառի կրճատված ձևն է:

Մանկտավագ - «մանկտի» + «ավագ» բառերից, նշանակում է «մանուկների ավագ, ուսուցիչ կամ վարժապետ»: Եզակի ձևով՝ Մանկվագ:

Մեծավագ - «մեծ» + «ավագ» (1. Տարիքով մեծ՝ ամենամեծ: 2. Կոչումով՝ պաշտոնով ավելի բարձր: 3. Մարդկանց որևէ խմբի ղեկավար՝ մեծ պետ: 4. Ազնվականության բարձր խավին պատկանող) հոմանիշներից:

Մեծպարոն - «մեծ» + «պարոն» (1. պատմ. Կիլիկյան շրջանում՝ ազնվական կալվածատիրոջ տիտղոս: 2. Մեծավոր տեր: 3. Տանտերը ծառայի նկատմամբ: 4. Տղամարդուն դիմելու հարգական բառ) բառերից:

Մշակ - «մշակ» (երկրագործ) բառից:

Մոգպաշտե - «մոգ» (կրոն. պատմ. 1. Ջրադաշտական կրոնի հոգևոր պաշտոնյա, քուրմ: 2. Ջրադաշտական կրոնին հետևող կրակապաշտ: 3. հնց. Մարգարե, գուշակ: 4. փխբ. Որևէ ձիրքով կամ հատկությամբ բացառիկ մարդ, արտակարգ ձիրքով բոլորին հմայող՝ գերող մարդ) + «պաշտել» բառերից, նշանակում է «մոգեբին ծառայող»:

Մունքիկ - «մոնք» (շղ. մունք) բառից, որ նշանակում է «փոքրավոր, աշակերտ»:

Նահապետ - «նահապետ» (1. Մի տոհմի՝ ցեղի նախահայր: 2. պատմ. Նախարարական տան գլխավոր՝ նախարար: 3. փխբ. Գիտության, գրականության՝ արվեստի և որևէ այլ բնագավառի ավագագույն մեծավաստակ: 4. փխբ. Որևէ գերդաստանի ավագագույն տղամարդ: 5. փխբ. Առհասարակ որևէ համայնքի ավագագույն տղամարդը, ամենածերը տվյալ համայնքում: 6. փխբ. Անտառի, պարտեզի և այլն ամենից մեծ տարիքն ունեցող ծառը: 7. փխբ. Իր տեսակի՝ միջավայրի և այլնի մեջ որևէ տեսակետից ամենից աչքի ընկնողը՝ ներկայացուցիչը) բառից:

Նորապետ - «նոր» + «պետ» (1. Որևէ բանի անմիջական ղեկավարությունն իրականացնող՝ ապահովող պաշտոնական անձ, վարիչ, կառավարիչ, ղեկավար: 2. Մեկի՝ մի բանի անմիջական կարգադրիչ՝ ղեկավար անձ: 3. Ջինվորական հրամանատար) բառերից, ինչպես կա օտար բառով *Նորամիր*:

Նորավագ - «նոր» + «ավագ» (1. Տարիքով մեծ՝ ամենամեծ: 2. Կոչումով՝ պաշտոնով ավելի բարձր: 3. Մարդկանց որևէ խմբի ղեկավար՝ մեծ պետ: 4. Ազնվականության բարձր խավին պատկանող) բառերից:

Նորպարոն - «նոր» + «պարոն» (1. պատմ. Կիլիկյան շրջանում՝ ազնվական կալվածատիրոջ տիտղոս: 2. Մեծավոր տեր: 3. Տանտերը ծառայի նկատմամբ: 4. Տղամարդուն դիմելու հարգական բառ) բառերից:

Շերասաց - «երգիչ, երգասաց» բառերից:

Շնորհավորչահ - *Շնորհավոր* անունից + *շահ* (թագավոր) պատվանունից:

Ոստանիկ - «ոստանիկ» (արքունի, ազնվական) բառից: Նորահնար անուն էր 18-րդ դարում:

Պատրոն - «պատրոն» (1. Որևէ բանի տեր՝ գլխավոր՝ տնօրեն: 2. եկեղեց. Որևէ եկեղեցի կառուցող կամ որևէ եկեղեցու հովանավոր: 3. փխբ. Տեր, պետ: 4. փխբ. Փամբուշտ) բառից, որ, սակայն, օտար փոխառություն է:

Պատրոնիկ - Պատրոն անձնանվան փառաբշական ձևն է:

Պարետ - «պարետ» (վերակացու, հսկող) բառից:

Պարոն - «պարոն» բառից, որ եվրոպական փոխառություն է: Նախ իշխանական աստիճան էր, ապա եղավ Ռուսիայան արքայորդիների տիտղոս, հետո դարձավ հասարակ պատվանուն, այժմ էլ վերացված է: Սրանից է Պարոնյան ազգանունը:

Պարոնակ - Պարոն անունից՝ -ակ-ից փառաբշական մասնիկով:

Պարոնաղա - Պարոն անունից + աղա պատվանունից բարդված:

Պարոն ավագ- բարդված է հյ. Պարոն անունից + «ավագ» (1. Տարիքով մեծ՝ ամենամեծ: 2. Կոչումով՝ պաշտոնով ավելի բարձր: 3. Մարդկանց որևէ խմբի ղեկավար՝ մեծ պետ: 4. Ազնվականության բարձր խավին պատկանող) բառից:

Պարոնույս - «պարոն» + «ույս» բառերից, ինչպես կա նաև հակադիր ձևով՝ Լույսպարոն:

Պարոնտեր - «պարոն» + «տեր» (1. Այն անձը, որին պատկանում է մի բան: 2. Սեփականատեր, մասնավոր սեփականություն ունեցող անձ: 3. պատմ. Երկրի՝ երկրամասի՝ գավառի տիրակալ: 4. հնց. Ստրկատեր: 5. պատմ. Ազնվական տոհմի գլխավորը, որին պատկանում է որպես ժառանգական սեփականություն՝ տվյալ երկրամասը՝ գավառը: 6. Վարձակալ) բառերից:

Սեպուհ - «սեպուհ» իշխանական տիտղոսից: Նորակերտ անուն է:

Վաճառական - «վաճառական» բառից է:

Վարդիշխան - «վարդ» + «իշխան» բառերից, նշանակում է «վարդերի իշխանը»:

Տեր - «տեր» (1. Այն անձը, որին պատկանում է մի բան: 2. Սեփականատեր, մասնավոր սեփականություն ունեցող անձ: 3. պատմ. Երկրի՝ երկրամասի՝ գավառի տիրակալ: 4. հնց. Ստրկատեր: 5. պատմ. Ազնվական տոհմի գլխավորը, որին պատկանում է որպես ժառանգական սեփականություն՝ տվյալ երկրամասը՝ գավառը: 6. Վարձակալ) բառից:

Տերիկ - «տեր»՝ բառից -իկ գգվական մասնիկով. հմմտ. -ուկ մասնիկով Տեքուկ անվան հետ:

Տիրապետ - «տեր» + «պետ» (1. Որևէ բանի անմիջական ղեկավարությունն իրականացնող՝ ապահովող պաշտոնական անձ, վարիչ, կառավարիչ, ղեկավար: 2. Մեկի՝ մի բանի անմիջական կարգադրիչ՝ ղեկավար անձ: 3. Զինվորական հրամանատար) բառերից:

Տիրավագ - «տեր» + «ավագ» (1. Տարիքով մեծ՝ ամենամեծ: 2. Կոչումով՝ պաշտոնով ավելի բարձր: 3. Մարդկանց որևէ խմբի ղեկավար՝ մեծ պետ: 4. Ազնվականության բարձր խավին պատկանող) բառերից. հակադիր ձևն է՝ Ավագատեր:

Տղապարոն - «տղա(յ)» + «պարոն» (1. պատմ. Կիլիկյան շրջանում՝ ազնվական կալվածատիրոջ տիտղոս: 2. Մեծավոր տեր: 3. Տանտերը ծառայի նկատմամբ: 4. Տղամարդուն դիմելու հարգական բառ) բառերից:

Տոնապետ - «տոն» + «պետ» (1. Որևէ բանի անմիջական ղեկավարությունն իրականացնող՝ ապահովող պաշտոնական անձ, վարիչ, կառավարիչ, ղեկավար: 2. Մեկի՝ մի բանի անմիջական կարգադրիչ՝ ղեկավար անձ: 3. Զինվորական հրամանատար) բառերից. սրանից է *Տոնապետրյան* ազգանունը:

Տոնավագ - «տոն» + «ավագ» բառերից. հմմտ. *Տոնապետր* անվան հետ, որտեղ պետ = ավագ:

6. Երկնային մարմինների, բնության տարբեր երևույթների, հին հայկական ամսանունների, օրվա, ժամանակի անուններից առաջացած անձնանունները.

Ամանոր - «ամ» (տարի) + «նոր» բառերից, իբրև «նոր տարի», հին հայկական հեթանոսական կրոնում նոր տարվա աստվածը, որ խորհրդանշում էր հունձքը և առատությունը:

Ամպակ - «ամպ» բառից, համարվում է Խորենացու հնարած անուններից մեկը, գրվում է նաև *Ամբակ* ձևով: Ծանոթ է միայն Հայկազեանց շրջանից և այլևս երբեք չի գործածվել:

Անձրև - «անձրև» բառից:

Արև - «արև» (արեգակ) բառից: Սրանից է *Արևյան* ազգանունը:

Արևհար - «արև» + «հար» բառերից:

Արևշատ - «արև» + «շատ» բառերից, նշանակում է «կյանքը երկար»։ Սրանից է *Արևշարյան* ազգանունը, հակադիրն ու համանիշն է՝ Շատարև։

Արևքո - «արև» + «քո» բառերից, նշանակում է «քո արև»։

Գարունիկ - «գարուն» բառի փաղաքշականից, նորակերտ անուն, սակավ գործածական Երևանում։

Լույս (Լոյս) - «լույս» բառից. այս անունն էր տալիս Ն. Շնորհալին որևէ մեկի հետ խոսելիս։

Լուստո - «լույս» բառից՝ *-ուր* մասնիկով, իբրև «լուստո, լուսավոր»։

Մեհեկի - *մեհեկի* (մեհեկան՝ պատմ. հին հայկական տոմարի յոթերորդ ամիսը՝ հուլիս արայի և արեգի միջև) ամսանունից, որ իբրև թե նշանակում է «Հայկ Նահապետի յոթ որդիներից մեկը, որից ծագել է մեհեկի ամսանունը»։

Նավասարդ - *նավասարդ* (1. Հայկական տոմարի առաջին ամիսը, որով սկսվում է տարին։ 2. Ամանորի հանդես՝ տոնակատարություն՝ տոն) ամսանունից, որը հին հայկական տոմարով Նոր տարին է։

Ուրբաթ - *ուրբաթ* օրվա անունից։

Ուրբաթիկ - *Ուրբաթ* անվան փաղաքշական ձևն է։

7. Կրոնական գաղափարների ազդեցության տակ ստեղծված անձնանունները.

Աստվածապով - «Աստված» + գվռ. «ապով» (հուսով, հուսացած, մեկի վրա ապավինած) բառերից. վերջինը գրաբարի «ապով» բառն է, որ միջին հայերենում ունենք «յապով» ձևով։

Աստվածասեր - «Աստված» + «սեր» բառերից, նշանակում է «Աստծուն սիրող»։

Աստվածատուր - «Աստված» + «տուր» բառերից, նշանակում է «Աստծու տվածը»։

Աստվածատրիկ - *Աստվածատուր* անվան՝ *-իկ* գգվական մասնիկով կազմված փաղաքշականն է, որը, սակայն, շատ անտվոր է։

Գագառուր - *Գագ* անունից + «տուր» բառից, նշանակում է «Գագի տվածը», ինչպես՝ Խաչատուր, Տիրատուր, Գրիգորատուր, Քրիստոսատուր և այլն: Բայց այս *Գագ* անունով պետք է հասկանալ ոչ քե *Գագ* անձնանունը, այլ վրաց դաշտի Գագա(յ) Ս. Խաչը, որ նշանավոր ուխտատեղի էր:

Գալիկ - *Գալուար* անվան փաղաքականն է. սրանից է *Գալիքյան* ազգանունը:

Գալոց - այսպես կոչված են ի հիշատակ Քրիստոսի երկրորդ գալստյան:

Գալուստ - կրճատված է «Հոգեգալուստ» բառից՝ տոնական բաներից կազմված անունների համար:

Գրիգորատուր - *Գրիգոր* անունից + «տուր» բառից, նշանակում է «Գրիգորի տվածը»:

Դերենիկ - «դերեն» (որդի վանաց) բառի փաղաքականն է և նշանակում է «ուխտական զավակ», արմատն է՝ «դերի», որ նշանակում է «վանք»:

Երեց - «երեց» բառից:

Երիցակ - «երեց» (քահանա) բառի նվազականից:

Չատիկ - «զատիկ» (տոն հարություն) բառից:

Ժամհայր - «Ժամ» (եկեղեցի) + «հայր» բառերից, նշանակում է «եկեղեցասեր մարդ», որի իգականն է՝ Ժամխաթուն:

Խաչագիզ - «խաչ» + արաբ. Aziz «ազիզ» (սուրբ) բառերից:

Խաչանես - «խաչ» բառից, ազդված է *Յովհաննէս, Վրթանէս*, անուններից: Հազվագյուտ գործածություն է ունեցել հնում և այժմ էլ անգործածական է:

Խաչանուն - «խաչ» + «անուն» բառերից, նշանակում է «խաչի տվածը», ինչպես՝ Աստվածատուր, Տիրատուր, Վիրապտուր, Գրիգորատուր, Քրիստոսատուր:

Խաչենիկ - «խաչ» բառից: Ճիշտ այն ձևով, ինչպես *Սաքենիկ, Վարսենիկ, Արփենիկ, Նազենիկ* անունները:

Խաչեր - «խաչ» բառի հոգնակին է կամ *Խաչերես* անվան կլորճատումը:

Խաչերես - «խաչ» + «երես» բառերից:

Խաչեվարդ - «խաչ» + «վարդ» բառերից:

Խաչիկ - «խաչ» բառի նվագականն է, որ գործածվում է իբրև *Խաչարություն* անվան փառաբանական, սակայն դարձել է նաև առանձին և անկախ անուն:

Խաչում - «խաչում» (խաչելություն) բառից:

Ծատուր - համառոտված *Ասրվածատուր* անունից:

Հաճություն - «հաճություն» (իհարկե աստվածային հաճություն) բառից, ինչպես ունենք *Հարություն*:

Համբարձում - «համբարձում» բառից, ակնարկությամբ Քրիստոսի համբարձման:

Հայրապետ - «հայրապետ» (կաթողիկոս կամ վանահայր) բառից:

Ճգնավոր - «ճգնավոր» բառից. սրանից է *Ճգնափորյան* ազգանունը:

Մարգարե(է) - «մարգարե» բառից:

Մեծատուր - «մեծ» + «տուր» բառերից: Սրանից է կազմված *Մեծատուրյան* ազգանունը:

Մեծերեց - «մեծ» + «երեց» բառերից:

Սկրտիչ - «մկրտել» բայից, ակնարկությամբ Հովհաննես *Մկրտչի*, որի համար նույնպես տեղ-տեղ գործածված է միայն Սկրտիչ վերադիրը՝ իբրև հատուկ անուն:

Սկրտում - «մկրտում» (մկրտություն) բառից, ակնարկվում է Հորդանան գետում Հիսուսի մկրտությունը:

Հարություն (Յարություն) - «հարություն» բառից, ակնարկությամբ Քրիստոսի հարության:

Նահատակ - «նահատակ» (1. կրոն. Հավատի պաշտպանության համար զոհված մարդ: 2. փխբ. Որևէ գործի՝ գաղափարի և այլնի համար իրեն զոհաբերած մարդ: 3. փխբ. Շատ տանջված՝ տառապած՝ չարչարված մարդ) բառից:

Ուխտատուր - «ուխտ» + «տուր» բառերից, նշանակում է «ուխտով տրված իրեն, ուխտական զավակ»:

Ուխտիկ - *Ուխտանես* կամ *Ուխտարություն* անվան կրճատ ձևն է:

Սաղմոսիկ - «սաղմոս» բառից. հիշատակված է նաև Սաղմոսավանքը:

Սարկավագ - «սարկավագ» (1. Քահանայից կրտսեր եկեղեցական պաշտոնյա: 2. Քրիստոնեական համայնքի տնտեսական գործերը վարող պաշտոնյա) բառից:

Վանատուր - «վանք» + «տուր» բառերից, ըստ Հր. Աճառյանի՝ նշանակում է «հյուրընկալ, հյուրասիրություն ցույց տվող»:

Վարդապետ - «վարդապետ» բառից:

Վարդավառ - Վարդավառ տոնի անունից կազմված նորակերտ անուն:

Վարդարան - «վարդարան» (1. Վարդանոց՝ վարդերի տնկարան՝ մարգ: 2. եկեղ. Երկար համրիչ՝ տերողորմյա, որ գործածում են կաթոլիկները աղոթելիս: 3. Առհասարակ համրիչ, տերողորմյա: 4. Ուլունքաշար, հուլունքների շարան) բառից:

Տեառնորդի - «տեր» բառի սեռ. «տեառն» ձևից + «որդի» բառից:

Տեառնտուր - «տեր» բառի սեռ. «տեառն» ձևից + «տուր» բառից:

Տերավագ - «տեր» + «ավագ» բառերից բարդված: Առավել ճիշտ ձևն է՝ Տիրավագ:

Տերպապ - «տեր» + «պապ» բառերից, պոլսահայ բարբառում «տերպապա» նշանակում է «քահանա»: Այս նույն ձևով է գործածվում նաև Նոր Նախիջևանի բարբառում:

Տերտուր - «տեր» + «տուր» բառերից, նշանակում է «տիրոջ տվածը»:

Տերտեր - «տերտեր» (1. Եկեղեցուն ծառայող անձ: 2. կրոն. Աստվածհարգական կոչական բառ մեկին դիմելու համար: 3. Իշխող, իրեն ենթարկող, տան գլխավոր: 4. Քահանա) բառից:

Տիրագդ - «տեր» + «ագդ» բառերից, նշանակում է «տիրոջից ազդված կամ ներշնչված»:

Տիրայր - «տեր» + «այր» բառերից, նշանակում է «Տիրոջ մարդ»:

Տիրատուր - «տեր» + «տուր» բառերից, նշանակում է «Տիրոջ տվածը»:

Տիրացու - «տիրացու» (1. եկեղ. Ստորին պաշտոնյա՝ սարկավազից կրտսեր՝ դպիր: 2. կրոն. հնց. Նա, որ պատրաստվում է տերտեր, քահանա դառնալու: 3. Տերտերացու) բառից:

Քրիստոսասեր - «Քրիստոս» անունից + «սեր» բառից:

Քրիստոսատուր - *Քրիստոս* անունից + «տուր» բառից, նշանակում է «Քրիստոսի տվածը»:

8. Ածականներից առաջացած անձնանունները.

Ազնավուր - գվռ. «ազնավուր» (հսկա, վիթխարի մարդ, դյուցազն) բառից, արմատն է՝ «ազն»:

Ամենավագ - «ամեն» + «ավագ» բառերից, իբրև «բոլորից մեծ»:

Անանուն - *-ան-ը* + «անուն» (անուն չունեցող) բառից:

Անանց - *-ան-ը* + «անց» (որ չի անցնի, չի վերջանա, մնայուն) բառից:

Անդրանիկ - «անդրանիկ» (մեծ, երեց, ավագ) բառից:

Անդրիկ - *Անդրանիկ* անվան փաղաքշական ձևն է:

Անպետ - «անպետ» (անպետք, անպիտան) և կամ «անպետ» (անգլուխ, անիշխան, անտեր) բառից: Առաջինն ավելի հավանական է, որովհետև կա *Անպիտքյան* ազգանունը:

Արթուն - *Գրիգոր* անվան քարզմանությունն է:

Ավագ - «ավագ» (1. Տարիքով մեծ՝ ամենամեծ: 2. Երեց՝ կոչումով՝ պաշտոնով ավելի բարձր: 3. Մարդկանց որևէ խմբի ղեկավար՝ մեծ պետ: 4. Ազնվականության բարձր խավին պատկանող) բառից:

Ավագիկ - *Ավագ* անվան փաղաքշականն է:

Բարեմանուկ - «բարի» + «մանուկ» (1. Փոքրիկ երեխա: 2. Փոքրահասակ տղա կամ աղջիկ, պատանեկության չհասած տղա կամ աղջիկ: 3. Մանկական, մանկության հասակին հատուկ: 4. Դեռատի, մանկահասակ: 5. Ամեղ, անփորձ) բառերից:

Գեշ - «գեշ» (վատ, տգեղ) բառից: Չարմանալի է մեզ համար այսպիսի վատ իմաստով ածականի գործածությունը՝ իբրև անձնանուն:

Գիշուկ - «գեշ» (վատ, տգեղ) բառից, որ նույնպես գործածական է իբրև անձնանուն:

Գոռ - «գոռ» (հպարտ) բառից:

Երանի - «երանի» (երջանիկ, բախտավոր) բառից:

Երկայն - «երկայն» բառից:

Ջգոն - «զգոն» (խելոք, իմաստուն) բառից:

Թանգի - կրճատված է փաղաքշական *Թանգիկ* անունից:

Թուխայր - «թուխ» + «այր» (տղամարդ) բառերից, ինչպես՝ Նորայր, Ժիրայր, Տիրայր, Ջարմայր: Սրանից է կազմված *Թուխայրյան* ազգանունը:

Ժիրայր - «ժիր» + «այր» (մարդ) բառերից, նշանակում է «ժիր տղամարդ»: Նորակերտ և սովորական անուն է:

Խալերես - ըստ Հր. Աճառյանի՝ հյ. «խալ» + «երես» բառերից է, նշանակում է «նա, ով երեսին խալ ունի»:

Խելոք - «խելոք» (իմաստուն) բառից:

Ծեր - «ծեր» (ծերունի) բառից: Սրանից է *Ծերենց* ազգանունը:

Կանաչ - «կանաչ» բառից՝ իբրև նշան թարմության և կենդանության:

Կապուտիկ - «կապույտ» բառից, որ նաև անձնանուն է: Սրանից է *Կապույտիկյան* ազգանունը:

Կարճիկ - «կարճ» բառի փաղաքշականն է: Սրանից ունենք *Կարճիկյան* ազգանունը:

Կենսաբեր - «կենսաբեր» (կյանք բերող) բառից:

Կտրիճ - «կտրիճ» (քաջ) բառից:

Հազարադեղ - «հազար» + «դեղ» բառերից, նշանակում է «հազար ցավերի դեղ», ինչպես՝ Խոցդեղ:

Հազարմարդ - «հազար» + «մարդ» բառերից, նշանակում է «նա, ով հազար մարդ արժե»:

Հայկազն - *Հայկ* անունից + «ազն» (ցեղ, սերունդ) բառից. սկզբում միայն ածական էր, այժմ՝ անձնանուն:

Հրաչյա - «հուր» + «աչք» բառերից, նշանակում է «հրեղեն աչքեր ունեցող»:

Մանուկ - «մանուկ» բառից: Պոլսում համարում են *Մանուկ* անվան փաղաքշականը, բայց ճիշտ չէ, որովհետև ունենք *մանկիկ* կամ *մանուկ* (1. Փոքրիկ երեխա: 2. Փոքրահասակ տղա կամ աղջիկ,

պատանեկության չհասած տղա կամ աղջիկ: 3. Մանկական, մանկության հասակին հատուկ: 4. Դեռատի, մանկահասակ: 5. Ամեն, ամփոփ):

Մոմեղեն - «մոմեղեն» (մոմից շինած) բառից:

Նորագն - «նոր» + «ագն» (որևէ ցեղից սերված) բառերից. ինչպես ունենք *Հայկազն*:

Նորայր - «նոր» + «այր» (տղամարդ) բառերից: Այժմ սովորական գործածություն ունի:

Նորատունկ - «նոր» + «տունկ» բառերից: Սրանից է *Նորասրունկյան* ազգանունը:

Նորիկ - «նոր» բառից՝ *-իկ* փաղաքական մասնիկով:

Նորուկ - «նոր» բառից՝ *-ուկ* փաղաքական մասնիկով:

Ոսկեգույն (Ոսկեգոյն) - «ոսկի» + «գույն (գոյն)» բառերից, հիմք է հանդիսացել մագերի գույնը:

Ուրախ - «ուրախ» բառից:

Պատիկ - «պատիկ» (փոքր) բառից:

Սևեկ - «սև» բառից՝ գգվական ձևով:

Սևիկ - «սև» բառից՝ *-իկ* գգվական մասնիկով:

Փոքրիկ - «փոքրիկ» բառից:

9. Թվականներից, մակբայներից, բայերից, բայերի խոնարհված ձևերից, դերբայներից առաջացած անձնանունները.

Ապրես - «ապրես» (կեցցես) ձևից, իբրև արական անուն՝ այժմ էլ պատահում է Կովկասում:

Եկավ - «եկավ» բառից:

Խնդրած - «խնդրած» (ուխտով խնդրած) բառից:

Փախչան - «փախչիլ» բայից, նշանակում է «լավ վագող»:

10. Իմաստային այլ փաղաղիչներից առաջացած անձնանունները.

Այրուկ - «այր» (մարդ) բառի փաղաքականից:

Առնակ - «այր» բառի սեռ. «առն» ձևից, հմմտ.՝ *Առնակ*, այսինքն՝ «այրի, այրական»:

Արքայություն - «արքայություն» (թագավորություն) բառից:

Ավետաբեր - «ավետաբեր» (ավետիս բերող) բառից:

Բարիլույս - «բարի» + «լույս» բառերից: Սրանից է *Բարիլույսյան* ազգանունը:

Բերդակ - «բերդ» բառի փաղաքշական ձևն է:

Գավազան - «գավազան» բառից:

Գյուտ - «գյուտ» (գտնված) բառից, այժմ որպես անձնանուն անգործածական է, բայց կա կրոնավորների շրջանում:

Գյուտիկ - *Գյուտ* անվան գգվական ձևն է:

Դարման - «դարման» (դեղ, ճար, հնար, միջոց) բառից:

Ջինավոր - «զինավոր» բառից, որ սուրբ Սարգսի վերադիրն է:

Հայկասեր - *Հայկ* անունից + «սեր» բառից, նշանակում է «Հայկի սերնդից, Հայկից սերած»:

Հայրատեղ - «հայր» + «տեղ» բառերից, նշանակում է՝ «իր հոր տեղը բռնել է կամ պիտի բռնի»:

Մարտիկ - «մարտիկ» (մարտնչող, ռազմիկ, քաջամարտիկ) բառից. նորակերտ անուն է:

Մեղրիկ - «մեղր» բառից կամ *Մեղրի* տեղանունից:

Մոմիկ - «մոմ» բառի փաղաքշականից:

Ոստան - «ոստան» (արքունիք) բառից:

Պապանուն - «պապ» + «անուն» բառերից, նշանակում է՝ երեխային կոչել են պապի անունով:

Պարույր - «պարույր» (շրջան, պտույտ) բառից:

Պարոնվարդ - «պարոն» + «վարդ» բառերից:

Վարդպապ - «վարդ» + «պապ» բառերից:

Տոներ - «տոն» բառի հոգնակին է, ըստ Հր.Աճառյանի՝ ակնարկվում են երևի Չատիկն ու Ծնունդը:

**ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՐԱԿԱՆ
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

Հայկական ծագում ունեցող արական անձնանունների մեծ մասը ամանցավոր կազմություն ունի: Հայկական անձնանունները հիմնականում վերջամանցներով են կազմված: Իսկ բարդամանցավոր, պարզ և տարբեր խոսքի մասերի միացումով կազմված բարդ բառերից առաջացած անձնանունները փոքր խումբ են կազմում:

1. Պարզ կազմության անձնանուններ.

Ագատ, Ադան, Ադվոր, Անձրև, Առյուծ, Արծիվ, Արձան, Արքա, Արև, Բագա, Բալաս, Բալասան, Բախտ, Բարձր, Բույս, Գալլ, Գեշ, Գյուտ, Գոռ, Գուսան, Դալար, Դեղ, Դալիր, Եղբայր, Երեց, Թաթ, Թանգ, Թոռն, Թև, Լույս, Խաղ, Խունկ, Ծաղիկ, Ծառ, Ծեր, Ծով, Կանաչ, Կապույտ, Կաքավ, Կույս, Կորյուն, Կուրտ, Կտրիճ, Հայր, Հոգի, Դար, Մախազ, Մաղխազ, Մանկլավ, Մասուր, Մարախ, Մարաս, Մարգ, Մշակ, Մուկն, Յուշապ, Շերամ, Ոստան, Որդի, Ուրախ, Ուրբաթ, Պատրոն, Պարետ, Պարկեշտ, Պարոն, Ջաջուռ, Սեպուռ, Սմբուլ, Սոս, Տեր:

2. Ամանցավոր կազմության անձնանուններ.

Այրուկ (այր + ուկ), Անդուլ (ան + դուլ), Անանց (ան + անց), Ամպակ (ամպ + ակ), Աղբերիկ (աղբեր < եղբայր + իկ), Անպետ (ան + պետ), Ապուշ (ապ + ուշ), Առնակ (Առն + ակ), Ասպետ (Ասպ + ետ), Արևիկ (արև + իկ), Արթուն (արթ + ուն), Արջուկ (արջ + ուկ), Արտույտ (արտ + ույտ < ոյտ), Ավագիկ (ավագ + իկ), Ավետում (ավետ + ում), Բագուկ (բագ + ուկ), Բաթիկ (բաթ < բաղ + իկ), Բերդակ (բերդ + ակ), Բունիկ (բուն < բույն + իկ), Բուսիկ (բուս < բույս + իկ), Գալոց (գալ + ոց), Գալուստ (գալ + ուստ), Գալլուկ (գալլ + ուկ), Գառնիկ (գառն + իկ), Գիշուկ (գիշ < գեշ + ուկ), Գիսակ (գիս < գես + ակ), Գյուտիկ (գյուտ + իկ), Գրոց (գր < գիր + ոց), Դասիկ (դաս + իկ), Դեղին (դեղ + ին), Դոխիկ (դոխ + իկ), Եզնիկ (եզն + իկ), Եղբայրիկ (եղբայր + իկ), Երիցակ (երից < երեց + ակ), Զինավոր (զին + (ա)վոր), Ընձակ (ընձ < ինձ + ակ), Թաթիկ (թաթ + իկ), Թաթուլ

(թաթ + ու), Թափիչ (թափ + իչ), Թևիկ (թև + իկ), Թոռնիկ (թոռն + իկ), Թուխիկ (թուխ + իկ), Թփիկ (թփ < թուփ + իկ), Խաչեր (խաչ + եր), Խաչիկ (խաչ + իկ), Խաչոտ (խաչ + ոտ), Խաչուկ (խաչ + ուկ), Խաչում (խաչ + ում), Խնդակ (խնդ < խինդ + ակ), Խնդուն (խնդ < խինդ + ուն), Խնկիկ (խնկ < խունկ + իկ), Ծամիկ (ծամ + իկ), Ծառայիկ (ծառայ + իկ), Ծառիկ (ծառ + իկ), Ծառուկ (ծառ + ուկ), Ծերիկ (ծեր + իկ), Ծերուկ (ծեր + ուկ), Կայծակ (կայծ + ակ), Կապուտիկ (կապուտ < կապույտ + իկ), Կարճիկ (կարճ + իկ), Կորկոտակ (կորկոտ + ակ), Համբարձում (համ + բարձ + ում), Հայոց (հայ + ոց), Հայրուկ (հայր + ուկ), Չոնիկ (ձոն + իկ), Մանուկ (ման + ուկ), Մարտիկ (մարտ + իկ), Մոխակ (մեխ + ակ), Մոմեղեն (մոմ + եղեն), Մոմիկ (մոմ + իկ), Նորիկ (նոր + իկ), Նորին (նոր + ին), Նորուկ (նոր + ուկ), Ոստանիկ (ոստան + իկ), Ուխտիկ (ուխտ + իկ), Ուրբաթիկ (ուրբաթ + իկ), Պապիկ (պապ + իկ), Պապուկ (պապ + ուկ), Պատրոնիկ (պատրոն + իկ), Պարույր (պար + ույր), Պարոնակ (պարոն + ակ), Պարոնիկ (պարոն + իկ), Սաղմոսիկ (սաղմոս + իկ), Սիրական (սիր < սեր + ական), Սևիկ (սև + իկ), Վարդուկ (վարդ + ուկ), Տերիկ (տեր + իկ), Տիրիկ (տիր < տեր + իկ), Տիրուկ (տիր < տեր + ուկ), Տոնական (տոն + ական), Տոներ (տոն + եր), Փոքրիկ (փոքր + իկ):

3. Բարդ կազմության անձնանուններ.

Ըստ ձևաբանական – շարահյուսական կառույցի՝ լինում են հարադրական (վերլուծական) և համադրական. վերջիններս իրենց հերթին բաժանվում են 2 խմբի՝

ա) հողակապավոր իսկական բարդությունների.

Ազգասեր (ազգ + ա + սեր), Աղբերացեղ (աղբեր < եղբայր + ա + ցեղ), Ամանոր (ամ + ա + նոր), Ավետաբեր (ավետ + ա + բեր), Գրիգորատուր (Գրիգոր + ա + տուր), Դասապետ (դաս + ա + պետ), Զորավար (զոր + ա + վար), Լուսաբեր (լուս < լույս + ա + բեր), Խաչատուր (խաչ + ա + տուր), Խաչագունդ (խաչ + ա + գունդ), Հայկասեր (հայկ + ա + սեր), Հայրաձայն (հայր + ա + ձայն), Հայրապետ (հայր + ա + պետ), Հայրատեղ (հայր + ա + տեղ), Հողաբաշխ (հող + ա + բաշխ), Մեծատուր (մեծ + ա + տուր), Նորապետ (նոր + ա +

պետ), Նորատունկ (նոր + ա + տունկ), Ոսկեգույն (ոսկի + ա + գույն), Վանատուր (վան + ա + տուր), Տիրախոսրով (տիր < տեր + ա + խոսրով), Տիրապետ (տիր < տեր + ա + պետ), Տոնապետ (տոն + ա + պետ), Քրիստոսասեր (Քրիստոս + ա + սեր), Քրիստոսատուր (Քրիստոս + ա + տուր):

բ) անհոդակապ իսկական բարդությունների.

Աղապարոն (աղա + պարոն), Ամենավագ (ամեն + ավագ), Ամիրլույս (ամիր + լույս), Այգվարդ (այգ + վարդ), Ասլիպարոն (ասլի + պարոն), Արևգույն (արև + գույն), Արևհատ (արև + հատ), Արևշատ (արև + շատ), Արևլույս (արև + լույս), Ավագպարոն (ավագ + պարոն), Ավագտեր (ավագ + տեր), Բարիլույս (բարի + լույս), Գագտուր (գագ + տուր), Գայլձագ (գայլ + ձագ), Թուխայր (թուխ + այր), Ժամհայր (ժամ + հայր), Ժիրայր (ժիր + այր), Լույսպարոն (լույս + պարոն), Խաչանուն (խաչ + անուն), Խաչեղբայր (խաչ + եղբայր), Խաչերես (խաչ + րես), Խաչապա (խաչ + պապ), Ծառապա (ծառ + պապ), Հագարդեղ (հագար + դեղ), Հագարմարդ (հագար + մարդ), Հայկազն (հայկ + ազն), Հայրանուն (հայր + անուն), Հայրանտոն (հայր + անտոն), Մեծավագ (մեծ + ավագ), Մեծպարոն (մեծ + պարոն), Նորայր (նոր + այր), Նորավագ (նոր + ավագ), Նորպարոն (նոր + պարոն), Նորվարդ (նոր + վարդ), Պարոնավագ (պարոն + ավագ), Պարոնլույս (պարոն + լույս), Պարոնպապ (պարոն + պապ), Պարոնվարդ (պարոն + վարդ), Պարոնտեր (պարոն + տեր), Վարդապետ (վարդա + պետ), Վարդավառ (վարդա + վառ), Վարդուրախ (վարդ + ուրախ), Վարդպապ (վարդ + պապ), Տերավագ (տեր + ավագ), Տերապա (տեր + պապ), Տերտուր (տեր + տուր), Տերտեր (տեր + տեր), Տիրագդ (տիր < տեր + ազդ), Տիրայր (տիր < տեր + այր), Տիրավագ (տիր < տեր + ավագ), Տղապարոն (տղա + պարոն), Տոնավագ (տոն + ավագ):

4. Բարդաժանցավոր կազմության անճանաչումներ են.

Առաջպարոն (առ + աջ + պարոն), Աստվածատուր (աս + տվ(տու) + ած + ա + տուր), Աստվածասեր (աս + տվ(տու) + ած + ա + սեր), Աստվածատրիկ (աս + տվ(տու) + ած + ա + տր(տուր) + իկ), Հրաչյա (հր < հուր + աչ + յա), Հրաչիկ (հր < հուր + աչ + իկ), Ման-

կասար (ման + կ(ուկ) + ա + սար , Մանկավագ (ման + կ(ուկ) + ավագ), Շնորհավորչահ (շնորհ + (ա)վոր + շահ):

Ուշագրավ է, որ Հ. Աճառյանը անձնանունների իր բառարանում անդրադարձել է երկակի՝ և՛ արական, և՛ իգական գործածություն ունեցող անձնանուններին, ինչպես՝ Ազատ, Աղվոր, Արքա, Արևույս, Բախտ, Դալար, Թանգ, Թփիկ, Իշխան, Ծամիկ, Ծով, Կաքավ, Ոսկենիւր, Սիրական, Վարդեր և այլն:

Բանալի բառեր՝ *արական անձնանուններ, քնիկ հայկական կառուցվածքային քննություն, իմաստային քննություն, պարզ կազմություն, ածանցավոր կազմություն, բարդ կազմություն, երկակի գործածություն:*

КНАРИК СУКИАСЯН – Семантический и словообразовательный анализ мужских имен в «Словаре армянских личных имен» Г. Ачаряна. – В статье мы обратились к изучению происхождения армянских мужских имён, выделили десять групп антропонимов, которые произошли от названий растений, цветов, фруктов, животных, частей тела человека, небесных тел, а также от религиозных понятий, прилагательных, числительных, деепричастий, глаголов и от других смысловых групп.

Мы также провели словообразовательный анализ, выделяя простые (приставочные и суффиксальные), сложные и сложно-приставочные антропонимы.

Ключевые слова: *мужские личные имена, исконно армянские, структурное исследование, смысловое исследование, простой состав, производный состав, сложный состав, двойное использование.*

KNARIK SUKIASYAN - Semantic and word-forming study of male names in H. Acharyan's "Dictionary of Armenian names" – In the article we touched the semantic study of male names and we separated them into ten groups, which came from the names of plants, flowers, fruits, animals, human body parts, position, title, crafts, celestial bodies as well as from religious ideology, adjectives, numerals, adverbs, verbs, other semantic groups. We also realized a word-forming study, separating simple, derivative, compound (synthetical), compound-derivative male names.

Keywords: *male names, native Armenian, structural study, semantic study, simple formation, derivative formation, complex formation, dual use.*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյան

Ողջույնի խոսք 3

Սիմոնյան Արամ

Ողջույնի խոսք 4

Աբեղյան Հասմիկ

Ողջույնի խոսք 5

Աբաջյան Աննա

Աբեղյանական գործող ուղղագրության անհիմն
քննադատությունները 7

Աբաջյան Աննա, Հարությունյան Քնար

Մովսես Խորենացու «Հայոց պատմութիւն» երկի
դարձվածքները (կառուցվածքային քննություն) 19

Գևորգյան Երջանիկ

Արդի հայերենում հայացքի տեսակների
արտացոլման վերաբերյալ 30

Դալալյան Տորո

Հայ-վրացական բառային որոշ զուգաբանությունների շուրջ 43

Դիլբարյան Նարինե

Հայոց ժողովրդանուն-տեղանունների ստուգաբանության
արդի մոտեցումները 56

Եղիազարյան Վանո

Նահապետ Քուչակին վերագրված հայերենների և
նրա անունով մեզ հասած աշուղական երգերի
տաղաչափության համեմատական քննություն 66

Զաքարյան Հովհաննես

Խխունջ, քրքիր, կոպիտ և մի քանի այլ բառերի
ստուգաբանություն 79

Խաչատրյան Ավարդ

Փոխանցումները գրաբարի բայերում 94

Մնացականյան Եվա

Մանուկ Աբեղյանի կերպարը ըստ Հասմիկ Աբեղյանի
«Օրերս ինձ հետ են...» հուշագրության 103

Մուրադյան Վիկտորյա

Հոլովական գուգաձևությամբ գոյականների
իմաստակիրառական տարբերությունները ժամանակակից
արևելահայերենում 114

Յուզբաշյան Անահիտ

Գրաբարի բայական համակարգը ըստ Մ. Աբեղյանի 120

Շահվերդյան Թերեզա, Ավագյան Թինա

Պարոփիա, թե՞ հարասություն 127

Պարոնյան Նաիրա, Գրիգորյան Սուսաննա

Նոր բառեր Վարդան Արևելցու «Ներբողեանք»-ում 141

Պողոսյան Նորայր

Պատմական համանունությունը հայերենում
(16-18-րդ դդ. նյութի հիման վրա) 148

Սարգսյան Արտաշես

Եղանակաժամանակային համաձայնությունը
ժամանակակից հայերենի պայմանի պարագա
երկրորդականով բարդ ստորադասական
նախադասություններում 158

Սուքիասյան Քնարիկ

Արական անձնանունների իմաստարանական և

բառակազմական քննությունը Հ. Աճառյանի

«Հայոց անձնանունների բառարան»-ում 167

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ԱՔԵՂՅԱՆԱԿԱՆ
ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**

**ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆԱՏԱՇՐՋԱՆԻ
ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

(Երևան, 2017 թ., նոյեմբերի 30)

2

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Մ. Բետյանի

Տպագրված է Time to Print օպերատիվ տպագրությունների սրահում:
ք. Երևան, Խանջյան 15/55

Ստորագրված է տպագրության՝ 27.06.2018:
Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մասնուլը՝ 12:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am